Սույն փաստաթուղթը շարքի երկրորդ ԷԳԾ-ն է և Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրում է 2010-2012թթ. ժամանակահատվածում այդ թիրախների համեմատ առաջընթացի գնահատում, օգտագործելով 2010թ. գնահատված ելակետային Էներգիայի սպառումը: Առաջին ԷԳԾ-ի գնահատումն անցնում է առաջին ժամանակահատվածի շրջանակներից և դիտարկում է ներառյալ մինչև 2014թ. իրականացված ծրագրերն ու միջոցառումները: Երկրորդ ԷԳԾ-ն օգտագործում է առաջին ԷԳԾ-ի գնահատականը, որն իրականացվել էր ՀՎԵՀՀ-ի կողմից հորիզոնական/խաչվող միջոցառումների համար և իրականացված ոլորտային ծրագրերի նոր գնահատումը ընդունելով որպես հիմք, անհրաժեշտության դեպքում վերանայում է ներկայիս միջոցառումներն ու 2017, 2018 և 2020թթ. նպատակների իրականացումն ապահովելու համար սահմանում է նոր ոլորտային միջոցառումներ: Այնուհետև երկրորդ ԷԳԾ-ը շարունակում է առաջին ԷԳԾ-ի համապատասխան միջոցառումները, ինչպես նաև առաջարկում թարմացված միջոցառումների խումբ և Էներգախնայողության թիրախներ 2016-2018թթ. Երկրորդ ժամանակահատվածի համար, հետևելով ինչպես հատկանշային 2018թ., այսպես էլ մինչև 2020թ. Երկարաժամկետ պլանին: Փաստաթուղթը պատրաստվել է այն ձևաչափի համաձայն, որն առաջարկվել է Էներգետիկ համայնքի կողմից, որտեղ 01.10.2011թ. Հայաստանի Հանրապետությունն ունի դիտորդի կարգավիճակ:

Էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների մշակման համար ԷԳԾ-ը տրամադրում է շրջանակ՝ ուշադրություն դարձնելով, հիմնականում, Էներգիայի վերջնական սպառմանը, և պլատֆորմ՝ այդ միջոցառումների արդյունքում ստացված էներգախնայողությունը գնահատելու համար։ Սույն փաստաթղթում նկարագրված են ընդհանուր և միջանկյալ հատկանշային թիրախների գնահատման մեթոդը և մասնավոր հատկանիշները։ Էներգիայի սպառման վերաբերյալ անհատական և հավաքական տվյալներն օգտագործվել են 2010-2012թթ. Էներգիայի հաշվեկշռի տվյալների հիման վրա թիրախ սահմանելու համար։² Առաջին ԷԳԾ-ի միջոցառումների ազդեցության պատշաճ գնահատման համար, որտեղ հնարավոր է, մոտավոր գնահատվել են 2012թ. հետո առաջնային ընդհանուր աղբյուրները և էներգիայի վերջնական սպառումը։

Երկրորդ ԷԳԾ-ի նորացումները, հիմնականում, նպատակ ունեն փաստաթղթավորելու առաջին ԷԳԾ-ի մշակումից հետո ներդրված նոր նախաձեռնությունները, ինչպես նաև էներգիայի աճող գների և էներգամատակարարման ի հայտ եկող խնդիրների պայմաններում էներգաարդյունավետության (ԷԱ) բարելավման ժամանակային տվյալները թարմացնելու միջոցառումների բազմազան փաթեթը, որը տարբեր կատարողների կողմից իրականացվել է տնտեսության բոլոր ոլորտներում։ Երկրորդ ԷԳԾ-ի մշակման իրավական հիմքը սահմանվում է առաջին ԷԳԾ-ի ընդունման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ։

Էներգաարդյունավետության բարելավման ընդլայնման նպատակով միջոցառումների մշակման համար երկրորդ ԷԳԾ-ը կտրամադրի շրջանակներ՝ մասնավորապես, էներգիայի օգտագործման վերջնական սպառողների համար, և պլատֆորմ՝ այդ միջոցառումների արդյունքում ստացված էներգախնայողության գնահատման համար։

² Ցածր մակարդակի արտանետումներով զարգացման ռազմավարությունների կարողությունների ընդլայնման (EC-LEDS) ծրագիր Հայաստանում։ Հասանելի է <http://energybalancearmenia.am/>

1 ԵՐԿՐՈՐԴ ԷԳԾ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Հայաստանի կառավարությունը մշակել և ընդունել է մի շարք լուրջ ազգային քաղաքական փաստաթղթեր, ուղարկած օրենսդրություններ և ծրագրեր, երկրորդային օրենսդրություն և կարգավորիչ շրջանակներ, ինչպես նաև Էներգաարդյունավետության քաղաքականության իրականացմանը վերաբերող միջազգային համաձայնագրեր: Ստորև ներկայացված գծապատկերում թվարկվում են ԷԳԾ-ի իրականացումը կառավարող գործող քաղաքականությունը, ծրագրերը, կանոնակարգերն ու համաձայնագրերը:

Էներգետիկ քաղաքականությունները և գործիքները եւ դրանց իրականացումը	<ul style="list-style-type: none">• 2005թ. Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարություն• Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին Օրենք• Վերականգնվող էներգետիկայի եւ Էներգաարդյունավետության Ազգային ծրագիր• 1ին Ազգային էներգաարդյունավետության գործողությունների պլան• 2012-2025թթ. Երկարաժամկետ ռազմավարական զարգացման ծրագիր• Ազգային էներգետիկ անվտանգության հասկացությունը• Նվազագույն ծախսազոյացման ծրագիր• ՎԵ ճանապարհային քարտեզ եւ ՎԵԾԸ ներդրումային ծրագիր 2014
Երկրորդային օրենսդրություն եւ կանոնակարգող շրջանակ	<ul style="list-style-type: none">• 1504 Բանաձեւը պետական ներդրումային ծրագրերում պարտադիր է Ա վերաբերյալ• “Շենքերի եւ կառույցների / շինությունների, շինարարական նյութերի եւ ապահնությունի Անվտանգության” տեխնիկական կանոնակարգի նախագիծ• “Շենքերի էներգաարդյունավետության” տեխնիկական կանոնակարգի նախագիծ• Նորմատիվային-տեխնիկական փաստաթղթեր
Միջազգային համաձայնագրեր	<ul style="list-style-type: none">• Էներգետիկ խարտիայի պայմանագիրը• Էներգետիկ համայնքում դիտորդի կարգավիճակ• Վլխայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա• ԵՄ Քաղաքապետերի դաշնագիր• Եվրասիական տնտեսական միության փաստաթղթեր

Գծապատկեր 1. Էներգաարդյունավետության քաղաքականությունը, ռազմավարություններն ու կանոնակարգերը

Վերոնշյալ քաղաքականության շրջանակի ներկայացումը կցված է երկրորդ ԷԳԾ-ին, հաշվի առնելով ստացված Էներգախնայողությունը, ինչպես նաև շարունակվող քաղաքական ջանքերի արդյունքում ակնկալվող խնայողությունները՝ կապված շուկայի հետագա ձևափոխման, ինչպես նաև հետագա բարեփոխումների վերաբերյալ կատարված առաջարկությունների հետ:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվեցին քաղաքականության մեջ առկա բացթողումները.


- Անբավարար ֆինանսական շարժառիթներ էներգաարդյունավետության համար՝ էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքի կամավոր դրույթների իրավակիրարկմանն աջակցելու նպատակով
- Էներգաարդյունավետության առկա կանոնակարգերի անբավարար կիրարկումը, ներառյալ պետական ներդրումային ծրագրերի և բնակարանային շինարարության ԷԱ համապատասխանության մասին << Կառավարության վերջին որոշման կիրարկման ընթացակարգերը
- Մշակվել են մի շարք օրենսդրական նախաձեռնություններ (շենքերի անվտանգության և էներգետիկ արդյունավետության տեխնիկական կանոնները, քաղաքաշինության մասին օրենքի փոփոխությունները, էներգիայի խնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքի փոփոխությունների նախագիծը, սարքավորումների պիտակավորման կանոնակարգի նախագիծը), որոնք դեռևս ընդունման փուլում են կամ դեռ պետք է դիտարկվեն: Որպեսզի ամփոփվեն այս բարեփոխումների ուղղությունների վերաբերյալ հետագա քայլերի առաջարկությունները, պետք է վերագնահատվի դրանց կարգավիճակը, ինչպես նաև ազգային էներգախնայողության թիրախների վրա նրանց ազդեցությունը: Բացի այդ, պետք է վերանայվեն ներկայիս օրենսդրական նախաձեռնությունները, մասնավորապես, սարքավորումների պիտակավորմանը վերաբերող նախաձեռնությունը, որպեսզի համապատասխանեցվեն սարքավորումների պիտակավորման նախորդ կանոնակարգի նախագիծն, որի նպատակն էր ԵՄ պիտակավորման հրահանգի ձևափոխումը ԵՏՄ համապատասխանեցնելու համար:
- Շատ դոնորներ և ՄՖՀ-ֆինանսավորվող նախաձեռնություններ տնտեսության տարբեր ոլորտներում արդեն իսկ փորձարկել են էներգետիկ արդյունավետությունը խթանող մի շարք հաջողված և խոստումնալից տեխնիկական և ֆինանսական լրացնումներ: Նրանք նաև տրամադրել են էներգետիկ արդյունավետության մասնավոր միջոցառումների ազդեցության, ինչպես նաև պոտենցիալ խոչնդուտների վերաբերյալ լուրջ գործնական ապացույցներ, որոնք կարող են խանգարել էներգաարդյունավետության կոնկրետ միջոցառումների հաջող իրականացմանը:
- Երկրորդ ԷԳԾ-ը ձգտում է առաջարկել բարձրացնել դրանք ազգային գործողությունների մակարդկի: Նոյն կերպ, առաջին ԷԳԾ-ի գնահատումը և աշխատանքը երկրորդ ԷԳԾ-ի վրա բացահայտեցին ուշադրության պակասը ԷԱ այլ տեսակի ներդրումների վրա, այդ պատճառով երկրորդ ԷԳԾ-ը փորձում է առաջարկել ԷԱ բարելավման միջոցառումների ու ծրագրերի նոր խումբ՝ անդրադառնալով շուկայի խոչընդոտներին ու օգտագործելով այլ ոլորտներում չբացահայտված էներգետիկ պոտենցիալը:

1.1 Երկրորդ ԷԳԾ-ի հիմնական ցուցանիշները

Երկրորդ ԷԳԾ-ը գնահատում է առաջին ԷԳԾ-ում նախատեսված ուղղություններով իրականացված առաջընթացը: Նպատակ էր դրվել որպես ելակետային օգտագործել 2008-2010թթ. էներգետիկ պահանջարկը, սակայն, քանի որ էներգետիկ հաշվեկշիռը հաշվարկվել էր միայն 2010թ. և հաջորդ երկու տարիների համար, ապա 2010թ., որպես հիմք, միակ ելակետայինն էր: Սակայն առաջին ԷԳԾ-ից հետո, պատրաստվել են 2010, 2011 և 2012թթ. էներգետիկ հաշվեկշիռները, և հաջորդող թիրախային տարիների (2017, 2018 և 2020թթ.) համար որպես էներգախնայողության ելակետային համեմատական հիմք օգտագործվում է այս երեք հաջորդական տարիների միջինը:


1.2 Էներգիայի խնայողության ազգային համատեքստը

Հայաստանի էներգիայի սպառումը ներկայում կազմում է նախքան Խորհրդային Միության փլուզման մակարդակի միայն մի փոքր բաժինը:



Գծապատկեր 2. 1990թ. Հայաստանում օգտագործվող ընդհանուր առաջնային և վերջնական էներգիայի աղբյուրները, վիճակգրությունը և կանխատեսումները


Անկախացումից ի վեր Հայաստանը փորձում է վերականգնել տնտեսական արդյունքի մակարդակը, և տնտեսությունն անընդհատ աճել է, ինչպես նաև աճել է էներգիայի օգտագործումը: Շեշտը դնելով ծառայությունների վրա և հեռանալով ծանր



Գծապատկեր 3. Տնտեսական աճն ու էներգիայի սպառումը Հայաստանում, ՀԲ, 2014թ.

արդյունաբերությունից, տնտեսության վերակառուցումը թույլ տվեց կրճատելու տնտեսական աճի էներգատարությունը և էներգիան առանձնացնել աճից, ինչը լուրջ քայլ է կայուն էներգետիկայի և «կանաչ» տնտեսության ճանապարհին:

Այսուամենայնիվ, վերջին տասնամյակում, էներգիայի վերջնական սպառումն աճել է: Խոշորագույն սպառողը բնակարանային ոլորտն էր, որը պատասխանատու էր ընդհանուր վերջնական էներգիայի մոտ մեկ երրորդի սպառման համար: 2012թ.-ին նրան հաջորդում էր տրանսպորտի ոլորտը՝ 25% մասնաբաժնով: Այնուամենայնիվ, երկու ոլորտներն էլ ՀՍԱ-ին ունեն աննշան ներդրում: Արդյունաբերությունն օգտագործել է էներգիայի միայն 18%-ը, ինչը շատ հեռու է խորհրդային ժամանակահատվածի արդյունաբերության մասնաբաժնից: Առևտրային և հանրային ծառայությունները օգտագործել են մոտ 16%, իսկ գյուղատնտեսությունը՝ մոտ 7%: Եղանակային պայմաններից կախված բնակարանային ոլորտի մասնաբաժինը տատանվում է: Վերջին տարիներին էներգիայի սպառման կայուն աճ ցուցաբերել են միայն առևտրային և հանրային ծառայությունների ոլորտները:



Գծապատկեր 4. Էներգիայի վերջնական սպառումը Հայաստանում ըստ ոլորտների (կտնի)*

Աղյուրը՝ ԱՄՆ ՄԶԳ, 2012. Համեմատական սցենար 2015-2030թթ. համար

* 2000 և 2005 դրվագները ՄԷԳ, Վիճակագրություն

Աղյուրը՝ <<Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության դաշտեկան հաշվեկույթունը

Ներկայում առկա կանխատեսումները³ հիմնվում են 2006 թ. տվյալների վրա և մինչև 2030 թ. ընդհանուր վերջնական էներգասպառման մեջ ենթադրում են արդյունաբերության, ինչպես նաև տրանսպորտի մասնաբաժնի ավելացում: Ակնկալվում է, որ մյուս բոլոր ոլորտների մասնաբաժնները կնվազեն: Գործնականում զարգացումներն այլ կերպ են ընթանում: Հայաստանի կառավարության 2014-2025թթ.

³ Անկախ այն բանից, որ կանխատեսումները համատեղելի չեն ներկայիս զարգացման հետ և պետք է ճշգրտվեն, այլ կանխատեսումներ, որոնց վրա կարելի էր հիմնվել, չեն եղել: Այսինքն, անհրաժեշտ են նոր ուսումնասիրություններ :

Երկարաժամկետ ռազմավարական գարզացման ծրագիրը նախատեսում է տարեկան միջև 6-7% տնտեսական աճ և միջև 2025թ.՝ՀԱՀ-ի կրկնապատկում: Հիմնական ուղղություններ են համարվում աշխատանքային բարձր արդյունավետություն ապահովող որակավորման աշխատանքները: Ծրագիրը, փաստացիորեն, բնական ռեսուրսներով աղքատ երկրի համար կարող է դառնալ պարզ ռազմավարություն: Նախատեսված աշխատատեղերն, անկասկած, կարող են սակավ էներգատար լինել: Հետևաբար, առևտրային և հանրային ծառայություններում էներգիայի սպառման ավելացում ակնկալվում է համեմատական սցենարում:

1992թ. վառելիքի խորը ճգնաժամից հետո, երբ սպառողներին օրական տրվում էր միայն 2-4 ժամ էլեկտրաէներգիա, և տնային տնտեսությունների մեծ մասը ջեռուցման նպատակով կախված էր վառելափայտից կամ էլեկտրաէներգիայից (Համաշխարհային բանկ, 2011թ.), էլեկտրականության համակարգը վերակառուցվեց: Էլեկտրաէներգիայի արտադրությունը Հայաստանում մեծապես հիմնված է բնական գազի վրա (ընդհանուր ներդրված հզորության 54%), որին հաջորդում է հիդրոէներգիան (ներդրված հզորության 22%): Ասումակայանը, որը կառուցվել է խորհրդային շրջանում, դեռևս գործում է և կազմում է ընդհանուր ներդրված հզորության 19%-ը:



Այլուսակ 1. Էլեկտրաէներգիայի սպառումը հիմնական հաճախորդների կողմից (ԳՎտժ)

	2005		2010		2011		2012		2013	
	ԳՎտժ	%								
Արդյունաբերություն	1,020	24	1,047	23	1,083	22	1,180	23	1,209	23
Տրանսպորտ	113	3	119	3	120	2	127	2	124	2
Բնակելի	1,498	36	1,611	36	1,808	37	1,902	37	1,950	38
Առևտրային և հանրային ծառայություններ	197	5	207	5	233	5	227	4	228	4
Գյուղատնտեսություն/անտառաբուծություն	421	10	263	6	226	5	226	4	130	3
Այլ չնշված	930	22	1,260	28	1,400	29	1,458	28	1,526	30
Ընդամենը՝	4,180	100	4,508	100	4,870	100	5,120	100	5,167	100
Աղյուրը՝ «Հներգեդրիկայի և բնական պաշարների նախարարության գործեկան հաշվեպահպետությունը»										

Գործող էլեկտրակայանների ընդհանուր ներդրված հզորության արտադրող սարքավորումների կեսից ավելին ունի 40 տարուց ավելի վաղեմություն և գտնվում է իր շահագործման ցիկլի ավարտում: Շատ միավորներ էլ գործում են իրենց ներդրվածից շատ ցածր հզորությամբ.⁴ Անհրաժեշտ է դրանք փոխարինել կամ դրանց շահագործման ժամկետը երկարացնելու համար կատարել դրանց նորացման գգայի ներդրումներ: Նոյնը վերաբերում է նաև էլեկտրական ցանցին, որն անհրաժեշտ է ենթարկել լրիվ վերանորոգման:

⁴ Հրազդանի ԶԵԿ-ում ներդրված 1050 ՄՎ-ից գործում է 800 ՄՎ, իսկ Երևանի ԶԵԿ-ում գործում է ներդրված հզորության՝ միայն 10%-ը: Հրազդանի գազով աշխատող նոր բլոկերի և Երևանի նոր փակ ցիկլով գազային տուրբինի (170գգ/ԿՎտ ժամ) համեմատությամբ (260-270 գ/կվտ ժամ) արդյունավետությունը շատ ցածր է (370գ վառելիք՝ մեկ ԿՎտ ժամի համար) (Համաշխարհային բանկ, 2011թ.)

Զանքեր են գործադրվել էլեկտրակայանների արդիականացման համար, և կառուցվել է գազով աշխատող ջերմային էներգիա արտադրող երկու նոր ժամանակակից կայան (Երևանի փակ ցիկլով գազային տուրբինը 271.7 ՄՎտ ներդրված հզորությամբ շահագործման է հանձնվել 2010թ. և Հրազդանի N5 հանգույցը 480ՄՎտ ներդրված հզորությամբ, շահագործման է հանձնվել 2011թ.):
 Էլեկտրաէներգիայի նկատմամբ
 շարունակ աճող պահանջարկը
 (տես՝Գծապատկեր)




Գծապատկեր 5. Ընդհանուր առաջնային էներգիայի աղյութներն ըստ վառելիքի, 2012թ (կտնի)


և բարձիթողի վիճակում գտնվող ենթակառուցվածքի փակման անհրաժեշտությունը, ներառյալ մոտ 1,300 գործող էներգարտադրող կառույցներ, հանգեցրին էներգարտադրող նոր հզորությունների կառուցման անհրաժեշտությանը, որպեսզի 2017թ. լրացնեն մատակարարման ակնկալվող պակասը (Համաշխարհային բանկ, 2011թ): Ասումակայանի գործող ներկայիս հզորությունը չի կարող ավելացվել, իսկ հիդրոէներգետիկան կախված է եղանակային պայմաններից: Սևանա լճից դեպի Սևան-Հրազդան կասկադ ջրի բացթողումները սահմանափակ են և մեծապես կախված են ոռոգման ուժիմից: Որոտանի կասկադի էլեկտրակայանների աշխատանքային հզորությունը ևս սահմանափակվում է՝ կախված գետի ջրի հոսքից: Այդ պատճառով Որոտանի կասկադի ծանրաբեռնվածությունն առավելագույնն է՝ գարնան-ամռան ամսիններին և նվազագույնը՝ աշնան-ձմռան ամիսներին: Պակասորդի գնահատումը ցույց տվեց տարբեր արդյունքներ, որոնք տատանվում էին 800-1,100 ՄՎտ նոր՝ իրական արտադրական հզորության գագաթային ծանրաբեռնվածություն ապահովելու և 25%-՝ պաշարի շեմն ապահովելու համար (Համաշխարհային բանկ, 2011)⁵: Արտահանման զգայի հզորությունները կպահպանվեն: Երևանի փակ ցիկլով գազային նոր տուրբինի և Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ հանգույցի հզորության 75%, ինչպես նաև Մեղրու ՀԷԿ-ի ողջ հզորությունը (որը պետք է գործի 2019թ.) տրամադրվում են

⁵ ՄԱՀ 2011-2030թթ. ընթացքում ենթադրել է տարեկան 4% ՀՆԱ-ի աճ (Համաշխարհային բանկ, 2011, 11)

Էլեկտրաէներգիայի արտահանմանը: Էլեկտրաէներգիայի արտադրման ներկայիս և կանխատեսվող կառուցվածքը ներկայացված է ստորև՝ Գծապատկեր



-ում:




.Գծապատկեր 6. Էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ վառելիքի (ԳՎտ ժամ)

Բացի Էլեկտրաէներգիայի արտադրությունից, բնական գազն օգտագործվում է նաև այլ ոլորտներում: Երկրի գազիֆիկացումը հասել է 96%-ի, մրցունակ լինելով Էլեկտրաէներգիայի գների հետ՝ անկախ շարունակաբար աճող գներից: Գազի գների դինամիկան ներկայացված է 4.1. գլուխում:

Աղյուսակ 2. Բնական գազի սպառման կառուցվածքը

միլիոն մ³	2010	2011	2012	2013	2014
Ներկրված բնական գազը	-	2069.1	2455.5	2361.05	2450.9
Բաշխման ցանցերով մատակարարված, որից.	-	1534.92	1608.9	1821.92	2008.8
Բնակչություն	-	550.75	542	538.93	515.4
Էներգիա	-	184.91	231.9	252.29	594.1
Արդյունաբերություն	-	252.04	259.9	275.261	252.1
Սեղմված գազի լիցքավորման կայաններ	-	362.36	418	454.96	481.7
Հանրային ոլորտ	-	51.45	48.4	49.89	49.1
Այլ սպառողներ	-	133.42	108.7	250	116.3
Միջին ջերմատվական արժեքը (կԿալ/մ³)					8214

Էներգիայի սպառումը դեռևս մեծապես հարաբերակցվում է ջերմոցային գազերի արտանետումների հետ, չնայած էներգիայի խառնուրդում տարանջատման որոշակի միտում ավելի շատ նկատվում է վերականգնվող աղբյուրների ավելացման շնորհիվ՝ մասնավորապես, փոքր հիդրոէներգետիկ հղորությունների ներդրմամբ:




Գծապատկեր 7. ԶԳ արտանետումները Հայաստանում մինչև 2012թ. (Գտ CO_2 համարժեք)

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությունը (2012թ.)

Աղբյուր՝ ՄԱԿ ԿՓԾԿ <<3-րդ ազգային հաղորդագրություն

Որպես էներգիայի օգտագործման արդյունավետության ցուցանիշ՝ ուսումնասիրությունները սովորաբար համեմատում են ՀՆԱ-ի էներգատարությունը։ Սակայն մեկ այլ պատկերավոր ցուցանիշ է մեկ շնչի հաշվով էներգիայի սպառումը։ Տարածաշրջանի երկրների, էներգետիկ համայնքի և ԵՄ անդամ երկրների համեմատությամբ Հայաստանը երկու ցուցանիշով էլ մնում է որպես ցածր ցուցանիշ ունեցող երկիր։



Գծապատկեր 8. Մեկ շնչին ընկնող էներգիայի սպառման և էներգատարության համեմատությունն ըստ երկրների

Հայաստանի առաջին ԷԳԾ-ն մշակվել է 2010թ., երբ երկրում չկար ոչ մի մանրամասն էներգետիկ հաշվեկշիռ և վերջին ներքինց-վերև տվյալների հավաքագրումն իրականացվել էր 2005թ. Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի ազգային ծրագրի մշակման համար, որն ընդունվել է 2007թ.: Վիճակագրական տվյալների պակասը սահմանափակել է էներգախնայողության պոտենցիալը պատշաճ կերպով գնահատելու, ինչպես նաև էներգախնայողության հատկանշային թիրախները հաշվարկելու հնարավորությունը:

1.3 Թիրախի սահմանումը

Որպես ԷԳԾ-ների համար լավագույն փորձի ռազմավարություն, ելակետ ընտրվել է, հիմնվելով պատշաճ վիճակագրություն ունեցող երեք հաջորդական տարիների միջինի վրա: Հաշվի առնելով Հայաստանում 2010-2012թթ. մանրամասն էներգետիկ հաշվեկշիռի առկայությունը, ներկայիս ԷԳԾ-ը ելակետային հիմք սահմանելու համար օգտագործում է այս երեք տարիների միջինը:

ԷԳԾ-ը կիրառում է նաև ՀՆԱ-ի էներգատարությունը, ոլորտային էներգատարությունները, ինչպես նաև մեկ շնչի հաշվով առաջնային կամ վերջնական էներգասպառումը: Նման ձևով, էներգաարդյունավետությանն ուղղված ազգային ծրագրերի և ռազմավարությունների համար առաջնային կամ վերջնական էներգետիկ աղբյուրները, սովորաբար, օգտագործում են Կառավարության կողմից սահմանված այն թիրախները, որոնք կիրառվել են թիրախային տարում:

ԷԳԾ-ը բացառություն չէ: ԷԳԾ-ների համար Էներգաարդյունավետության թիրախներ կարող են սահմանվել, կախված:

- › առաջնային կամ վերջնական Էներգասպառումից
- › առաջնային կամ վերջնական Էներգախնայողություններից
- › Էներգատարությունից:

Հաշվի առնելով, որ Էներգետիկ համակարգում տարբեր ուսումնասիրություններով կորուստները գնահատվում են մոտավորապես 30%, և քանի որ Երկրորդ ԷԳԾ-ը առաջարկի տեսակետից ևս կենտրոնանում է Էներգաարդյունավետության միջոցառումների վրա, ապա սա ևս առաջնային Էներգիայի էական խնայողության հնարավորություն կտա: Հաշվի առնելով ռեսուրսների արդյունավետությունը, տնտեսական մրցակցությունը և Էներգետիկ անվտանգության հանգամանքները Հայաստանի տնտեսության համար ավելի լավ կլինի ԸԱԷՍ թիրախը: Ինչպես առաջարկվում է Եվրոպական լավագույն փորձով, կիրառման ու մոնիթորինգի հեշտացման համար, 2020թ. առաջնային Էներգիայի սպառման բացարձակ մակարդակով և վերջնական Էներգիայի սպառմամբ Հայաստանի Երկրորդ ԷԳԾ-ը ևս արտահայտում է այդ թիրախները, և պետք է բացատրի, թե ինպես և ինչ տվյալների հիման վրա այն պետք է հաշվարկվի:

Ընդհանուր առաջնային Էներգիայի սպառման համեմատությունը՝ ԱՊՀ Երկրներում՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև, որոնք չեն համաձայնագրի դիտորդ են, և Ուկրաինայի ու Մոլդովայի միջև, որոնք գործող անդամակից կողմեր են, ցոյց է տալիս, որ ԸԱԷՍ Հայաստանի Հանրապետության սպառումը տարածաշրջանում Երկրորդ ամենացածրն է: Ինչպես նշվեց վերևում, պարտադիր չէ որ սա լինի արդյունավետության ցուցանիշ, սակայն ցոյց է տալիս տեխնոլոգիական զարգացման և տնտեսական զարգացման պակասը, ինչպես նաև ծառայությունների ոլորտի մեծ դերը: Այս գործոնները թույլ են տվել Հայաստանի ՀՆԱ-ին ավելի արագ աճել, քան նրա Էներգիայի սպառումն է:

Ստորև բերված այլուսակը ներկայացնում է ընդհանուր առաջնային Էներգիայի աղբյուրները և վերջնական Էներգիայի սպառումը, վերջին երեք տարիների համար, որոնց պատշաճ վիճակագրությունը առկա էր, և դրանց միջինը՝ որպես ելակետ, Երկրորդ ԷԳԾ-ի Էներգախնայողության թիրախի համար:


Աղյուսակ 3. Ընդհանուր առաջնային և վերջնական Էներգիայի աղբյուրները, 2010-2012թթ. (կտնի)

	2010	2011	2012	Ելակետային (3-ամյա միջինը)
Ընդհանուր առաջնային Էներգիայի աղբյուրները (կտնի)	2,991	3,286	3,378	3,218
Էներգիայի վերջնական սպառումը(կտնի)	1,901	2,134	2,106	2,047

Աղբյուրը. ԱՄՆ ՄՀԿ (2014թ.). «Յաջր մակարդակի արդյանելքումներով զարգացման ռազմավարությունների կարողությունների ընդլայնման (EC-LEDS) ծրագիր՝ Հայաստանում»՝ TetraTech-ի կողմից իրականացվող, Ազգային

Էներգիայի սպառման բացարձակ սահմանը Երկրի համար տեղին է, եթե այն պետք է ապահովի որոշակի քանակական թիրախ (օրինակ, դեֆլիցիտի պատճառով ազգային էներգասպառման 20%-ով կրճատման անհրաժեշտությունը Ուկրաինայում 1990թ., կամ ԵՄ Երկրների պարտավորվածությունը, պայմանավորված Միության 20-20-20 թիրախով⁶): Քանի որ Հայաստանի Հանրապետությունը որևէ բացարձակ թիրախի ապահովման պարտավորվածություն չունի, կիրառելի որոշման չափանիշներ են համարվում տնտեսական ծախսարդյունավետությունը և համապատասխանությունը ազգային տնտեսական զարգացման նպատակներին, իսկ թիրախի չափը հիմնված է ծախսարդյունավետ էներգախնայողության մնացած ներուժի և անհրաժեշտ ներդրումների համար վճարելու հնարավորության վրա, այսինքն, ներկայիս ՀՆԱ-ի և դրա ապագա փոփոխությունների վրա:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետության թիրախը կախված չէ որևէ բացարձակ քանակական թիրախից և առաջարկվում է կապ ազգային քաղաքականության կիրարկման և արդյունավետության, էներգաարդյունավետության ֆինանսավորման, էներգետիկ ծառայությունների խթանման և տեղեկատվության տրամադրման հետ: Այս թիրախը կապված է աճի որակի հետ, նվազեցնելով արտադրանքի էներգատարությունը՝ առանց վտանգելու Երկրի տնտեսական զարգացումը: Ինչպես պատկերվում է ստորև ներկայացված նկարում, Հայաստան այս ուղղությամբ արդեն որոշակի առաջընթաց արձանագրել է անցյալ տասնամյակում:



Գծապատկեր 9. Էներգատարությունը (ԸԱԷ/ՀՆԱ) ԱՊՀ Երկրներում, 1990-2012

⁶ Բերտոլդ Պ., ԵՄ 2020 և 2030 էներգախնայողության թիրախները և էներգաարդյունավետության ազգային գործողությունների պլանների դերը, Զեկույց, ACEEE, 2014

Այլուսակ 4. Էներգատարության ցուցանիշները էներգիայի սպառման տարրեր ոլորտներում

	2010			2011			2012		
	Էներգիայի սպառումը ոլորտում (կտնի)	Ոլորտի ՀՆԱ-ն (մլրդ. դրամ)	Էներգատարությանը (կտնի/մլրդ. դրամ)	Էներգիայի սպառումը ոլորտում (կտնի)	Ոլորտի ՀՆԱ-ն (մլրդ. դրամ)	Էներգատարությունը (կտնի/մլրդ. դրամ)	Էներգիայի սպառումը ոլորտում (կտնի)	Ոլորտի ՀՆԱ-ն (մլրդ. դրամ)	Էներգատարությունը (կտնի/մլրդ. դրամ)
Արդյունաբերություն	358.27	824.40	0.43	356.43	999.00	0.36	371.72	1,121.90	0.33
Տրանսպորտ	499.62	116.53	4.29	523.76	117.42	4.46	538.83	130.60	4.13
Գյուղատնտեսություն	140.15	636.70	0.22	141.94	795.00	0.18	155.11	841.50	0.18

Աղյուրը՝ Մէջ և ազգային վիճակագրական ծառայություններ

Քանի որ բնակարանային ոլորտը օգտագործման նպատակի առումով շատ խառն է և ազգային տնտեսության արժեքի ծևավորման մեջ համաչափ ներդրում չի ունենում, ՀՆԱ-ի էներգատարությունը բնակարանային ոլորտը, սովորաբար, պատշաճ կերպով չի բնութագրում: Մեկ շնչին ընկնող էներգասպառումը և/կամ ջեռուցվող տարածքի մակերեսը ընդունված ցուցանիշներ են, որոնք օգտագործվում են բնակարանային ոլորտի էներգետիկ արդյունավետությունը բնութագրելու համար:

Այլուսակ 5. Էներգիայի և բնակչության դինամիկան, 2010-2012

Բնակչությունը	2010	2011	2012	Միջինը
Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը, կմ ²	88,633.5	92,597.7	93,411.8	
Բնակչություն *1000	3,262.6	3,021.4	3,026.9	
Բնակչության կողմից սպառված էլեկտրաէներգիան	138,548.2	155,460.4	163,508.2	
Բնակչության կողմից սպառված բնական գազը	442,492.4	452,386.1	445,198.8	
ՏՆՀ մեկ շնչին	0.58	0.70	0.57	0.58

Վերոնշյալ ցուցանիշների վերլուծության և ոլորտին բնորոշ հնարավորությունների հիման վրա, Հայաստանի Հանրապետության երկրորդ ԷԳԾ-ը գնահատել է ընթացիկ, պլանավորված կամ առաջարկվող գործողությունների էներգախնայողության ազդեցությունը: Այս գնահատումը թույլ է տալիս չափել առաջընթացը առաջին ԷԳԾ-ի թիրախների համեմատ, ինչպես նաև վերանայել այդ թիրախները՝ նոր զարգացումներին համապատասխանեցնելու համար:

Աղյուսակ 6. Առաջին ԷԳԾ-ի թիրախների և ծեռքբերումների, ամփոփումը, երկրորդ ԷԳԾ-ի վերանայված թիրախները

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
Հորիզոնական և խաչվող								
I.3.a.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության համար: ԿԱՀ (GGF)	ԷԱ և ՎԵ լուծումներ տնային տնտեսությունների տարածքի շեռուցման և լուսավորության արդյունավետության համար (պատուիաններ, դրուեր, շեռուցման մատակարարում, լուսավորություն, բաշխման համակարգեր) և ՓՄՁ-ներ	Ակիզբը՝ 2014թ. Ավարտը՝ 2020 թ. (ընթացիկ)	35,069	35,069	35,069	35,069	մասնակի իրականացվա ծ
I.3.b.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության համար: ՄԱԿ ԷԱ վարկեր տնային տնտեսությունների և ՓՄՁ-ների համար	Բնակարանային էներգիայի վերջնական սպառում, ՓՄՁ արտադրական գործնթացների ԷԱ,տարածքների շեռուցման խնայողություն	Ակիզբը՝ 2009թ. Ավարտը՝ 2015 թ.	35,792	35,792	35,792	35,792	մասնակի իրականացվա ծ
I.3.c.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության համար: էներգաարդյունավետության վարկեր բնակարանային և բիզնես հաճախորդների համար, ՎԶԵԲ ArmSEFF	ԷԱ վարկեր բնակարանային և բիզնես հաճախորդների համար (կորպորատիվ էներգաարդյունավետություն, կայուն էներգիայի ֆինանսավորման հիմնադրամներ, մաքուր էներգիայի արտադրություն, քաղաքային ենթակառուցվածքի էներգաարդյունավետություն)	Ակիզբը՝ 2006թ. Ավարտը՝ 2015 թ.	341,655	341,655	341,655	341,655	մասնակի իրականացվա ծ
I.3.d.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության համար: Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործնկերություն (E5P)	Էներգաարդյունավետության ֆինանսավորման խթանում քաղաքային ենթակառուցվածքներում դրամաշնորհային համաֆինանսավորման միջոցով	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ ընթացիկ	-	-	-	-	սկզբնական փուլում է, այլ միջոցառման մասն է կազմում
I.6.	Գազի սակագնի անհամապատասխան կառուցվածքի վերացումը	Վերանայված սակագնային կառուցվածքի մշակում, որը չի տուգանի ՓՄՁ-երին և անկախ	Ակիզբը՝ 2016, ընթացիկ	-	59,365	89,047	148,412	չի իրականացվել

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
	Էներգախնայողությունները խթանելու համար	Չեռուցման համակարգերին						
I.7	Աջակցություն Հայաստանի քաղաքապետարաններին՝ կայուն էներգիայի գործողությունների պլանավորման համար	Քաղաքային ենթակառուցվածքներ, բնակարանային ոլորտ, տնային տնտեսություններ	Մկիզը՝ 2015թ. ավարտը՝ 2020թ.	3056.4	22811.0	31961.0	51082.8	Նոր միջոցառում
	Ոլորտի ընդամենը		ՄՎտժ	412,516	471,880	501,562	560,927	
	Ոլորտի ընդամենը		ԿՏՆՀ	35	41	43	48	
Շենքեր/Բնակելի								
II.7	ՄԱԶԾ/ԳԷՀ շենքերում էներգապարունակվետության բարելավման ծրագիր	Բազմաբնակարան շենքեր, սոցիալական տներ, գոյություն ունեցող շենքերի զգայի վերակառուցում, ԷԱ շենքերի համար օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտ	Մկիզը՝ 2010թ. Ավարտը՝ 2016 թ.	1,200	1,200	1,200	1,200	մասնակի իրականացվա ծ
II.9.a.	Ֆինանսավորում էներգապարունակվետության համար: Տնային տնտեսությունների էներգապարունակվետության վարկեր և ԷԱ հիպոթեկային վարկեր, բնակելի շենքերի և մասնավոր տների տարածքների չեռուցում, տաք ջրի ստացում	Տնային տնտեսությունների ԷԱ վարկեր և ԷԱ հիպոթեկային վարկեր, բնակելի շենքերի և մասնավոր տների տարածքների չեռուցում, տաք ջրի ստացում	Մկիզը՝ 2014 թ. Ավարտը՝ 2020 թ.	136	141	164	211	մասնակի իրականացվա ծ
II.9.b.	Ֆինանսավորում էներգապարունակվետության համար: Բնակարանային էներգապարունակվետության բանկային առևտորային վարկ HFHA Condo, REELIH և SUDEP ծրագրերի միջոցով	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաններում տարածքների չեռուցման և ջրի տաքացման համար	Մկիզը՝ 2013թ. Ավարտը՝ 2018թ.	30	4,914	5,067	5,067	մասնակի իրականացվա ծ
II.9.c.	Ֆինանսավորում էներգապարունակվետության	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաններում,	Մկիզը՝ 2016թ.	Ենթակ ա է	Ենթակ ա է	Ենթակ ա է	Ենթակ ա է	Դիտարկման փուլում է

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
	համար: KfW բնակարանային ԷԱ վարկային գիծ	ցեռուցում, ջրի տաքացում, լուսավորություն	Ավարտը՝ 2020 թ.		որոշմա ն	որոշմա ն	որոշման	
II.10	Սակագին բարձրացման զապում ցածր եկամտային էներգաարդյունավետության ծրագրի միջոցով	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաններում, լուսավորության արդյունավետություն	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ 2016թ.	նոր միջոցա ռում	116,159	116,159	116,159	նոր միջոցառում
II.11	ԷԱ վերակառուցումներ գոյություն ունեցող բնակելի շենքերում: Բազմաբնակարան շենքերի վերանորոգման և ԷԱ ազգային ծրագրի և գործողությունների պլան	Գոյություն ունեցող բնակելի շենքեր, տարածքի ցեռուցում	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020 թ.	նոր միջոցա ռում	65,000	65,000	65,000	նոր միջոցառում
II.12	Սարքավորումների էներգետիկ պիտակավորման իրազեկման քարոզարշավ	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաններում, լուսավորության արդյունավետություն	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ 2020 թ.	նոր միջոցա ռում	176,704	209,36 9	409,635	նոր միջոցառում
			ՄՎտժ	1,366	364,118	396,95 9	597,272	
			ԿՏՆՀ	0	31	34	51	
Հանրային շենքեր և ծառայություններ								
III.1.	Հանրային շենքերի ԷԱ: Էներգախնայողության միջոցառումների իրականացում քաղաքային և սոցիալական հանրային կառույցներում (ՀՎՀՀ/ ԳԵՀ/ՀԲ)	Ըստ էներգախնայողության համաձայնագրի ԷԱ հանրային կառույցներում ESCO-ների մասնակցությամբ իրականացնել սոցիալական և այլ հանրային կառույցների կողմից էներգասապառման կրճատումը	Ակիզբը՝ 2012թ. ավարտը՝ 2017 թ.	401	521	521	521	մասնակի իրականացվա ծ
III.2.	ՆԱՄԱ (Ազգային համատեքստին համահունչ մեջմման միջոցառում) ծրագրի՝ աջակցելու էներգաարդյունավետությանը	Հանրային շենքերի և սոցիալական տների նոր շինարարություն և կափառական վերանորոգում, գոյություն ունեցող շենքերի օգակի	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	նոր միջոցա ռում	11,442	14,653	21,037	մասնակի կատարված

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
	հանրային շենքերում և սոցիալական բնակարաններում	Վերակառուցում, երկրորդական օրենսդրություն շենքերում ԷԱ համար	(ընթացիկ)					
III.3.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության և ԷԱ պետական գնումների համար: ՄԱՀԾ «կանաչ» քաղաքային լուսավորության ծրագիր, ԶԳ արտանետումների կրճատում Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բարձրացման միջոցով	Քաղաքային լուսավորման համար էլեկտրաէներգիայի սպառումը Հայաստանի քաղաքներում	Ակիզբը՝ 2013թ., Ավարտը՝ 2017թ.	նոր միջոցա ռում	47	47	47	մասնակի իրականացվա ծ
III.4.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության և ԷԱ պետական գնումների համար: Դպրոցների ԷԱ-ինտեգրված ամրացում KfW-ի կողմից	Հանրային և ծառայությունների շենքեր (դպրոցներ)	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	նոր միջոցա ռում	39,897	39,897	39,897	դիտարկման փուլում է
III.5.	ՎՃԲ վարկային ֆինանսավորմամբ Երևանի փողոցային լուսավորում	Քաղաքային լուսավորման էլեկտրաէներգիայի օգտագործումը Երևանի 49 փողոցներում	Ակիզբ՝ 2015թ. ավարտը՝ 2017 թ.	նոր միջոցա ռում	1,277	1,277	1,277	սպասվում է սկիզբը
III.6.	ԱՄՆ ՄՀԳ մաքուր էներգիա և ջուր ծրագիր համայնքային էներգիայի և ջոհ օգտագործման ԷԱ և ՎԷ լուծումների համար	գյուղական համայնքներ, գյուղատնտեսական ջոօգտագործողներ, համայնքային կազմակերպություններ, գյուղատնտեսարաններ	Ակիզբ՝ 2012 թ.	19	19	19	19	ավարտված
			Ընդամեն ը ՄՎտժ	420	57,417	61,470	70,382	
			Ընդամենը ԿՏՆՀ	36	4,937	5,285	6,052	

Արդյունաբերական գործընթացներ և էներգետիկ ոլորտ

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
IV.1	Էներգաարդյունավետության ասպեկտների դիտարկումը նոր արդյունաբերական կառուցների հաստատման և շինարարության ժամանակ	1. Արդյունաբերություն և ՓՄՁ- ներ: ISO 50001 կիրառողներ, ՌԱՄԱ, ԱԼՏ, լավագույն փորձի կիրառում	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ 2020 թ.(ընթաց իկ)	-	271,969	397,132	718,979	չի իրականացվել
IV.2	Կենտրոնական ջեռուցման կայանների և մատակարարողների արդյունավետության բարձրացում: Ավանի համակցված արտադրություն (Ձերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրություն)	Էներգիայի համակցված արտադրության և մատակարարման մշակված արդյունավետ մոդել	Ակիզբը՝ 2005թ. ավարտն՝ ընթացիկ	57,228	67,327	70,693	77,426	մասնակի իրականացվա ծ
IV.3	Արդյունաբերական ձեռնարկությունների էներգաարդյունավետության ֆինանսավորման հիմնադրամի իրականացում	Համարվում է միջուրտային միջոցառումների մասը						
IV.4	Բնական գազի խնայողություններ ԶԵԿ-երում առկա կաթսայատների օպտիմիզացման միջոցով	ՀԲ-ի կողմից առաջարկվել է 500ՄՎտ ԶԵԿ՝ ապահովելու առավելագույն պահանջարկն ու պահուստի շեմը Հրազդանի ԶԵԿ-ի 1- 4 բլոկերի աշխատանքի դադարեցումից հետո	Ակիզբը՝ 2018թ. ավարտը՝ 2020 թ.	-	-	-	4,739,96 1	չի իրականացվել
IV.5.a	Բարձրավոլու էլեկտրական ցանցերում էներգիայի կորստի կրճատում: ՀԲ էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն	Էներգիայի արտադրություն, բաշխում	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ 2020 թ.	-	-	-	2,560	չի իրականացվել
IV.5.b	Էներգետիկ կորուստների կրճատում բարձրավոլու էլեկտրական ցանցերում: ՎՀԵԲ էլեկտրաէներգիայի	բաշխիչ ցանցերում էներգակորուստների կրճատում	-	-	-	3,311	3,311	չի իրականացվել

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունք	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
	մատակարարման հուսալիություն							
IV.5c.	Էլեկտրաէներգիայի խնայողություններ առկա ցանցի բարելավումների միջոցով, ուսակուվ հզրության ճշգրտում և տրանսֆորմատորների բարելավում	Էներգետիկ ոլորտի արդյունավետության բարելավում և էներգախնայողություններ	Ավելացը՝ 2012թ. ավարտը՝ 2017 թ.	-	-	18,000	18,000	չի իրականացվել
IV.5.d.	Էլեկտրաէներգիայի կորուստների կրճատում ցածրավոլտ ցանցերում, <ԷՑ	Էներգիայի կրճատված կորուստներ բաշխիչ ցանցերում	Ավելացը՝ 2016թ. ավարտը՝ 2020 թ.		62,072	62,072	62,072	չի իրականացվել
IV.6	Վերականգնվող էներգիայի ընդլայնված կիրառում	Միջոցառումը մշակված է իրականացված լավագույն փորձի հիման վրա	Ավելացը՝ 2020 թ. և հետո	5	10	12	16	նոր միջոցառում
IV.6.b	Երկրաշերմային շերմային պոմպեր կենտրոնական շեռուցման համար	Տարածքների ջեռուցում, էներգաարդյունավետություն, էներգիայի վերականգնվող աղբյուրներ, <ՄԳ	Ավելացը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	-	705	705	705	նոր միջոցառում
IV7	Բաշխված ՎՀ արտադրության զարգացում ցանցին միացման միջոցով	Բաշխված արտադրություն, արևային էներգիա, Էլեկտրաէներգիայի ավտոնոմ արտադրություն, միացում ցանցին	Ավելացը՝ 2016թ. ավարտն՝ ընթացիկ	357	608	2,729	5,094	-
			Ընդամեն ըՄՎտժ	57,233	402,08 2	551,925	5,623,03 0	
			Ընդամեն ըՏՆՀ	4,921	34,573	47,457	483,494	
Տրանսպորտ/Շարժունակություն								
V.1	Օրենսդրական դաշտի մշակում վառելիքի արդյունավետության և մերենաների արտանետումների նորմերի վերաբերյալ	Կարգավորող միջոցառումներ, իրականելիության ուսումնասիրություններ	Ավելացը՝ 2008թ. ավարտն՝ ընթացիկ	-	-	-	-	մասնակի իրականացվա ծ

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
V.2	ԷԱ տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության տարածում	տեղեկատվություն	-	-	-	-	-	չի իրականացվել
V.3	Միկոռավտորուաների շարունակական փոխարինում ուղևորափոխադրող մեծ ավտորուաներով	Ճանապարհային տրանսպորտ	Ակիզբը՝ 2012թ. ավարտը՝ 2017թ.	821,022	1,045,39 1	1,118,24 5	1,267,202	մասնակի իրականացվա ծ
V.4	Էլեկտրական հանրային տրանսպորտի ընդլայնում և արդիականացում Երևան քաղաքում	Էլեկտրական տրանսպորտ (մետրո)	Ակիզբը՝ 2015թ. ավարտը՝ 2020թ.	-	5,294	5,294	5,294	մասնակի իրականացվա ծ
		Էլեկտրական տրանսպորտ (մետրո)	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	-	-	-	-	նախա տեխնիկա- տնտեսկան փուլում
V.5	Երկաթուղային տրանսպորտի ցանցի ընդլայնում և արդիականացում (ուղևորային և ապրանքատար)	Երկաթուղային տրանսպորտ	Ակիզբը՝ 2010թ. ավարտն՝ ընթացիկ	582	862	972	1,206	մասնակի իրականացվա ծ
V.6	Ճանապարհային մեքենաների շարունակական անցում թենգինից 'սեղմված բնական գազի (ՄԲԳ)	Ճանապարհային տրանսպորտ	Ակիզբը՝ 2008թ. ավարտն՝ ընթացիկ	-	-	-	-	մասնակի իրականացվա ծ
V.7	Էլեկտրատրանսպորտի ցանցի համապարփակ զարգացում՝ Երևանի ագլոմերացիայի հանրային տրանսպորտի չքավարարված պահանջարկին լուծում տալու համար	տեղեկատվություն, պյանավորում	Ակիզբը՝ 2016թ. ավարտն՝ ընթացիկ	-	-	-	-	-
			Ընդամեն ը ՄՎտժ	821,604 7	1,051,54 7	1,124,511	1,273,702	
			Ընդամեն ԿՏՆՀ	71	90	97	110	

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
Գյուղատնտեսություն								
VI.1	Գյուղական զարգացման ծրագիր: Բարձր արդյունավետության գյուղատնտեսական մեթնաների ներկրում	Ֆերմերներ	Ակիզբը՝ 2013թ. ավարտը՝ 2020թ.	9	9	9	9	մասնակի իրականացվա ծ
VI.2	Բարձր արդյունավետության տրակտորների ներկրում, ճապոնական Մ2Գ	Ֆերմերներ	Ակիզբը՝ 2010թ. ավարտը՝ 2012 թ.	5	5	5	5	իրականացվել է ըստ պլանավորվա ծի
VI.3	Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր, ՀԲ	Գյուղական ոռոգման սպառողներ	Ակիզբը՝ 2013թ. ավարտը՝ 2017թ.	1,267	1,267	1,267	1,267	մասնակի իրականացվա ծ
VI.4	Ոռոգման համակարգի վերականգնման արտակարգ անհրաժեշտության ծրագիր, ՀԲ	Գյուղական ոռոգման ջրի սպառողներ	Ակիզբը՝ 2009թ. ավարտը 2013թ.	78	73	73	73	իրականացվել է ըստ պլանավորվա ծի
VI.7	ԱՄՆ Մ2Գ մաքուր էներգիա և ջուր ծրագիր	Գյուղական համայնքներ	Ակիզբը՝ 2013թ. Ավարտը՝ 2015թ.	150	150	150	150	իրականացվել է ըստ պլանավորվա ծի
VI.10	Ոռոգման համակարգի արդիականացում, ինստի- տուցիոնալ կարողությունների հզորացում, ՀԲ	Գյուղական ոռոգման սպառողներ, ֆերմերներ	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	-	19,000	19,000	19,000	նոր միջոցառում
VI.13	Էներգաարդյունավետ ջերմոց	Մասնավոր ջերմոցային ոլորտ	Ակիզբը՝ 2011թ. ավարտը՝ 2020 թ.	-	425	480	591	մասնակի իրականացվա ծ
VI.15	Գյուղմթերքի դասակարգում ըստ որակի	Մշակողներ, ֆերմերներ	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝	-	8,620	25,900	51,700	նոր միջոցառում

№	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությ ունը	Ստացված (միայն 2014-ի համար) կամ ակնկալվող էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎտժ)				Կարգավիճա կն ըստ առաջին ԷԳԾ-ի
				2014	2017	2018	2020	
			2020 թ.					
VI.16	Գյուղատնտեսական մեքենաների պարկի թարմացում	Ֆերմերներ	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	-	134	201	269	Նոր միջոցառում
VI.18	Ինքնահոս ոռոգման ներդրում	Ֆերմերներ	Ակիզբը՝ 2016թ. ավարտը՝ 2020թ.	-	17,200	34,500	51,700	Նոր միջոցառում
		Ընդամենը (ՄՎտժ)		1,508	19,223	19,223	19,223	
		Ընդամենը (ՄՎտժ)		0	2	2	2	
	Ընդամենը	ՄՎտժ		1,294,6 46	2,366,2 67	2,655,6 51	8,144,53 6	
		ԿՏՆՀ		5,064	39,674	52,918	489,756	

2 ԱՌԱՋՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԱԿԱՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացառությամբ որոշ հիդրոէներգետիկ ռեսուրսների և փոքր քանակի էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների (ներառյալ վառելափայտը, որի օգտագործումը հանգեցրեց լուրջ անտառհատումների), Հայաստանի Հանրապետությունը զուրկ է ընդունված սեփական (հանքային և ատոմային) վառելիքի այլ ռեսուրսներից, նաև տարանցիկ երկիր չէ նավթի և գազի համար: Այդպիսով, երկիրը մեծապես կախված է էներգիայի ներկրումից, ինչն աճող բեռ է ներկայիս պարտքի վրա: 2012թ. էներգիայի ներկրումը կազմել է մատակարարված ընդհանուր առաջնային էներգիայի 90%՝ 3.377 կտնի: Էներգիայի ներկրումների ԸԱԷԱ մասնաբաժինը հիդրոպոտենցիալից կախված թեթևակի տատանվում է: Երաշտային տարիներին ներկրումն ավելանում է:

Չնայած վերջին տարիներին կորուստները նվազել են, այնումանենայնիվ, էներգիայի ընդհանուր կորուստները դեռևս բարձր են: Մատակարարվող ընդհանուր առաջնային էներգիայի մոտ 30% կորչում է փոխակերպման, տեղափոխման և բաշխման ժամանակ (ԱՄՆ Մ2Գ, 2014): Սա ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ՄՖՀ-ից էներգետիկ ոլորտի համար խնդրած աջակցությունը, հիմնականում, կենտրոնանում է կորուստների կրճատման, բաշխիչ ցանցերի հուսալիության և արդյունավետության բարձրացման վրա:

Այս ծրագրով նախատեսվող ԷԱ բոլոր միջոցառումները վերջնական օգտագործողների շրջանում էներգիայի սպառման կրճատմանը միտված միջոցառումներ են: Նոյնը վերաբերում է նաև ԷԱ միջոցառումներին, որոնք իրականացվում են էլեկտրաէներգիա և ջերմային էներգիա արտադրող էլեկտրակայաններում: Անհրաժեշտ է շեշտել, որ էներգիայի վերջնական օգտագործողների հատվածում առաջնային էներգիայի սպառումը կրճատելու միջոցառումների իրականացումն, էներգիա արտադրող էլեկտրակայանների համեմատությամբ, զգալիորեն ավելի նպաստավոր է: Պատճառն այն է, որ էներգիայի արտադրության ժամանակ բացի առաջնայինից, երկրորդային էներգիայի փոխակերպման ժամանակ տեղի ունեցող կորուստներից, լրացուցիչ կորուստներ լինում են նաև փոխանցման և բաշխման ընթացքում:

2.1 Բարձրավոլտ ցանցերում կորուստների կրճատումը և էներգամատակարարման հուսալիության բարձրացումը Հայաստանում

Բոլոր մակարդակներում էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման լավագույն մոտեցումը էլեկտրաէներգիայի մատակարարման (փոխակերպված էներգիայի արտադրություն, տեղափոխում, բաշխում) և սպառողների կողմից էներգիայի վերջնական սպառման կանխատեսումն է:

Աղյուսակ 7. Էներգիայի կորուստները Հայաստանի էներգետիկ համակարգում

Տարեկան	2005	2010	2011	2012	2013
Էներգիայի փոխակերպման կորուստները		768.216	897.205	897.192	

(Կորնի)					
Կորուսպները էլեկտրաէներգիայի փոխանցման ընթացքում (ԳՎԺ)	97.23	101.43	137.2	145.8	138.7
Էլեկտրաէներգիայի բաշխման կորուսպները (ԳՎԺ)	810.00	705.40	766.8	803.5	810.0
Կորուսպները կենսառուացված ջեռուցման խողովակաշարերում			11.22	4.53	3.48
Կորուսպները բնական գազի խողովակաշարերում (մլն. մ³)			134.35	139.00	141.63


Ինչպես նշված է աղյուսակում, փոխանցման և բաշխման ընթացքում առաջացող կորուստները զգալի են և դրանց նվազեցումը Կառավարության առաջնահերթությունների ցանկում է:

Կորուստների նվազեցմանն ու բաշխիչ ցանցերի արդյունավետությանն ուղղված պլանավորված ծրագրերը ներառում են հետևյալը.

- ՎՀԵԲ – Հայաստանի Էներգամատակարարման վերականգնման ծրագիր. Փուլ 1. Հայաստանում 220 կՎ փոխանցման ցանցի և ենթակայանների վերանորոգում (65,000,000 եվրո), որից.
- ՀԲ էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր: Վերականգնել հիմնական ենթակայաններն ու փոխանցման հոսանքագծերը, որոնք կարևոր են ողջ համակարգում էլեկտրական հոսանքի մատակարարման հուսալիության համար (41,550,000 ԱՄՆ դոլար հիմա) կամ 66,600,000 ԱՄՆ դոլար, համակարգի կորուստները կրճատելով 2.2-2.7%-ից մինչև 0.7% և 2030թ.հասնելով դրական գուտ տնտեսական օգուտի:

2.2 Ցածրավոլտ էլեկտրական ցանցերում կորուստների կրճատումը

Ի լրումն բարձրավոլտ ցանցերի կորուստներին և հուսալիության խնդիրներին, Հայաստանի էլեկտրական ցանցերի կողմից շահագործվող ցածրավոլտ ցանցերում կորուստները կարգավորող մարմնի կողմից թույլատրվածից մնում են բարձր:



Գծապատկեր 10. Էներգիայի կորուստները 0.38-110 ԿՎ ցանցում (ցանց մտնող էներգիայի %)

Աղյուրը՝ <ԾԿՀ, 2015

Իրական կորուստները մոտ 10%-ով ավելի են, քան թույլատրվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Հետևաբար, երկրորդ ԷԳԾ-ը ցածրավոլտ ցանցերում կորուստների կրճատման համար պետք է ներառի միջոցառումներ:

Ի լրումն վերոնշյալի, Հայաստանի էլեկտրական ցանցերի (<ԷՑ) ցածրավոլտ ցանցում կորուստները մշտապես անցել են կարգավորվող թույլատրելի սահմանը: Մանրամասների համար տես' ստորև աղյուսակը:

Գծապատկեր 10-ում պատկերված կորուստների թվային արժեքները, էներգախնայողության ներուժի հետ միասին, ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Կորուստները <ԷՑ-ի համակարգում և էներգախնայողության ներուժը


Կորուստները, մլն կՎտժ	2009	2010	2011	2012	2013	2014	Միջինը
Իրական	711.0	705.4	766.9	803.5	810.0	789.9	764.4
Կարգավորվող սահմանը	650.0	668.8	721.8	732.6	755.2	685.8	702.4
Տեխնիկական	623.7	651.2	703.3	679.3	635.2	617.3	651.7
Էներգախնայողության ներուժը, մլն կՎտժ	2009	2010	2011	2012	2013	2014	Միջինը

Ընդամենը	60.9	36.6	45.1	70.9	54.8	104.1	62.1
Վաճառքը, մլն դրամ ներառյալ ԱԱՀ	2009	2010	2011	2012	2013	2014	Միջինը
մլն. կՎտժ	5,089.7	5,213.1	5,636.6	5,923.5	6,076.9	6,141.9	5,680.3
մլն. դրամ ներառյալ ԱԱՀ	107,297.9	116,519.8	125,810.8	131,801.5	155,916.9	188,178.2	137,587.5
Համակարգի միջին սակագինը, դրամ/կՎտժ	21.1	22.4	22.3	22.3	25.7	30.6	24.0
Ֆինանսական խնայողությունների պոտենցիալը, մլն. դրամ	2009	2010	2011	2012	2013	2014	Միջինը
Total	1,284.7	817.6	1,006.9	1,577.5	1,406.3	3,189.3	1,547.1

Ինչպես երևում է վերը ներկայացված այլուսակից, ՀՀ-ն ունի տարեկան մոտ 62 ԳՎտժ էներգիա խնայելու ներուժ, որի արդյունքում կրճատված առևտրային կորուստների շնորհիվ կարող են խնայվել միջինը 1.5 մլրդ. դրամ ֆինանսական միջոցներ:

2.3 ԵԱ-ինտեգրված վերականգնվող էներգիայի կիրառման խթանումը

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը չունի սեփական հանքային վառելիք, երկրի կայուն զարգացման և ազգային անվտանգության համար չափազանց կարևոր են էներգաարդյունավետությունն ու վերականգնվող էներգիայի զգալի ներուժի օգտագործումը: ԷԱ և ՎԵ լուծումների համար ներդրումների խթանման և մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների ընդլայնված կիրառման համար, վերականգնվող էներգիայի օգտագործման հասանելիության ընդլայնման նպատակով վերարտադրելի տեխնիկական և ֆինանսական մոդելներ ստեղծելու համար, Հայաստանի կառավարությունը միացավ դրույների համայնքին: 2011թ. վերականգնվող էներգիայի ճանապարհային քարտեզը սահմանեց ՎԵ տեխնիկատնտեսական ներուժը (օրինակ, տարեկան մոտ 4 տերավատտ-ժամ արևային ֆուտովոլտակի (ՖՎ) էլեկտրաէներգիա, և 4 ՏՎտժ-ից ավելի՝ երկրածերմայինշերմային պոմպերով): 2013թ. Հայաստանի Հանրապետության Նախագահը ստորագրեց էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը: 2014թ. վերականգնվող էներգիայի ծավալների մեծացման ծրագրի ներդրումային պլանը վերականգնվող էներգիայի զարգացման համար սահմանեց թիրախներ մինչև 2025թ.: 2015թ. հունիսին իրականացված Հայաստանի ՎԵ սարքավորումներ մատակարարողների ուսումնասիրությունը բացահայտեց, որ ՎԵ կիրառման առումով տնտեսության բազմաթիվ ոլորտներում զգալի աճի միտում կա: Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է ուսումնասիրության արդյունքում բացահայտված տեղական ընկերությունների կողմից վերջին հինգ տարիների ընթացքում ներդրված արևային պանելների հավաքական տարածքները և



Գծապատկեր 11. Տեղադրված արևային ՖՎ
(մակերեսը և հզորությունը), 2011-2015


հզորությունը: Թեև միտումը դրական է, ներդրված հզորությունները դեռևս 2020թ.-ի համար սահմանված արևային ՖՎ թիրախի 0,2%-ից պակաս են: Արևային ՖՎ էլեկտրաէներգիայի օգտագործման մակարդակը կարող է խթանվել ցանցին միացվելու հնարավորությամբ և ցանցին միացված զուգահեռ շահագործմամբ:

2.3.1 Զուտ չափման փոխհաշվարկի խթանում արևային էլեկտրաէներգիայի անկախ արտադրողների համար

Զուտ չափման փոխհաշվարկի քաղաքականությունը խթանեց տեղում արտադրվող վերականգնվող էներգետիկայի ընդլայնում, որը հայտնի է նաև որպես բաշխվող արտադրություն: Ընդունված բաշխվող արտադրության աղբյուրները, որոնք կարող են տեղակայվել տանը, դպրոցում կամ մասնավոր ձեռնարկությունում, ի տարբերություն ծառայություններ մատակարարող կառույցների, արևային պանելներն են, միկրոստուբինները կամ վերականգնվող էներգիայի այլ աղբյուրները: Ավելացող թվով հաճախորդներ իրենց սեփական աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրելու համար օգտագործում են զուտ չափման փոխհաշվարկի համակարգը: Զուտ չափման փոխհաշվարկի համակարգը ՖՎ հաճախորդներին հնարավորություն է տալիս իրենց էլեկտրաէներգիայի սպառման համար ունենալ զրոյական հաշիվ, եթե այն համարժեք փոխհատուցվում է ՖՎ արտադրմամբ: Այդ դեպքում, եթե նրանք ավելի շատ էլեկտրաէներգիա են արտադրում և արտահանում դեպքի ցանց, քան սպառում են, նրանք համապատասխան փոխհատուցում կստանան, իսկ եթե սպառումը գերազանցում է ՖՎ արտադրած էներգիան, ապա նրանք վճարում են հավելյալ սպառման համար: 2003թ. էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքը զուտ չափման փոխհաշվարկի համակարգի համար ստեղծեց իրավական հիմքեր: 2005թ. ՀԾԿՀ-ն մշակեց ընթացակարգեր վերականգնվող էներգիայի անկախ արտադրողների զուգահեռ գործունեության համար, որը սահմանեց մինչև 150ԿՎու հզորությամբ միկրոարտադրական կառույցների ոչ-առևտրային հարաբերությունները (ՀԾԿՀ որոշում №194, 30.11.2005թ) էլեկտրական ցանցի հետ: Սակայն հարկերի հաշվառման պատճառով այս որոշման կիրարկումն անհաջողության մատնվեց, ինչը անհապաղ լուծում է պահանջում: Էլեկտրաէներգիայի աճող սակագների պայմաններում բաշխվող ՎՀ արտադրության զարգացումը խթանելու համար փոքրածավալ արևային ՖՎ համակարգերը մեծ ներուժ են ներկայացնում:

2.3.2 Արևի ջերմային էներգիայի ավելի լայն օգտագործում

Արևային ջրատաքացուցիչների շուկան արագորեն զարգանում է: Երկրորդ ԷԳԾ-ի նպատակով իրականացված մատակարարների ուսումնասիրությունը բացահայտեց ակնկալվածից շատ ավելի արագ միտումներ (տես՝Գծապատկեր 12):



Գծապատկեր 12. Արևային ջրատաքացուցիչների ներդրված հզորության գնահատված միտումները արդյունքներն ու խնայողությունները

Էլեկտրաէներգիայի աճող գները, վարկային ֆինանսավորման առկայությունը ՄՖՀ-ներից (ՎՃԵԲ, GGF, AFD, ակնկալվող KfW պլանները բազմազանեցնելու ներկայիս փոքր ՀՀԿ-երի վարկավորումը՝ ծածկելով նաև ԱԶՏ-ը) Հայաստանում տարբեր սպառողների խմբերում արևային ջերմային տեխնոլոգիաների համար հանգեցրեց ԱԶՏ-ների հզորությունների 4.7 ՄՎտ-ից ավելի ընդլայնմանը, ինչի արդյունքում 2015թ. առաջին կիսամյակի դրույթամբ ջերմային էներգիայի տարեկան հավաքական արդյունքը կազմեց 8,600 ՄՎտ-ից ավելի: Հաշվի առնելով վարկերի ավելացող հասանելիությունը և ԱԶՏ-ների վարկավորման ծրագրերը, եթե աճի միտումը շարունակվի, ինչի հավանականությունը մեծ է, Հայաստանը կարող է անցնել ԱԶՏ ներդրված հզորության և էներգիայի արտադրության 2020թ.-ի համար սահմանված թիրախներից (ներկայիս տեմակերպ մինչև 2020թ. առևական կազմությունը կազմությունը, ինչը SREP թիրախից ավելի է 5ՄՎտ-ով, իսկ էներգիայի արտադրությունը տարեկան 13 ԳՎտ/ժ –ի փոխարեն կլինի 25ԳՎտ, որը սահմանված է SREP ներդրումային պլանով):⁷

2.3.3 Երկրաշերմային պոմպերի փորձարկում չափելի կենտրոնացված ջեռուցման լուծումների համար

Հայաստանի Հանրապետության համար մեկ այլ ԷԱ-ինտեգրող լուծում են Երկրաշերմային ջերմային պոմպերը, որոնք ըստ գնահատումների՝ տարածքների ջեռուցման համար զգալի ներուժ ունեն: Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգիայի ճանապարհային քարտեզը Երկրաշերմային էներգիայի համար գնահատել է առավելագույնը 75ՄՎ Երկրաշերմային հզորություն, որը կարող է ավելին լինել, եթե օգտագործվի մոտակա վայրերին տաք ջրի և ջեռուցման մատակարարման համար: Ի տարբերություն այլ Երկրների, Հայաստանի Հանրապետությունում Երկրաշերմային ջերմային պոմպերի կիրառական փորձ չկա:

⁷ Վերականգնվող էներգիայի ծավալների մեծացման ծրագրի (SREP) ներդրումային պլան, 2014

Առողջարանային Զերմուկ քաղաքի համար Երկրաշերմային Երկրաշերմային Ձեռուցման համակարգի նախագծումն ու փորձարկումը նախատեսում է մատակարարել քաղաքային, բնակելի և առևտրային շենքերին (առողջարան/հանքային աղբյուրներ), որոնք օգտագործում են տեղական բարձր-շերմաստիճանային հանքային աղբյուրների ջուրը: Զերմուկն ունի Երկարատև Ձեռուցման սեզոն և զբոսաշրջիկների մեծ հոսք, ինչը բազմաթիվ հյուրանոցների և հանգստյան տների համար ստեղծում է որակյալ Ձեռուցման և տաք ջրի ծառայությունների մեծ պահանջարկ: Զերմուկում համակարգի արդյունավետության դեպքում այն հնարավոր կլինի կրկնել նաև Հայաստանի այլ քաղաքներում:

Նման ներդրումների մակարդակն անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր մասնավոր տեղանքի համար (հորատանցքերի փոփոխվող արժեքներ): Այնուամենայնիվ, Հայաստանի սովորական պայմաններում այս տեխնոլոգիայի տնտեսական արդյունավետությունն ու նպատակահարմարությունը ստուգելու համար, բնակելի և հանրային շենքերի Ձեռուցման նպատակով անհրաժեշտ է պիլոտային ծրագիր տիպային 5-հարկանի շենքի համար: Կարևոր է փորձել ձևավորել պետական-մասնավոր գործընկերություն, երբ մասնավոր էներգետիկ ծառայություն տրամադրող ընկերությունը քաղաքային գույքի օգտագործման և մասնավոր կառավարման, ներդրումների համաֆինանսավորման և գործնական փորձի ու կարողությունների օգտագործման համար կարող է համագործակցել տեղական կառավարման մարմնի (այս դեպքում, Զերմուկի քաղաքապետարանի) հետ: Միևնույն ժամանակ, Ձեռուցման համար Երկրաշերմային Ձերմային պոմպերի օգտագործումը կարող է կրճատել Ձեռուցման համար ներկրված գազի պահանջարկը և դրա հետ կապված Ձերմոցային գազերի արտանետումները, օգտագործել տեղական մաքուր և կայուն էներգետիկ ռեսուրսը:

Առաջնային էներգախնայողության միջոցառումների գնահատումը ներկայացված է արդյունաբերության, Էլեկտրաէներգիայի և ՓՄՁ-ներին վերաբերող բաժնում:


2.3.4 Գյուղատնտեսական թափոններից կենսագագի ստացում

Հայաստանի Հանրապետության գյուղական վայրերում բավականին լայն տարածում ունի գոմաղբի օգտագործումը՝ որպես վառելիք: << Կիլմայի փոփոխության Երրորդ ազգային գեկույցի տվյալների համաձայն՝ 2010թ. որպես խոնավ վառելիք այրվող խոշոր Եղերավոր անասուններից ստացված չոր գոմաղբը կազմել է մոտ 505 հազ. տ., որից այրման միջոցով ստացված էներգիայի քանակը համարժեք կլիներ միջինը 108 ԳՎտժ: Ենթադրելով, որ համապատասխան տեխնիկական աջակցության պարագայում, << տարածքում գոյացած գոմաղբը որպես վառելանյութ աբողջությամբ կսպառվի բնակելի սեկտորում, համապատասխան կանխատեսումներ են արվել ԷԳԾ առաջնային էներգիայի ստացման միջոցառումների ցանկում:

3 ԵՆԵՐԳԻԱՅԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՁՆԱՍՊԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ


3.1 ԶԵՐՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Ինչպես երևում է Գծապատկեր14-ից, Հայաստանի Հանրապետության Էներգիայի վերջնասպառումը զգալի չափով տեղի է ունենում շենքերում (բնակելի, հանրային և առևտրային) և տրանսպորտի ոլորտում: Հատկանշական է, որ երկու ոլորտներն էլ ՀՆԱ-ում ունեն աննշան ներդրում: Արդյունաբերությունն օգտագործել է էներգիայի միայն 18%-ը, մինչդեռ՝ ՀՆԱ-ին տրամադրել՝ մոտ 33%: Առևտրային և հանրային ծառայությունները մոտ 16% են իսկ գյուղատնտեսությանը՝ մոտ 7%: Եղանակային պայմաններից կախված բնակելի ոլորտի մասնաբաժինը տատանվում է:



Գծապատկեր 13. Էներգիայի վերջնասպառման կառուցվածքն ըստ ոլորտների, 2012թ.

Համաձայն ստորև բերված նկարի, առևտրային և հանրային ծառայությունների ոլորտը միակն է, որը վերջին տարիներին էներգիայի սպառման կայուն աճ է ցուցաբերել: Կանխատեսված տնտեսական միտումների համաձայն ակնկալվում է, որ էակես կամ արդյունաբերության և բնակելի շենքերի էներգասպառումը, ինչը կհանգեցնի նաև էներգիայի վերջնական սպառման զգալի աճի: Էներգիայի վերջնական սպառման դինամիկան և կանխատեսումը ներկայացված են Գծապատկեր15-ում:



Գծապատկեր 14. Էներգիայի վերջնական օգտագործման միտումն ու կանխատեսումներն ըստ ոլորտի⁸

3.1.1 Էներգիախնայողության վերջնական օգտագործման ազգային ընդհանուր թիրախները և առաջընթացը նրանց նկատմամբ

3.1.1.1. Էներգիայի վերջնական օգտագործման 2014թ.միջանկյալ թիրախների ձեռքբերումները

2010թ. էներգետիկ հաշվեկշիռը կազմվել է էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրից (ԷԳԾ) անմիջապես հետո: Այսպիսով, առաջին ԷԳԾ-ի ավարտի ինդիկատուլ թիրախը, հետագայում հաշվարկվել է Երկրորդ ԷԳԾ-ը մշակող թիմի կողմից՝ օգտագործելով 2010թ.⁹ Էներգետիկ հաշվեկշիռ տվյալները: Քանի որ Երկրորդ ԷԳԾ-ը կազմվել է 2015թ., ապա առաջին ժամանակահատվածը պետք է ընդգրկեր 2011-2014թթ.: Առաջին ԷԳԾ-ի առաջին ժամանակահատվածի էներգախնայողության թիրախը էներգիայի 2010թ. ելակետային սպառումն էր (1900.6 կտնի): Երկրորդ ԷԳԾ-ը սահմանում է միջանկյալ թիրախի 3.3%, որը հավասարագոր է 63.3 կտնի: Առաջին ԷԳԾ-ի գնահատումը բացահայտեց, որ այս թիրախը գերազանցվել է: Ընդհանուր էներգախնայողությունը մինչև 2014թ. կազմում էր 6.3% (120.3 կտնի):

Երկրորդ ԷԳԾ-ը շարունակում է առաջին ԷԳԾ-ի համապատասխան միջոցառումները և առաջարկում է նաև միջոցառումների և էներգախնայողության թիրախների թարմացված փաթեթ Երկրորդ ժամանակահատվածի համար, ընդգրկելով 2015-2017թթ.: Երկրորդ ԷԳԾ-ը հետևում է ինչպես 2018 թ. ինդիկատովիկ փուլանշանին, այնպես էլ մինչև 2020թ. Երկարաժամկետ պլանին: Փաստաթուղթը կազմվել է, իհմնվելով էներգետիկ համայնքի կողմից առաջարկվող ձևաչափի

⁸ Աղյուսը՝ ԱՄՆ ՍԶԳ 2012թ. հղում 2015-2030թթ. համար

⁹ Հայաստանում ցածր ախտանիտումների գարգարման ռազմավարության կարողությունների ընդլայնման ծրագիր

վրա, որտեղ 01.10.2011թ.-ից սկսած Հայաստանի Հանրապետությունն ունեցել է դիտորդական կարգավիճակ:

Համաձայն ԷԳԾ-ի մեթոդաբանության՝ Երկրորդ ԷԳԾ-ի օգտագործվող ելակետը անընդմեջ իրար հետևող երեք տարիների (2010, 2011 և 2012թթ.) էներգիայի միջին սպառումն է՝ այս դեպքում 2,047 կտնի: Հիմք ընդունելով առաջին ԷԳԾ-ի շրջանակներում գնահատված առաջընթացը և էներգաարդյունավետության բարելավման ընթացիկ և նոր միջոցառումներից ակնկալվող ազդեցությունը, Երկրորդ ԷԳԾ-ը 2017թ. համար առաջարկում է թիրախների նոր շարք (9.9% առաջին ԷԳԾ-ի առաջարկվող 10.4%-ի փոխարեն), 2018թ. համար (11.2%-13.8%-ի փոխարեն), և ավելի բարձր ընդհանուր թիրախ 2020թ. համար (34.2%՝ 22.3%-ի փոխարեն):

Աղյուսակ 9. Ազգային ինդիկատուվ թիրախները Երկրորդ ԷԳԾ-ի շրջանակներում

Ազգային ինդիկատուվ թիրախ 2020թ. (կտնի)			422.2
Ազգային ինդիկատուվ թիրախ 2018թ. (կտնի)			282.0
Ազգային միջանկյալ թիրախ 2017թ. (կտնի)			212.6
Ազգային միջանկյալ ինդիկատուվ թիրախ 2014թ. (կտնի)			107.8
Թիրախի ոլորտային բաժանումը	Ոլորտային թիրախ 2014թ. (կտնի)		Էներգախնայողության վերանայված գնահատված թիրախ
	Թիրախ	Ձեռքբերված	(կտնի)
Հորիզոնական և համընդհանուր /խաչածն հատվող/	-	35.5	61.0 69.9 91.5
Բնակելի	18.8	0.1	31.3 34.1 51.4
Ծառայություններ	3.5	55.1	143.3 163.7 215.3
Արդյունաբերություն	24.0	1.4	37.3 53.1 291.6
Տրանսպորտ	15.5	70.6	90.4 96.7 109.5
Գյուղատնտեսություն	1.5	0.1	4.0 7.0 10.7
Ընդամենը՝	63.3	162.8	367.4 424.6 770.1
<i>Տոկոսը (%) (Ելակերպային սպառման համեմատ)</i>	<i>3.3%</i>	<i>8.6%</i>	<i>17.9% 20.7% 37.6%</i>

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող էներգաարդյունավետության որոշ ծրագրեր, մասնավորապես, միջազգային ֆինանսական հաստատությունների և բանկային համակարգի կողմից ֆինանսավորվողները, նախկին կատարողականության առումով խորությամբ գնահատվել են, սակայն շուկայի փոփոխականության պատճառով ապագա վարկավորման վերաբերյալ չունեն իրատեսական որևէ կանխատեսում: Այդ պատճառով հնարավոր է, որ Երկրորդ ԷԳԾ-ի նվազեցված թիրախները երրորդ ԷԳԾ-ի ֆինանսավորման հաշվարկման ժամանակ գերազանցվեն:

3.1.1.2. Վերջնական օգտագործման ընդհանուր էներգետիկ թիրախների հետ կապված ակնկալվող ինայողությունները

Երկրորդ ԷԳԾ-ը ներկայացնում է նոր միջոցառումներ բոլոր ոլորտների համար: Այս միջոցառումները, հիմնականում, վերաբերում են նոր կանոնակարգերի կիրարկմանը, պետական գնումներում էներգաարդյունավետության ինտեգրմանը, արդյունաբերական ու ՓՄՁ էներգասպառողների բարելավված էներգետիկ կատարողականների խրախումանը, էներգիայի վերջնական սպառողների կողմից էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի բաշխվող արտադրության խթանմանը և տրանսպորտի ոլորտում համակողմանի մոնիթորինգի ու պլանավորման մոտեցման ներդրմանը:

Աղյուսակ 10. Առաջնային և վերջնական էներգիայի վերաբերյալ թիրախների և ստացված/կանխատեսված էներգախնայողության պատկերը

	Էներգիայի խնայողության վերջնական թիրախը		Էներգիայի խնայողության նախնական թիրախը	
	բացարձակ արտահայտմա մբ (տնհ)	Տոկոս (%) (համեմատած ելակետային վերջնական սպառման հետ)	բացարձա կ արտահայ տ-մամբ (տնհ)	Տոկոս (%) (համեմատած ելակետային առաջնային սպառման հետ)
2014 (միջանկյալ ժամանակահատված)	163.1	8.6%	1.4	0.07%
2017 (միջանկյալ ժամանակահատված)	212.6	17.9%	71.7	3.50%
2018 (ընդհանուր ժամանակահատված)	424.6	20.7%	53.1	2.59%
2020 (լրացուցիչ ժամանակահատված)	770.1	37.6%	291.6	14.25%

Սա հիմնականում վերաբերում է տաք ջրի ստացման համար արևային էներգիայի օգտագործման աճին, ջերմային պոմպերի նկատմամբ մեծ ուշադրությանը և կիրառմանը, ինչպես նաև զուտ չափման փոխհաշվարկի միջոցով արևային ֆոտովոլտայիկ տեխնոլոգիայի օգտագործման աճին: Նախատեսված միջոցառումները սերտորեն կապված են վերականգնվող էներգետիկայի ավելի լայն օգտագործման խթանման միջոցառումների, ռազմավարական փաստաթղթերի, գործողությունների պլանների հետ:

2017թ. վեր ազգային միջանկյալ ինդիկատիվ թիրախները հաշվարկվել են առաջին ԷԳԾ-ի իրականացման ընթացքում էներգիայի վերջնական միջին սպառման հիման վրա:

Աղյուսակ 11. Ազգային ինդիկատիվ թիրախները

Ինդիկատիվ թիրախ 2017թ. (կտնհ)	18.2%	
2014թ. իրականացված խնայողություններ (նավթի համարժեքի կիլոտոննա)	8.8%	
Ոլորտը	Ոլորտի թիրախը	
	2017թ. (կիլոտոննա նավթային համարժեք)	%
Հորիզոնական	61.0	
Բնակելի	31.3	4.17%
Հասարակական սեկտոր	143.3	53.49%
Արդյունաբերություն	37.3	10.29%
Տրանսպորտ	90.4	17.67%
Գյուղատնտեսություն	4.0	2.77%
Ընդամենը	367.4	17.95%

Հայաստանի Հանրապետությունում Էներգաարդյունավետության միջոցառումների վերաբերյալ մշակվել են զգալի թվով ռազմավարական փաստաթղթեր և կանոնակարգեր: Այս փաստաթղթերն ընդգրկում են Էներգաարդյունավետության միջոցառումների իրականացմանն ուղղված տարրեր գործողություններ: Համակցված բնույթի և համընկնող արդյունքների պատճառով անհատական գործողությունների ազդեցությունը դժվար է առանձնացնել և գնահատել: Այդ իսկ պատճառով, քանի որ այս նպատակի համար չկան սահմանված չափանիշներ և մեթոդներ, ապա այդ միջոցների ազդեցությունը չի կարող ճշգրիտ գնահատվել:

Երկրորդ ԷԳԾ-ի միջոցառումների կլիմայի փոփոխության մեջման պոտենցիալը գնահատվել է և ներկայացվում է ստորև բերված աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Ոլորտային միջոցառումների հիման վրա տոննա CO₂ արտանետումներից խուսափումն ըստ թիրախային տարիների

Ոլորտները	Տոննա CO ₂ արտանետումներից խուսափումն ըստ թիրախային տարվա			
	2014	2017	2018	2020
Հորիզոնական և խաչաձև	183,156.88	209,514.79	222,693.74	271,732.41
Շենքեր (բնակարանային)	1,366.26	28,860.00	28,860.00	28,860.00
Հանրային շենքեր և ծառայություններ	186.32	25,493.02	27,292.80	31,249.79
Արյունաբերություն	311.41	790.93	950.77	1,270.45
Տրանսպորտ	31.37	40.15	42.93	48.63
Գյուղատնտեսություն	-	7,636.80	15,318.00	22,954.80
Ընդամենը չարտանետված ԶԳ (տոննա CO ₂)	185,649.64	282,463.77	309,348.93	356,116.08

Օգտագործվել է վերևս՝ ներքև և ներքևս՝ վերև մեթոդաբանությունների համադրությունը: Էներգաարդյունավետության միջոցառումների առաջարկվող փաթեթի իրականացման համար անհրաժեշտ էր ամրապնդել ինստիտուցիոնալ աջակցությունը, մասնավորապես, շենքերում: Նոր բնակարանային օրենսդրության ընդունումը, որը շենքի բնակիչների համայնքի ձևավորման կամ բնակարանային տեխնիկական սպասարկման գործառույթը պրոֆեսիոնալ կազմակերպությանը փոխանցելու նպատակով սահմանում է, որ յուրաքանչյուր բազմաբնակարանային կառույց պետք է շահագործվի որպես իրավաբանական անձ, օրենսդրության մեջ մեծ առաջխաղացում է, որը ԷԱ և ՎՀ վերաբերյալ փոփոխված օրենքի և ենթաօրենսդրական ակտերի կիրարկման հետ միասին այս շենքերին պետք է ընձեռի ավելի արագ վերականգնելու հնարավորություն:

Սեփականատերերի ընկերակցության հիմնադրամը կապահովի բնակարանային սպասարկման ավելի բարձր որակ և շենքերի ջերմային արդիականացման իրականացում: Այս գործընթացը նախատեսվում է մասնավոր սպասարկման ընկերությունների, ինչպես նաև Էներգետիկ սպասարկման ծառայությունների հիմնադրման միջոցով:

«« Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը պատասխանատու է Երկրորդ ԷԳԾ-ի իրականացման մոնիթորինգի և Էներգիայի խնայողությունների չափման ու ստուգման հիման վրա պատրաստված արդյունքների վերաբերյալ հաշվետվության համար: Էներգիայի փաստացի խնայողությունները վերահսկելու, ինչպես նաև առանձին միջոցներից խնայողությունները

հաշվարկելու համար անհրաժեշտ տվյալների բացակայության հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով, ինչն առկա էր սույն ԷԳԾ-ի պատրաստման գործընթացում, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունն էներգաարդյունավետության և էներգախնայողության գնահատման բոլոր գործողություններին հետևելու նպատակով պետք է ստեղծի տեղեկատվական համակարգ: Անհրաժեշտության դեպքում առաջարկանքները կարող են հանձնարարվել (պատվիրվել), ԷԲՊՆ-ից դուրս փորձագետների խմբին:

Երկորդ ԷԳԾ-ի իրականացման համար իրատեսական և կայուն ֆինանսավորման աղբյուրները մեծ մասամբ պետք է տրամադրվեն ֆինանսավորման և շուկայական մեխանիզմների արտաբյուջետային աղբյուրներից: Երկորդ ԷԳԾ-ը ներառում է միջոցառումներ, որոնք դեռևս չունեն ֆինանսավորում: Բյուջետային աղբյուրների շատ փոքր մասը (կենտրոնական և տեղական) պետք է հատկացվի ռազմավարության միջոցառումների մշակմանը, սակագնային բարեփոխումներին, հատուկ միջոցառումների ներքո ծրագրերի պատրաստմանը, այնուամենայնիվ, էներգաարդյունավետության ներդրումների իրականացման համար զգայի միջոցներ են անհրաժեշտ, ինչն էլ կմնա ապավիճելու դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորմանը:

3.1.2 Ազգային թիրախներ գրեթե գրոյական էներգասպառման շենքերի համար

Գրեթե գրոյական էներգասպառման շենքերի (շենքեր, որտեղ էներգիայի սպառումը գրեթե զրո է) համար Հայաստանը պաշտոնապես ազգային թիրախ չի ստեղծել: Այնուամենայնիվ, գործող նորմերի պահանջներից դուրս գտնվող շենքերին աջակցելու համար ձեռնարկվել են որոշ քայլեր: Այս նախաձեռնությունների նպատակն էր ընդլայնել կանաչ ճարտարապետությունը, կայուն համայնքները, «խելացի» քաղաքներն ու կանաչ տնտեսությունը:

Սույն նախաձեռնությունները, մասնավորապես, ներառում են հետևյալ գործողությունները.

- Երևան քաղաքի կենտրոնի վերաբերյալ օրենքի մշակում. նոր կառուցներում էներգարդյունավետության իրականացման համար, եթե դրանք իրականացվելու են Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնում
- Կանաչ Դիլիջան քաղաքի օրենքի մշակում, Տավուշի մարզ
- Երկխոսության և հայեցակարգի մշակում Հայաստանի «խելացի» քաղաքների համար, օրինակ Գորիսում (Սյունիքի մարզ):
- Երևանի Մալաթիա-Սեբաստիա շրջանի Ավետիսյան դպրոցն ու համայնքային կենտրոնը, որոնք կառուցվել են որպես “կանաչ շենք” և տարածաշրջանում առաջինն են հավաստագրվել որպես էներգարդյունավետության և էկոլոգիական նախագծման գծով առաջնորդող, օգտագործում են վերանակնական էներգետիկա և ցածր ածխածնային տարածք են: ՄԱՀԾ գնահատել է, որ շենքում էներգիայի սպառումը կվերաբերված 30%-ով, ինչը նույնիսկ ավելի խիստ չափանիշ է, քան պահանջվում է ԵՄ և ԱՄՆ-ում: Դպրոցի կանաչ տանիքը կապահովվի Զերմամենկուսացում, կրճատելով ջեռուցման և հովացման ծախսերը: Անձրևաջուրը կֆիլտրվի և կլուստակվի որպես ոռոգման ջուր բույսերի, թփերի և ֆուտբոլային դաշտի խոտի ոռոգման համար:
- Տավուշի մարզում կառուցված Դիլիջանի քոլեջը կառուցվել է շենքերի հետազոտության հիմնադրման բնապահպանական գնահատման մեթոդաբանության (BREEAM)¹⁰ կողմից և

արժանացել է լավ գնահատականի: Շենքն ունի կանաչ տանիք, կանաչ պատեր և շենքի կառավարման ամբողջ համակարգը համապատասխանում է առողջապահության, շրջակա միջավայրի, կյանքի անվտանգության, ջրի, նյութերի վերամշակման, էկոլոգիայի, հողօգտագործման և աղտոտման կառավարման բարձր չափանիշներին, ինչպես նաև հիմնվում է շենքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցության վրա:

- ՄԱԶ/ԳԷՀ աջակցությամբ կրթական ծրագրեր և շենքերի համապարփակ նախագծման, վերականգնվող էներգիայի կիրառման, բնապահպանության և էներգարդյունավետ շինարարության վերաբերյալ մշակվել և հանձնվել է Երկլեզու դասընթացներ պարունակող «Կանաչ ճարտարապետություն» 10 դասագիրք:

Հայաստանի Հանրապետությունը և բիզնես համայնքը, չունենալով միջազգային պարտավորվածության որևէ դիրեկտիվ կամ միջազգային չափանիշ գրեթե զրոյական կանաչ կամ պասիվ շենքերի կիրառման համար, վերականգնելով այս մակարդակի գոյություն ունեցող շենքերը, կամավոր հիմունքներով փորձում է աջակցել գրեթե զրոյական էներգասպառման նոր շենքերի կառուցմանը և էներգաարդյունավետության իրականացմանը:

Այս ժամանակահատվածի հիմնական խնդիրները ներառում են դիզայներների կրթական ծրագրեր, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ կառուցապատողների, ճարտարապետների և կապալառուների համար: Այս առաջադրանքներն իրականացվելու են իրականացման առաջնահերթ ոլորտների համար անհրաժեշտ չափանիշների սահմանմանը զուգահեռ, ինչպես նաև պիլոտային տեղանքների կառուցմանն ու այս միջոցառումներն իրականացնելու համար շարժիչ ուժի բացահայտման հետ մեկտեղ, որը կհամապատասխանի ֆինանսական ռեսուրսներին: Այս գործընթացի կամավոր բնույթի պատճառով, այն հնարավոր է խթանել միայն հավաստագրման, հանրության կողմից նման հաջողությունները ճանաչելու միջոցով, ինչը կարող է մասնագիտական ընկերակցությունների և գիտական կառուցների միջոցով շինարարության մեջ գրեթե զրոյական էներգաարդյունավետության ավանդույթ ու մշակույթ սահմանել:

3.2 Հորիզոնական միջոցառումներ

Առաջին ԷԳԾ-ը յոթ առանցքային ոլորտներում սահմանել է մի շարք հորիզոնական միջոցառումներ, որոնք ուղղված են, հիմնականում, իրավական-նորմատիվային դաշտերին, կարողությունների զարգացմանը և էներգարադյունավետության ֆինանսավորմանը: Հաշվի առնելով այս միջոցառումների հորիզոնական բնույթը, դրանց քանակական գնահատումը ներկայացվում է համապատասխան ոլորտային միջոցառումների շրջանակում:

Աղյուսակ 13. Առաջին ԷԳԾ գանահատումը, խաչվող/հորիզոնական միջոցառումներ (առանց քանակական ազդեցության)

Հորիզոնական միջոցառումներ	Էներգախնայողության միջոցառումների նկարագիրը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությունը

I.3.ա.	Վարկավորում տեղական բանկերի միջոցով տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ԷԱ վարկերի վարկային գծեր ստեղծելու համար, նպատակ ունենալով կրճատել էներգիայի սպառումը և բարձրացնել էներգաարդյունավետությունը:	ԷԱ և ՎԵ լուծումներ տնային տնտեսությունների տարածքի շեռուցման և լուսավորության արդյունավետության համար (պատուհաններ, դռներ, շեռուցման մատակարարում, լուսավորություն, բաշխման համակարգեր) և ՓՄՁ-ներ	Սկիզբ՝ 2014թ. Ավարտ՝ 2020թ. (ընթացքում է)
I.3.բ.	Էներգետիկ կայուն ֆինանսական ծրագրեր, որոնք աշխատում են Բիբլոս բանկի հետ ԷԱ տնային տնտեսությունների վարկավորման գծով և HSBC հետ՝ ԷԱ համար, ՓՄՁ-ում:	Բնակարանային էներգիայի վերջնական սպառում, ՓՄՁ արտադրական գործընթացների ԷԱ, տարածքների շեռուցման խնայողություն:	Սկիզբ՝ 2009թ. Ավարտ՝ 2015թ.
I.3.գ.	Հայաստանի կայուն էներգետիկայի ֆինանսավորման հիմնադրամը հիմնել է Էներգոկրեդիտ հիմնադրամը, որի նպատակն է ապահովել էներգետիկ արդյունավետության վարկեր ուղղիդենս և գործարար հաճախորդներին: Մյուս կողմից, , կենցաղային էներգաարդյունավետության վարկային շուկան գնահատելու նպատակով արդեն աշխատում է <<քաղաքաշինության նախարարության հետ, որը առկա բնակելի շենքերում էներգախնայողության ներուժի համար թիրախ կիանդիանա: Մասնավոր ընկերություններն ու անհատները, որոնք հասնում են էներգարդյունավետության ամենաբարձր ստանդարտների և վերցնում էներգոկրեդիտ վարկ, ԱՄ հարևանության ներդրումային հաստատության կողմից (EU-NIF) կարգավորվեն 10-15% կանխիկ վճարմամբ, արժանանալով գնահատանքի էկոլոգիապես անվտանգ ներդրումների համար:	ԷԱ վարկեր բնակարանային և բիզնես հաճախորդների համար (կորպորատիվ էներգաարդյունավետություն, կայուն էներգիայի ֆինանսավորման հիմնադրամներ, մաքուր էներգիայի արտադրություն, քաղաքային ենթակառուցվածքի էներգաարդյունավետություն)	Սկիզբ՝ 2006թ. Ավարտ՝ 2015թ
I.3.դ.	Անդամակցությունը Արևելյան Եվրոպայի ԷԱ և բնապահպանական համագործակցությանը հնարավորություն կրնձեռի իրականացնելու շատ կարևոր էԱ ծրագրեր: 2015թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ներդրումային համաձայնագիր ՎՀԵԲ-ի Ֆոնդի ղեկավարի հետ, և ներդրումային համաձայնագրում սահմանված ժամանակացույցին համաձայն կիրականացնի իր առաջին վճարման մասը:	Էներգաարդյունավետության ֆինանսավորման խթանում քաղաքային ենթակառուցվածքներում դրամաշնորհային համաֆինանսավորման միջոցով	Սկիզբ՝ 2015թ. Ավարտ՝ ընթացքում է
I.3.ե.	Ծրագիրն աշխատել է բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վրա՝	KfW /ԳԱՀ էԱ վարկեր ՄՓՄՁ-ների համար	Սկիզբ՝ 2016թ.

	<p>սպասարկելով ընդհանուր թվով 99 ընտանիք 3 շենքում՝ յուրաքանչյուր շենքի համար կոպիտ հաշվարկով 6,000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծախսով, և միակ հաստատությունն է Հայաստանում, որին հաջողվել է բանկային առևտրային վարկ տրամադրել 6 համատիրության, որոնք ուսումնասիրվում են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների բնակչի շենքերի էներգաարդյունավետության (ՑԵՏՏԲՏՀԵՄ) ծրագրի շրջանակներում</p>		Ավարտը՝ 2020թ.
I.6.	Գագի ոչ համապատասխան սակագնային կառուցից վերացումը էներգախնայողությունը խրախուսելու նպատակով	Վերանայված սակագնային կառուցվածքի մշակում, որը չի սուլանի ՓՄՁ-երին և անկախ ջեռուցման համակարգերին	Սկիզբ՝ 2016թ. ընթացքում է
I.7	Հայաստանում Եվրոպական քաղաքապետերի դաշնագրի ջանքերը աստիճանաբար զարգանում են 10 ստորագրող կողմերով, որոնցից 3 քաղաք արդեն իսկ ունեն իրենց կայուն էներգետիկ գործողությունների պլանը, մնացած 7-ը, մինչև 2015թ. Ավարտը, նախատեսում են ունենալ գործողությունների իրենց պլանը, այնուամենայնիվ, այս ուղղությամբ ինքնուրույն առաջընթաց կատարելու համար չունեն հզորություններ:	Քաղաքային ենթակառուցվածքներ, բնակարանային ոլորտ, տնային տնտեսություններ	Տեղեկատվություն և պարտադիր տեղեկատվ ական միջոցառումն եր
I.8	<p>Այս միջոցառումը նպատակ ունի խթանել ԷԱ քաղաքականությունը՝ քաղաքականություն մշակողներին ներգրավելով այն միջոցառումներում, որոնք մատնանշում են արձագանքման ենթակա կոնկրետ խնդիրները՝ օրենսդրության կամ կանոնակարգի միջոցով, իրականացնում են ԷԱ հանրային և տեղեկատվական միջոցառումներ և աշխատում են ընդհանուր հանրության, մասնավորապես, ուսանողների և երեխաների, ինչպես նաև պաշտոնյաների, բիզնես ծեռնարկությունների, ՄՖՀ-ների և ՀԿ-ների հետ:</p> <p>Այս միջոցառումը նաև գինում է մասնակիցներին բարելավված գիտելիքով և հմտություններով՝ ԷԱ իրազեկության բարձրացման շուրջ ավելի լավ որոշումներ իրականացնելու համար:</p>	Բիզնես և պետական մարմիններ, ԷԾԸ, ՏՖՀ, լրատվամիջոցներ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ՝ 2020թ.

I.9	<p>Այս առաջադրանքի հիմնական նպատակն է՝ բարելավել ներդրումային քաղաքականությունը,քանի կանոնակարգերն ու նորմատիվները ԿԵ ֆինանսավորումը/Վարկավորումն առավել իրագործելի դարձնելու ՏՖՀ-ների, ՄՖՀ-ների ու ներդրողների համար, և ներդրումներն ուղղորդելու Հայաստանի կայուն էներգետիկայի ոլորտին, ինչպես նաև խթանել համագործակցությունը Հայաստանում ֆինանսական ոլորտի, կանոնակարգող և քաղաքականություն մշակողների և շահագրգիռ մարմինների միջև՝ մի շարք առաջարկությունների մշակմամբ՝ << կառավարությանը ներկայացնելու համար:</p> <p>Այս առաջադրանքի հաջորդ ընդհանուր նպատակն է՝ ԷԱ ոլորտում նոր հմտությունների ուսուցանումը Հայաստանի համալսարանների ուսանողներին ու դասախոսներին: Այս գիտելիքը շատ կարևոր է ապագա ինժեներների և տնտեսագետների համար ԷԱ տեխնոլոգիաներ իրականացնելու համար, որոնք համապատասխանում են ԵՄ լավագույն պրակտիկային և պահանջներին: Կոնկրետ նպատակներից է՝ բարելավել շահագրգիռ համալսարանների ԷԱ ուսումնական ծրագրերը՝ մշակելով և մատուցելով ԷԱ առարկաների նոր դասախոսություններ :</p>	Բիզնես և պետական մարմիններ, ԷԾԸ-ներ, ՏՖՀ, համալսարաններ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ՝ 2020թ.
I.10	<p>Ա) գինել մասնակիցներին բարելավված գիտելիքով և հմտություններով ավելի լավ ԷԱ ներդրումային որոշումներ կայացնելու համար, Բ) մասնակիցներին փոխանցել ԷԱ ֆինանսավորման պայմանների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը, ներառյալ ոիսկի կառավարումը, անվտանգության միջոցառումներն ու մոնիթորինգի քայլերը, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրառումը, Ը) խթանել արդյունավետ մոտեցումներ ու համակարգեր ԷԱ ֆինանսավորման համար, ներառյալ ավարտված վարկային գործարքների և ներդրումային ծրագերի վերաբերյալ ուսումնասիրությունը, ինչպես նաև ԷԱ ֆինանսավորման գործիքներով կառուցված աշխատող գործարանների ցուցադրումը. և ԷԱ ֆինանսավորման ներքո իրականացված ծրագրերը:</p> <p>Այս միջոցառումը նպատակ ունի տեղի ինժեներներին պատշաճ գործիքներով և մեթոդաբանությամբ գինել ԷԱ ծրագրերի ֆինանսական և տնտեսական կենսունակությունը գնահատելու համար: Կարողությունների զարգացման այս վերապատրաստումները սովորեցնում են էներգետիկ ինժեներներին և</p>	Բիզնես և պետական մարմիններ, ԷԾԸ-ներ, ՏՖՀ, լրատվամիջոցներ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ՝ 2020թ.

Էներգետիկ կառավարիչներին հասկանալ և խոսել կառավարման լեզվով, բարելավում են իրենց կարողությունները՝ ԷԱ ծրագրին պատրաստվելու համար գործիքների և մեթոդաբանության կիրառման գծով և այս գործընթացի կարևորագույն մասը նվիրված է ԷԱ ծրագրերի պատրաստմանը, որոնք կարող են ներկայացվել ֆինանսավորման համար, ինչպես նաև համապատասխան տնտեսական պայմաններով ծրագերի ներկայացումը։ Այս միջոցառումը նպատակ ունի նաև բարելավել մասնակիցների կարողությունը արդյունավետ էներգետիկ առողջականացնելու համար՝ նոր մեթոդաբանության, գործիքների և առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով։ Այս առաջադրանքի հաջորդ ընդհանուր նպատակն է զինել մասնակիցներին բարելավված գիտելիքներով և հմտություններով առավել արդյունավետ ԷԱ բիզնես որոշումներ իրականացնելու համար, ինչպես նաև փոխանցել մասնակիցներին հիմնական սկզբունքները, թեմաները, պայմանագրերի պատրաստման պայմաններն ու ձևաչափերը, ինչպես նաև իրավական, կանոնակարգող և նորմատիվ շրջանակը ԷԱ բիզնեսների համար, փոխանցել մասնակիցներին ԷԱ բիզնեսի իրականացումը պայմանավորող փաստաթղթերի փաթեթ, ներառյալ ձևաթղթերը և կաղապարները, մասնակիցներին փոխանցել ԷԱ բիզնեսի պայմանների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը, ներառյալ ոիսկի կառավարումը, անվտանգության միջոցառումները և մոնիթորինգի քայլերը, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրառումը։

Այն կարգավորիչ նախաձեռնությունները, որոնք խաչվել են, սակայն վերաբերում են նաև շենքերի ոլորտին և որոնք նպաստել են առաջին ԱԳԱՊ-ի թիրախներին հասնելուն, ներկայացվում են ստորև (համային ծրագրերն ու նախաձեռնությունները, որոնք ունեն թե՛ կարգավորիչ, թե՛ ֆինանսական տարրեր, ներկայացված են ֆինանսական բաժնում)։

Աղյուսակ 14. Էներգախնայողության քանակական ազդեցությամբ խաչածն միջոցառումների ամփոփումը

Էներգիախնայողության միջոցառումների անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությունը	Ձեռք բերված/ակնկալվող էներգախնայողությունը թիրախային տարում (ՄՎտժ)	Կարգավիճակն ըստ էներգաարդյունավետության առաջին
--	----------------------------------	--------------	--	--

			2014	2017	2018	2020	գործողությունների պլանի
Էներգաարդյունավետության ֆինանսավորում. GGF	ԷԱ և ՎՀ լուծումներ տնային տնտեսությունների տարածքների շերմության և լուսավորության համար (պատուհաններ, դռներ, շերմամատակարարում, լուսավորում, բաշխիչ համակարգեր) և ՓՄՁ:	Մեկնարկ՝ 2014թ. ավարտ՝ 2020թ. (ընթացիկ)	35,069	53,336	61,336	81,117	մասամբ իրականացված
Էներգաարդյունավետության ֆինանսավորում: Միջազգային ֆինանսական կորպորոցիայի ԷԱ վարկեր տնային տնտեսությունների և ՓՄՁ համար:	կենցաղային էներգիայի վերջնական օգտագործում, ՓՄՁ ԷԱ արտադրության գործընթացներ, տարածքային շերմության պահպանում:	Մեկնարկ՝ 2009թ. ավարտ՝ 2015թ.	35,792	54,435	62,600	82,789	մասամբ իրականացված
Էներգաարդյունավետության ֆինանսավորում: Էներգաարդյունավետության վարկեր ռեզիլիենտ և գործարար հաճախորդների համար (կորպորատիվ էներգաարդյունավետություն, էներգետիկ կայուն ֆինանսավորման կառուցներ, մաքուր էներգիաարտադրություն, համայնքային ենթակառուցվածքային էներգաարտադրություն)	ԷԱ վարկերը ռեզիլիենտ և գործարար հաճախորդների համար (կորպորատիվ էներգաարդյունավետություն, էներգետիկ կայուն ֆինանսավորման կառուցներ, մաքուր էներգիաարտադրություն, համայնքային ենթակառուցվածքային էներգաարտադրություն)	Մեկնարկ՝ 2006թ. ավարտ՝ 2015թ.	341,655	519,614	597,556	790,268	մասամբ իրականացված
Էներգաարդյունավետության ֆինանսավորում: Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական համագործակցություն (E5P)	Էներգաարդյունավետության ֆինանսավորման պարզեցում համայնքային ենթակառուցվածքներում դրամաշնորհային համաֆինանսավորմամբ	Մեկնարկ՝ 2015թ. ավարտ՝ ընթացքում է	Զկա	Զկա	Զկա	Զկա	նախապատրաստում, ստուգված է որպես այլ միջոցառումների մաս

Ֆինանսավորում Էներգաարդյունավետ ության համար: ՄՓՄՁ-ների ԷԱ վարկավորում, KfW	KfW /ԳԱՀ ԷԱ վարկեր ՄՓՄՁ-ների համար	Սկիզբ՝ 2016թ. Ավարտը՝ 2020թ.	0	Ենթակա աէնթակա որոշման ն	Ենթակա աէնթակա որոշման ն	Ենթակա աէնթակա որոշման ն	Նոր միջոցառում
Գագի ոչ համարժեք սակագնային կառուցվածքի վերացում Էներգախնայողություն ն ապահովելու նպատակով	Վերանայված սակագնի կառուցվածքի մշակում, որը տուգանքի չի ենթարկի ՓՄՁ և ինքնավար ջեռուցման համակարգերը:	Մեկնար կ՝ 2016թ., ընթացի կ		59,365	59,365	59,365	չի իրականացվել
Աջակցություն Հայաստանի քաղաքապետարաննե րին կայուն Էներգետիկ գործողությունների պլանավորման գործընթացում	Համայնքային Ենթակառուցվածք, շենքերի ոլորտներ, տնային տնտեսություններ	Մեկնար կ՝ 2015թ ., ավարտ՝ 2020թ.	3,056	22,811	31,961	51,083	Նոր միջոցառում
Իրագեկման և պարտադիր տեղեկատվության տրամադրում	Բիզնես և պետական մարմիններ, ԷԾԸ, ՏՖՀ, լրատվամիջոցներ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ ը՝ 2020թ.					Նոր միջոցառում
Կարգավորում, իրագեկման և պարտադիր տեղեկատվության տրամադրում	Բիզնես և պետական մարմիններ, ԷԾԸ- ներ, ՏՖՀ, համալսարաններ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ ը՝ 2020թ.					Նոր միջոցառում
ԷԱ ֆինանսավորման հղորությունների ստեղծում ESCO-ների, ճարտարագետների, բանկային աշխատողների, ներդրողների և այլ շահառուների համար	Բիզնես և պետական մարմիններ, ԷԱ ծրագրի հյուրընկալողներ, ներդրողներ, ESCO- ներ, ՏՖՀ, լրատվամիջոցներ	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ ը՝ 2020թ.					Նոր միջոցառում
Ընդամենը (ՄՎտժ)			415,572	709,5 60	812,818	,064,621	
Ընդամենը (կտնի)			36	61	70	92	

Անհատական միջոցառումները ներկայացված են ստորև: Ոլորտների վրա ազդեցությունը գնահատելու նպատակով այս անհատական ֆինանսական ծրագրերը ինտեգրվել են իրենց համապատասխան ոլորտային ծրագրերում: Ֆինանսական այս կառույցները, որոնց ջանքերն ուղղված են ավելի քան մեկ ոլորտի վրա, ներկայացվում են ստորև:

Միջոցառման անվանումը	<i>Green for Growth (GGF-Կանաչ զարգացում) հիմնադրամն աջակցում է Էներգաարդյունավելության վարկային արտադրանքին կազմակերպությունների ներսում, հնարավորություն ընձեռելով Հայաստանի տնային լուսավորություններին նվազեցնել էներգետիկ ծախսերը, սպառումն ու CO₂ արտաներումները:</i>
Միջոցառման ցուցիչը	I.3.ա.
Կատեգորիա	ԷԱ ծրագրեր և միջոցառումներ, ԷԱ ֆինանսավորում, խաչվող ոլորտներ
Ժամկետ	Մեկնարկ՝ 2014թ. Ավարտ՝ 2020թ., շարունակելի
Նպատակ/համառոտ նկարագիր	Վարկավորում տեղական բանկերի միջոցով տնային տնտեսությունների և ծեռնարկությունների ԷԱ վարկերի վարկային գծեր ստեղծելու համար, նպատակ ունենալով կրճատել էներգիայի սպառումը և բարձրացնել էներգաարդյունավելությունը:
Թիրախային վերջնական օգտագործում	ԷԱ և ՎԷ լուծումներ տնային տնտեսությունների տարածքների ջեռուցման և լուսավորության արդյունավետության համար (պատուհաններ, դռներ, ջերմամեկուսացում, լուսավորություն, բաշխիչ համակարգեր) և ՓՄՁ:
Թիրախային խումբ	Աջակցություն վարկային հաստատություններին էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի վարկային արտադրանքի ստեղծման գործընթացում, ինչպես նաև համընդհանուր ԷԱ և ՎԷ վարկային և շուկայական ռազմավարության սահմանման գործընթացում: Սա ընդգրկում է ԷԱ և ՎԷ վարկային ռազմավարության ստեղծում, նոր մանրածախ ՓՄՁ և կորպորատիվ վարկային արտադրություն և ԷԱ և ՎԷ վարկային կազմակերպչական իրականացում: Ավելին, նման ծրագիրը նպաստում է ԷԱ և ՎԷ սարքավորումների և տեխնոլոգիայի տեղական մատակարարների հետ համագործակցությանը, և մարկետինգային և իրազեկման միջոցառումներին՝ դրանով իսկ խթանելով ֆինանսական հաստատությունների ԷԱ և ՎԷ վարկային գործունեությունը:
Տարածաշրջանային կիրառում	Տեղական
Տեղեկատվություն իրավաբեկության վերաբերյալ	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության հետ կապված գործողությունների ցանկ և նկարագիր ԷԱ և ՎԷ վարկավորման ֆինանսական կազմակերպություն իրականացման հետ կապված աջակցություն Ֆինանսական կազմակերպությունների կարողությունների զարգացում վերականգնվող էներգետիկայի վարկավորման համար Էներգետիկայի առևիտի ծառայություններ ԷԱ ներկայացնող ծրագրեր Բնապահանական և սոցիալական ստանդարտներ Իրազեկման բարձրացում և շուկան խթանող գործողություններ Բյուջե և ֆինանսական աղբյուր \$ 15,354,000 GGF

Իրականացնող մարմին	ԱԿԲԱ, ԱԿԲԱ լիգինգ, Ինեկո, Արարատ Բանկ
Մոնիթորինգն իրականացնող մարմինը	GGF
Մոնիթորինգն իրականացնելու մեթոդը/արդյունքում ստացված խնայողությունների չափումը	Ներքևից վերև
2014թ. ձեռք բերած խնայողություններն ըստ առաջին ԷԳԾ-ի	35,069
2017թ. ակնկալվող էներգախնայողությունը (ՄՎտժ)	53,336
2018թ. ակնկալվող էներգախնայողությունը (ՄՎտժ)	61,336
2020թ. ակնկալվող էներգախնայողությունը (ՄՎտժ) առկայության դեպքում	81,117
Ենթադրություններ Համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	<p>Նշում՝ GGF-ն չի ներկայացրել հետագա ֆինանսավորման կանխատեսումները: Ենթադրվում է, որ վարկավորումը կշարունակվի և տարեկան կկազմի նախկին էներգախնայողության ծավալի մոտ 15%-ը:</p> <p>Ֆինանսավորումն ընդգրկում է բնակելի, առևտրային և արդյունաբերական ոլորտները:</p>

Միջոցառման անվանումը	ՄՖԿ ԷԱ վարկեր տնային տնտեսությունների, արդյունաբերության և ՓՄՁ համար
Միջոցառման ինդեքսը	I.3.թ.
Կատեգորիան	ԷԱ ծրագրեր և միջոցառումներ
Ժամկետը	Մեկնարկ՝ 2009թ. Ավարտ՝ 2015թ.
Նպատակ/համառ ունկարագիր	Էներգետիկ կայուն ֆինանսական ծրագրեր, որոնք աշխատում են Բիբլս բանկի հետ ԷԱ տնային տնտեսությունների վարկավորման գծով և HSBC հետ՝ ԷԱ համար, ՓՄՁ-ում:
Թիրախային վերջնական օգտագործում	Բնակելի տարածքներում էներգիայի վերջնական օգտագործում, ՓՄՁ ԷԱ արտադրության գործընթացներ, տարածքային ջեռուցման պահպանություն:
Թիրախային խումբ	Տնային տնտեսություններ և ՓՄՁ ԷԱ վարկավորում
Տարածաշրջա- նային կիրառում	Տեղական

	<p>Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության հետ կապված գործողություններ իցանկ և նկարագիր (Աղյուր: http://www.WorldBank.org/content/dam/WorldBank/document/Armenia-Snapshot.pdf)</p>	<p>Կանադայի կառավարության աջակցությամբ ՄՖԿ համագործակցել է Հայաստանում HSBC բանկի հետ՝ վերականգնվող էներգետիկ և էներգարդյունավետության ծրագրերն ընդլայնելու նպատակով՝ նպաստելով աղբյուրների արդյունավետ օգտագործմանն ու նվազեցնելով ԶԳ արտանետումները: HSBC Բանկին (Հայաստան) տրամադրել է 30 մլն ԱՄՆ դոլար վարկ, 8 մլն ԱՄՆ դոլար ՄՖԿ-ից, Կանադայի կիմմայի փոփոխության ծրագրից, և խորհրդատվական աջակցություն՝ Հայաստանի կայուն էներգետիկայի ֆինանսավորման ծրագրից: ՄՖԿ խորհրդատվական ծառայությունները Հայաստանում ՄՓՄՁ համար աջակցում են էներգարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերին: Մինչ այժմ, բանկը ֆինանսավորել է 9 ծրագիր տարեկան 35,792 ՄՎտժ ակնկալվող էներգախնայողությամբ (ՄՎտժ/տարեկան) և տարեկան 6,614 tCO₂ ակնկալվող ԶԳ արտանետումների կրճատմամբ:</p>
	<p>Բյուջե և ֆինանսավորման աղյուրներ</p>	<p>ՄՖԿ ֆինանսավորումը, Հայաստանի կայուն էներգետիկայի ֆինանսավորման ծրագրի հետ միասին տրամադրվում է Հայաստանյան Բիբլոս բանկին՝ բնակարանաշինության ֆինանսավորման հասանելիությունն ավելացնելու և Հայաստանում տեղական բանկի կողմից առաջարկվող առաջին ռեզիլենտ էներգարդյունավետության վարկային փաթեթի գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով: Մինչ այժմ Բանկը ֆինանսավորել է 59 ծրագիր՝ ակնկալվող 801 ՄՎտժ/տարեկան էներգախնայողությամբ, ինչպես նաև ակնկալվող տարեկան ԶԳ 401 tCO₂ արտանետումների 401 tCO₂ կրճատմամբ: ՄՖԿ-ի խորհրդատվական աջակցությունը նոյնպես օգնում է համագործակցող բանկերին մշակել վերականգնվող էներգետիկայի և էներգարդյունավետության ֆինանսավորման առաջարկներ, խրախուսելով նրանց ընդունել միջազգային բնապահպանական և սոցիալական ստանդարտները և նպաստել ԶԳ արտանետումների նվազեցմանը:</p>
	<p>Իրականացնող մարմին</p>	<p>HSBC (արդյունաբերական) և Բիբլոս բանկեր (բնակելի)</p>
	<p>Մոնիթորինգն իրականացնող մարմին</p>	<p>ՄՖԿ</p>
<p>Էներգախնայություն (ՄՎտժ)</p>	<p>Մոնիթորինգն իրականացնելու և եթող/արդյունքում ստացված խնայողությունների չափում</p>	<p>ՄՖԿ ներքին ընթացակարգեր, ՄՖՀ հաշվետվություններ</p>
	<p>2014թ. ձեռք բերած խնայողություններն ըստ առաջին ԷԳԾ</p>	<p>35,792</p>
	<p>2017թ. ակնկալվող էներգախնայողություն (ՄՎտժ)</p>	<p>54,435</p>

2018թ. ակնկալվող Էներգախնայողու թյուն (ՄՎտժ)	62,600
2020թ. ակնկալվող Էներգախնայողու թյունի (ՄՎտժ) առկայության դեպքում	82,789
Ենթադրություննե ր	Ենթադրվում է, որ վարկավորումը կշարունակվի և տարեկան կկազմի նախկին Էներգախնայողության ծավալի մոտ 15%-ը:
Համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	Ֆինանսավորումն ընդգկում է ռեզիդենտ, առևտրային և արդյունաբերական ոլորտները:

Միջոցառման անվանումը		ԷԱ Ֆինանսավորում: ՎԶԵԲ Հայաստանում կայուն Էներգիայի Ֆինանսավորում ԱրտSEFF (Էներգոկրեդիտ) Էներգարդյունավետության վարկերը ռեզիդենտ և գործարար հաճախորդների համար
Միջոցառման ինդեքսը		I.3.q.
Կատեգորիա		ԷԱ ծրագրեր և միջոցառումներ
Ժամկետ		Մեկնարկ՝ 2006թ. Ավարտ՝ 2020թ.
Նպատակ/համառոտ նկարագիր		Հայաստանի կայուն Էներգետիկայի ֆինանսավորման հիմնադրամը հիմնել է Էներգոկրեդիտ հիմնադրամը, որի նպատակն է ապահովել Էներգետիկ արդյունավետության վարկեր ռեզիդենտ և գործարար հաճախորդներին: Մյուս կողմից, , կենցաղային Էներգարդյունավետության վարկային շուկան գնահատելու նպատակով արդեն աշխատում է << քաղաքաշինության նախարարության հետ, որը առկա բնակելի շենքերում Էներգախնայողության ներուժի համար թիրախ կհանդիսանա: Մասնավոր ընկերություններն ու անհատները, որոնք հասնում են Էներգարդյունավետության ամենաբարձր ստանդարտների և վերցնում Էներգոկրեդիտ վարկ, ԱՄ հարևանության ներդրումային հաստատության կողմից (EU-NIF) կպարզեատրվեն 10-15% կանխիկ վճարմամբ, արժանանալով գնահատանքի Էկոլոգիապես անվտանգ ներդրումների համար:

	Թիրախային վերջնական օգտագործում	ԷԱ վարկերը ռեզիդենտ և գործարար հաճախորդների համար (կորպորատիվ էներգարդյունավետություն, կայուն էներգետիկ ֆինանսավորման կառուցյաներ, համայնքային ենթակառուցվածքային էներգարդյունավետություն)
	Թիրախային խումբ	Ռեզիդենտ և բիզնես հաճախորդներ
	Տարածաշրջանային կիրառում	Տեղական
Տեղականացնակարգային իրականացում	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության հետ կապված գործողությունների ցանկը և նկարագիրը	Էներգոկրետիկ վարկերը տրամադրվում են էներգարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ներդրումների համար: Էներգոկրետիկ համագործակցող բանկերը դուրս են գալիս իրավասություն ունեցող և էներգարդյունավետ նյութերի և սարքավորումների ֆինանսավորման սահմաններից: Ընդլայնված սահմանների այլ ծրագրերը նույնական ունեն իրավասություն էներգոկրետիկ ընկերության փորձագետի կողմից ուսումնասիրություն կատարելուց հետո: Գործողությունները ներառում են էներգարդյունավետություն և վերականգնվող էներգետիկա բնակելի, սննդի վերամշակման, գյուղատնտեսական արտադրության և շինարարության ոլորտներում:
	Բյուջե և ֆինանսական աղբյուր	\$ 28,000,000 ՎՃԲ
	Իրականացնող մարմինը	Հայաստանի կայուն էներգետիկայի ֆինանսավորման հիմնադրամը / Էներգոկրետիկ 6 համագործակցող բանկերի հետ
	Մոնիթորինգն իրականացնող մարմինը	ՎՃԲ
	Մոնիթորինգն իրականացնելու մեթոդը/ արդյունքում առաջացած խնայողությունների չափումը	ՎՃԲ ներքին ընթացակարգեր
Էներգախնայողություն	2014թ. ձեռք բերած խնայողությունները ըստ առաջին ԷԳԾ-ի	341,655
	2017թ. ակնկալվող էներգախնայողություն (ՄՎտժ)	519,614
	2018թ. ակնկալվող էներգախնայողություն (ՄՎտժ)	597,556
	2020թ. ակնկալվող էներգախնայողություն (ՄՎտժ) առկայության դեպքում	790,268

	Ենթադրություններ	2014թ. ի վեր ոչ մի նոր վարկային ծավալ չի գնահատվել . Ենթադրվում է, որ վարկավորումը կշարունակվի և տարեկան կկազմի նախկին էներգախնայողության ծավալի մոտ 15%-ը:
	Համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	ՎՃԵԲ-ի ԷԱ վարկավորման խառը բնույթի պատճառով առաջացած ոլորտային միջոցառումներ համընկնում են

Նկարագրություն	Միջոցառման անվանումը	Արևելյան Եվրոպային էներգարդյունավետության և բնապահպանության համագործակցության (E5P) դրամաշնորհիային համաֆինանսավորում ԷԱ վարկային ներդրումների համար
	Միջոցառման ցուցիչը	I.3.դ.
	Կատեգորիան	ԷԱ ծրագրեր և միջացառումներ
	Ժամկետը	Մեկնարկը՝ 2015թ.
	Նպատակը/համառոտ նկարագիրը	Անդամակցությունը Արևելյան Եվրոպայի ԷԱ և բնապահպանական համագործակցությանը հնարավորություն կրնձենի իրականացնելու շատ կարևոր ԷԱ ծրագրեր: 2015թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ներդրումային համաձայնագիր ՎՃԵԲ-ի Ֆոնդի ղեկավարի հետ, և ներդրումային համաձայնագրում սահմանված ժամանակացուցիչն համաձայն կիրականացնի իր առաջին վճարման մասը:
	Թիրախսային վերջնական օգտագործում	ԷԱ ֆինանսավորում
	Թիրախսային խումբը	Համայնքներ, ՓՄՁ և տնային տնտեսություններ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության գործողությունների ցանկը և նկարագիրը	Էներգաարտադրության բարելավումները և ԶԳ արտանետումների կրճատումը հետևյալ բնագավառներում. <ul style="list-style-type: none">• Կենտրոնական ջեռություն• Զրամատակարարում և ջրահեռացում• Պինդ թափոնների կառավարում• Փողոցների լուսավորում• Հասարակական շենքերի կամ բնակելի շենքերի մեկուսացում• Քաղաքային տրանսպորտ
	Բյուջե և ֆինանսական աղբյուր	\$ 21,000,000 ՀՀ (1 մ եվրո), ՀՀ էներգետիկայի նախարարություն, դրամաշնորհ (20մ եվրո) և Արաևելա-Եվրոպական էներգարդյունավետության և բնապահպանության համագործակցության (E5P) դրամաշնորհիային համաֆինանսավորում ԷԱ վարկավորման ծրագրերի համար: E5P քարտուղարություն, ՎՃԵԲ, ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն:

	Իրականացնող մարմինը	Էներգաարդյունավետության և բնապահպանություն արևելյան վրոպական համագործակցության (E5P) դրամաշնորհային համաֆինանսավորման քարտուղարություն, ՎՀԵԲ, ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն:
	Մոնիթորինգն իրականացնող մարմինը	ՎՀԵԲ
Էներգախնդարություն	Մոնիթորինգն իրականացնելու մեթոդը/ արդյունքում առաջացած խնայողությունների չափումը	Չկա
	2014թ. ձեռք բերած խնայողություններն ըստ առաջին ԵԳԾ-ի	Չկա
	2017թ. ակնկալվող էներգախնայողություն (ՄՎտժ)	Չկա
	2018թ. ակնկալվող էներգախնայողություն ի (ՄՎտժ) առկայության դեպքում	Չկա
	2020թ. ակնկալվող էներգախնայողություն ի (ՄՎտժ), առկայության դեպքում	Չկա
	Ենթադրություններ	Ֆինանսավորումն ամբողջովին հատկացվել է
	համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	Արևելյան Եվրոպային էներգաարդյունավետության և բնապահպանության համագործակցության (E5P) դրամաշնորհը չի օգտագործվում առանձին ծրագրի ֆինանսավորման համար, այլ միայն տրամադրում է 1/3-1/4 դրամաշնորհային համաֆինանսավորում ՄՖՀ անդամների վարկային ծրագրերի համար (ՎՀԵԲ, ՀԲ, ՄՖՀ, KFW Զարգացման գերմանական բանկ)

Միջոցառման անվանումը	Գազի գնի բարեփոխումներ ԵԱ խոչընդոտները վերացնելու նպատակով
Միջոցառման ինդեքսը	I.6.
Կարտագորիան	Կարգավորող միջոցառումը
Ժամկետը	2016թ. ընթացիկ
Նպատակը/համառոտ նկարագիրը	Գազի ոչ համապատասխան սակագնային կառույցի վերացումը էներգախնայողությունը խրախուսելու նպատակով

	Թիրախային վերջնական օգտագործումը	տարածքի գազով ջեռուցում
	Թիրախային խումբը	շենքեր, ՓՄՁ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
Տեղադրություն իրականացման մեջմասական	Միջոցառումը հիմնավորող Էներգախնայողության գործողությունների ցանկը և նկարագիրը	Վերանայված սակագնային կառուցիչ մշակում, որը տուգանքի չի ենթարկի ՓՄՁ և ինքնավար ջեռուցման համակարգերը: 10,000-12,000m ³ միջև օգտագործողներից յուրաքանչյուրը կխնայի (չի օգտագործի) միջինը 1,800m ³ :
	Բյուջեն և ֆինանսական աղյուրը	Չկա
	Իրականացնող մարմինը	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀԾԿ
	Մոնիթորինգն իրականացնող մարմինը	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀԾԿ
Էներգահետապություն	Մոնիթորինգն իրականացնելու մեթոդը/ արդյունքում առաջացած խնայողությունների չափումը	Կանոնավոր հաշվետվություններ ՀԾԿ-ին Գազպրոմ-ից
	2014թ. ձեռք բերած խնայողություններն ըստ առաջին ԷԳԾ-ի	
	2017թ. ակնկալվող Էներգախնայողությունը (ՄՎտժ)	59,365
	2018թ. ակնկալվող Էներգախնայողությունը (ՄՎտժ)	59,365
	2020թ. ակնկալվող Էներգախնայողությունի (ՄՎտժ) առկայության դեպքում	59,365
	Ենթադրություններ	Գտնվել է վարչական իրագործելի լուծում
	Համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	Սակագնային կառուցվածքում վերացված խոչընդոտները գազի միջին չափի սպառողների՝ շինությունների մակարդակով ջեռուցման համակարգերի, հիվանդանոցների, դպրոցների և այլն, միջև կստեղծեն խթաններ արդյունավետության պահպանման համար

Միջոցառման անվանումը	Աջակցություն Հայաստանի համայնքներին կայուն էներգետիկ գործողությունների պլանավորման գործնթացում
Միջոցառման ինդեքսը	1.7.
Նկար միաց	Կատեգորիան
	Ժամանակացույցը

		Ավարտը՝ 2020 թ.
	Նպատակը/ համառոտ նկարագիրը	Հայաստանում Եվրոպական քաղաքապետերի դաշնագրի ջանքերը աստիճանաբար զարգանում են 10 ստորագրող կողմերով, որոնցից 3 քաղաք արդեն իսկ ունեն իրենց կայուն էներգետիկ գործողությունների պլանը, մնացած 7-ը, մինչև 2015թ. Ավարտը, նախատեսում են ունենալ գործողությունների իրենց պլանը, այնուամենայնիվ, այս ուղղությամբ ինքնուրույն առաջընթաց կատարելու համար չունեն հզորություններ:
	Թիրախային վերջնական օգտագործումը	Համայնքային ենթակառուցվածքներ, շինարարական սեկտոր, տնային տնտեսություններ.
	Թիրախային խումբը	Համայնքներ, բնակելի ոլորտ, խաչվող
	Տարածաշրջանային կիրառումը	Տեղական
Միջացառումը հիմնավորող էներգախնայողության նն ուղղված գործողությունների ցանկը և նկարագիրը		<ol style="list-style-type: none"> Հասարակական հաստատություններում էներգետիկ կառավարման համակարգի ներկայացում. ա. Համայնքային շենքերի կապիտալ վերանորոգում և չերմային արդիականացում; 1.թ Մեկուսացում, պատուհանների և դռների փոխարինում, արդյունավետ լուսավորություն մանկապարտեզներում, մշակութային կենտրոններում և դպրոցներում: Բազմաբնակարանային շենքերի էներգաարդյունավետության արդիականացում. մեկուսացում, բարձրորակ դռներ և պատուհաններ, բարելավված լուսավորություն Էներգաարդյունավետության բարելավումներ հասարակական լուսավորության համակարգում <p>Հասարակական վայրեր/բակեր</p> <ol style="list-style-type: none"> Արդյունավետ քաղաքային տրանսպորտ, ճանապարհային ցանցի օպտիմալացում, հեծանվային ճանապարհների և հետիոտն ուղիների մշակում Վերականգնվող էներգետիկայի մշակում, հասարակության իրազեկման աճ կայուն էներգետիկայի և էներկարդյունավետության ոլորտում: Տեղեկատվական վերապատրաստումներ և կարողությունների զարգացում, էներգիայի օրեր, երկրագնդի ժամ, շենքերի էներգետիկ հավաստագրում: Կանաչ տարածքների վերականգնում
	Բյուջեն և ֆինանսական աղբյուրները	\$ 11,000,000
		Եվրոպական հանձնաժողով, քաղաքապետարաններ, այլ միջոցներ
	Իրականացնող մարմին	Էներգետիկ քաղաքների աջակցության ծրագիր COMO-Արևելք, ՔԴ անդամներ
	Մոնիթորինգն իրականացնող մարմինը	Էներգետիկ քաղաքներ
	Մոնիթորինգն իրականացնելու մեթոդը	ԿԵԳԴ մեթոդաբանություն էներգետիկ քաղաքների կողմից

	արդյունքում առաջացած խնայողությունների չափումը	
	2014թ. ձեռք բերած խնայողություններն ըստ առաջին ԷԳԾ - ի(ՄՎտժ)	3,056
	2017 թ. ակնկալվող էներգետիկ խնայողությունները (ՄՎտժ)	22,811
	2018 թ. ակնկալվող էներգախնայողություն նը(ՄՎտժ)	31,961
	2020թ. էներգախնայողություն նի ակնկալվող ազդեցության (ՄՎտժ), առկայության դեպքում	51,083
	Ենթադրությունները	Ենթադրվում է, որ ֆինանսավորումը կլինի
	Համընկնումներ, բազմապատկիչ էֆեկտ, սիներգիա	Այլ ոլորտային ծրագրերի և ֆինանսական սխեմաների էներգաարդյունավետության բարելավման միջոցառումները հնարավոր է համընկնեն, քանի որ տեղական լիազոր մարմինները ԿԷԳՊ իրականացման համար ազատ կարող են ֆինանսավորում ներգրավել: HFHA SUDEP ծրագիրն արդեն իսկ նպատակառությամբ է Սպիտակ և Վայք քաղաքներում ԿԷԳՊ իրականացմանը : Այս գործողությունները համատեղվում են նաև Կիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի պարտավորությունների հետ:

3.2.1. Ֆինանսական աջակցություն էներգաարդյունավետության համար բոլոր ոլորտներում

Շահագրգիռ կողմերի հետ քննարկվածի համաձայն, ներդրումային դաշտը երկրորդ ԷԳԾ-ում, առաջին ԷԳԾ-ի համեմատությամբ, ավելի մեծ ուշադրության է արժանացել: Վերջինիս նպատակն է էներգախնայողության բարելավման միջոցառումների համար վերլուծել ներդրումային ֆինանսավորման առկայությունը, բնույթն ու ուղղվածությունը: Վերլուծություններն, այնուհետև, թույլ են տալիս բացահայտել բացերը, որտեղ բանկերի, ՄՖՀ և դոնորների կողմից չեն իրականացել ներդրումներ և որոշում կայացողների ուշադրությունը ուղղել այս հարցին, ինչպես նաև կատարել միջամտության առաջարկներ:

Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է էներգախնայողության դաշտում հիմնական դոնորների և ՄՖՀ ֆինանսավորման ուղղությունների, առաջին հայացքից, տեսանելի

Նկարագիրը, որին հաջորդում են տարբեր ներդրումային հոսքերի վերլուծությունը, մատակարարված վարկավորումներն, ինչպես նաև ներդրումային ֆինանսավորման չբավարարված պահանջը:

<p>Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագիր (ՄԱԶԾ) / Գործադրությունների համար ՀՀ վարչական համար (ԳԵՀ):</p> <ul style="list-style-type: none"> • Կանաչ բարարակի լրասպնության Ծրագիր • ԷԱ բարեկալումը շենքերում Ծրագիր <p>Միացյալ Նախանձերի Միջազգային Զարգացման Գործակարգություն (ԱՄՆ ՄԶԳ):</p> <ul style="list-style-type: none"> • Ցանք էներգուատ ունեցող տնակին տնտեսությունների բնակելի շենքերի էներգասպռության վերաբերյալ (REELIH) Program • Էներգուահիայի և Զարգի ուսումնական մշակույթի Ծրագր • LEDS Ծրագիր և նվազանին նշանագույնած պլանավորում • STIP նախաձեռնություն և ձեկարություն որբառում շրային և էներգասի արդյունավետության լուծումների ծրագրեր <p>Արևելյան Եվրոպայի Էներգետիկ Արդյունավետության և Ծրջավառ մշակային պահպանության գործընկերություն (ESP)</p> <ul style="list-style-type: none"> • Բարարակի ենթակառուցվածքի ԷԱ նախագծերի խողովակաշար • 1. Էներգուահիայի շեռնություն; • 2. Տուր և կրուգարարություն; • 3. Կողայի բարեկարգություն; • 4. Փորուային ուսումնություն; • 5. Հանրային շենքերի կամ բնակելի տների շերտամեկուսացում; • 6. Բաղադրային արտասպառություն: <p>Եվրոպական Համականություն</p> <ul style="list-style-type: none"> • SUDER ԷԱ և Վէ Սպիտակի և Վայրի համայնքերի համար • INOGATE Տէխնիկական Քարտուզություն • NIE բրանչչորի համաֆինանսավորում ընտրված ՄՖՀ վարկային արտօնություն համար 	<p>Համաշխարհային Բանկի /ԳԵՀ:</p> <ul style="list-style-type: none"> • Հանրային /Քաղաքային/Սոցիալական շենքերի ԷԱ վարկային գիծ ԲՇՀ պահանջման (ESI scheme) միջոցով <p>Միջազգային Ֆինանսական Կորպորացիա (ԻՄՖԿ)</p> <ul style="list-style-type: none"> • Բանկերի միջոցով վարկավորության կայուն էներգետիկայի ֆինանսավորումն ծրագրի կորպորատիվ և բնակելի ԷԱ համար 2 ՄֆՆ միջոցով <p>Վերականցւության և Տարրացության Բանկի (ՎԵԲ):</p> <ul style="list-style-type: none"> • Կովկասի կառան Էներգետիկայի ֆինանսավորումն ինվաստակամ համախցիքն է կորպորատիվ & բնակելի էներգասպռության վարկեր՝ 5 ՄֆՆ միջոցով, առևէնը ՏԱ և ԼԵԱ, և 10-15% դրամաշնորհային ներդրումի խրանքերով • Ուղարկի վայրեկ պիտակն երաշխիքներով • Կորպային ֆինանսավորում Եվրոպական ներդրումային բանկից <p>ԿՐ Վարկավորման գործունելությունը և էներգասպռության ուղղումն համատակած նախաձեռնությունները.</p> <ul style="list-style-type: none"> • ԷԱ-հետքերված դրացուների ամրացում (վարկել է օգտագործել ԱԶԲ ծննդեկը) • Արևելյան ջրասարացուցիչների ֆինանսավորում • Բնակելի տների ԷԱ (հասկացության ձևափորում) • ԷԱ ՓՄՀ-ներում <p>Green for Growth Հիմնադրամ</p> <ul style="list-style-type: none"> • ԷԱ և Վէ վայրեկ Մասնավոր ֆինանսավորման նախաձեռնությունների (ՄՖՆ) միջոցով <p>Ֆրանկական Զարգացման Գործակալություն</p> <ul style="list-style-type: none"> • Բնակելի ԷԱ վայրեկ ցածրից միջին էներգուատերում ՏՏ համար 5-10% դրամաշնորհային խրանքՆՄՀ միջոցով:
--	--

Գծապատկեր 15. Էներգախնայողության ոլորտում հիմնական դրույների և ՄՖՀ ֆինանսավորման ուղղությունների նկարագիրը

Հանրային ոլորտում վերականգնվող ու նոր իրականացվող շինարարությունը, հիմնականում, ֆինանսվում է Համաշխարհային Բանկի կողմից (տարբեր ԾԻԳ-երի և Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջոցով), ներառելով սոցիալական ներդրումները, որոզման ոլորտում խոշոր ենթակառուցվածքածքային ծրագրերը, հանրային շենքերի կառուցումն ու վերականգնումը, ինչպես նաև էներգաարդյունավետությունը հասարակական/սոցիալական/ համայնքային ոլորտներում: Ի լրումն, 2014թ. կեսին KfW Զարգացման գերմանական բանկը << ֆինանսների նախարարության և << քաղաքաշնության նախարարության հետ քննարկել է դպրոցների էներգաարդյունավետության վերանորոգման արտոնյալ վարկի հնարավորությունը՝ Զարգացման ասիական բանկի հնարավոր մասնակցությամբ:

Եվրոպական հանձնաժողովը վերջերս աջակցում էր համայնքային էներգաարդյունավետության նախաձեռնություններին Եվրոպական քաղաքական պահանջման դաշնագրի և Կայուն էներգետիկայի գործողությունների պահանջման դրագությունում բնակելի շենքերի միջև ծրագրերի միջև ծրագրերի շրջանակներում:

Այլ ֆինանսական հաստատություններ (ՎՀԵԲ, ԶՖԳ, GGF, KfW Զարգացման գերմանական բանկը) հիմնականում մասնակից բանկերի/վարկային հաստատությունների միջոցով բնակելի ոլորտում իրականացնում կամ պահանջորում են վարկային կառուցների ստեղծում և առաջարկում էներգաարդյունավետության վարկեր բնակարանային էներգաարդյունավետության բարելավման համար: Այնուամենայնիվ դրանցից ոչ մեկը շենքերի մակարդակով լուծումների համար չի առաջարկում բնակարանների ԷԱ ֆինանսավորում:

Որպես ՄՖՀ կողմից ֆինանսավորվող վարկային գծերի մի մաս, մի շարք առևտրային բանկեր, մասնավորապես, էներգաարդյունավետության գործուներության նպատակով ունեն վարկային մուտքի հնարավորություն:

- 2012թ << Կառավարությունը << ֆինանսավորման շրջանակներում հաստատել է ԷԱ նախագիծ, որն իրականանում է Հայաստանի վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի միջոցով: Այս ծրագրի նպատակն է սոցիալական և հասարակական կառուցների կողմից սպառվող Էներգիայի մակարդակը կրճատելու համար հանրային կառուցներում իրականացնել Էներգախնայողության միջոցառումներ: Այս ծրագրի արժեքը կազմում է մոտ 10.7 մլն ԱՄՆ դոլար:
- Սևծովյան ավագանի երկրների համատեղ գործողությունների շրջանակներում <<ՎԵՀՀ-ն ներգրավված է ԵՄ կողմից ֆինանսավորվող Սևծովյան ավագանի երկրների Էներգաարդյունավետության պլանի ծրագրում (2013-2015թ.), որը, հիմնականում, նպատակառուղված է Էներգաարդյունավետ շենքերում տեղական մարմինների վարչարարական կարողությունների ամրապնդմանն ու լավագույն փորձի գիտելիքների փոխանակմանը:¹¹
- Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) / Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ)
 - ՄԱԶԾ/ԳԷՀ-ն իրականացնում է ծրագիր, որի նպատակն է. բարելավել Էներգաարդյունավետությունը շենքերում, այդ թվում զգալիորեն աջակցել << Կառավարությանը Շենքերի Էներգետիկ արդյունավետության դիրեկտիվի կիրառման հարցում, ԷԱ շենքերի համար մշակել ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ֆինանսավորել Երևանի Ավանի բնակելի բազմաբնակարանային շենքերում առաջին փորձնական ջերմային արդիականացման, Գորիս և Ախուրյան քաղաքներում բնակարանաշինության աշխատանքներ:
 - ՄԱԶԾ/ԳԷՀ քաղաքային կանաչ լուսավորություն: Սա դրամաշնորհային ծրագիր է, որի նպատակն է ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման միջոցով կրճատել ջերմոցային գազերի արտանետումներն, ավելացնելով Հայաստանի քաղաքների համայնքային լուսավորումը: Ծրագիրը համապատասխանում է ազգային առաջնահերթություններին՝ << տնտեսական և Էներգետիկ անկախության ամրապնդման նպատակով խթանել արդյունավետ ռեսուրսների ու կլիմային դիմակայելու աճը: Ծրագիրը ներառում է.

(Ա) համայնքային Էներգետիկ առողջիւ և տեխնիկական կարողությունների զարգացում,
 (Բ) ցուցադրական ծրագրեր, (Գ) վերարտադրություն լուսավորության համայնքային ծրագրերի և համապատասխան գործիքների միջոցով, և (Դ) լուսավորության վերաբերյալ ազգային քաղաքականություն, օրենսգրքեր և չափանիշներ:¹²

¹¹ BSBEEP – Սևծովյան ավագանի երկրների Էներգաարդյունավետության ծրագիր,
<http://bsbeep.com/>

¹² Green Urban LightingՄԱԶԾ -ԳԷՀ /00074869. Հայաստանի Հանրապետություն համառոտ նկարագիրը ., ՄԱԶԾ, հունվար 2014

- ԱԿԲՍ Լիգինգ, Ինեկո, Արարատ և ԱԿԲՍ բանկերը Green for Growth հիմնադրամի կողմից ստացել են բազմամիլիոն վարկային գծեր ԷԱ վարկերի համար՝ ուղղված մասնավոր ֆիզիկական և իրավաբանական անձանց
- Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ). Կայուն էներգետիկ ֆինանսավորման ծրագիրն Բիբլոս բանկի հետ աշխատում է տնային տնտեսությունների ԷԱ վարկավորման համար և HSBC բանկի հետ՝ ԷԱ ՓՄՁ-ում:
- Բնակարանային էներգարդյունավետության վարկերի և ԷԱ հիփոթեկային վարկերի ուղղությամբ ՀՖԳ-ն աշխատում է Ազգային հիփոթեկային ընկերության և մասնավոր 14 ֆինանսական նախաձեռնությունների հետ՝ ընդհանուր 10 միլիոն Եվրո վարկային գծով, որը նպատակառությունը է 3000 բնակարանների, ինչին պետք է հասնել ծրագրի առաջին տարում
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի տվյալների համաձայն Հայաստանի կայուն էներգետիկ ֆինանսավորման հիմնադրամը հիմնել է էներգոկրեդիտ հաստատություն, որը էներգաարդյունավետության վարկեր է տրամադրում բնակիչ և գործարար հաճախորդներին: Աշխատել է << քաղաքաշինության նախարարության հետ բնակելի հատվածի էներգաարտադրության վարկավորման շուկայի գնահատման նպատակով, որը նպատակառությունը է գոյություն ունեցող բնակելի շենքերի էներգախնայողությանը:
- Հայաստանյան Հարիթաթ հանուն մարդկության ընկերությունը աշխատել է ինեկորանկի հետ բնակելի ոլորտի էներգարդյունավետության թարմացման գործընթացում՝ սպասարկելով ընդհանուր առմամբ 99 ընտանիք՝ 3 շենքում, մոտավորապես մեկ շենքի համար 6,000 ԱՄՆ դոլար ընդհանուր հատկացումով և միակ կազմակերպությունն է, որին հաջողվել է բանկային հիմունքներով համատիրության համար առևտրական վարկ տրամադրել Հայաստանի 6 համատիրությունների: Մեկնարկել են աշխատանքները նաև ԱՄՆ Մշջ РЕЕЛИ ծրագրի միջոցով Երևանում և Վանաձորում, իսկ Եվրոպական Հանձնաժողովի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում՝ ԷԱ և ՎԵ ներդրումային և հզորությունների ստեղծման ծրագրեր:
- Ամերիա բանկը նույնպես տրամադրում է վարկեր տնային տնտեսություններին և ՓՄՁ ԷԱ վարկային առաջարկներ՝ իր սեփական ֆինանսական միջոցներից:
- Արևելյան Եվրոպայի ԷԱ անդամակցությունը և բնապահպանական համագործակցությունը (E5P) հնարավորություն կընձեռնեն իրականացնել շատ կարևոր ԷԱ ծրագրեր: Հայաստանյան ներդրումները կազմեն շուրջ €1 միլիոն, որը կվճարվի մասնաբաժններով, և Հայաստանին կշնորհվի շուրջ €20մլն: Ծրագրերը սկսելու նպատակով Հայաստանը դեռևս չի վճարել անդամավճարի առաջին մասը: 2014թ ապրիլի 8-ին << էներգետիկայի նախարարությունը

նամակ ստացավ ՎՀԵԲ-ից, որում հայտնում էին, որ երեք երկրներ (Չեխիան, Լեհաստանը, Շվեդիան) Հայաստանին արդեն իսկ տրամադրել են ընդհանուր €1.84 մլն: <<Կառավարությունը 2015թ մարտի 16-ին ՎՀԵԲ-ի հետ ստորագրեց ներդրումային համաձայնագիր, որը Հիմնադրամի կառավարիչն է, և իր առաջին ներդրումը կկատարի ըստ ներդրումային համաձայնագրում սահմանված ժամանակացուցիչից: >>

- KfW Զարգացման գերմանական բանկը և Հայաստանի Հանրապետությունը ստորագրել են միջկառավարական համաձայնագիր երեք նոր վարկերի վերաբերյալ, որոնց նպատակն է:
 - ԷԱ համապարփակ ամրապնդումը դպրոցներում
 - ԷԱ վարկային գիծը ՓՄՁ համար և
 - Բնակարանային ԷԱ վարկային գիծ
- Հայաստանում աստիճանաբար զարգանում են նաև Եվրոպական քաղաքապետերի դաշնագրի ջանքերը: Ներկայումս ստորագրած 10 կողմերից երեքն արդեն իսկ ունեն իրենց ԿԷԳՊ, 7 քաղաք նախատեսում են ունենալ իրենց ԿԷԳՊ-ն մինչև 2015թ, սակայն ինքնուրույն առաջընթացի համար չունեն անհրաժեշտ կարողություններ:
- ԵՄ կողմից ֆինանսավորվող Ինոգեյթ ծրագիրը¹³. Հայաստանը մասնակցել է ԵՄ կողմից ֆինանսավորվող Ինոգեյթ ծրագրին, որը երկրին տրամադրում էր տեխնիկական աջակցություն կապված Էներգաարդյունավետության քաղաքական, տեխնիկական, ֆինանսական և իրազեկման նախաձեռնությունների, էլեկտրաէներգիայի և գազի չափանիշների ու սակագների, ինչպես նաև կայուն Էներգետիկ աղբյուրների մշակման¹⁴ հետ: Հայաստանը Ինոգեյթի գործընկեր երկիր էր 1996թ. սկսած և Ինոգեյթի 69 ծրագրերից օգտվել է՝ 33-ից: Ի հավելումն ՄՖՀ ռեսուրսների, տեղական ֆինանսական հաստատությունները ևս միջոցների էական մասնաբաժին են տրամադրել: Հաճախորդներին և ՓՄՁ համախմբելու նպատակով նրանք ֆինանսավորել են նաև Էներգաարդյունավետության ներդրումները սովորական վարկերով:

Սույն ԷԳԾ-ը գնահատում է ֆինանսական շուկայում առկա ռեսուրսները, նրանց յուրահատկությունները, ինչպես նաև անհամապատասխան ներդրումային պոտենցիալը և ԷԱ ներդրումներն արագացնելու համար ֆինանսավորում և այլ լուծումներ առաջարկելու նպատակով


¹³Տես <http://www.inogate.org/>

¹⁴Համատեղ աշխատանքային փաստաթուղթ 2013թ. Եվրոպական հարեանության քաղաքականության ռազմավարության իրականացում Հայաստանում և առաջարկներ գործողությունները սկսելու նպատակով: ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականություն, արտաքին գործերի ԵՄ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչ, Բրյուսել 27.3.2014

հնարավոր


շուկայական

արգելքները:



Գծապատկեր 16. ԷՎ/ՎԵ պորտֆելի կառուցվածքը 2010 – 2020թթ. համար, ԱՄՆ դրամ

Ստորև բերված նկարում ներկայացված է վերջին հինգ տարիների ընթացքում ԷԱ և ՎԵ ներդրումների վարկավորման միտումը և հետագա վարկավորման կանխատեսումները:



Գծապատկեր 17. ԷՎ/ՎԵ պորտֆել 2010 – 2020թթ., ԱՄՆ դրամ

Էներգաարդյունավետության և կայուն էներգիայի ներդրումային շուկայի վերլուծությունը, ներառյալ նաև ՄՖՀ հաշվետվության ցուցանիշները պարզել են ՀՀ-ում ԷԱ ներդրումային դաշտի վերջին միտումները, էներգաարդյունավետության զարգացման պլանավորված ներդրումներին աջակցելու նպատակով, տարեկան կտրվածքով, բացահայտել են մինչև 2020թ. շուկայական

կարողություները, ծեռքբերումներին ավելի արագ հասնելու նպատակով գնահատել են ՀԱ ներդրումների չքավարարված կարիքը:

ՀԱ ծրագրերը ֆինանսավորելու համար գոյություն ունի երկու հիմնական աղբյուր.

- ա. Տեղական ֆինանսական հաստատությունները (ՏՖՀ՝ բանկեր և ունիվերսալ վարկային կազմակերպություններ
- բ. Միջազգային ֆինանսական հաստատություններ (ՄՖՀ)

Տեղական ֆինանսական հաստատությունները՝ բանկերը և ունիվերսալ վարկային կազմակերպությունները

Տեղական ֆինանսական հաստատությունների ընդհանուր վարկային պորտֆելը, որը ներառում է բանկեր և ունիվերսալ վարկային կազմակերպություններ, 2010թ. \$3.026 մլրդ.-ից 2015թ. հասել է \$4.625 մլրդ¹⁵, այսինքն ավելացել է տարեկան 8,88%-ով: Սա շուրջ երկու անգամ ավելի է, քան Հայաստանում նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը (գրանցվել է, ոչ պակաս քան 4.65%¹⁶): Գնահատված պորտֆելը 2015թ. ամենամեծն է: Տեղական արժույթի վարկային պորտֆելը ավելացել է 1.59 անգամ, իսկ նույն ժամանակահատվածում արտարժույթի վարկային պորտֆելը՝ 2.27 անգամ: Հիմնական եզրակացությունն այն է, որ տեղական ֆինանսական հաստատությունները որպես տարադրամի ռիսկի նվազեցման մարտավարություն նախընտրում են արտարժույթով վարկեր: Ընդհանուր վարկային պորտֆելը 2010թ. ՀՆԱ-ի 34%-ից 2015թ. աճեց մինչև ՀՆԱ-ի 42%: Հետևաբար, ընդհանուր վարկային պորտֆելն ունի առնվազն երկու անգամ աճի ներուժ, ՀՆԱ-ի մինչև 80-100% մակարդակ¹⁷:

2010-2015թթ. համար բանկերի կողմից տրամադրված ինչպես տեղական, այնպես էլ արտարժութային վարկերի մարման միջին ժամկետը գրանցել էր¹⁸ մի փոքր անկում: Միաժամանակ ինչպես տեղական, այնպես էլ արտարժութային վարկերի ընդհանուր գումարը՝ աճել է (տես՝ ստորև բերված այլուստակն ու գծապատկերը): Այս միտման երկու հիմնական գործոնը երկարաժամկետ ֆինանսավորման և արժութային ռիսկի բացակայությունն էր:

Այլուստ 15. 2010-2015թթ. համար բանկերի վարկային պորտֆելի հիմնական ցուցանիշները


1 Տեղական արժույթով տրամադրված վարկեր	
1.1 Մարման միջին ժամկետը	4.29 (4.38 տարի՝ 2010թ. և 4.17 տարի՝ 2015թ.)
1.2 Ընդհանուր գումարի աճը	11% (9.23 մլրդ ՀՀ դրամից մինչև 10.24 մլրդ ՀՀ դրամ)
2 Արտարժույթով տրամադրված վարկեր	
2.1 Մարման միջին ժամկետը	4.47 (4.54 տարի՝ 2010թ. և 4.12 տարի՝ 2015թ.)
2.2 Ընդհանուր գումարի աճը	83% (f12.44 մլրդ ՀՀ դրամից մինչև 22.74 մլրդ ՀՀ դրամ)

¹⁵ Տեղեկատվական աղբյուր՝ www.cba.am

¹⁶ Տեղեկատվական աղբյուր՝ IMF World Economic Outlook, 2014

¹⁷ ՀՆԱ-ի տարեկան 4-7 % աճ ունեցող զարգացող երկրների մեծ մասի ՏՖՀ պորտֆելի աճի միտումը համեմատական է ՀՆԱ-ի աճի միտման հետ:

¹⁸ Տեղեկատվական աղբյուր՝ բանկերի կողմից տրամադրված ամսաթվերը



Գծապատկեր 18. Տեղական բանկերի կողմից տրամադրված ԷԱ և ՎԵ վարկերը 2010 – 2015թթ., 1,000 << դրամ

2010-2015թթ. ՎԿՄ կողմից տեղական արժույթով տրամադրված վարկերի համար վարկային միջին մարումը գրանցում է մի փոքր անկում: Ավելացել է միայն արտարժութային վարկերի մարման ժամկետը¹⁹: Հետևաբար, վարկային կազմակերպությունների միությունները նախընտրում են տրամադրել տեղական արժույթով՝ կարճաժամկետ և արտարժույթով՝ միջնաժամկետ վարկեր:

Աղյուսակ 16. Վարկային կազմակերպությունների միության վարկային պորտֆելի հիմնական ցուցանիշները 2010-2015թթ. համար

1 Տեղական արժույթով տրամադրված վարկերը	
1.1	Մարման միջին ժամկետը
1.2	Ընդհանուր գումարի աճը
2 Արտարժույթով տրամադրված վարկեր	
2.1	Մարման միջին ժամկետը
2.2	Ընդհանուր գումարի աճը

Տեղական ֆինանսական հաստատությունների կողմից տեղական արժույթով տրամադրված վարկերի ընդհանուր գումարը ավելացել է 1.33%-ով, իսկ արտարժույթով՝ շուրջ 40%, ինչը նշանակում է, որ տեղական արժույթով վարկավորման աճը արտարժույթով վարկավորման աճից մոտ 13 անգամ ցածր է: Դրա համար գոյություն ունի երկու լուրջ պատճառ:

¹⁹Տեղեկատվական աղյութը՝ Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների միության կողմից տրամադրվող ամսաթվերը (UCORA)

Ա. ՏՖՀ-ները չունեն արժութային ռիսկի մեղմացման որևէ արդյունավետ միջոց, փորձ և կարողություն, և դրանց բացակայության պատճառով ՏՖՀ համար արտարժույթի վարկավորումն ավելի գրավիչ է:

Բ. ՏՖՀ մեծ մասը տեղական արժույթով վերաֆինանսավորման վարկերի տրամադրման ժամանակ նախընտրում է դիմել արտարժութային վարկավորմանը: Հիմնական եզրակացությունն այն է, որ ՏՖՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում արժութային ռիսկի մեղմմանը, իսկ ԷԱ ներդրումների համար արժութային ռիսկը որոշիչ գործոն է:

ՏՖՀ կողմից հատկացված ընդհանուր վարկերի մեջ ԷԱ նախագծերի ինչպես տեղական, այնպես էլ արտարժութային վարկերի մասնաբաժինը կրճատվել է,²⁰ (տես՝ ստորև աղյուսակը): Հիմնական եզրակացությունն այն է, որ ԷԱ վարկավորումը ՏՖՀ համար ավելի պակաս գրավիչ է, ինչպես նաև գոյություն ունի վարկային վերաֆինանսավորման հսկայական մասնաբաժին, որը 2010-2015թթ. ավելացել է:

Աղյուսակ 17. ՏՖՀ-ի կողմից հատկացված ընդհանուր վարկերը

Ցուցանիշը	2010	2015	Միջին մասնաբաժինը 2010-2015թթ.
Տեղական բանկերի կողմից հատկացված ընդհանուր վարկերը			
Վարկեր՝ տեղական արժույթով	8.60%	5.70%	7.00%
Վարկեր՝ արտարժույթով	8.70%	6.40%	7.30%
ՎԿՄ կողմից հատկացված վարկերը			
Վարկեր՝ տեղական արժույթով	13.00%	7.40%	10.00%
Վարկեր՝ արտարժույթով	11.40%	8.30%	9.50%

Այս ժամանակահատվածի համար կարող ենք նշել երկու խնդիր:


ա. Վերաֆինանսավորման մասնաբաժին, ներառյալ ՄՖՀ վարկերը, որոնք 2010-2015թթ. ավելացել են: Վերաֆինանսավորման ընթացքում ՄՖՀ-ն, սովորաբար, «ԷԱ»-ից վարկը վերարտակավորում է «սովորական»-ի:

բ. Կարող ենք տեսնել, որ տեղական արժույթով վարկերի անկումն արտարժույթով վարկերի համեմատությամբ մոտ 1.5-1.8 անգամ ավելի արագ է: Ակնհայտ է, որ ԷԱ նախագծի մշակողների համար արտարժույթով վարկավորման դիմելու միտումը գրավիչ չէ:

ՏՖՀ կողմից տրամադրվող ԷԱ և ՎՀ վարկերի գումարը, ներառյալ միջազգային ֆինանսական հաստատությունների ֆոնդը, 2010թ. \$68.74 մլն դոլարից 2015թ. կազմել է \$83.78մլն ԱՄՆ դոլար, այսինքն տարեկան ավելացել է 2.71%-ով, որը մոտ 1.72 անգամ ավելի քիչ է, քան ՀՆԱ-ի աճի տարեկան տոկոսը: Այսպիսով, 2010-2015թթ. Հայաստանն ունեցել է շուրջ 340 մլն ԱՄՆ դոլար չօգտագործված ԷԱ ներդրումային պոտենցիալ:


Էներգաարդյունավետության վարկերից հատկացրած միջոցների ընդհանուր գումարը 2010-2015թթ. ընթացքում կազմում էր 471.14 մլն ԱՄՆ դոլար, որից 385.78 մլն ԱՄՆ դոլարը կամ 81,88% հատկացվել է բանկերի կողմից, իսկ մնացած 18.12%՝ Վարկային կազմակերպությունների միության կողմից: Միևնույն ժամանակ, ավելացել է ՎԿՄ կողմից հատկացված ԷԱ վարկերի մասնաբաժինը՝ 14.92%-ից հասնելով 17.97%-ի: 2012թ. ամենամեծ մասնաբաժինը մոտ 22.45% էր: Այս միտումն ապացուցում է, որ ՎԿՄ-ն Հայաստանում դարձել է ԷԱ ներդրումների հիմնական մասնակիցը, հատկապես կարճաժամկետ և միջնաժամկետ վարկավորման գործընթացում: ՏՖՀ-ի և ՎԿՄ-ի կողմից իրականացված վարկավորումը ներկայացված է Գծապատկեր 19-ում:

²⁰Տեղեկատվական աղյուրը՝ Վարկային կազմակերպության միության և բանկի կողմից տրամադրված



**Գծապատկեր 19. Տեղական բանկերի և ՎԿՄ-ի կողմից 2010 – 2015թթ. տրամադրված ԷԱ/ՎԵ վարկերը
(ներառյալ ՄՖՀ միջոցները, ԱՄՆ դրամ)**

2010-2015թթ. ՄՖՀ մասնաբաժինը էԱ ամբողջական ներդրումներում կազմում էր 19%-ից ավելի քիչ, մինչդեռ մնացած 81%-ն իրականացվել է ՏՖՀ-ի կողմից նրանց սեփական միջոցներով։ Փաստորեն, ՏՖՀ-ն խիստ հետաքրքրված են ԷԱ վարկավորման մեջ և ԷԱ ֆինանսավորման հիմնական մասնակիցն է (տես՝ Գծապատկեր 20)։



Գծապատկեր 20. 2010 – 2015թթ. ՏՖՀ-ների և ՄՖՀ-ների կողմից տրամադրված ԷԱ/ՎԵ վարկերը, ԱՄՆ դոլար


Միջազգային ֆինանսական հասկարությունները

Միջազգային ֆինանսական հաստատությունները (ՄՖՀ) ՏՖՀ միջոցով տրամադրել են ավելի քան 87.96 մլն ԱՄՆ դոլարի ԷԱ վարկ, որը ներգրավել է (Վարկային ֆինանսավորմամբ) ևս 23.30 մլն ԱՄՆ դոլար, կամ 2010-2015թթ. ԷԱ բիզնեսի և այլ աղբյուրների լրացուցիչ ներդրումների ավելի քան 26%²¹: Ամենախոշոր վարկատուններն էին ՎՀԵԲ՝ 49.26 մլն ԱՄՆ դոլար և ՄՖՀ՝ 26.57մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով, որոնք ընդգրկել են ՄՖՀ կողմից ընդհանուր վարկային հատկացումների 86%-ը՝ 56%՝ ՎՀԵԲ-ը և 30%-ը՝ ՄՖՀ: ՄՖՀ մյուս մասնաբաժինները շատ փոքր էին, բացառությամբ GGF, որը տրամադրում էր հատկացված ընդհանուր գումարի մոտ 8%-ը: Միջին կշռյալ տոկոսադրույթը կազմել է 10.72%, վարկի մարման ժամկետն ավելի քան 78 ամիս է: Միևնույն ժամանակ, ծրագրերի/սարքավորումների միջին կշռյալ տևողությունը 10 տարուց ավելի չէ, այսինքն 1.5 անգամ ավելի, քան վարկի մարմարը:

Առավել ընդունելի գրավադրման գործարքներն ընկերության կողմից ֆիքսված և ընթացիկ ակտիվներն են, որոնք ընդգրկում են արտադրական կառուցներ, տրանսպորտ և հոմք, սեփական կառուցներ և միջոցներ և ընկերության բաժնետերերի միջոցներ, ինչպես նաև երաշխիքներ այլ՝ երրորդ մարմնի կողմից:

ԷԱ ամենամեծ մասնաբաժինը տրամադրվել է արդյունաբերությանը՝ 35%-ից ավելի, շուրջ 22%՝ էներգետիկ ոլորտին/արտադրությանը և մոտավորապես 18%՝ փոքր և միջին ձեռնարկություններին, տրանսպորտի ոլորտը միաձուլվելով արդյունաբերության և ՓՄՁ-ի հետ: Մոտ 14% ներդրվել է համայնքային ենթակառուցվածքային նախագծերում: Վարկավորման ամենափոքր մասնաբաժինը՝ շուրջ 0.3%, հատկացվել է հանրային շենքերին (տես՝ էներգարդյունավետության վարկավորման մասնաբաժինը բանկերի պորտֆելում Գծապատկեր22-ում):

²¹ Տեղեկատվական աղբյուր՝ ՄՖՀ-ի կողմից տրամադրված տվյալները



Գծապատկեր 21. 2010 – 2015թթ. ԵԱ նախագծերի մասնաբաժինը ՏՖՀ-ի կողմից հատկացված ընդհանուր վարկերում, %

2010-2015թթ. վարկավորման հաստատված ծավալների արդյունքում ստացվել է 1.76 մլն ՄՎտժ ընդհանուր Էներգախնայողություն, որի կուտակային ազդեցությունը 2015թ. 2012թ. Էներգիայի խնայողությունների քանակից 4.2 անգամ ավելի էր: 2010-2020թթ. համար Էներգիայի ընդհանուր հաշվարկված խնայողությունները կազմել են 213 մլն ՄՎտժ, որի կուտակային ազդեցությունը զգացվել է 2015թ. հետո: Ընդհանուր առմամբ, տարեկան աճը հաշվարկվել է 96% մակարդակով: 2010-2015թթ. խնայվել է շուրջ 150 հազար ՆՀՏ: Նախկին ներդրումների կուտակային ազդեցության շնորհիվ 2016-2020թթ. կխնայվի ավելի քան 18.30 մլն ՆՀՏ: GGF հիմնադրամն ընդհանուր խնայողությունների իր հաշվարկված մասնաբաժնով կդառնա այս գործունեության հիմնական մասնակիցը: ակնկալվում է մոտ 97.2%: Պատճառն այն է, որ ՄՖՀ-ների զգայի մասը թերացել է տրամադրել 2015թ. հետո վարկավորման պլանների խելամիտ կանխատեսումներ:

3.2.2.Կարողությունների զարգացում ֆինանսական հաստատությունների համար և աջակցություն Էներգախնայողության շուկային

Հաշվի առնելով Էներգախնայողության ֆինանսական պահանջման չափահովված բացը և տեղական ֆինանսական հաստատությունների լիկվիդացնությունը, ԼՖՀ կարողությունների զարգացման համար անհրաժեշտ են համապարփակ ջանքեր հետևյալ երեք ուղղություններով:

Օրենսդրություն և կանոնակարգեր

Ա. ԷԱ ներդրումներիվարկավորման պայմաններ և բանկային կանոնակարգերի բարելավման միջոցառումներ

Այս առաջադրանքի ընդհանուր նպատակն է ՏՖՀ, ՄՖՀ և ներդրողների համար ԿԵ ֆինանսավորումը/վարկավորումն ավելի իրագործելի դարձնելու նպատակով բարելավել ներդրումային ռազմավարությունը, բանկային կանոնակարգերն ու նորմատիվները և Հայաստանում ներգրավել ներդրումներ կայուն էներգետիկ ոլորտում, ինչպես նաև կառավարությանը ներկայացվելիք առաջարկությունների ցանկ ստեղծելու միջոցով Հայաստանում խթանել համագործակցությունը ֆինանսական ոլորտի կարգավորման և քաղաքականություն մշակողների ու հետաքրքրված մարմինների միջև:

Բ. Արդյունաբերության համար էներգետիկ հարկադիր առողջիւնի (պիտակ) համակարգի ներդրում

Համակցված միջոցառման առանձնահատուկ նպատակներն են.

- Արդյունաբերության համար էներգետիկ հարկադիր առողջիւնի համակարգի ներկայացման նպատակով ստեղծել ճանապարհային քարտեզ
- Զեավորել էներգետիկայի հարկադիր առողջիւնի ընթացակարգ, խոշոր էներգասպառողների համար ստեղծել հատուկ պայմաններ
- Զեավորել էներգետիկայի հարկադիր առողջիւնի ընթացակարգ, ՓՄՁ-ների համար ստեղծել հատուկ պայմաններ:

Գ. Բուհական ծրագրերի բարելավումը էներգարդյունավետության ոլորտում

Այս առաջադրանքի հիմնական նպատակն է Հայաստանում տեխնիկական բնագավառի ուսանողներին ուսուցանել ԷԱ նոր հմտություններ: Մշակելով նոր դասընթացներ, բարելավել շահառու համալսարանների ԷԱ ուսումնական ծրագրերը, կազմակերպելով ԷԱ հետևյալ առարկաների դասավանդումը. ա) ԷԱ քաղաքականություն, բ) ԷԱ տնտեսական վերլուծություն, գ) ԷԱ տեխնոլոգիաներ էներգետիկայի և արդյունաբերության ոլորտներում և դ) ԷԱ տեխնոլոգիաներ շենքերի նախագծման, կառուցման և շահագործման ոլորտներում:

Կարողությունների զարգացման միջոցառումները

Ա. Համակցված ուսումնական այց և կարողությունների զարգացման սեմինար ԷԱ ֆինանսավորման վերաբերյալ

Համակցված միջոցառման կոնկրետ նպատակներն են.

- Առավել հաջողված որոշումներ կայացնելու նպատակով մասնակիցներին տրամադրել ԷԱ ներդրումային լայնածավալ գիտելիքներ և հմտություններ
- Մասնակիցներին փոխանցել գիտելիքներ ԵՄ լավագույն փորձի՝ ԷԱ ֆինանսական պայմանների, տեխնոլոգիաների և մեթոդների՝ այդ թվում, ոիսկի կառավարման, անվտանգության միջոցառումների և մոնիթորինգի քայլերի, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործման վերաբերյալ

- Բարելավել մասնակիցների ունակությունները ԷԱ ծրագրի մշակման և իրականացման, մասնավորապես, արդյունավետ ու շահավետ գործողություններ մշակելու և իրականացնելու գործընթացում
- Խթանել ԷԱ/ՎԵ ֆինանսավորման արդյունավետ մոտեցումներ և համակարգեր, ներառյալ ավարտված վարկային գործարքների և ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ցուցադրել ԿԵ ֆինանսական միջոցներով կառուցված աշխատող գործարանները և ԷԱ ֆինանսավորման շրջանակներում իրականացված ծրագրերը:

Բ. ՏՖՀ կարողությունների զարգացում ԷԱ ֆինանսավորման վերաբերյալ

Նպատակը կայանում է նրանում, որ արևմտաեվրոպական բանկային աշխատողները տեղական ՏՖՀ- ում ուսուցանեն ԷԱ ոլորտում բիզնես վարելու լավագույն փորձը: Դա նշանակում է բանկիրներին, վարկային գծով մասնագետներին, ներդրումային գծով մասնագետներին ուսուցանել ԷԱ ֆինանսական տեխնոլոգիաներ, օպտիմալ ֆինանսական միջոցներ, պայմաններ և սխեմաներ, ծրագրի մշակման և իրագործելիության գնահատում, ինչպես նաև սովորեցնել, թե երաշխիքային մեխանիզմների և կառավարման միջոցառումների միջոցով ինչպես կարելի է բացահայտել և նվազեցնել ֆինանսական աջակցության ռիսկերը:

Գ. Վարկունակ ծրագրերի մշակման համար արդյունաբերական Էներգետիկ առողջական վերլուծություն Էներգետիկ-ճարտարագետների և Էներգասպասարկման ընկերությունների համար

Այս միջոցառման նպատակն է ԷԱ ծրագրերի ֆինանսական և տնտեսական կենսունակությունը գնահատելու նպատակով տեղական ճարտարագետներին զինել համապատասխան միջոցներով և մեթոդաբանությամբ: Այս կարողությունների զարգացումն էներգետիկայի գծով ինժեներներին և կառավարիչներին ուսուցանում է, թե ինչպես պետք է հասկանալ և խոսել կառավարման լեզվով, օգտագործելով ԷԱ ծրագրերի պատրաստման գործընթացում կիրառվող միջոցները և մեխանիզմները՝ մշակել այնպիսի Էներգաարդյունավետության նախագծեր, որոնք հնարավոր է ներկայացնել ֆինանսավորման համապատասխան տնտեսական պայմաններով:

Դ. Էներգետիկ առողջական կարողությունների զարգացում ՏՖՀ-ի համար

Այս միջոցառման հատուկ նպատակներն են.

- բարելավել մասնակիցների կարողությունները նոր մեթոդաբանության, գործիքների և առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործմամբ արդյունավետ Էներգետիկ առողջականացնելու նպատակով
- մասնակիցներին փոխանցել Էներգետիկ առողջական ԵՄ լավագույն փորձը
- մասնակիցներին փոխանցել Էներգետիկ առողջական ծառայություններ մատուցելու փաստաթղթերի փաթեթը՝ ներառյալ ստանդարտ ձևերն ու ձևաթղթերը
- մասնակիցներին ներկայացնել Հայաստանում Էներգետիկ առողջական շուկան ձևավորող Էներգետիկ առողջական իրավական դաշտը, հիմնական գործոններն ու կատարողականները:

Ե. ՏՖՀ և Էներգետիկ սպասարկման ընկերությունների կարողությունների զարգացումը պայմանագրերի իրականացման գործընթացում

Համակցված միջոցառման հատուկ նպատակներն են.

- մասնակիցներին տրամադրել ընդլայնված գիտելիքներ և հմտություններ ԷԱ բիզնեսի առավել լավ որոշումներ կայացնելու նպատակով
- մասնակիցներին փոխանցել պայմանագրերի իրականացման հիմնական սկզբունքները, թեմաները, պայմանները և ձևերը, ինչպես նաև ԷԱ բիզնեսի իրավական, օրենսդրական և նորմատիվ դաշտը
- մասնակիցներին փոխանցել ԷԱ բիզնեսի պայմանագրերն իրականացնելու փաստաթղթերի փաթեթը, ներառյալ ստանդարտ ձևերն ու ձևաթղթերը
- մասնակիցներին փոխանցել ոիսկի կառավարման, անվտանգության միջոցառումների և մոնիթորինգի քայլերի, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործման ԷԱ բիզնես պայմանների ԵՄ լավագույն փորձը:

Իրազեկման բարձրացում

Ա) ԷԱ բիզնեսի վերաբերյալ օնլայն տեղեկատվական պորտալի ստեղծումը

Հիմնել Էներգարդյունավետության ապրանքների և սպասարկման, մատակարարների, ֆինանսական գծով մասնագետների, խորհրդատվության, պետական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Էներգարդյունավետության տեխնիկական և ֆինանսական լուծումների վերաբերյալ իրազեկման հիմնական նյութերի ինտերնետային պորտալ

Բ) ԷԱ գործարար տեղեկատվական կենտրոնի հիմնում և շահագործում

Օրենսդրություն մշակողների մասնակցությամբ՝ ԷԱ ռազմավարությանը նվիրված միջոցառումներ, որոնք վեր կհանեն օրենսդրության կամ կարգավորման միջոցով լուծման կարիք ունեցող խնդիրներ

Գ) Ապահովել ԷԱ հանրային և տեղեկատվական գործողությունները

Մշակել ԷԱ տեղեկատվական նյութեր և աշխատել հանրության, մասնավորապես, ուսանողների և երեխաների, ինչպես նաև պաշտոնատար անձանց, բիզնեսով գրաղվող մարմինների, ՏՖՀ-ների և ՀԿ-երի հետ:

Դ) ԷԱ իրազեկման բարձրացման վերաբերյալ համակցված ուսումնական այց և սեմինար

Այս միջոցառման հիմնական նպատակն է. բարձրացնել ԷԱ իրազեկումը Հայաստանում, ընդլայնել ԷԱ իրազեկման բարձրացման արդյունավետ միջոցառումներ մշակելու և իրականացնելու մասնակիցների կարողությունները, ինչպես նաև զարգացնել իրազեկման բարձրացման և տեղեկատվական կենտրոն ստեղծելու ու տարբեր խմբերի համար իրազեկման բարձրացման միջոցառումներ իրականացնելու մասնակիցների կարողությունները: Ակնկալվող արդյունքներն են. ա) արդյունավետ տեղեկատվական արշավների և իրազեկման միջոցառումների նախագծման և իրականացման բարելավված մասնագիտական հմտություններ ԿԷ ավելի լայն խմբերի շրջանում, բ) մասնագետների բարձր իրազեկվածությունը իրազեկման բարձրացման կարիքների, կարևորության և օգուտների մասին պատշաճ տեղեկացվածության վերաբերյալ գ) ԷԱ մասնակիցների միջև զարգացած ցանցի և կապի առկայություն:

ԷԱ ֆինանսավորման ավելացման համար անհրաժեշտ իրազեկման, կարողությունների հզորացման և կարգավորման բարելավումները ներկայացված են ստորև.

Էներգախնայողության միջոցառման անվանումը		Իրազեկության բարձրացում
<u>Միջոցառման ինդեքսը</u>		I.8
Նկատագրություն	Կատեգորիան	Տեղեկատվություն և պարտադիր տեղեկատվական միջոցառումներ
	Ժամանակահատվածը	Սկիզբ՝ 2015թ. Ավարտ՝ 2020թ.
		Այս միջոցառումը փոփոխության է ենթարկվել, բարելավվել է և համարվել լրացուցիչ նմանատիպ միջոցառումներով: Մասնակի միջոցառումներն արդեն իրականացվել են առաջին ԷԳԾ-ի փուլում:
	Նպատակը/համառոտ նկարագիրը	Այս միջոցառումը նպատակ ունի խթանել ԷԱ քաղաքականությունը, քաղաքականություն մշակողներին ներգրավելով այն միջոցառումներում, որոնք օրենսդրության կամ կանոնակարգի միջոցով մատնանշում են արձագանքման ենթակա կոնկրետ խնդիրները, իրականացնում են ԷԱ հանրային և տեղեկատվական միջոցառումներ և աշխատում են ընդհանուր հանրության, մասնավորապես, ուսանողների և երեխաների, ինչպես նաև պատոնյաների, բիզնես ձեռնարկությունների, ՄՖՀ-ների և ՀԿ-ների հետ:
	Թիրախային վերջնական օգտվող	Բիզնես և պետական մարմիններ, ESCO, SՖՀ, լրատվամիջոցներ
	Թիրախային խումբ	Բիզնես և պետական մարմիններ, ESCO-ներ, SՖՀ, լրատվամիջոցներ
	Տարածաշրջանային կիրառում	Ազգային
Տեղեկատվություն կույտարկումնացման վերաբերյալ	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության գործողությունների ցանկն ու նկարագիրը	Միջոցառման երկու բաղկացուցիչներն են. Ա) Առցանց տեղեկատվական պորտալի ստեղծում էԱ բիզնեսի վերաբերյալ: Երեք փուլից, երկու այցով միջոցառում՝ а) Փաստերի բացահայտում, б) պորտալի ստեղծման շուրջ փաստաթղթերի ուսումնասիրություն, с) շահագրգիռ մարմիններին պորտալի ներկայացում Բ) ԷԱ բիզնես տեղեկատվական կենտրոնի ստեղծում և գործարկում: Երեք փուլից, երկու այցով միջոցառում՝ а) փաստերի բացահայտում, б) պորտալի ստեղծման գծով փաստաթղթերի ուսումնասիրություն, с)պորտալի ներկայացում շահագրգիռ մարմիններին

		Միջոցառում «Ա»-ն ակնկալվում է սկսել 2016թ. Երկրորդ եռամյակում, միջոցառում «Բ»-ն կսկսվի 2015թ. չորրորդ եռամյակում:
	Բյուջե և ֆինանսական աղբյուր	92 մարդ/օր (72 ավագ և 20 կրտսեր), տրամադրված ՄՖՀ-երի կողմից Ընդհանուր բյուջե՝ \$ 30,000
	Իրականացնող մարմին	ԷՆ, ԷԲՊՆ, ԿԲ, ԿԳՆ, ՖՆ
	Վերահսկող մարմին	ԷԲՊՆ
Էներգախնայողություն	Արդյունքում ծեռքբերված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ	Ներկայությունը պահպանվում է մեթոդաբանության համաձայն
	2014թ. ակնկալվող խնայողությունները՝ համաձայն առաջին ԷԱԳԱՊ-ի	Նոր միջոցառում
	2017թ. ակնկալվող էներգախնայողությունը	
	2018թ. ակնկալվող էներգախնայողությունը	
	2020թ. էներգախնայողության վրա ակնկալվող ազդեցությունը	
	Ենթադրություններ	
	Մասնակի համընկնում, բազմապատկման ազդեցություն, սիներգիա	Սա հորիզոնական միջոցառում է

	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Կանոնակարգերի բարելավում
	Միջոցառման ինդեքսը	I.9
Կարողություններ	Կատեգորիան	Կանոնակարգում, տեղեկատվություն և տեղեկատվական պարտադիր միջոցառումներ
		Սկիզբ՝ 2015թ. Ավարտ՝ 2020թ
	Ժամանակահատվածը	Այս միջոցառումը ենթարկվեց փոփոխության, բարելավվեց և հավելվեց լրացուցիչ նմանատիպ գործողություններով։ Մասնակի միջոցառումներն արդեն իսկ իրականացվեցին । ԷԳԾ-ի ժամանակ։

	Նպատակը/համառոտ նկարագիրը	Այս առաջադրանքի հիմնական նպատակն է. բարելավել ներդրումային քաղաքականությունը, բանկային կանոնակարգերն ու նորմատիվները SՖՀ-ների, ՄՖՀ-ների ու ներդրողների համար ԿԷ ֆինանավորումը/վարկավորումն առավել իրագործելի դարձնելու, և ներդրումները Հայաստանի կայուն էներգետիկայի ոլորտին ուղղողելու համար, ինչպես նաև Հայաստանում ֆինանսական ոլորտի, կանոնակարգող և քաղաքականություն մշակողների և շահագրգիռ մարմինների միջև համագործակցությունը խթանելու համար << կառավարությանը ներկայացնելու նպատակով մշակել մի շարք առաջարկություններ։ Այս առաջադրանքի հաջորդ ընդհանուր նպատակն է. ԷԱ ոլորտում նոր հմտությունների ուսուցանումը Հայաստանի համալսարանների ուսանողներին ու դասախոսներին։ Այս գիտելիքը շատ կարևոր է ապագա ինժեներների և տնտեսագետների համար ԷԱ տեխնոլոգիաներ իրականացնելու համար, որոնք համապատասխանում են ԵՄ լավագույն պրակտիկային և պահանջներին։ Կոնկրետ նպատակներից է. բարելավել շահագրգիռ համալսարանների ԷԱ ուսումնական ծրագրերը, մշակելով և մատուցելով ԷԱ առարկաների նոր դասախոսություններ։
	Թիրախային վերջնական օգտվող	Բիզնես և պետական մարմիններ, ESCO-ներ, SՖՀ, համալսարաններ
	Թիրախային խումբ	Բիզնես և պետական մարմիններ, ESCO-ներ, SՖՀ, համալսարաններ
	Տարածաշրջանային կիրառում	Ազգային
Տեղեկատվություն իրավանացման վերաբերյալ		<p>Միջոցառման երեք բաղադրիչներն են՝</p> <p>A) Կիմայի և բանկային կանոնակարգի բարելավման ԷԱ ներդրումային/վարկավորման միջոցառում (ILCIE): Երեք փուլով, երկու այցով միջոցառում է՝ ա) փաստերի բացահայտում, բ) առաջարկությունների ցանկի վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրություն, ս) ցանկի ներկայացում շահագրգիռ կողմերին</p> <p>B) Արդյունաբերության համար պարտադիր էներգետիկ առողջիւթյան (ախտակավորման) համակարգի ճանապարհային քարտեզի ներդնում: Երեք փուլով, երկու այցով միջոցառում՝ ա) Փաստերի բացահայտում, բ) ճանապարհային քարտեզի համար փաստաթղթերի ուսումնասիրություն, ս) շահագրգիռ կողմերին ճանապարհային քարտեզի ներկայացում</p> <p>C) Համալսարանների էներգաարդյունավետության մասով ուսումնական ծրագրերի բարելավում: Երեք փուլով, երկու այցով միջոցառում՝ ա) Փաստերի բացահայտում, բ) ուսումնական ծրագրի համար նյութերի ուսումնասիրություն, ս) ուսումնական ծրագրերի ներկայացում շահագրգիռ կողմերին</p> <p>«Ա» և «Բ» միջոցառումները նախատեսվում է սկսել 2015թ. չորրորդ եռամյակում, «C» միջոցառում կսկսվի 2016թ. առաջին եռամյակում:</p> <p>Բոլոր տեխնիկական և տնտեսագիտական համալսարանները կարող են դառնալ «C» միջոցառման շահագրգիռ կողմ:</p>

	Բյուջե և ֆինանսական աղյուր	164 մ/օ (122 ավագ և 42 կրտսեր), տրամադրված ՄՖՀ-ների կողմից Ընդհանուր բյուջե՝ 46,900 եվրո
	Իրականացնող մարմին	ԷՆ, ԷԲՊՆ, ԿԲ, ԿԳՆ
	Վերահսկող մարմին	ԷԲՊՆ
Էներգախնայություն	Արդյունքում ձեռքբերված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ	Նեքսից՝ վերև ազգային մեթոդաբանության համաձայն
	2014թ. Ակնկալվող էներգախնայողությունը՝ համաձայն առաջին ԷԱԳԱՊ-ի	
	2017թ. էներգախնայողությունը	
	2018թ. Ակնկալվող էներգախնայողությունը	
	2020թ. Ակնկալվող խնայողությունները	
	Ենթադրություններ	<p>Երեք հիմնական ուղղություններով միջոցառումների ու առաջարկությունների ցանկի կազմում կանոնակարգող մարմնին, քաղաքականություն մշակողներին և կառավարությանը ներկայացնելու համար: A) բարելավել ԷԱ ներդրումային օրենսդրությունը և կիման, B) բարելավել բանկային կանոնակարգն ու նորմատիվ ու վարկային պայմանները ԷԱ վարկավորման դեպքում, C) հիմնել ԷԱ ներդրումներին աջակցության հաստատություններ</p> <p>Երկու ժամանակամարտ 20 դասախոսությունների պատրաստում հետևյալ թեմաներով՝ A) Էներգետիկ քաղաքականություն և օրենսդրություն, B) Էներգետիկ տնտեսական վերլուծություն, C) Էներգետիկ և արդյունաբերական ոլորտում ԷԱ տեխնոլոգիաների վերաբերյալ ինժեներական դասախոսություններ D) ԷԱ տեխնոլոգիաների մասով շենքերի դիզայնի, կառուցման և շահագործման վերաբերյալ ճարտարագիտական դասախոսություններ:</p>
	Մասնակի համընկնումներ, քաղմապատկման ազդեցություն,սիներգիա	Սա հորիզոնական միջոցառում է:

	Էներգախնայողության միջոցառման անվանումը	ԷԱ ֆինանսավորման գծով կարողությունների զարգացում
	Միջոցառման ինդեքս	I.10
Նկար պատճեն	Կատեգորիա	ԷԱ ֆինանսավորման կարողությունների զարգացում ESCO-ների, Էներգետիկ ինժեներների, քանկիրների/սերդրողների և ծրագրի հյուրընկալողների համար

	Ակիզը՝ 2015թ. Ավարտը՝ 2020թ.
Ժամանակահատված	Այս միջոցառումը փոփոխության է ենթարկվել, բարելավվել է և համալրվել լրացուցիչ նմանատիպ գործողություններով։ Մասնակի միջոցառումներն արդեն իրականացվել են առաջին ԷԱԳԴ-ի փուլում։
Նպատակը/համառոտ նկարագրությունը	<p>Ա) ավելի լավ էԱ ներդրումային որոշումներ կայացնելու համար մասնակիցներին գինել բարելավված գիտելիքով և հմտություններով։ Բ) մասնակիցներին փոխանցել էԱ ֆինանսավորման պայմանների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը, ներառյալ ոհսկի կառավարում, անվտանգության միջոցառումներ ու մոնիթորինգի քայլեր, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրառումը, Ը) ԷԱ ֆինանսավորման համար խթանել արդյունավետ մոտեցումներ ու համակարգեր, ներառյալ ավարտված վարկային գործարքների և ներդրումային ծրագրերի վերաբերյալ ուսումնասիրությունը, ինչպես նաև ԷԱ ֆինանսավորման գործիքներով կառուցված աշխատող գործարանների ցուցադրումը և ԷԱ ֆինանսավորման ներքո իրականացված ծրագրերը։</p> <p>Այս միջոցառումը նպատակ ունի տեղի ինժեներներին գինել էԱ ծրագրերի ֆինանսական և տնտեսական կենսունակությունը գնահատելու պատշաճ գործիքներով և մեթոդաբանությամբ։ Կարողությունների զարգացման այս վերապատրաստումները էներգետիկ ինժեներներին և էներգետիկ կառավարիչներին սովորեցնում են հասկանալ և խոսել կառավարման լեզվով, բարելավում են գործիքների և մեթոդաբանության կիրառման գծով ԷԱ ծրագրին պատրաստվելու համար նրանց կարողությունները։ Այս գործընթացի կարևորագույն մասը նվիրված է ֆինանսավորման համար ներկայացվող ԷԱ ծրագրերի պատրաստմանը և համապատասխան տնտեսական պայմաններով ծրագերի ներկայացմանը։ Այս միջոցառումը նպատակ ունի նաև բարելավել նոր մեթոդաբանության, գործիքների և առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով արդյունավետ էներգետիկ առողջիւտ իրականացնելու մասնակիցների կարողությունը։</p> <p>Այս առաջադրութիւն հաջորդ ընդհանուր նպատակն է մասնակիցներին գինել բարելավված գիտելիքներով և հմտություններով առավել արդյունավետ ԷԱ բիզնես/ որոշումներ իրականացնելու համար, ինչպես նաև մասնակիցներին փոխանցել ԷԱ բիզնեսների հիմնական սկզբունքները, թեմաները, պայմանագրերի պատրաստման պայմաններն ու ծևաչափերը, ինչպես նաև իրավական, կանոնակարգող և նորմատիվ շրջանակը, ԷԱ բիզնեսի իրականացումը պայմանավորող փաստաթյութերի փաթեթը, ներառյալ ծևաթղթերը և կաղապարները, մասնակիցներին փոխանցել ԷԱ բիզնեսի պայմանների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը, ներառյալ ոհսկի կառավարումը, անվտանգության միջոցառումները և մոնիթորինգի քայլերը, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրառումը։</p>

Թիրախային վերջնական օգտվող	Բիզնես և պետական մարմիններ, ԷԱ ծրագրի հյուրընկալողներ, ներդրողներ, ESCO-ներ, SՖՀ, լրատվամիջոցներ
Թիրախային խումբ	Բիզնես և պետական մարմիններ, ԷԱ ծրագրի հյուրընկալողներ, ներդրողներ, ESCO-ներ, SՖՀ, լրատվամիջոցներ
Տարածաշրջանային կիրառում	Ազգային
Տեղեկատվություն իրականացնելու վերաբերյալ	<p>Միջոցառման վեց բաղադրիչներն են՝</p> <p>A) ԷԱ ֆինանսավորման վերաբերյալ կարողությունների զարգացման սեմինար և համակցված ուսումնասիրության այց:՝ ԷԱ ֆինանսավորման առումով փորձառու ՏՖՀ-ի հետ համագործակցությամբ եռօրյա ուսումնասիրության այց դեպի ԷԱ-ի գծով առաջադեմ ԵՄ երկիր, ներառյալ 12 ժամ տևողությամբ աշխատանքային սեմինար</p> <p>B) ԷԱ ֆինանսավորման առումով փորձառու ԵՄ ՖՀ-ների հետ համագործակցությամբ ՏՖՀ-ների համար ԷԱ ֆինանսավորման գծով կարողությունների զարգացում: Երեք/ինգ օր, 20 ժամ ընդհանուր սեմինար բանկիրների և ESCO ֆինանսական ղեկավարների համար:</p> <p>C) Բանկային ֆինանսավորման առումով շահավետ ծրագրերի արդյունաբերական էներգետիկ առողջության վերլուծություն էներգետիկ ինժեներների և ESCO-ների համար: ԷԱ բիզնեսում փորձառու ԵՄ ընկերության հետ համագործակցությամբ երեք /չորս օր, 20 ժամ ընդհանուր տևողությամբ սեմինար էներգետիկ ինժեներների, ծրագրի մշակողների և ESCO-ների համար:</p> <p>D) Տեղական ընկերությունների/ESCO-ների էներգետիկ առողջության վերաբերյալ կարողությունների զարգացում: ԷԱ առողջութով փորձառու ԵՄ ընկերությունների հետ համագործակցությամբ երեք /չորս օր, 20 ժամ տևողությամբ աշխատանքային հանդիպում էներգետիկ ինժեներների, էներգետիկ առողջությունների և ESCO-ների հետ:</p> <p>E) ՏՖՀ-ների և ESCO-ների կարողությունների զարգացում կատարման պայմանագրերի վերաբերյալ: ԷԱ բիզնեսի ընագավառում փորձառու ԵՄ ընկերությունների հետ համագործակցությամբ երեք/ չորս օր 20 ժամ ընդհանուր տևողությամբ սեմինար էներգետիկ ինժեներների, էներգետիկ առողջությունների և ESCO-ների համար:</p> <p>F) ԷԱ իրազեկության բարձրացման գծով համակցված ուսումնասիրության այց և կարողությունների զարգացման աշխատանքային սեմինար: Տեղական ԷԱ տեղեկատվական կենտրոնի կամ նմանատիպ հաստատության հետ համագործակցությամբ եռօրյա ուսումնասիրության այց դեպի ԷԱ-ով առաջադեմ ԵՄ երկիր, ներառյալ տեղում 12 ժամյա աշխատանքային սեմինար:</p> <p>Միջոցառումներ «A» և «F» ակնկալվում է սկսել 2016թ. երկրորդ եռամյակում, միջոցառումներ «B», «G»՝ 2015թ. չորրորդ եռամյակում, միջոցառումներ «D» և «E»՝ 2016թ. առաջին եռամյակում:</p>

	<p>Բյուջե և ֆինանսական աղբյուր</p> <p>217 մարդ/օր (172 ավագ և 45 կրտսեր), տրամադրված ՄՖՀ-ների կողմից Ընդհանուր բյուջե՝ \$ 70,000</p>
	Իրականացնող մարմին
	Վերահսկող մարմին
	Արդյունքում ձեռքբերված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ
Էներգականայություն	2014թ. Ակնկալվող էներգախնայողությունը՝ հ ամաձայն առաջին ԵԱԳԱՊ-ի
	2017թ. Ակնկալվող խնայողությունները
	2018թ. Ակնկալվող էներգախնայողությունը
	2020թ. Ակնկալվող ազդեցությունը էներգախնայողությունի վրա
	<p>ՄՖՀ-ների, ՏՖՀ-ների հետ ԷԱ ծրագրի մշակման և իրականացման առումով արդյունավետ և եկամտաբեր գործունեություն ծավալելու համար, իրենց վարկային վարչություններում ԷԱ վարկավորման բաժին և ԷԱ մոնիթորինգի և դիսկի կառավարման խումբ ստեղծելու համար բարելավել վարկավորման նոր ծրագրերի մշակման 20 մասնակցի կարողությունը:</p> <p>Վերապատրաստել կորպորատիվ և ՓՄՁ վարչություններում աշխատող 30 բանկիրների, վարկային մասնագետների և վարկային վերլուծողների՝ մասնակիցներին զինելով նոր որոշումներ կայացնելու կարողություններով, ամրապնդել տեղական բանկային ոլորտի հարմարեցված աջակցության սխեմաներ մշակելու և արդյունավետ կերպով ԷԱ ծրագրեր ֆինանսավորելու կարողությունը, ամրապնդել միջազգային լավագույն արակտիկայի վրա հիմնված համապատասխան առաջարկները վերահսկելու և արդյունավետ գնահատելու բանկիրների կարողությունը՝, մասնակիցներին տրամադրել թվային այցուսակի վերլուծության գործիքներ՝ ԵԱ ֆինանսավորման բնագավառում հետագա ադապտացման և կիրառման համար, ԷԱ իրազեկման գծով մասնակիցներին տրամադրել տեղեկատվություն հաղորդակցման գործիքների և միջոցների վերաբերյալ:</p> <p>Ամրապնդել ԷԱ ծրագրերի մշակման և գնահատման 30 հիմքեներների և էներգետիկ կառավարիչների կարողությունը, դիսկի կառավարման գծով մասնագետների կարողությունների զարգացման միջոցով ավելացնել բանկային տեսանկյունից շահավետ ԷԱ ծրագրերի թիվը, մասնագետներին փոխանցել հիմնական սկզբունքները, թեմաները, պայմանագրերի</p>

	իրականացման պայմաններն ու ձևաթղթերը, միջազգային լավագույն փորձի հիման վրա մասնակիցներին զինել որոշումների կայացման նոր հմտություններով, տրամադրել տեղեկատվություն ԵԱ իրազեկման բարձրացման գծով հաղորդակցման գործիքների և միջոցների վերաբերյալ:
Մասնակի համընկնումներ, բազմապատկման ազդեցություն, սիներգիա	Սա հորիզոնական միջոցառում է

3.2.3. Քաղաքապետերի դաշնագրի խթանում

Հանրային ոլորտում հնարավոր է նախաձեռնել Էներգաարդյունավետության հնարավորությունների մեծ մասնաբաժին ստեղծելու գործընթաց և այն իրականացնել տեղական լիազոր մարմինների՝ տեղական ինքնավարման մարմինների (ՏԻՄ) ուժերով, եթե նրանք ստանան պատշաճ տեխնիկական աջակցություն և ուղղություն: Առաջին ԷԳԾ-ի մշակման փուլից հետո սկիզբ առած գործընթացը քաղաքապետերի դաշնագրի արևելյան շարժում էր: Միջոլորտային բնույթի, տեղական քաղաքականության և պլանավորման տարրերի առումով այն հորիզոնական միջոցառում է: Այն ձևավորում է նաև համագործակցություն ազգային և միջազգային քաղաքականությունների, ծրագրերի և ֆինանսական միջոցառումների հետ: Հայաստանում ՔԴ իրականացմանը նպաստել են համապատասխան աջակցող կառույցները՝ այդ թվում՝ Հներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, որը Հայաստանում հանդես է գալիս որպես Դաշնագրի համակարգող, ինչպես նաև Հայաստանի համայնքների միությունը և Էներգախնայողության հիմնադրամը, որոնք Հայաստանում հանդես են գալիս որպես դաշնագրի աջակիցներ: Որպես համակարգողներ սահմանվում են այն մարմինները, որոնք կարող են ռազմավարման ուղղություն, տեխնիկական և ֆինանսավական աջակցություն տրամադրել այն քաղաքապետարաններին, որոնք ցուցաբերում են Քաղաքապետերի դաշնագիրը ստորագրելու քաղաքական կամք, սակայն չունեն հմտություններ և/կամ միջոցներ, մասնավորապես, Էներգետիկ կայուն գործողությունների պլանի մշակման և նրա պահանջների իրականացման համար: Աջակիցները ազգային, տարածաշրջանային և տեղական ցանցերը և տեղական ու տարածաշրջանային մարմինների ասցիդացիաներն են, որոնք ՔԴ նախաձեռնություններն ու պարտավորությունները խթանելու և ստորագրող կողմերին աջակցելու նպատակով օգտագործում են իրենց ադմինիստրատիվ ռեսուրսները, հաղորդակցման և ցանցային գործողությունները:

01.07.2015թ. դրությամբ Հայաստանում առկա են ՔԴ ստորագրող 10 կողմ: Ավարտված ԷԳԿԴ ստորագրած կողմերի և մշակման գործընթացում գտնվող ԿԵԳԴ ցանկը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 18. Տեղեկատվություն Հայաստանում Դաշնագիրը ստորագրած կողմերի ԿԵԳԴ-ների վերաբերյալ

Կետ	Ստորագրող կողմերը					
	Ծաղկաձոր	Վայր	Սպիտակ	Հրազդան	Ապարան	Արթիկ
Ներգրավման ամսաթիվը	09.06.2009	22.05.2014	13.05.2014	21.05.2013	02.09.2013	20.06.2014
ԿԵԳԴ ավարտն առ 01.07.2015	100%	100%	100%	100%	90%	50%
ՏԻՄ-երի կողմից ԷԳԿԴ հաստատման ամսաթիվը	24.10.2014	02.03.2015	10.04.2015	09.06.2015		
Ելակետային տարին ԵԱԳ-ի համար	2011	2011	2011	2012	2012	2012
Բնակչությունը Ելակետային տարում	1750	6724	16883	53525	7387	19600
ԶԳ արտանետուումները Ելակետային տարում	2236	7515	8953	26399	3091	
Ֆիքսված տարի կամ առանց փոփոխությունների	Ֆիքսված տարի	Ֆիքսված տարի	առանց փոփոխությունների	առանց փոփոխությունների	առանց փոփոխությունների	
ԶԳ արտանետուումների տարեկան կրճատում մինչև 2020թ.	447.2	1776.95	2294.24	6617.0	776.4	
ԿԵԳԴ իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր ներդրումային պլան, հազար Եվրո	1214.0	1344.4	1949.3	5239.8	658.8*)	
Մեկ շնչի հաշվով ԿԵԳԴ իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր ներդրումները, Եվրո/անձ	693.7	200.0	115.5	97.9	89.1*)	

***) Նախնական տեղեկատվություն**

Ծաղկաձորից բացի, մեկ շնչի համար ԿԵԳԴ իրականացման ներդրումները տատանվում են 100-ից մինչև 200 Եվրո/ անձ: Ծաղկաձորի համար այդ արժեքը գգալիորեն տարբերվում է ոչ միայն համայնքի փոքրության, այլ նաև ստորագրած կողմի Ելակետային արտանետունների գույքագրման (ԵԱԳ) մեջ տրանսպորտային հոսքը հաշվի առնելու պատճառով (այդ թվում, միջքաղաքային երթևեկություն համայնքի տարածքում): ԵԱԳ այդ բաղադրիչը, սովորաբար, այլ համայնքերում հաշվի չի առնվում, քանի որ այդ ոլորտում տեղական լիազոր մարմինների ազդեցությունը շատ սահմանափակ է:

01.07.2015թ. դրությամբ գոյություն ունի չորս ԿԵԳԴ, որոնք հաստատվել են ստորագրող կողմերի համայնքային խորհրդի կողմից, իսկ Ապարանի և Արթիկի համար երկու նախագիծ գտնվում է մշակման փուլում: Առաջարկվող Էներգախնայողության ԶԳ արտանետուումների նվազեցման

միջոցառումների էկոլոգիական արդյունավետությունը գնահատելու նպատակով կիրառվում է միջոցառումների «ոլորտային կապիտալատարություն» հասկացությունը (այսինքն՝ տարեկան մեկ տոննա CO₂ արտանետումների նվազեցման համար անհրաժեշտ ներդրումները): ԿԵԳՊ առաջարկվող միջոցառումների ոլորտային կապիտալատարությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 19. ԿԵԳՊ միջոցառումների ոլորտային կապիտալատարությունը

Ոլորտ	Միջոցառումների կապիտալատարությունը, Եվրո/տ CO ₂ տարեկան					
	Ծաղկաձոր	Վայք	Սպիտակ	Հրազդան	Ապարան	Արթիկ
Համայնքային բյուջե*	2235	3472	5430	823	1962	
Բնակարանային ոլորտ	3779	705	664	795	384	
Վերականգնվող էներգիա	2281	2202	2182	1628	1884	
Տրանսպորտ		140		83		
Իրազեկման բարձրացում	1085	241	523	84	343	
CO ₂ կյանումներ		90	368	271	327	
Ընդամենը	2714	754	850	792	848	

*) Ներառյալ համայնքային փողոցային լուսավորությունը

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակից, Ծաղկաձորից բացի, համայնքների կապիտալատարությունը չափերով չի տարերվում: Միջին արժեքը հաշվարկվում է մոտ տարեկան 800 Եվրո/տ CO₂: Ամենամեծ ներդրումներն անհրաժեշտ են բյուջետային և ՎԵ ոլորտներում: Ամենաարդյունավետ ներդրումները, կարծես, բնակարանային ոլորտում են: Այս ոլորտի կապիտալատարության արժեքը շատ մոտ է ընդհանուր արժեքին, որը բացատրվում է ԶԳ արտանետումների նվազեցման ընդհանուր հաշվեկշռում ոլորտի մեծ կշռով, երբեմն հասնելով ավելի քան 80% (օրինակ, Սպիտակի համար):

Բնակելի և հանրային շենքերում իրականացման համար առաջարկվող հիմնական միջոցառումներն են.

- ✓ Շենքերի պատող կրնատրուկցիաների ջերմամեկուսացումը
- ✓ Տանիքների ծածկերի փոխարինումը ցինկապատ երկաթե թիթեղներով կամ ծածկող նոր նյութերով
- ✓ Վերնահարկերով շենքերի վերջին հարկերի առաստաղներին ջերմամեկուսիչ նյութերի (15-20 սմ հաստությամբ) կիրառումը
- ✓ Փայտե հին պատուհանների փոխարինումը էներգարդյունավետ պատուհաններով
- ✓ Բազմաբնակարան շենքերի մուտքային դռների փոխարինումը
- ✓ Անարդյունավետ շիկացման լամպերի փոխարինումը էներգարդյունավետ լամպերով և այլն:

Շենքերում նախատեսվում են նաև հետևյալ, այսպես կոչված, ցածրարժեք միջոցառումները, որոնք նպատակառությամբ են տարածքներում ջերմության պահպանմանը.

- ✓ Պատուհանների և դռների մեկուսացում սիլիկոնի, պենոպլաստի, հերմետիկների, պոլիպինիլուրիդային նյութերի և պենոպլաստի կիրառմամբ
- ✓ Դռների ավտոմատ փակման մեխանիզմների տեղադրում
- ✓ Մարտկոցների ետնամասում ջերմաանդրադարձնող պատնեշների էկրանների տեղադրում
- ✓ Նախասրահների կառուցում

- ✓ Նկուղներում և վերնահարկերում ջերմության ներքին բաշխիչ ցանցերի ջերմամեկուսացում և այլն.

Տրանսպորտային ոլորտում առաջարկվող հիմնական միջոցառումները ներկայացված են ստորև

- ✓ Հեծանվաճանապարհների ներդրում,
- ✓ Անցում բնական գազի՝ որպես համայնքային և հասարակական տրանսպորտի հիմնական վառելիք

ՎԵ ոլորտում առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

- ✓ Անհատական (բնակարանային մակարդակի) ջրատաքացուցիչներ
- ✓ Կոլեկտիվ օգտագործման արևային ջրատաքացուցիչների տեղադրում տաք ջրամատակարարման և լրղավազանների համար
- ✓ Ֆուտովոլտահիկ մոդուլների տեղադրում բազմաբնակարան շենքերի մուտքերի և բակերի լուսավորության համար

Թիրախսային համայնքների տարածքներում ՎԵ աղբյուրների այլ տեսակների օգտագործումը խոստումայից չէ, այդ պատճառով ԿԷԳՊ-ում տեղ չի գտել: Էներգետիկ և էկոլոգիական արդյունավետության տեսակետից վերականգնվող էներգետիկան համեմատաբար «թանկ» տարբերակ է (տես՝ աղյուսակ 2):

Բնակչության և ձեռնարկությունների իրազեկման բարձրացման համար առաջարկվող միջոցառումներն ամփոփված են ստորև.

- ✓ «Երկրագնդի ժամերի» կազմակերպում
- ✓ Էներգետիկ օրերի կազմակերպում
- ✓ Շենքերի համար էներգետիկ հավաստագրերի կիրառում
- ✓ Համայնքներում էներգետիկայի զարգացման գործընթացում դպրոցի աշակերտների ներգրավումը
- ✓ Դպրոցներում էներգախնայողության և ՎԵ մասին առարկաների ներդրում:

Առաջարկվող միջոցառումների էներգաարդյունավետությունը

Ստորև ներկայացված այսուսակ 3-ում ամփոփված է ԿԷԳՊ առաջարկվող միջոցառումների էներգաարդյունավետությունը:

Այսուսակ 20. ԿԷԳՊ միջոցառումների էներգաարդյունավետությունը

Ոլորտը	Միավորը	ԿԷԳՊ էներգաարդյունավետության միջոցառումները				
		Ծաղկաձոր	Վայք	Սպիտակ	Հրազդան	Ապարան
Համայնքային ոլորտը*	ՄՎտժ/տարի	435,9	313,3	157,3	4303,8	500,4
	%	17,6	4,2	1,6	15,2	15,6
Բնակելի	ՄՎտժ/տարի	847,0	5065,0	7967,9	19682,5	2047,7
	%	34,2	68,1	82,9	69,4	63,8
ՎԵ	ՄՎտժ/տարի	651,0	346,8	817,2	1909,7	513,9
	%	26,3	4,7	8,5	6,7	16,0
Տրանսպորտ	ՄՎտժ/տարի	-	1483,1	-	1168,8	-
	%	-	19,9	-	4,1	-
Իրազեկման բարձրացում	ՄՎտժ/տարի	541,2	227,2	669,8	1286,0	147,2
	%	21,9	3,1	7,0	4,5	4,6
Ընդամենը	ՄՎտժ/տարի	2475,1	7435,4	9612,3	28350,8	3209,2

*) ներառյալ համայնքային փողոցային լուսավորությունը

Ամենաբարձր հարաբերական արդյունավետություն ապահովվում է բնակելի ոլորտի կողմից, որը պահանջում է ներդրումների մեծ մասը: Քննարկված ԿԷԳՊ-ում բնակելի ոլորտի մասնաբաժինը էներգիայի սպառման կրճատման մեջ տատանվում է 34%-ից մինչև 83%: Որքան երկար է տևում ջեռուցման սեղոնն, այնքան ավելի արդյունավետ են շենքերի ջերմամեկուսիչ ներդրումները: Այդ տևությունը, Ապարանը, 212 օր տևող ջեռուցման սեղոնի շնորհիվ, ավելի լավ դիրքերում է:

Բնակելի ոլորտն ունի էներգաարդյունավետության ամենամեծ ներուժը, քանի որ ենթակառուցվածքի ճնշող մեծամասնությունը հին է և ունի ջերմամեկուսացման ցածր կարողություն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ջերմային մեկուսացման նյութերի գոյություն ունեցող և հեռանկարային շուկան, ենթակառուցվածքի ջերմամեկուսացման առանձնահատկությունների օպտիմալ և տնտեսապես հիմնավորված մակարդակը սահմանելու նպատակով պահանջվում է իրականացնել առանձին և ավելի մանրամասն ուսումնասիրություն:

Տրանսպորտի ոլորտում մարդատար ավտոմեքենաների համար բենզինից՝ բնական գազի անցումը, տնտեսական և էկոլոգիական տեսանկյունից, հստակորեն հիմնավորված է: Սակայն, այս միջոցառման ԶԳ արտանետումների կրճատման ազդեցությունը սահմանափակ է, քանի որ բենզինի (0,249տ CO₂ ՄՎտժ) և բնական գազի (0,202տ CO₂/ՄՎտժ) արտանետման գործակիցների տարբերությունը չնշին է (հաշվի առնելով երկու վառելանյութերի էներգետիկ արժեքները): Այնուամենայնիվ, մասնավոր տրանսպորտում բենզինից՝ բնական գազի անցումն ինտենսիվ շարունակվում է և ունի դրական ազդեցություն:

Առկա ԿԷԳՊ-ում ՎԵ ոլորտում միայն արևային էներգիան է կենսական դեր խաղում: Էներգաապառման արդյունավետության աճի մեջ ՎԵ այս աղբյուրի մասնաբաժինը տատանվում է 55%-ից մինչև 25%: Միջոցառումների կապիտալատարությունն արևային էներգիայի օգտագործմամբ բավականին կայուն է (1800 – 2200 Եվրո/տCO₂ տարեկան):

Այուսակ 21 .Արևային էներգետիկ ոլորտում միջոցառումների արդյունավետությունը ՔԴ ԿԷԳՊ-ում

Ցուցանիշը	Միավորը	ԿԷԳՊ մշակած ստորագրող կողմերը				
		Ծաղկաձոր	Վայր	Սպիտակ	Հրազդան	Ապարան*
Ներդրումները մինչև 2020թ.	1000 ԱՄՆ դոլար	300,0	181,5	422,0	728,0	228,4
Էներգաարտադրությունը	ՄՎտժ/ տարեկան	0	0	40,0	430,3	58,5
Զերմային էներգաարտադրությունը	ՄՎտժ/ տարեկան	651,0	346,8	777,2	1479,4	455,4
ԶԳ արտանետումների կրճատումը CO ₂	տ/տարեկան	131,5	82,4	193,4	447,1	121,2
ԿԷԳՊ առաջարկվող ընդհանուր էներգախնայողության մեջ արևային տեխնոլոգիաներից էներգախնայողության մասնաբաժինը	%	33,17	4,66	8,50	6,74	16,01
ԶԳ արտանետումների կրճատման մասնաբաժինը ԿԷԳՊ առաջարկվող արևային տեխնոլոգիաներից ԶԳ արտանետման ընդհանուր կրճատումներում	%	29,41	4,62	8,43	6,76	15,61

***) Ապարանի համար բոլոր տվյալները նախնական են**

Ինչպես երևում է այուսակ 21-ից, դիտարկված բոլոր համայնքների կողմից ընտրված ելակետային տարիները տարբերվում են ԿԷԳՊ մշակման տարիներից (ընտրվել են ավելի վաղ տարիներ): Որպես հետևանք, ԿԷԳՊ նկարագրված միջոցառումների որոշակի մասն արդեն իսկ իրականացվել է ընտրված ելակետային և ԿԷԳՊ մշակման տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Հետևաբար, խելամիտ է նաև հաշվի առնել այդ ժամանակահատվածը (այսինքն՝ նախքան 2015թ.): Ծաղկաձորի, Վայրի և Սպիտակի համար միջոցառումների իրականացումը սկսվել է 2015թ.-ից, մինչդեռ Հրազդանի, Ապարանի և Արթիկի համար՝ միջոցառումների իրականացման աշխատանքները դեռևս պլանավորման և մեկնարկային փուլում են:

Առաջարկված միջոցառումների մեծ մասի իրականացումը պահանջում է ավելի քան մեկ տարի: Հաշվի առնելով, որ այս փուլում չկա միջոցառումների իրականացման ստույգ ժամանակացույց և աշխատանքային գրաֆիկ, առաջարկվող միջոցառումների համար անհրաժեշտ ներդրումների տարեկան բաշխումը կատարվում է հավասարաչափ:

Արդեն իսկ պլանավորված և իրականացված ԿԷԳՊ տարեկան ներդրումների դինամիկան ներկայացվում է այուսակ 22-ում: Այուսակում նշված տեղեկատվությունը տրված է մինչև 2020թ. 5 համայնքի համապատասխան ոլորտի համար: Հավանական է, որ այս թիվը կավելանա, սակայն դինամիկան գնահատելու համար տվյալներ չկան: Հերթական ԷԳԾ-ը պետք է գնահատի այս ազդեցությունը: ԿԷԳՊ-ներում ներառված էլլ բարելավման միջոցառումները ֆինանսավորման և

իրականացման աջակցություն կարող են ստանալ տարբեր աղբյուրներից, ինչը կրկնակի հաշվառման պոտենցիալ վտանգ է առաջացնում: Սա է պատճառը, որ Դաշնագրի ակնկալվող ազդեցությունը միտումնավոր ձևով սահմանափակվում է առաջին հինգ քաղաքների ԿԵԳՊ-ներով:

Բացի այդ, գուգահեռ աշխատանք կարող է դառնալ Զարգացման ասիական բանկի (ԱՀԲ) կողմից ֆինանսավորված ուսումնասիրությունը, որի նպատակն է Հայաստանի քաղաքների համար մշակել Քաղաքի զարգացման տասնամյա պլան (ՔԶՊ): Ուսումնասիրությունը կկենտրոնանա քաղաքաշինության հիմնական խնդիրների վրա, ներառյալ՝ քաղաքային տրանսպորտը, ջրամատակարարումն ու ջրահեռացումը, կոշտ թափոնների կառավարումը, կենտրոնացված ջեռուցումը, բնակարանաշինությունը, տնտեսական զարգացումը, նյութա-տեխնիկական հարցերը, գրոսաշրջությունը և փողոցային լուսավորությունը: Այնուհետև ուսումնասիրության մեջ կներկայացվի քաղաքային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների ցանկը յուրաքանչյուր քաղաքի համար: Այս ուսումնասիրությունը կարող է սահմանել նաև ԷԱ բարելավման միջոցառումներ: Տարբեր դրույթների և ՄՖՀ ջանքերի ընդհանուր ազդեցությունը, ինչպես նաև ԷԱ ֆինանսական միջոցառումների ամբողջական շրջանակը, մեկ այլուսակում գրաւ վերլուծական նպատակներով ներկայացնելու համար, տարբեր ֆինանսական ծրագրերի ամբողջական տեսականին բերվում է այլուսակ 22-ում: Ստորև նշված այլուսակի ԷԱ ֆինանսական ծրագրերն, առանց խաչվող/հորիզոնական ազդեցության, գնահատվում են որպես իրենց համապատասխան ոլորտային ԷԱ բարելավման միջոցառումների մաս:

Աղյուսակ 22. ԷԱ ֆինանսական կառուցներն ու ծրագրերը և դրանց գնահատված ազդեցությունը

No	ԷԳԾ Կոդը	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությունը	Ձեռքբերված/ակնկալվող էներգախնայողությունը թիրախ տարում (ՄՎտժ)				1-ին ԷԳԾ հանդեպ կարգավիճ ակը	Ընդհանու ր ֆինանսա վորումը
					2014	2017	2018	2020		
1	III.1.	Էներգարդյունավետության ֆինանսավորում, էներգախնայողության գործողությունների իրականացում համայնքային և սոցիալական հասարակական կառուցներում (ՀՎՀՀ/ԳԷՀ/ՀԲ)	Սոցիալական և հասարակական կառուցներ	Մեկնարկը՝ 2012 թ. ավարտը՝ 2017 թ.	569,183	983,548	1,180,257	1,699,570	Մասնակի ավարտված	\$ 10,700,000
2	II.7	Իրավական աջակցություն, ֆինանսավորում և տեղեկատվություն: Շենքերում էներգարդյունավետության բարելավում, պիլոտային ծրագրեր (ՄԱԶԾ-ԳԷՀ)	Բնակելի բազմաբնակարանայ ին շենքեր, սոցիալական կառուցներ, առկա շենքերի գգայի վերակառուցում, առաջնային օրենսդրություն և ենթաօրենսդրական ակտեր շենքերի ԷԱ համար	Մեկնարկը՝ 2010թ.ավարտը՝ 2016թ.	1,200	1,200	1,200	1,200	Մասնակի ավարտված	\$ 1,200,000
3	III.3.	ԷԱ ֆինանսավորում և ԷԱ պետական գնումներ: ՄԱԶԾ քաղաքային կանաչ լուսավորության ծրագիր	Քաղաքային լուսավորության էլեկտրաէներգիայի կիրառում Հայաստանի քաղաքներում	Մեկնարկը՝ 2013 ավարտը՝ 2017	նոր միջոցառում	1,200	1,200	1,200	Մասնակի ավարտված	\$ 700,000

4	I.3.ա.	Էներգարդյունավետության ֆինանսավորում: GGF	ԷԱ և ՎԵ լուծումների բնակարանների տարածնքների շերմության և լուսավորման արդյունավետության համար (պատուհաններ, դռներ, շերմամատակարար և, լուսավորում, բաշխիչ համակարգեր) և ՓՄՁ	Մեկնարկը՝ 2014; ավարտը՝ 2020	35,069	53,336	61,336	81,117	Մասնակի ավարտված	\$ 15,354,00 0
5	I.3.բ.	Էներգարդյունավետության ֆինանսավորում. ՄՖԿ (IFC) ԷԱ վարկեր տնային տնտեսությունների և ձեռնարկությունների համար:	Էներգիայի կենցաղային վերջնական օգտագործում, արտադրական գործընթացի արդյունաբերական ԷԱ, տարածքի շերմամատակարար ան արդյունավետություն մշերմամեկուսացում	Մեկնարկը՝ 2009 ավարտը՝ 2015	35,792	54,435	62,600	82,789	ավարտված	\$ 23,200,00 0
6	II.9.ա.	ԷԱ ֆինանսավորում: Տնային տնտեսությունների Էներգարդյունավետության վարկեր և ԷԱ հիփոթեքային վարկեր (NMC/AFD)	Տնային տնտեսությունների Էներգարդյունավետության վարկեր և ԷԱ հիփոթեքային վարկեր, բնակելի շենքերի և մասնավոր տների տարածների շերմացում, տաք ջրի	Մեկնարկը՝ 2014 ավարտը՝ 2020	136	141	164	211	Մասնակի ավարտված	\$ 12,760,00 0

		նախապատրաստում							
7	I.3.q.	ԷԱ ֆինանսավորում. ԷԱ վարկեր բնակվող և բիզնես հաճախորդների համար, ՎՀԵԲ, Հայաստանում կայուն էներգիայի ֆինանսավորում	ԷԱ վարկեր բնակվող և բիզնես հաճախորդների համար, (Կորպորատիվ էներգետիկ արդյունավետություն, էներգիայի կայուն ֆինանսավորման կ առուցներ, մաքուր էներգարտադրություն, համայնքային ենթակառուցվածք էներգարդյունավետություն)	Մեկնարկը՝ 2006 ավարտը՝ 2015	341,655	519,614	597,556	790,268	ավարտված \$ 28,000,000
8	II.9.p.	ԷԱ ֆինանսավորում ռեզիդենտ էներգաարտադրության բանկային առևտրային վարկ HFHA Condo, REELIH և SUDEP ծրագրերի միջոցով	Տարածքային ջերմացման մեջ կենցաղային վերջնական օգտագործում և տաք ջրի մատակարարում	Մեկնարկ՝ 2013; ավարտ՝ 2018	30	4,914	5,067	5,067	Մասնակի ավարտված \$ 3,629,507
9	I.3.r.	ԷԱ ֆինանսավորում: Արևելյան Եվրոպային էներգարդյունավետության և բնապահպանության համագործակցություն (E5P)	ԷԱ ֆինանսավորման պարզեցում համայնքային ենթակառուցվածքում դրամաշնորհային համաֆինանսավորմամբ	Մեկնարկ՝ 2015 ավարտ՝ ongoing	-	-	-	-	ավարտված \$ 28,000,000
10	III.4.	Ֆինանսավորում էներգաարդյունավետության և ԷԱ պետական գնումների համար: Դպրոցների ԷԱ-	Հասարակական և սպասարկման շենքեր (դպրոցներ)	Մեկնարկը՝ 2016; ավարտը՝ 2020	նոր միջոցառում	464,000	464,000	464,000	մեկնարկում է \$ 17,173,650

		ինտեգրված ամրացում KfW-ի կողմից							
11	II.9.q.	ԷԱ ֆինանսավորում . KfW բնակարանային վարկային գիծ	Կենցաղային էներգիայի օգտագործում, ջեռուցում, տաք ջրի մատակարարում, լուսավորում	Մեկնարկը՝ 2016 ավարտը՝ 2020	Նոր միջոցառում	Համապատասխան ցուցանիշները և էներգիայի խնայողության կանխատեսումները պատրաստ կլինեն ծրագրի մեկնարկից հետո	մեկնարկում է	\$ 21,400,00 0	
12	I.3.ե.	ԷԱ ֆինանսավորում. KfW Զարգացման գերմանական բանկի վարկեր ՓՄՁ համար, ԷԱ վարկային գիծ	Առևտրային էներգիայի վերջնական օգտագործում, ջեռուցում, տաք ջրի մատակարարում, լուսավորություն և այլն	Մեկնարկ՝ 2016; ավարտը՝ 2020	Նոր միջոցառում	Համապատասխան ցուցանիշները և էներգիայի խնայողության կանխատեսումները պատրաստ կլինեն ծրագրի մեկնարկից հետո	մեկնարկում է	\$ 23,200,00 0	
13	III.5.	Երևանի քաղ. լուսավորություն՝ ՎՃԵԲ վարկավորմամբ	Երևանի 28 փողոցների քաղ. լուսավորության արդյունավետության բարձրացում	Մեկնարկ՝ 2015; Ավարտը՝ 2017	Նոր միջոցառում	2,554	2,554	2,554	մեկնարկում է
14	III.6.	ԱՄՆՄՁԳ Մաքուր Էներգիա և ջուր Ծրագիր	Գյուղ. համայնքների, գյուղատնտեսական ջոգտագործման, համայնքային կազմակերպությունների Էներգաարդյունավետությ ան բարձրացում	Մեկնարկ՝ 2012, Ավարտը՝ 2015թ.	221	221	221	221	ավարտված
		Ընդամենը:			950,571	2,035,408	2,318,938	3,052,527	\$ 191,393,3 94


4 ԲՈԼՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4.1 Շենքերի ոլորտը

Ըստ ԷԳԾ մեթոդաբանության և ձևաչափի շենքերի ընդհանուր ոլորտը բաժանվում է մի քանի բաժինների: Էներգաարդյունավետության ընդհանուր քաղաքականության բարեփոխումը, կարգավորող գործնթացները և զարգացումները նշվում են համընդհանուր/հորիզոնական տարրերում, իսկ գոյություն ունեցող բնակելի շենքերում կատարվող ներդրումներն ու նոր շինարարության կարգավորումները ներկայացված են Բնակելի շենքերի բաժնում (վերնագրված՝ «Շենքեր»):


Ըստ ծառայությունների ոլորտի՝ խմբավորված հանրային շենքերը ներկայացված են հանրային և մասնավոր ծառայություններում: Հանրապետության ընդհանուր 90 միլիոն մ² տարածք զբաղեցնող շենքերի ֆոնդից 83%-ը բնակելի շենքեր են, իսկ 17%-ը՝ հանրային շենքեր:

Եվ՝ բնակելի, և՝ հանրային շենքերի ֆոնդում կանխատեսվում է աճ, սակայն աճի մեջ մասը բաժին է ընկնում բնակելի ոլորտին (տես՝ Գծապատկեր 22):



Գծապատկեր 22. Հայաստանում բնակելի ու հանրային շենքերի ֆոնդի աճի դինամիկան և կանխատեսումը

2010-2012թթ. ընթացքում ազգային մակարդակով էներգիայի օգտագործման 34-40% բաժին էր ընկնում շենքերին: Այս մասնաբաժինը նվազում է, և ակնկալվում է, որ հաջորդ 15 տարիների ընթացքում այն էլ ավելի շատ կնվազի (տես՝ Գծապատկեր 23):




Գծապատկեր 23. Էներգիայի օգտագործումը բնակելի ոլորտում, 2010-2030թթ.:

Աղյուրը՝ Ցածր մակարդակի արտանետումներով զարգացման ռազմավարությունների համար կարողությունների խթանում : 2010-2012թթ. էներգետիկ հաշվեկշիռ : Հեղինակների սեփական հաշվարկները 2013-14թթ. համար, MARKAL մոդելի կանխատեսումներից դուրս:

4.1.1. Կարգավորող միջոցառումներ

Վերջին հինգ տարիների ընթացքում շենքերի ոլորտում էներգասպառումը նվազել է: Էներգիայի աճող գների և էներգիայի վերջնական կենցաղային սպառման միջև գոյություն ունի ակնհայտ բացասական կորելացիա: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ էներգիայի նվազող պահանջարկը, հավանաբար, էներգիայի վատթարացող մատչելիության հետևանքն է (տես՝

Գծապատկեր 24):



Գծապատկեր 24. Էներգիայի սակագները և սպառումը բնակելի ոլորտում, 2010-2015թթ.

* - Էներգիաէներգիայի՝2015թ. սակագները հայտարարվել են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, սակայն հասարակական բողոքի ակցիաների պարբռով արդյունավելորեն չեն կիրարկվել: <<Նախագահը հայտարարել է սակագնի ժամանակավոր սառեցման մասին, մինչև որ ատիփի արդյունքում գնահատվեն առաջարկվող սակագնի բարձրացման հիմքերը: Սոյն փաստաթղթի ներկայացման ժամանակ վերանայումը դեռևս ավարտված չէր:

* - այլ աղբյունների վերաբերյալ 2013թ.-ից առաջ դիմավորությունը հասանելի չէ:

Հայաստանի Էներգիայի ոլորտի 2013թ. սակագնի ՀԲ ուսումնասիրությունը վերլուծել է Էներգիայի ընթացիկ և ակնկալվող սակագների մատչելիությունը տարրեր սցենարների դեպքում: Էներգիայի գնի վերջին թանկացումները բարձրացրել են ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների Էներգետիկ աղբատությունը (տնային տնտեսությունների մաքուր եկամտի 13% ծախսվում է Էներգիայի վճարների համար²²): Էներգետիկ սակագնի գազի գազված պահանջարկը բավարարելու համար բնակչությունը, ջեռուցման նպատակներով, մեծացրել է փայտանյութի սպառումը: 2012թ.-ին ամբողջ հանրապետությունում Էներգիայի առաջնային աղբյուրների 20%-ից փայտանյութի սպառումը մեծացել է մինչև 30%: Գյուղական համայնքներում այս մասնաբաժնը 2012թ. հասել է 62%: Եթե չիներ 2011թ. աղբատության նպաստի ազգային պլանից օգտվողների համար նախատեսված դրամական օժանդակությունը, իրավիճակը կարող էր ավելի վատ լինել:

Էներգիայի արդյունավետության և պահպանման համար հատուկ խթանիչներ ներդնելու նպատակով, սակագների ընթացիկ կառուցվածքները պետք է վերանայվեն, միաժամանակ մատչելի սակագնով ապահովելով նվազագույն սպառման բլոկով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին: Որպես երկարաժամկետ տեսանկյունից Էներգիայի պահանջարկի կայուն նվազեցման լավագույն ծև, կարգավորող բարեփոխմանը պետք է ավելանա նաև Էներգաարդյունավետության ուղղված օժանդակությունը: Հաջորդ բաժինը շարունակում է վերլուծել Էներգետիկ սակագնի կարգավորող շղանակը:

²² Էներգետիկ աղբատության միջազգայնորեն ընդունված շեմը տնային տնտեսության մաքուր եկամտի 10% է:

Էլեկտրաէներգիայի սակագին

Վերջնական սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագները միադրույք են և սահմանվում են՝ ելեկտրաէներգիայի սակագները միադրույք են և սահմանվում են՝ ելեկտրաէներգիայի սակագները (օրվա ժամով պայմանավորված սակագներ): Ժամանակային երկու գոտիներում սակագների միջև տարբերությունը կարող է լինել մոտ 30%-ի սահմաններում: Այսպիսով, էլեկտրաէներգիայի սակագներն անուղղակիորեն կախված են սպառողների խմբերից, օրինակ, խոշոր սպառողները, որոնք սնուցվում են բարձրավոլտ ենթակայաններից, օգտվում են ավելի ցածր սակագներից, քան նրանք, որոնք սնուցվում են համեմատաբար ավելի ցածրավոլտ բաշխման համակարգից (տես՝Աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Էլեկտրաէներգիայի սակագները վերջնական սպառողների համար (ազգային արժույթով)

Սպառողի տեսակը	ՀՀ դրամ/կվտժ սկսած 2014թ. օգոստոսի 1-ից	ՀՀ դրամ /կվտժ սկսած 2015թ. օգոստոսի 1-ից
Մասնավոր տնային տնտեսությունների համար, ցերեկ	41.85	48.78
Մասնավոր տնային տնտեսությունների համար, գիշեր	31.85	38.78
Արդյունաբերության համար 6 (10) կՎ, ցերեկ	38.85	45.78
Արդյունաբերության համար 6 (10) կՎ, գիշեր	28.85	35.78
Արդյունաբերության համար 35 / 110 կՎ, ցերեկ	32.85	39.78 / 37.28
Արդյունաբերության համար 35 / 110 կՎ, գիշեր	28.85	35.78 / 33.28
Հանրային ոլորտի համար, ցերեկ/գիշեր	41.85/31.85	48.78/
Առևտրային ոլորտի համար, ցերեկ/գիշեր	41.85/31.85	48.78/

Աղբյուր՝ ՀԾԿ, 2015թ. հունիս


ԷԱ ցածր եկամուղ ունեցող գրնային գրնչետությունների համար

Հունիսի 7-ին ՀԾԿ-ն հայտարարեց էլեկտրաէներգիայի սակագնի նոր սպասվող բարձրացման մասին՝ սակագնի վերջին բարձրացումից 2 տարվա ընթացքում: Այս բարձրացումն ուժի մեջ կմտնի 2015թ. օգոստոսի 1-ից, որը հարուցել է սոցիալական մեծ անհանգստություն և դրան հաջորդել է կառավարության խոստումը, որ վերջինս իր վրա կվերցնի սակագնի բարձրացման բեռը, վճարելով արտաքրութետային աղբյուրներից, քանի դեռ սակագնի բարձրացման հիմնավորումները մանրամասն ուսումնասիրվում են Հայէլցանցի առողջության միջոցով: Բնակչության համար սակագնի առաջարկված վերջին բարձրացումը հաղթահարելու նպատակով՝ երկրորդ ԷԳԾ-ը շենքերի ոլորտում ցածր եկամուտ ունեցողների համար առաջարկում է էներգաարդյունավետ լուսավորման ծրագիր: Սակագնի բարձրացման ազդեցությունը մեղմելու համար կառավարությունը, ի հակադրումն ավանդական սուբսիդիաների, անապահով ընտանիքներին պետք է առաջարկի էներգաարդյունավետության լուծումներ: Անապահով ընտանիքների վրա

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման ազդեցությունը կարելի է մեղմել, 225,000 տնային տնտեսություններին (բնակչության 32%, որոնք գտնվում են աղքատության շեմից ցածր) առաջարկելով սուբիդավորված էներգախնայողական (LED) լամպեր՝ լուսաշենք էլեկտրական լամպերը փոխարինելու համար: Համապատասխան միջոցառում ներառված է «Ֆինանսավորում» բաժնում:

Գաղի սակագինը

Բնական գաղի ներմուծման գների բարձրացման պատճառով վերջնական սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագները մի քանի անգամ բարձրացել են: Սակագներ սահմանվում են նաև բնական գաղի փոխանցման և բաշխման ընկերությունների, ինչպես նաև գազամատակարարման համակարգի օպերատորի և մանրածախ մատակարարման համար: Միադրույթ սակագները սահմանվում են բնական գաղի վերջնական սպառողների համար և կախված են ամսական սպառման ծավալից: Սպառողների տարբեր խմբերի համար ՀԾԿՀ-ն սահմանում է սակագներ տարբեր արժույթներով: Խոշոր սպառողների համար (որոնք սպառում են ներմուծված ամբողջ բնական գաղի 75%) սակագինը սահմանվում է ԱՄՆ դոլարով՝ Գազպրո-Արմենիա ընկերության (գազ ներմուծող ընկերություն) համար արժույթի փոխարժեքի ռիսկը մեղմելու նպատակով:



Գծապատկեր 25. Բնական գաղի ներմուծման գինն ու սակագները վերջնակսպառողների երկու տարբեր խմբերի համար (2003-2015թթ.)*

2013թ. խոշոր սպառողների համար սակագները 38%-ով ավելի ցածր էին, քան քիչ սպառողների (որոնք սպառում են ամսական 10,000մ³-ից քիչ) համար սահմանված սակագները: Ծառայությունների մատուցումը խոշոր սպառողներին, իսկապես, պատճառում է քիչ ծախսեր: Այնուամենայնիվ, սպառողների այս երկու խմբերի համար սակագների միջև զգալի տարբերությունը հանգեցնում է գաղի ամսական սպառման պարտադրված աճի այն

սպառողների կողմից, ում ամսական սպառումը մոտ է, բայց դեռևս ցածր է 10,000 մ³ շեմից՝ ներկայացնելով մեծածախի սակագնի հաշիվներ, գումար խնայելու համար: Սա տեղի է ունենում շենքի ջեռուցման համակարգերի և ՓՄՁ-երի²³ դեպքում: Վատնման խթանումը դադարեցնելու և դրա փոխարեն էներգաարդյունավետության միջոցառումները խթանելու համար պետք է վերացվի այս սխալ սակագնի խթանը: Որոշակի տեսակի գազի սպառողներ պետք է ավտոմատ ձեռք բերեն մեծածախ սակագնի իրավունք: Սրանք ներառում են անհատական ջեռուցման համակարգերը, ՓՄՁ-երը, փոքրածավալ ծառայություն մատուցողները (սրճարաններ, ռեստորաններ, հյուրանոցներ, լվացքատներ և այլն) և այլ սպառողներ, ովքեր ամսական միջինը սպառում են ավելի քան 7000 մ³: Բացի այդ, մեծածախ և մանրածախ սակագների միջև տարբերությունը պետք է փոքրացվի ցածր սակագնից օգտվելու նպատակով սպառումն աստիճանավորելու դրդապատճառը վերացնելու համար՝ միաժամանակ դադարեցնելով բնակչության կողմից արդյունաբերական սպառողների խաչածն սուբսիդավորումը:

Աղյուսակ 24. << բնական գազի մատակարարումը և վճարումները 2014թ. դրությամբ

C/C	Բնական գազի սպառողների խմբերը	Սպառողների քանակը	Մատակարարված բնական գազի ծավալը բաշխման համակարգում (մլն. մ ³)	Արտադրանքի առաքումը (մլն. << դրամ)	Ֆինանսական միջոցների ներհոսքը (մլն. << դրամ)
1	Ամսական <6,000 մ ³ սպառողներ	665.633	574.6	89120.7	90657.7
2	Ամսական 6-8,000 մ ³ սպառողներ	101	8.3	1285.6	1236.7
3	Ամսական 8-9,000 մ ³ սպառողներ	22	2.2	347.9	337.5
4	Ամսական 9-10,000 մ ³ սպառողներ	14	1.5	237.2	231.5
5	Ամսական 10-13,000 մ ³ սպառողներ	214	28.1	3214.2	2972.5
6	Ամսական >=13,000 մ ³ սպառողներ	653	1394	134727	125430.8
	Ընդամենը		2008.8	228932.6	220866.8

²³ Արդեն երկար ժամանակ է ընթանում էն քննարկումներ ջեռուցման կենտրոնացված համակարգերի համար մեծածախ սակագնի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ, որը չհանգեցրեց որևէ արդյունքի:


Հաշվի առնելով, որ շատ դեպքերում $10,000\text{մ}^3$ և $13,000\text{մ}^3$ խմբերի միջև սպառողները, ամենայն հավանականությամբ, կընտրեն սպառման այս բարձր մակարդակը՝ ցածր սակագնի իրավունքը միջազգայնորեն ձեռք բերելու համար (որը բացատրում է ամսական $8,000-10,000\text{մ}^3$ սպառման կատեգորիաներում սպառողների խիստ ցածր քանակը), առաջարկվում է վերանայել սակագնի կառուցվածքը: Անհրաժեշտ է բարեփոխում՝ վերացնելու համար սիսալ սակագնի խթանիչները, որոնք արագացնում են գազի ոչ անհրաժեշտ սպառումը հանրային օբյեկտների և առևտրային հաստատությունների, ՓՄՁ-երի և ապակենտրոնացված փոքրածավալ շենքային ջեռուցման համակարգերի կողմից:՝ Աստիճանային աճող սակագնի համակարգի անցում կատարելու համար անհրաժեշտ է սակագնի նոր կառուցվածք, որը սակագնային համակարգի միջազգայներոն ճանաչված լավագույն լուծումն է և ունի ոչ միայն պահպանման, այլև ներկառուցված սոցիալական պաշտպանության համակարգ, որը թույլ է տալիս ցածր եկամուտ ունեցող բոլոր խմբերին (ոչ զուտ աղքատության նպաստ ստացողները, ովքեր 2011թ.-ից վճարում են $100 < \eta\text{րամ}/\text{մ}^3$ առաջին 300մ^3 համար՝ որպես կառավարության կողմից իրականացվող սոցիալական ապահովության միջոցառում) ստանալ գազի նվազագույն մակարդակ հնարավոր ամենացածր գնով, մինչդեռ ոչ չափավոր օգտագործումը պատժվում է աստիճանային բարձր սակագնով:

[Շենքերի Էներգաարդյունավելության գեխնիկական կանոնակարգերը](#)

Շենքերի ոլորտի Էներգախնայողության հարցերը կապված են և՝ բնակելի, և՝ հանրային շենքերում պատող կոնստրուկցիաների Էներգաարդյունավելության ցածր ցուցանիշների, Էներգետիկ ներքին ենթակառուցվածքների (ջեռուցում, լուսավորում, տաք ջուր, հովացման համակարգեր) անարդյունավետության, ինչպես նաև Էներգիայի կառավարման վատ փորձերի հետ: Նոր շինարարության համար հիմնական խնդիրները կապված են շենքի ջերմային պաշտպանությունը և ընդհանուր Էներգաարդյունավելությունը կարգավորող շինարարական նորմերին համապատասխանելու ընդհանուր ձախողման, ինչպես նաև Էներգաարդյունավետ շենքերի նախագծման և շինարարության ոլորտում մասնագետների ընդհանուր ցածր տեխնիկական կարողությունների հետ:

4.1.2. Նոր շինարարություն

Մինչև 2008թ. ֆինանսական ճգնաժամը բնակարանային շինարարությունը Հայաստանում տնտեսական վերելքի շարժիչ ուժերից մեկն էր ($\text{ՀՆԱ}-26\%$): Ավարտված շենքերի թիվը փոքր էր, և շինարարության ոլորտը 2012թ.սկսեց դանդաղորեն վերականգնվել:



Գծապատկեր 26. წნაკელაնային ֆոնդի չაփიն ու կանխատեսվող աճի միտումը, 2010-20 թթ.

Օգտագործելով շեნքերի օպտիմալացված նախագիծը, արևային պասիվ ջերմատվությունը, բարելավված ձևի գործակիցը և մեկուսացման ընդարձակ կիրառումը, Էներգախնայողության նախաձեռնության ծրագիրը Դիլիջանում սոցիալական բնակարանային ծրագրի համար հՆՇԳԵՅՁ-ի Շենքերի Էներգախնայողության նախաձեռնությունը շենքերի ինտեգրված նախագծման գործում տրամադրել է օժանդակություն, որը առաջարկվող շենքի Էներգիայի պահանջարկը տարեկան 260կՎտժ/մ²-ից նվազեցրել է մինչև 160կՎտժ/մ²-ի:

«Շենքերի ջերմային պաշտպանության» 1995թ. շինարարական նորմերը ընդունման օրվանից շատ վատ են կիրառվել: շինարարության նոր տեխնոլոգիաներին և նյութերին համապատասխանելու համար Դրանք շեն վերանայվել և Հայաստանի միջազգային համագործակցության համատեքստում ոչ էլ ինտեգրվել են շենքերի Էներգաարդյունավետության կարգավորման ոլորտում: Այս գործընթացները ներառել են ԱՊՀ միջազնական շինարարական նորմերի մշակումն ու ներդաշնակեցումը, ինչպես նաև Արևելյան գործընկերության նախաձեռնության շրջանակներում ԵՄ հրահանգների, այդ թվում՝ Շենքերի Էներգաարդյունավետության հրահանգի հետ Հայաստանի մոտարկման ջանքերը:

« քաղաքաշինության նախարարությունը (ՔՆ) շենքերի Էներգաարդյունավետության կարգավորող շրջանակի համար պատասխանատու գլխավոր պետական մարմինն է: 2013թ. թարմացվել են ՔՆ ենթաօրենսդրական ակտերը (Կառավարության թիվ 225-Ն որոշում՝ ոլորտում Էներգաարդյունավետության և Էներգախնայողության ապահովման պահանջն ավելացնելու համար:

Հայաստանի համար սա շատ մեծ կարևորություն ունեցող հարց է՝ կապված էներգետիկ անվտանգության, տնտեսական կայունության, սոցիալական և բնապահպանական պաշտպանության հետ, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարբերաբար շեշտում է այն կարևորությունը, որը նա տալիս է թե՛ գոյություն ունեցող, թե՛ նոր կառուցվող շենքերում էներգաարդյունավետության բարձրացմանը:

Ավելին, շենքերի էներգախնայողության մեջ կատարված ներդրումների մեծ մասն ունեն դրական տնտեսական բնութագրիչներ և կարող են ֆինանսավորվել վարկային ֆինանսավորմամբ՝ առևտրայինին մոտ պայմաններով: Այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք մշտական արգելքներ՝ օրենսդրական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական և ցածր իրազեկման, որոնք խանգարում են շուկայում էներգաարդյունավետության ներդրումների լայնամաշտաբ օգտագործմանը:

Մասնավորապես, առաջարկվում է, որպեսզի կառավարությունը ձեռնարկի հետևյալ հրատապ քայլերը.

Վերացնել էներգաարդյունավետության իրավական դաշտում գոյություն ունեցող արգելքները.

1. Ներդնել պարտադիր օրենսդրություն (նոր օրենք կամ տեխնիկական կանոնակարգ)՝ սահմանելով էներգետիկ առողջիւտ, շենքերի անձնագրավորում, հավաստագրում ու պիտակավորում, շենքերի էներգասպառման նորմերի պարտադիր կիրառում նոր շենքերի և աստիճանաբար կիրառում՝ արդեն գոյություն ունեցող շենքերի²⁴ համար՝ էներգաարդյունավետության հավաստագրման (ԷԱՀ) քաղաքականության և կանոնակարգող պահանջներին ու շենքերի էներգաարդյունավետության ցուցանիշների վերաբերյալ ԵՄ հրահանգին ներդաշնակեցնելու նպատակով:
2. ԵԱՄՄ անդամակցման և ԵԱՄՄ կանոնակարգերի վերակուման հետ կապված

²⁴ Հարկ է նշել, որ, ի տարբերություն այլ ոլորտների, այս ոլորտն ունի էներգաարդյունավետության պարտադիր կիրառման եզակի հատկություն: Արդյունաբերության ոլորտում, օրինակ, չկան խթանիչներ, մասնավոր և ընդհանուր սեփականության խառը շենքեր, որը կարող է հանգեցնել էներգիայի անարդյունավետ օգտագործման, և արդյունաբերության սեփականատերերն ունեն կապիտալ ներդրման ֆոնդեր (սեփական կամ փոխառված) արդիականացման տարրեր միջոցառումների, ներառյալ՝ էներգաարդյունավետության միջոցառումների համար: Բացի այդ, արդյունաբերության ոլորտում էներգետիկ արդյունավետության պահանջները, եթե դրանք պարտադրվում են կառավարության կողմից, անկախ դրամական կամ ոչ դրամական օգուտից, իրազեկվածության պակասի պատճառով կարող են համարվել ներդրման բեռ, տեղական արտադրանքի աճի արգելք, որը քաղաքականապես ընդունված չէ և չի համապատասխանում տեղական արտադրուների և միջազգային ներդրողների համար ներդրման բարենպաստ միջավայր ստեղծելու ՀՀ կառավարության վերջին մի քանի տարվա քաղաքականություններին: Մինչդեռ հանրային ոլորտը, որպես կանոն, չունի իրավական ուժեղ գործիքների կարիք, քանի որ հանրային ոլորտում էներգաարդյունավետության միջոցառումներ իրականացնելու համար կառավարությունն ունի իր ներքին գործիքները: Ինչ վերաբերում է բնակելի սեկտորին, այն ունի սեփականության բարդ կառուցվածք, կիսովի օգուտներ՝ կապված մասնավոր, վարձակալված և կիսված շենքերի հետ, խառը սեփականություն բազմաբնակարան շենքերում, ինչ շենքեր, կապիտալի սահմանափակ հասանելիություն, ինքնակազմակերպման և կողեկտիվ որոշման ընդունման վատ աշխատող համակարգ: Հետևաբար, նոր շենքերում, որտեղ ավելի հեշտ և ավելի էժան է իրականացնել էներգաարդյունավետության միջոցառում, այն պետք է լինի պարտադիր նորմ, իսկ գոյություն ունեցող շենքերի էներգաարդյունավետությունը պետք է գնահատվի և հրապարակվի:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ոլորտում իրավական բարեփոխում: Այս մոտեցումն իրականացնելու համար անհրաժեշտ կլինեն հետևյալ քայլերը:

3. «Քաղաքաշինության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունների կատարում, որը թույլ կտա նախագծման, շինարարության և շահագործման փուլերում օրենսդրությամբ սահմանված դեպքերի համար սահմանել էներգաարդյունավետության պարտադիր նորմեր:
4. Ելնելով օրենքի վերոնշյալ պահանջներից՝ կարող են սահմանվել ԷԱՀ համապատասխան վերափոխված կանոնակարգերն արտացոլող ենթաօրենսդրական ակտերը: Մրանք կարող են ընդունվել որպես:
 - ա. Տեխնիկական կանոնակարգեր, որոնք կարող են ընդունվել << կառավարության որոշմամբ՝ «Տեխնիկական կանոնակարգերի մասին» << օրենքի համաձայն (հատկապես, երբ կա միջազգային/տարածաշրջանային/ազգային ստանդարտներին հղում կատարելու անխուսափելի կարիք): Ըստ տեղական աշխարհագրական և կլիմայական պայմանների ու գործող օրենքների այս տեխնիկական կանոնակարգերը կսահմանեն էներգետիկ առողջության, հավաստագրման և պիտակավորման ընթացակարգեր
 - բ. Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր, ելնելով «Քաղաքաշինության մասին» << օրենքից (այն դեպքերում, երբ չկա միջազգային/տարածաշրջանային/ազգային ստանդարտներին հղում կատարելու կարիք) :
5. Սահմանել հստակ պատասխանատվություն և վերացնել մասնակի ինստիտուցիոնալ համընկնումները շենքերի էներգաարդյունավետության ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունը իրաժարվել է Եվրամիությանն ասոցացման ուղղուց, սակայն մի քանի տարվա բանակցությունները ձևավորել են ԵՄ հրահանգներին և ստանդարտներին՝ << օրենսդրության ստանդարտները ներդաշնակեցնելու ցանկն ու ժամանակահատվածները, որը հաստատվել էր << կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի՝ թիվ 1481 որոշմամբ: Շենքերի էներգետիկ ցուցանիշների հրահանգի մոտարկումը հանձնարարվել էր << էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանն, առնչվող նախարարությունների, այդ թվում՝ Քաղաքաշինության, Էկոնոմիկայի, Տրանսպորտի և կապի ու Բնապահպանության նախարարությունների հետ համատեղ, որն էլ իրականացվել է Տեխնիկական կանոնակարգի նախագծի տեսքով՝ ՄԱԶԾ-ԳԷՀ օժանդակությամբ: 2015թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունը դարձել է Եվրասիական մաքսային միության (ԵԱՄՄ) լիարժեք անդամ: Այս առումով, ԷԱ և ՎԵ ոլորտներում գործող քաղաքականությունը ԵԱՄՄ պահանջները բավարարելու համար պետք է թարմացնի գոյություն ունեցող իրավական և կարգավորող դաշտը: Մասնավորապես, դա կազդի արտադրանքի ԷԱ պիտակավորման, էներգետիկ առողջության ընթացակարգերի և պահանջների, շենքերի ԷԱ հավաստագրման և այլնի վրա:

Ինթանման ենթակա գեհնողիաները և էներգաարդյունավետության փորձը

Առաջին ԷԳԾ-ում ընդգրկվել են մի շարք միջոցառումներ, որոնց ուղղությամբ որոշակի քայլեր են իրականացվել դոնորների կողմից օժանդակվող ընթացիկ բարեփոխման ջանքերով:

- էներգաարդյունավետության՝ խթանման ենթակա տեխնոլոգիաները/միջոցառումները: Շենքերի ինտեգրված նախագծման մոտեցում, ներառյալ, պատող կոնստրուկցիաները,

շեռուցման համակարգը, օդափոխությունը, արևային ջրատաքացումը և լուսավորությունը:

- Պետական ծրագրերի շրջանակներում գոյություն ունեցող շենքերի ընթացիկ վերակագնման/վերակառուցման/սեյսմիկ ամրացման գործում կարևորված իրականացվող տնտեսապես արդյունավետ էներգաարդյունավետության միջոցառումները:
- Էներգաարդյունավետության կառավարման/պահպանման փորձեր, ներառյալ՝ շենքի և ոլորտի մակարդակներում էներգետիկ կառավարման համակարգերը և շենքի շահագործումը:

Փորձնական ծրագրերը և ֆինանսավորման սխեմաները հաջողությամբ ցույց են տվել էներգաարդյունավետության տարրեր տեխնիկական լուծումների, ինչպես նաև կազմակերպչական և վարկավորման լուծումների արդյունավետությունը, որոնք ունեն ընդլայնման պոտենցիալ: Մյուս դեպքերում, օրինակ, գոյություն ունեցող բազմաթիվ համակարգերի շենքերի դեպքում, այս շենքերի էներգաարդյունավետության բարձրացման նպատակով կայուն և ֆունկցիոնալ լուծումներ ստեղծելու համար դեռևս անհրաժեշտ են ջանքեր:

Ստորև բերված այսուսակն ամփոփում է առաջին ԷԳԾ-ի կարգավորող նպատակներին հասնելու համար իրականացված գործողությունները:

Կարգավորող նախաձեռնությունները, որոնք նպաստել են առաջին ԷԳԾ-ի թիրախների ձեռքբերմանը, ներկայացված են ստորև (կարգավորող և ֆինանսական տարր պարունակող, ինչպես նաև շենքերի և շենքերից դուրս իրականացվող ծրագրերի համար ընդունելի խառը նպատակային ֆինանսավորում ունեցող բազմակողմանի ծրագրերն ու նախաձեռնությունները ներկայացված են ԷԱ ֆինանսավորման գործողությունում՝ որպես միջոլորտային միջոցառում):

Աղյուսակ 25. Էներգաարդյունավետության բարձրացման համար կարգավորող միջոցառումների ամփոփում առաջին ԷԳԾ-ից

Հ/ Հ	Առաջին ԷԳԾ միջոցառում	Հ/Հ	Էներգաախնայողության միջոցառման անվանումը	Ժիրախայ ին վերջնակա ն սպառողը	Տևողությունը	Ի ԷԳԾ-ի հետ կապված կարգավիճակը	Լրացուցիչ մեկնաբանություններ
II.1	Ազգային շինարարական նորմեր՝ հաշվի առնելով շենքերի էներգաարդյունավե տությունը ²⁵	II.1	Նոր շինարարական նորմերի մշակում և ընդունում. • ՄՇՆ «Շենքերի ջերմային պաշտպանություն» • ՄՇՆ «Ջերմային ցանցեր» • ՄՇՆ «Սարքավորումների և խողովակաշարերի ջերմային մեկուսացում»	Շենքեր	2010 - 2014	Մասամբ իրականացված	Ակնկալվում է, որ ավարտական տեսքի կրերվի և կընդունվի 2015թ.
II.2	Ստանդարտներ և հաշվարկման մեթոդաբանություն շենքների էներգաարդյունավե տությունը գնահատելու համար	II.2.ա	«Էներգաարդյունավետություն: Շենքի էներգետիկ անձնագիր: Հիմնական դրույթներ: Տիպային ձևեր» AST 362-2013 ազգային ստանդարտի մշակում և ընդունում	Շենքեր	2012-2013	Իրականացվել է, ինչպես ալանավորված էր	Գրանցված է համաձայն ընթացիկ ընթացակարգերի՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից 2013թ. դեկտեմբերի 18-ին (գրանցման ID: AST 362-2013). Ստանդարտը ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ին: ²⁶
		II.2.բ.	ՇԵՅՀ վրա հիմնված «Շենքերի էներգետիկ ցուցանիշների» տեխնիկական կանոնակարգի ընդունում	Շենքեր	2013-2014	Մասամբ իրականացված	Մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրի աջակցությամբ, փոխանցվել է ԷԲՊՆ-ին, հաստատումը սպասվում է համաձայն «ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծով նախատեսված էներգետիկայի բնագավառի՝ ներդաշնակեցման ենթակա իրավական ակտերի

²⁵Աշենք, որ ԷԳԾ-ի հայերեն տարբերակում "Code" բառը սխալմամբ թարգմանվել է որպես օրենքների փաթեթ, այլ ոչ շինարարական նորմ

²⁶Տես՝ http://www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB_reports_publ/Energy-Passport-Axuryan_Eng.pdf

http://www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB_reports_publ/Energy-Passport-Goris_Eng.pdf

http://www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB_reports_publ/Energy-Audit-Mush_Eng.pdf

						միավորված ցանկը հաստատելու մասին» << կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի թիվ 1481-Ն որոշման՝ «Շենքերի էներգաարդյունավետության մասին» Եվրապաղամենտի և Եվրախորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի N 2010/31/EU հրահանգի ներդաշնակեցում	
II.2	II.2.գ.	Եվրոպական ստանդարտների և Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) 6 ստանդարտների ներդաշնակեցում՝ կապված էներգաարդյունավետության հետ	Միջոլորտ ային	2013-2014	Իրականացվել է, ինչպես պլանավորվել էր	ԷկԲՊՆ 2013թ. մայիսի 17-ի թիվ 03/22.2/1858-13 նամակով նախաձեռնվեց ոլորտների համապատասխան հրահանգների և ստանդարտների ներդաշնակեցման գործընթացը՝ համագործակցելով ՄԱԶԾ-ԳԷՀ-ի հետ: Հաստատվել է 2014թ. սեպտեմբերի 17-ին << էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից և ուժի մեջ մտել 2014թ. նոյեմբերի 1-ին:	
	II.2.դ.	Շինարարության անվտանգության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի, ներառյալ՝ շենքի էներգաարդյունավետության վերաբերյալ դրույթների մշակում	Շենքեր	2011-2012	Մասամբ իրականացված	Մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրի աջակցությամբ, փոխանցվել է ՔՆ, հաստատումը սպասվում է	
	II.2.ե.	Լրացումներ «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» << օրենքում	Միջոլորտ ային	2012-2015	Մասամբ իրականացված	Մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրի աջակցությամբ, փոխանցվել է Ազգային ժողով, հաստատումը սպասվում է 2015թ.	
II.3	Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում նոր ստանդարտների իրականացման և կիրարկման համար	II.3.ա .	«<< քաղաքաշինության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» << օրենքի 2013թ. հունիսի 13-ի նախագիծը ներկայացվել է Քաղաքաշինության նախարարություն	Շենքեր	2013-2015	Չի իրականացվել	Սա մշակվել էր ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրի աջակցությամբ, ներառված է «Երևանի փոքր կենտրոնի զարգացման մասին» << օրենքի նախագծի ընդունմանը վերաբերող օրենսդրական փոփոխությունների փաթեթի մեջ:

					Փաստաթուղթը դեռևս նախագծի տեսքով է, սպասվում է «Երևանի փոքր կենտրոնի զարգացման մասին» <<օրենքի նախագծի ուշացած ընդունումը : Այս պահի դրույթամբ այն գտնվում է քննարկումների վերջնական փուլում:
II.3.թ.	«Պետական միջոցների հաշվին կառուցվող (Վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» << կառավարության որոշումը:	Շենքեր, հանրային ծառայություններ	2014	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	Ընդունվել է << կառավարության՝ 2014թ. դեկտեմբերի 25-ի՝ թիվ 1504-Ն արձանագրային որոշմամբ. մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում:
II.3.գ.	Փոփոխությունների կատարում «Էներգետիկ առողջապահության» մասին << կառավարության որոշման մեջ	Միջուրուս ային	2013-2015	Մասամբ իրականացված	Կառավարության 2006թ. թիվ 1399-Ն որոշումը (փոփոխվել է 2011թ.-ի՝ թիվ 1105-Ն որոշմամբ): Ներկայացվել է կառավարություն և շրջանառվել է: Ընդունումը սպասվում է 2015թ.
II.3.դ.	- << կառավարության՝ թիվ 225-Ն որոշմամբ (2013թ. մարտի 13, ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի աջակցությամբ) 2013թ. Քաղաքաշինության նախարարության կանոնադրության մեջ ավելացվել են էներգաարդյունավետության ու էներգախնայողությանն առնչվող խնդիրը և գործառույթներ: Ըստ 2014թ. գործողությունների պլանի՝ ՔՆ ներկայում մշակում է «Պետական միջոցների հաշվին կառուցվող (Վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ	Շենքեր, հանրային ծառայություններ			Ավարտել և ընդունվել է Կառավարության որոշմամբ՝ 2014թ. դեկտեմբերի 25-ի դրույթամբ

			Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» << կառավարության որոշումը: 2015թ. աշխատանքների պլանը ներառում է Շինարարական նորմերի մշակում ²⁷				
II.4	Որակի ապահովման/որակի վերահսկման (ՊԱ/ՊՎ) ստանդարտների ստեղծում, որոնք կնպաստեն էներգախնայողությ ան համար հիմնական շինանյութերի հավաստագրմանը:	II.4	Հայաստանում շինանյութերի ջերմային-ֆիզիկական պարամետրերի փորձաքննության համար ստեղծվել է 2 լարորատորիա: Փորձաքննության է ենթարկվել և հավաստագրվել ավելի քան 14 նյութ:	Շենքեր, Հանրային ծառայությո ններ	2012- 2014	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	ՄԱԶԾ-ԳԷՀ-ը օժանդակել են ժամանակակից սարքավորումներով գինված 2 լարորատորիաների ստեղծմանը: Լարորատորիաներն ի վհճակի են փորձաքննության ենթարկել և հավաստագրել մեկուսիչ նյութեր՝ Հայաստանում մասնագետներին հնարավորություն տալով օգտագործել հուսայի, փորձաքննություն անցած և հավաստագրված նյութեր և գործարանային մեթոդով պատրաստված արտադրանը:
II.5	Շենքի հավաստագրման համար բնական պայմաններում փորձարկման ընթացակարգերի, ինչպես նաև պիլոտային շենքերի էներգախնայողությ ան գնահատման մեթոդաբանության ստեղծում	II.5.ա	«Խորհրդատվական ձեռնարկ Հայաստանի Հանրապետությունում կառուցվող և վերակառուցվող բնակելի, հանրային և արդյունաբերական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների վերաբերյալ»	Շենքեր, Հանրային ծառայությո ններ	2012- 2013	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	Ձեռնարկը մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ- ի ծրագրի շրջանակներում և ընդունվել է << Քաղաքաշինության նախարարի կողմից (2013թ. նոյեմբերի 6-ի թիվ 343 հրաման) http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/Advisory_Handbook_on_Insulation_2013.pdf/
		II.5.բ.	«Շինարարական մեկուսիչ նյութերի և գործարանային մեթոդով պատրաստված արտադրանքի տվյալների բազայի» պատրաստում	Շենքեր, Հանրային ծառայությո ններ	2012- 2013	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	Տվյալների բազայի նպատակն է հեշտացնել նախագծողների, ուսանողների, կոնստրուկտորների և այլ մասնագետների

²⁷Հարկ է նշել, որ նշված շինարարական նորմերը առաջին ԷԳԾի հայերեն տարբերակում սխալմամբ թարգմանվել էր որպես «բնակարանային նոր օրենսգրքի մշակում»:

						գործողությունները: Ընդհանուր առմամբ, տվյալների բազան ընդգրկում է ավելի քան 40 նյութ, գործարանային մեթոդով պատրաստված արտադրանք և դրանց հիմնական հատկությունները: http://www.nature-ic.am/res/pdfs/publications/EEB-database_insulation/database_eng.pdf	
	II.5.գ.	Փոփոխությունների կատարում «Էներգետիկ առողջություն» մասին <<կառավարության որոշման մեջ	Միջուրուս ային	2013-2015	Մասամբ իրականացված	Կառավարության 2006թ. թիվ 1399-Ն որոշում (փոփոխվել է 2011թ. թիվ 1105-Ն որոշմամբ): Ներկայացվել է կառավարություն և շրջանառվել է: Ընդունումը սպասվում է 2015թ.	
II.6	Վերապատրաստում և կրթություն՝ շենքերի հնատեգրված նախագծման մոտեցման և շենքերի էներգախնայողության նոր պահանջների խթանմանը համապատասխան	II.6.ա.	Սև ծովի ավազանի 2007-2013թթ. էներգամարդյունավետության ծրագիր՝ տեղական իշխանությունների վարչարարական կարողությունները և շենքերի էներգախնայողության վերաբերյալ գիտելիքների պրակտիկ փոխանակումն ամրապնդելու համար, Աևծովյան համատեղ գործառնական ծրագիր:	Շենքեր	2007-2013	Իրականացված	Վերապատրաստումները ներառում են. - Ուսուցողական այց Հայաստանում շենքերի էներգամարդյունավետության, վերականգնվող էներգիայի և այլ էկո լուծումների վերաբերյալ - Էներգամարդյունավետության վերաբերյալ հանրային սեմինար Հայաստանի ամերիկյան համալսարանում և այլն
		II.6.բ.	ՄԱԶ-ԳԷՀ-ի շենքերի էներգամարդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստումներ և սեմինարներ՝ ուղղված շինարարության գծով փորձագետների կարողությունների բարելավմանը	Շենքեր	2010-2015	Իրականացված	<ul style="list-style-type: none"> • Հայաստանում բնակարանային և քաղաքային պլանավորման ոլորտում ազգային կարողությունների ամրապնդում, 2015/04/10 • Էներգախնայողության միջազգային օրվա շրջանակներում Հայաստանի ճարտարապետների միությունում կազմակերպված սեմինար, 2014/11/14

- Երկու օրվա ուսուցում շենքերի էներգախնայողության ոլորտում Չեխիայի փորձի վերաբերյալ, 2014/10/22
- Սեմինար շենքերի շերմապաշտպանության հարցերի վերաբերյալ <<քաղաքաշինության պետական տեսչության համար, 2014/08/01
- Էներգետիկ շաբաթ 2014 մեկնարկել է 2014/07/07
- Շենքերի շերմապաշտպանությանն առնչվող ընթացիկ հարցերի վերաբերյալ սեմինար, 2014/04/14
- Ենթակառուցվածքների և նոր Էներգետիկայի հարցերով հարավկովկասյան ներդրումային գագաթաժողով 2014, 2014/02/14
- «Կայունություն, առաջնորդություն շրջակա միջավայրի և էներգետիկ նախագծման համար ու շահագործման հանձնում և ինչպես են դրանք կապակցված» դասախոսություն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում, 2014/02/04
- Հայաստանում շերմամեկուսիչ նյութերի արտադրության, փորձաքննության և հավաստագրման հետ կապված ընթացիկ հարցեր (02/10/2013) 2013/10/02
- Էներգետիկ ոլորտի վերականգնում: VIII ԿՏԲԿ տարեկան կոնֆերանս (25-26/10/2012) 2012/10/25
- Էներգիա կայուն զարգացման

						համար, միջազգային երրորդ համաժողով (12-14/09/2012) 2012/09/12 • Էներգախնայողության բարելափում բազմաբնակարան շենքերում, ուսուցում-սեմինար (26-27/07/2012) 2012/07/26 • «Շենքերի ջերմային պաշտպանության» նորմերի հետ կապված վերջին զարգացումները (20/06/12) 2012/06/20 • Սեմինար ԷԱ նախագծման մոտեցումների վերաբերյալ (02/05/12) 2012/05/02 • Ուսուցում շինանյութերի լաբորատոր փորձաքննության վերաբերյալ (18-19/04/2012) 2012/04/18 • Էներգաարդյունավետությունը համայնքում. Սպիտակ (13/07/11) 2011/07/13	
II.6.q.	ԻՆՈԳԵՅԹ տեխնիկական քարտուղարությունը, Էներգետիկ շուկայի ինտեգրման խթանման և կայուն էներգետիկայի (SEMISE) և շինարարության ոլորտում Էներգախնայողության նախաձեռնության (ESIB) ծրագրերն անց են կացրել ուսուցման մի շարք դասընթացներ և սեմինարներ՝ կապված էներգաարդյունավետության, էներգետիկ առդիտի, ԷԱ ֆինանսների, ESCO-երի (ESCO) և այլին հետ	Շենքեր	2010- 2015	Իրականացված	-Արդյունաբերական և շենքերի էներգետիկ առդիտի ուսուցում, - Օրենսդրական բարեփոխումների աջակցույթուն, - Նախագծերի ֆինանսավորման խթանման տեխնիկական աջակցություն - Ինտեգրացված ներդրումների աջակցություն ESCO-ներին և համատիրություններին		
II.7	Պիլոտային ծրագիր. «լավագույ ն փորձի» մի քանի	II.7.w .	Պիլոտային ծրագրեր բնակելի շենքերում էներգաարդյունավետության ուղղությամբ		2012- 2015	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	Պիլոտային շենք Գորիսում, 2012թ. - Էներգախնայողություն - 109 ՄԳԺ/տարի, CO ₂ արտանետման նվազում - 25


Հենքերի նախագծման մրցույթ և շինարարություն				<p>տ/տարի:</p> <p><u>Պիլոտային շենք Ավանում</u>, 2014թ.</p> <ul style="list-style-type: none"> - Էներգախնայողություն - 290 ՄԳԺ/տարի, CO₂ արտանետման նվազում - 60 տ/տարի: «Կասկադ Հիլզ» բնակելի համալիր Երևանում, 2013-2015 թթ.- Էներգախնայողություն - 496 ՄՎտժ/տարի, CO₂ արտանետումների նվազում - 122 տ/տարի: Էներգապարույնավետության լուծումների կիրառման նպատակով իրականացված/ընթացիկ ծրագրերի համար օգտագործված մասնավոր ներդրումները կազմել են 500,000 ԱՄՆ դոլար – Շվեյցարական զարգացման գործակալություն (սոցիալական բնակարանաշինություն – բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում): 150,000 ԱՄՆ դոլար – Հայաստանի կառավարություն (սոցիալական բնակարանաշինություն – բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում), 2,400,000 ԱՄՆ դոլար – Մասնավոր հատված – «Ալ Համրա Անշարժ գույքի զարգացում Հայաստան» («Կասկադ Հիլզ» բնակելի համալիրի նախագծում և կառուցում): <u>Արևային ջրատարացուցիչներ</u> - արևային էներգիայի օգտագործման 19 պիլոտային ծրագիր և մոտ 600մ² արևային ջրատարացուցիչների տեղադրում
---	--	--	--	--

					ամբողջ Հայաստանում: Իրականացված պիոլտային ծրագրերից CO ₂ արտանետման նվազում (2014թ. դրությամբ՝ տարեկան մոտ 215 տոննա ածխածնի երկօքսիդ: Վերականգնվող էներգիայի լուծումների կիրառման վերաբերյալ ավարտված/ընթացիկ ծրագրերի համար հատկացված ընդհանուր <u>մասնավոր ներդրումները</u> կազմել են մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար:
II.7.ը.	Պիլոտային ծրագրեր հանրային շենքերում էներգաարդյունավետության ուղղությամբ՝ էներգախնայողության համաձայնագրի միջոցով, որը փակում է ներդրումային վարկը՝ էներգախնայողությունից	Հանրային շենքեր և ծառայություններ	2013- 2015	Իրականացվել է, ինչպես նախատեսված էր	Համաշխարհային բանկը օժանդակում է սոցիալական և այլ հանրային օբյեկտների (օր.՝ դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, փողոցային լուսավորություն և այլ հանրային շենքեր) Էներգաարդյունավետության ոլորտի բարելավումներին, նպաստում է նաև սոցիալական և այլ հանրային օբյեկտներում էներգաարդյունավետության ներդրումների կատարմանը Էներգախնայողության համաձայնագրերի և էներգաարդյունավետության պայմանագրերի միջոցով: Ծրագրի մշակման նպատակն է նվազեցնել սոցիալական և այլ հանրային օբյեկտների էներգասպառումը: Բնապահպանական գլոբալ նպատակն է ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել հանրային ոլորտում էներգաարդյունավետությանը

					ուղղված ներդրումների իրականացման խոչընդոտները վերացնելու միջոցով: Առ այսօր ձեռքբերված արդյունքները. - Իրականացված ծրագրերը ներառում են՝ - Էներգախնայողության միջացառումներն ավարտվել են և շահագործումը մեկնարկել է 27 հանրային շենքերում; - Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են 15 տեղամասերում; - Գնման փուլում՝ 14 ծրագիր - Վերանայման փուլում՝ 9 դիմում Ընդհանոր հաստատված դիմումներ (ստացված 309-ից՝ 65 դիմում՝ ՀՀ կառավարություն՝ 12.7 միլիոն Եվրո ներդրումային դրամաշնորհ՝ 8.0 միլիոն Եվրո Ներդրման միջին արժեքը՝ 8400 ՀՀ դրամ/մ ² ; Մարման միջին ժամկետը՝ 6.4 տարի; Միջին խնայողությունը՝ 50.8 %
II. 8	Խթանիչների համակարգի ձևավորում՝ բնակելի և հանրային շենքերի էներգաարդյունավետ շինարարությունը կամ վերակառուցումը խթանելու համար	II.8	չիրականացված		


4.1.3. Բնակելի շենքեր

Այս բաժինն անդրադառնում է գոյություն ունեցող բնակելի շենքերին: Հայաստանի բնակարանային ոլորտը զբաղեցնում է մոտ 95 միլիոն մ², որից 54%՝ քաղաքային բնակավայրերում, իսկ 29%՝ բազմաբնակարանային շենքերում:



Գծապատկեր 27. Ընդհանուր բնակֆոնդը և տարաբաժանումն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, միլիոն կմ², 2010-2013թթ.

Բազմաբնակարան շենքերի մոտ 30% կառուցված է պանելից կամ մոնոլիտ բետոնից, որը 40%-ով ԵՄ միջինից ցածր է: Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 28-ում, ընդհանուր բնակֆոնդի միայն 40%-ը ավելի քան 40 տարվա է: Առանձնատները, որոնք կազմում են ամբողջ բնակելի տարածքի մեկ երրորդը, համեմատաբար լավ են պահպանվել: Մի շարք վարկային գծեր առաջարկում են բնակարանների էներգախնայողության վարկեր (ՄՖԿ, ՎՀԵԲ, ՖՀԳ/ԱՀՀ, ԿԱՀ) որոշակի խրախուսիչ առաջարկներով, ինչպես օրինակ՝ ցածր տոկոսադրույթ կամ որոշակի գումարի հետվերադարձ: Այս բաժինը վերանայում է բացառապես բնակարանների էներգախնայողությանն ուղղված գործողություններ: Բնակարանների էներգախնայողությունը այլ ոլորտների շարքում ֆինանսավորող վարկային գծերի ազդեցության չափը գնահատված է աղյուսակ 26-ի համընդհանուր միջոցառումների շարքում:



Գծապատկեր 28. Բազմաբնակարան շենքերի կառուցվածքն ըստ կառուցման տարեթվի, հարկերի թվի և շինանյութի տեսակի

Բազմաբնակարան շենքերում այս տեսդենցը դեռևս զարգացած չէ: Բազմաբնակարան շենքերում սեփականության ընդհանուր համակարգը և ընդհանուր սեփականություն համարվող գույքի կառավարումն ու պահպանումը շատ անարդյունավետ է, ինչը խոչընդոտում է բազմաբնակարան շենքերի շուկայի կողմից էներգախնայողության հնարավորությունների օգտագործմանը:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 2002թ. օրենքը պատշաճ ձևով չի հստակեցրել համատիրությունների իրավունքներն ու պատասխանատվությունները: Հետևաբար, բազմաբնակարան շենքի վերանորոգումն ու պահպանումը լավ չի հրականացվում: Վիճակը տարեցտարի ավելի է վատանում: Բոլոր տանիքների ոչ պակաս, քան 75% և այդ տանիքներից ջրահեռացման համակարգերը հրատապ վերանորոգման կարիք ունեն: Մեծ թվով բնակելի շենքեր գտնվում են ֆիզիկական քայլայման վտանգի տակ: Այս իրավիճակն Հայաստանում ավելի է վատանում սեյսմիկ ռիսկի պատճառով: Բնակարանների վերանորոգմանն ուղղվող ներդրումները բավարար չեն: Օրինակ՝ 2008թ. 1 միլիարդ ՀՀ դրամից (2.7 միլիոն ԱՄՆ դոլար) ավելի քիչ գումար է ներդրվել բազմաբնակարանային շենքերի ամրող ֆոնդում: Շենքի պահպանման համար կատարվող չափազանց ցածր վճարները թույլ չեն տալիս կատարել նույնիսկ անհապաղ վերանորոգման աշխատանքներ: Լուրջ է նաև վճարների հավաքման իրավիճակը, որը հազիվ կազմում է 60%-ից ավելի: Պահպանման վճարների պարտքագումարները սահմանված են չափազանց ցածր և պատշաճ պահպանման համար չեն կարող ապահովել բավարար ֆինանսական միջոցներ, և շատ դժվար է դրանք գանձելը: Խիստ անհրաժեշտ է հստակեցնել և վերասահմանել մի կողմից՝ սեփականատիրոջ, մյուս կողմից՝ պատասխանատու կազմակերպությունների դերը: Մի քանի նախաձեռնություններ մանրամասն վերլուծել են առկա բնակարանային ոլորտում խնդիրների հիմքերը և պարբերաբար նշել են բնակչության վերանորոգման և պահպանման համար կատարվող ներդրումների պակասի, ինչպես նաև համապատասխան ջերմային վերականգնման մասին:

Բնակարանային ոլորտի հարցերին, ընդհանուր տարածքի պահպանմանը և քաղաքային բնակչություն ենթակառուցվածքների խթանմանն անդրադառնալու համար Հայաստանի կառավարությունը, գործընկերների աջակցությամբ (օգնություն տրամադրող միջազգային կազմակերպություններ), իրականացրել է բարեփոխման քաղաքականության մեծ ջանքեր, որոնք առնչվում են կենցաղսպասարկման ծառայությունների մատուցմանը, հանրային կենցաղսպասարկման ձեռնարկության կանոնակարգմանը, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և համատիրությունների կազմակերպմանը, քաղաքային բյուջեի ինքնուրույնությանը, եկամուտներին և այլին:

Առ այսօր, կուտակված փորձը ցույց է տվել, որ էներգաարդյունավետության բարձրացումը Հայաստանում կարող են օգնել խոցելի տնային տնտեսություններին, քանի որ էներգաարդյունավետությունն այս տնային տնտեսությունների հարմարավետության մակարդակը բարձրացնելու և կոմունալ ծախսերի բեռլ թերթացնելու համար ամենաարագ, ամենամաքուր և ամենաէժան տարբերակն է: ՄՖՀ ռեսուլսները կարող են ծածկել այս ոլորտում անհրաժեշտ ներդրումների միայն մի փոքր մասը: Հետևաբար,՝ հաջորդ 20-30

տարվա ընթացքում արդիականացման և արդյունավետության բարձրացման կարիքները հիգալու համար անհրաժեշտ է ներգրավել մասնավոր հատվածի ներդրումները:

Շենքերի էներգախնայողության պոտենցիալը բազմից հաշվարկվել է, այդ թվում նաև Հայաստանի համար: Վերջին ուսումնասիրությունները հաստատել են այս ոլորտի էներգախնայողության պոտենցիալը: Էներգախնայողության և վերականգնող էներգետիկայի ազգային ծրագրում Հայաստանի շենքերի ոլորտում էներգախնայողության ներուժը գնահատվել էր 40 %:

Դոնորների կողմից ֆինանսավորված պիլոտային ծրագրերի արդյունքների համաձայն, էներգիայի ներկայիս գների պայմաններում, Հայաստանում միջին բնակելի շենքն ունի էներգախնայողության 30-50% պոտենցիալ: Այդ պիլոտային ծրագրերից ամենաուսանելին եղել են ՄԱՀԾ-ԳԷՀ շենքերի էներգախնայողության բարելավման ծրագրի կողմից իրականացվածները: Երևանում պանելային բազմաբնակարան շենքի ջերմային արդիականացումից՝ շենքի արտաքին ճակատային մասի ջերմային վերականգնումից հետո, շենքում էներգասպառումը 178կՎտժ/մ²-ից նվազել և մինչև 74կՎտժ/մ²-ի (58%-ով):

Ավելին, «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» (<ՖՀԱ>) հիմնադրամը գտել է վարկավորման մոդելը և վարկային ֆինանսավորմամբ իրականացրել է 3 տիպային պանելային շենքի էներգարդյունավետության բարձրացման միջոցառումներ: Երևանի քաղաքապետարանը դրամաշնորհով համաֆինանսավորել է այս ներդրումները՝ վարկով ֆինանսավորվող նման ծրագրերի համար <ՖՀԱ-ի հետ երկկողմանի փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Որոշ դեպքերում իրենց համեստ համաֆինանսավորմամբ ներդրումներում մասնակցել են նաև բնակիչները (համատիրությունները):

Բացի էներգաարդյունավետության ոլորտում ներդրումների համար ՎՃԵԲ, ՄՖԿ և ԿԱՀ վարկերից, ֆրանսիական զարգացման գործակալությունը (ՖՀՀԳ) և ազգային հիփոթեքային ընկերությունը (ԱՀՀԸ) մեկնարկել են Հայաստանի բնակարանային ոլորտի «Զերմ օջախ» սոցիալական և էներգաարդյունավետ բնակարանային վերանորոգման ծրագրը: Զարգացման գերմանական բանկը (KfW) պահանավորում է 2016թ. բացել բնակարանների էներգաարդյունավետության վարկային գիծ, որի գործնկեր կլինի նաև ԱՀՀ-ն և օժանդակել մեկ այլ խոշոր բնակելի շենքի էներգաարդյունավետության բարելավմանը:

Բազմաբնակարան բնակելի շենքերում էներգաարդյունավետության ոլորտում ներդրումներ կատարելու խոշնոտները կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

- Բնակարանային ռազմավարության կամ խոցելի խմբերի նկատմամբ պետական/տեղական կառավարման մարմինների պատասխանատվության վերաբերյալ հստակ քաղաքականության բացակայություն
- Պետական և տեղական իշխանությունների միջև պատասխանատվությունների բաշխման հստակության բացակայություն
- Մասնավոր հատվածի ներգրավածությունը բնակարանային արդյունաբերության և ֆինանսների մեջ
- Վտարման/ գրավագրկման և սնանկության մեխանիզմների բարելավումները՝ անշարժ գույքի ոլորտում գործարքների թափանցիկությունը և կայունությունը, ներառյալ՝

վաճառքն ու չսպասարկվող վարկերի այլ փոխանցումները, օրինականության բացակայություն

- Բազմաբնակարան շենքերի պահպանման և կառավարման ոլորտում գործող օրենքների և կանոնակարգերի սխալ իրականացում և կիրարկում
- Շենքի կառավարման, ծրագրի զարգացման, ֆինանսական պլանավորման և կառավարման, գումարների հայթայթման, մարդկային ռեսուրսների, հաշվետվության պատրաստման/ներկայացման և հաճախորդ/անդամ հարաբերությունների թույլ կարողություններ:
- Ուսումնասիրությունը բացահայտել է, որ տան-սեփականատերերի ասցիացիայի (ՏՍԱ) ղեկավարները դեռևս նախաձեռնում են անձնակազմի վարձում վճարելով կանխիկ գումարով
- ՏՍԱ-երը մինչև 20% իրականացնում են պահպանման աշխատանքներ ոչ ավելի հաճախ քան 1-2 տարին մեկ
- Ֆինանսական ռեսուրսների բացակայություն՝ պահպանման ցածր վճարների և գումարների հավաքման ցածր մակարդակի պատճառով
- Ցածր վարկունակություն՝ իրենց նոր կարգավիճակի, դանդաղ զարգացման, ծառայությունների վճարների հավաքման գործում ձախողման, ինչպես նաև վարկունակ հաշվապահության, հաշվապահության և հաշվետվությունների պատրաստման/ներկայացման վատ իրականացման պատճառով
- Զերմամատակարարման հարցերի հետ կապված ռազմավարական որոշման կայացման համար անհրաժեշտ քանակությամբ ձայների ապահովման դժվարություն: Իրավիճակը սրվել է բնակարանի մակարդակով ինքնուրույն լուծումների աճող թվով և «փակ դոների» զգալի թվով (~20%)
- Հաճախ յուրաքանչյուր տնային տնտեսության հետ վարկի վերավճարման և ծառայությունների մատուցման անհատական պայմանագրերի կնքման անհրաժեշտություն՝ անվտահության և միջնորդից կենցաղսպասարկման ծառայությունների գնման փորձի բացակայության պատճառով:
- Տան-սեփականատերերի ասցիացիաների և, ընդհանրապես, ԷԱ օգուտների հետ կապված իրավական-կարգավորող շրջանակի, իրավունքների և պատասխանատվությունների ընդհանուր իրազեկվածության և ըմբռնման պակաս:

Այս ոլորտում ներդրումները ճիշտ ուղղորդելու համար անհրաժեշտ է քաղաքականության բարեփոխում, կարողությունների ստեղծում, սոցիալական ծրագրեր և ֆինանսավորման համապատասխան սխեմաներ: «Համատիրությունների մասին» << օրենքը պետք է ճանաչվի անվավեր:

Քաղաքաշինության նախարարությունը հասկացել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» << օրենքի փոփոխման կամ նորից գրելու անհրաժեշտությունը՝ կատարելով համապատասխան փոփոխություններ << Քաղաքացիական օրենսգրքում՝ կապված բազմաբնակարան շենքերի (ԲԲԾ) կառավարման դրույթների հետ, և վերանայելով «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» << կառավարության թիվ 1161-Ն որոշումը: Այս բարեփոխումը պետք է ուղեկցվի բնակելի շենքերի էներգաարդյունավետության խթանման ազգային ծրագրով, որի նպատակը կհանդիսանան հետևյալ գործողությունները.

- Ոլորտի ներդրումների կարիքների գնահատում (ներառյալ << կառավարության՝ 2011թ. սեպտեմբերի 29-ի՝ թիվ 38 արձանագրային որոշմամբ ընդունված «<< բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման հնգամյա ռազմավարական ծրագրի» ֆինանսավորման համար)
- ԲԲԾ կառավարման և/կամ պահպանման մարմիններին վարկավորման ընթացակարգերի սահմանում և պետական սուբյեկտիների հասանելիություն բնակարանային ֆոնդում բազմակողմանի վերականգնման և էներագարողունավետության բարձրացման կազմակերպման համար
- Ֆինանսավորման սխեմայի նախագծում՝ ԲԲԾ արդիականացման ծրագրերի տնտեսական ցուցանիշներին հարմարեցված բնութագրիներով, «փափուկ» պայմաններով և համակցված դրամաշնորհային ֆինանսավորման ու տեխնիկական օժանդակությամբ
- Դրամաշնորհային աղյուրների հայթայթում՝ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար սոցիալական ապահովության պետական ֆոնդերից ներդրումների խթանման նպատակով
- Զևավորել պետական-մասնավոր գործակցության (ՊՄԳ) լրացումներ՝ ԲԲԾ-ներում ներդրումների կատարումը հեշտացնելու, մասնավոր կապիտալը ներգրավելուն ուղղված իրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտները վերացնելու համար
- Օգտագործել փոքրամասշտաբ ցուցադրական ծրագրերից քաղված դասերը, փորձարկել ծրագրերը փոքրամասշտաբ պիլոտային ծրագրերի շրջանակում
- Փնտրել հնարավորություններ ոլորտային ծրագրերից կապիտալ կուտակելու ուղղությամբ բնակարանային շինվերանորոգումը ֆինանսավորելու համար (բնապահպանական, ԷԱ, սեյսմիկ և այլն)
- ԲԲԾ-ներում վարկային ֆինանսավորման ներդրումների ժամանակ նախատեսել հատուկ դրույթներ (դրամաշնորհներ) խոցելի տնային տնտեսությունների համար
- Հնարավոր դարձնել ՏՍՍ-ների մասնակցությունը բնակարանային ներդրումային ծրագրերում՝ գունելով ստեղծագործական լրացումներ վարկային ֆինանսավորման համար
- Հավաքել մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) համապատասխան տվյալներ՝ արդյունավետության բարձրացման նպատակով ազդեցությունները փաստաթղթավորելու և ծրագրերը հստակ կանոնակարգելու համար:

Ինստիտուցիոնալ կարողությունների բարելավում բնակարանային ոլորտում էներգօգտագործման բարելավված արդյունավետության համար

1. Կարողությունների բարելավում համապատասխան պետական հաստատությունների և հանրային ծառայությունների համար՝ կապված շենքերի էներգախնայողության հետ, գոյություն ունեցող շենքերը վերահսկելու և ԲԲԾ կառավարման ու համատիրության քաղաքականության, ներառյալ՝ ՏՍՍ-ների, մարզային և տեղական իշխանությունների, էներգետիկ առողջապահության և էներգետիկ առողջապահության մասնավոր օնկերությունների, ինչպես նաև բնակարանային ոլորտի պահպանման մասնավոր ընկերությունների, ինչպես նաև բնակարանային ոլորտի պահպանման և էներգաարդյունավետության համար վարկավորան մեջ հետաքրքրված ֆինանսական հաստատությունների արդյունավետ իրագործման ապահովման նպատակով
2. Տեխնիկական օժանդակություն՝ կապված հնգամյա ռազմավարական ծրագրով

Նախատեսված նոր գործընթացներին և ոլորտի ընդհանուր բարեփոխմանը, ներառյալ՝ ԷԱ բարելավան համար ՏՍՍ-երին վարկավորումը, ՏՍՍ-երի կողմից պահպանման համար մասնավոր ծառայությունների գնման մրցակցությունը, շենքերի էներգախնայողության պոտենցիալի գնահատումը, էներգետիկ առողջապահությունը, էներգաարդյունավետ ներդրումային ծրագրերի մշակումը, շենքերի անձնագրավորումը և այլն, մասնակցելով՝ ՏՍՍ-ների հնարավորության հետ

3. Հանրային իրազեկվածության բարձրացում՝ տրամադրելով տեղեկատվություն որոշում կայացնողներին, ինչպես նաև սպառողներին վերջնական սպառման էներգախնայողության միջոցառումների և դրանց օգուտների վերաբերյալ :

Բնակելի շենքերի էներգախնայողության արդյունավետ ֆինանսավորման սխեմայի առաջարկվող բնութագրիչներ

4. Նախագծել ֆինանսավորման սխեմա՝ ԲԲԸ արդիականացման ծրագրերի տնտեսական բնութագրիչներին հարմարեցված բնութագրիչներով, «փափուկ» պայմաններով և համակցված դրամաշնորհային ֆինանսավորման ու տեխնիկական օժանդակության հետ
5. Հայթայթել դրամաշնորհային աղբյուրներ՝ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար սոցիալական ապահովության պետական ֆոնդերից ներդրումների խթանման նպատակով՝ բնական գազի ավանդական սակագնային սուբսիդիաները փոխարինելու համար
6. Ձևավորել պետական-մասնավոր գործընկերության պահպանման և էներգետիկ ծառայությունների մատուցման մասնավոր ընկերություններ՝ քաղաքապետարանների, բնակելի շենքերի պահպանման մասնավոր ֆիրմաների և ՏՍՍ-երի հետ, ինստիտուցիոնալ խոշընդուների վերացումը հեշտացնելու և, միաժամանակ, մասնավոր կապիտալ ներգրավելու համար
7. Օգտագործել ցուցադրական ծրագրերից քաղաքացիության դասերը՝ ինստիտուցիոնալ և կարգավորող բարեփոխումների ընտրության վերաբերյալ կառավարության քաղաքականության իրազեկման համար և ծրագրերը փորձարկել փոքրամաշտար պիլոտային ծրագրերի շրջանակներում, ամփոփել գործընթացը սովորական առևտրային բանկերում/տեղական ֆինանսական հաստատություններում (ՏՖՀ) ստանդարտ լուծում առաջարկելու նպատակով
8. Փնտրել հնարավորություններ բնակելի շենքերի էներգախնայողության բնապահպանական օգուտներից կապիտալ կուտակելու ուղղությամբ, օրինակ, բնապահպանական ֆոնդերից կամ ածխածնային ֆոնդից ֆինանսավորման միջոցով :
9. Ոչ դրամական խնայողությունների արժեքը՝ հաշվի առնելով, որ բնակելի շենքերի էներգախնայողությունը միշտ չէ, որ կարող է հանգեցնել ֆինանսական խնայողությունների, բայց կարող է հանգեցնել կենսառճի, հարմարավետության, առողջության և շրջակա միջավայրի ոչ դրամական գգալի բարելավումների
10. ԲԲԸ-ներում բնակելի շենքերի էներգախնայողության ծրագրերի վարկային ֆինանսավորման ժամանակ նախատեսել հատուկ դրույթներ (դրամաշնորհներ) խոցելի տնային տնտեսությունների համար, որպեսզի վերջիններս կարողանան մասնակցել
11. Հնարավոր դարձնել ՏՍՍ-երի մասնակցությունը բնակելի շենքերի էներգախնայողության ներդրումային ծրագրերում գտնելով ստեղծագործական լուծումներ ՏՍՍ-ին վարկային

- ֆինանսավորում տրամադրելու համար
12. Մոնիթորինգի և գնահատման միջոցով հավաքել համապատասխան տվյալներ՝ արդյունավետության բարձրացման նպատակով ազդեցությունները փաստաթղթավորելու և ծրագրերը հստակ կանոնակարգելու համար
 13. Ստեղծել սոցիալ ապահովության ֆոնդեր՝ ոչ զգալի դեֆիցիտների դեպքում համատիրություններին վարկերով ապահովելու համար
 14. Տրամադրել ֆինանսական միջոցներ վերակառուցման, Էներգախնայողության միջոցառումների, տեխնիկական և ֆինանսական փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների կիրառման համար:

Էներգաարդյունավետ շենքի ֆինանսական և տնտեսական օգուտները միջազգայնորեն լավ հետազոտված և փաստաթղթավորված են: Էներգախնայողության ոլորտում շատ ներդրումներ ունեն Էներգիայի նվազեցված կարճաժամկետ ծախսերի փոխհատուցվելիության տեսանկյունից (հաշվի առնելով, որ շենքերի նախագծման մեջ էներգախնայողությունը կարող է նույնիսկ նվազեցնել շինարարության ծախսերը): Մի քանի ուսումնասիրություններ, որոնք հաշվի են առել Հայաստանի ազգային պայմանները (շինարարության ծախսը, շինանյութերի համար սահմանված շուկայական արժեքները, ջեռուցման, օդորակման և օդափոխության ծախսերը) հաստատում են այս ստացված տվյալները²⁸: Էներգաարդյունավետության շահութաբերությունն աստիճանաբար կմեծանա էներգիայի աճող գներին զուգընթաց: Հանրային շենքերի և սոցիալական բնակչութի դեպքում սա կհանգեցնի շենքերի կառուցմանն ու շահագործմանն ուղղված հանրային սահմանափակ ռեսուրսների զգայի խնայողության: Բնակելի շենքերի համար էներգիայի աճող գների պայմաններում կենցաղսպասարկման ծառայությունների մատչելիությունը պահպանելու համար էներգախնայողությունը կինի միակ ծևը, միաժամանակ պահպանելով պատշաճ հարմարավետության մակարդակը:

ԲԲԸ բնակելի շենքերի ԷԱ արդիականացման ազգային ծրագիրը

Առաջարկվում է, որպեսզի ՄԱԶԾ-ԳԷՀ և ՀՖՀԱ/ՑԵՍՏԲՏԷԱ ծրագրերից ձեռքբերված պիլտային ծրագրի փորձերը վերածվեն բնակելի շենքերի էներգախնայողության ազգային ծրագրի՝ անդրադառնալով Հայաստանում քաղաքականության բարեփոխմանը, կարողությունների ստեղծմանը, բազմաբնակարան շենքերի արդիականացման համար կայուն ֆինանսավորման սխեմայի մշակմանը և ընդլայնմանը: Տես՝ առաջարկվող նոր ԷԱԲՄ (Միջոցառում II.10):

LED լամպեր ցածր եկամուր ունեցող գնային գննդեսությունների համար

Ներդրումներից և միջոցառումներից բացի, որոնք կօգնեն նվազեցնել ջեռուցման նպատակով շենքերի ոլորտում էներգիայի պահանջարկը, բնակարանային ոլորտին անհրաժեշտ է օժանդակություն էլեկտրաէներգիայի աճող գները հաղթահարելու համար: Ինչպես արդեն

²⁸ Էներգախնայողության և Վերականգնվող էներգիայի 2007թ. ՀՀ ազգային ծրագիրը հաշվարկել է շենքերի ոլորտում էներգախնայողության տարեկան ընդհանուր պոտենցիալը, որը համարժեք է 331 նավթին համարժեք կիլոտոննայի՝ շենքերի ջերմապահութանության բարելավման, էներգախնայող լուսավորման և ջեռուցման համակարգերի ներմուծման միջոցով:

քննարկել ենք կարգավորող բաժնում, Էներգիայի բարձրացող սակագները զգալի ազդեցություն են թողել Էներգիայի մատչելիության և հայտարարված սակագնի բարձրացման սոցիալական ընդունման վրա՝ առաջացնելով հասարակական անհանգստությունը։ Մեկ այլ իրավիճակից խուսափելու համար, երբ Կառավարությունը Էներգիայի գնի սուբսիդավորման վրա կծախսի սահմանափակ պետական ֆինանսական միջոցները, քաղաքական ցնցումներից խուսափելու նպատակով առաջարկվում է, որպեսզի սոցիալական ապահովության Էներգետիկ ցանցերը սակագնի սուբսիդավորումից անցում կատարեն դեպի ցածր Եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար սուբսիդավորվող Էներգաարդյունավետ ծրագրերի։ Էներգաարդյունավետ ծրագրերի նման օժանդակությամբ։ Ցածր Եկամուտ ունեցող տնային տնտեսություններում օգտագործվող Էներգիայի մոտ 40% (Հայաստանում կա 225,000 աղքատ տնային տնտեսություններ, որոնցից 105,000 դասակարգված են որպես ծայրահեղ աղքատ) լուսավորման համար է։ Մատչելիության սահմաններում Էներգաարդյունավետ սպառումը կառավարելու համար խորհուրդ է տրվում ցածր Եկամուտ ունեցող ընտանիքներին առաջարկել LED (լուսարձակող դիոդիային) Էներգաարդյունավետ սպառումը (տես՝ միջոցառում II.11.)։

Էներգասպառող սարքերի պիտակավորումը

Մեկ այլ գործիք, որն օգնում է միջին և բարձր Եկամուտ ունեցող բնակչությանը գործ ունենալ Էներգիայի պահանջարկի կառավարման հետ, Էներգասպառող սարքերի պիտակավորումն է։ ՄԱՀԾ/ԳԷՀ պատրաստել է կառավարության որոշման նախագիծ և Էներգապիտակավորման կանոնակարգ և երկուն էլ ներկայացրել ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն՝ հաստատման համար։ Ընդունումը ժամանակավոր հետաձգվել էր, մինչև որ քաղաքական խառնաշփոթը՝ կապված ԵՄ ասոցացման և ԵԱՄՄ անդամակցման հետ, լուծվեց։ Այժմ, երբ Հայաստանը ԵԱՄՄ անդամ է, կարգավորող փաթեթը պետք է համապատասխանեցվի և հաստատվի։ Հաստատվելուց հետո, Էներգասպառող սարքերի պիտակավորման կանոնակարգի կիրակումը կպահանջի վերջինիս տարածման զգալի ջանքեր՝ պիտակները ներդնելու, տեղեկատվությունը տարածելու և սպառողների գնման որոշումները համապատասխանորեն տեղեկացնելու համար։ (ԷԱԲՄ II.12.)։

Աղյուսակ 26. Էներգախնայողության բարելավման միջոցառումները բնակելի շենքերում

C/C	Էներգախնայող միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական սպառումը	Տևողությունը	Ձեռքբերված էներգա խնայողությունը 2014թ.-ին (Մվտ.ժ)	Ձեռքբերված էներգա խնայողությունը 2017թ. (Մվտ.ժ)	Ձեռքբերված էներգա խնայողությունը 2018թ. (Մվտ.ժ)	Ձեռքբերված էներգա խնայողությունը 2020թ. (Մվտ.ժ)	Կարգավիճակը՝ կապված լ ԵԳԾ-ի հետ
II.7	Օրենսդրական աջակցություն, ֆինանսավորում և տեղեկատվություն : Էներգաարդյունավետության բարելավում շենքերում, ենթաօրենսդրական ակտերի մշակում շենքերում ԷԱ համար, ինչպես նաև Երևանի Ավանի շրջանի բազմաբնակարան շենքի և Գորիսու Ախուրյան քաղաքների հանրային շենքերի ջերմային համակարգի արդիականացման առաջին փորձնական ծրագրի ֆինանսավորում (ՄԱԶԾ/ԳԷՀ ՇԷԱԲ ծրագիր)	Բազմաբնակ արան շենքեր, սոցիալական տներ, գոյություն ունեցող շենքերի զգալի վերակառուց ում, ԷԱ շենքերի համար օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտ	Սկիզբ՝ 2013թ. Ավարտը՝ 2017թ.	1200	1200	1200	1200	Մասնակի իրական ացված

II.9. ա.	Ֆինանսավորում Էներգաարդյունա վետության համար. տնային տնտեսություններ ի Էներգաարդյունա վետության վարկեր և ԷԱ հիպոթեկային վարկեր (NMC/AFD)	Տնային տնտեսություն նների ԷԱ վարկեր և ԷԱ հիպոթեկային վարկեր, բնակելի շենքերի և մասնավոր տների տարածքներ ի ջեռուցում, տաք ջրի ստացում	Սկիզբ ը՝ 2014թ. Ավար տը՝ 2020թ.	136.16	140.61	164.04	210.92	Մասնակ ի իրական ացված
II.9. բ.	Ֆինանսավորում Էներգաարդյունա վետության համար: Բբնակարանային Էներգաարդյունա վետության բանկային առևտրային վարկ HFHA Condo, REELIH և SUDEP ծրագրերիմիջոցն վ	Էներգիայի վերջնական օգտագործու մ բնակարանն երում տարածքներ ի ջեռուցման և ջրի տաքացման համար	Սկիզբ ը՝ 2013թ. Ավար տը՝ 2018թ.	30.1	4913.9	5066.9	5066.9	Մասնակ ի իրական ացված
II.9. գ.	Ֆինանսավորում Էներգաարդյունա վետության համար. KfW բնակարանային ԷԱ վարկային գիծ	Էներգիայի վերջնական օգտագործու մ բնակարանն երում, ջեռուցում, ջրի տաքացում, լուսավորութ յուն	Սկիզբ ը՝ 2016թ. Ավար տը՝ 2020թ.	Նոր միջոցա ռում	Ենթակ ա է որոշմա ն	Ենթակ ա է որոշմա ն	Ենթակ ա է որոշմա ն	Ընթացք մ է
II.1 օ	Սակագնի բարձրացման զապում ցածր եկամտային Էներգաարդյունա վետության ծրագրի միջոցնվ	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաննե րում, լուսավորութ յան արդյունավետ ություն	Սկիզբ ը՝ 2015թ. Ավար տը՝ 2016թ.	Նոր միջոցա ռում	116159	116159	116159	Նոր միջոցառ ում

II.11	ԷԱ վերակառուցումներ գոյություն ունեցող բնակելի շենքերում: Բազմաբնակարան շենքերի վերանորոգման և ԷԱ ազգային ծրագիր և գործողություններ ի պահ	Գոյություն ունեցող բնակելի շենքեր, տարածքի ջեռուցում	Սկիզբ՝ ը' 2016թ. Ավարտը՝ 2020թ.	Նոր միջոցառում	65000	65000	65000	Նոր միջոցառում
II.12	Էներգասպառող սարքերի էներգախնայողության ախտակավորման մասին իրազեկման քարոզարշավ	Էներգիայի վերջնական օգտագործում բնակարաններում, լուսավորության արդյունավետություն	Սկիզբ՝ ը' 2015թ. Ավարտը՝ 2020թ.	Նոր միջոցառում	176704	209369	409635	Նոր միջոցառում

Բնակելի ոլորտի էներգախնայողության բարելավման նպատակով իրավական-կարգավորող բարեփոխմանը, ֆինանսավորմանը և կարողությունների ստեղծմանը խթանող անհատական միջոցառումները բերված են հետևյալ առանձին այլուսակներում:

Էներգախնայող միջոցառման անվանումը		ՄԱԶԾ-ԳԷՀ շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր
Միջոցառման ինդեքսը		II.7
Նկարագրություն	Կատեգորիան	Էն ծրագրեր և միջոցառումներ, կարգավորող, տեղեկատվություն
	Ժամկետը	Սկիզբը՝ 2013թ.; Ավարտը՝ 2017թ.
	Նպատակը/հակիրճ նկարագիրը	Ծրագրի նպատակն է բարելավել շենքերի էներգախնայողությունը, ներառյալ՝ ՇԷՅՀ վերափոխման գործում ՀՀ կառավարությանը տրամադրվող հսկայական օժանդակությունը, շենքերի Էն համար Ենթաօրենդրական ակտերի մշակումը, ինչպես նաև Ավան համայնքում բազմաբնակարան բնակելի շենքի և Գորիս ու Ախուրյան քաղաքներում սոցիալական բնակչությի ջերմային արդիականացման առաջին պիլտային ծրագրի ֆինանսավորումը:
	Թիրախային վերջնական սպառումը	Բազմաբնակարան բնակելի շենքեր, սոցիալական բնակչունդ, առկա շենքերի զգայի վերակառուցում, Ենթաօրենսդրական ակտեր շենքերի էներգախնայողության համար
	Թիրախային խոմքը	Բազմաբնակարան բնակելի շենքեր, սոցիալական բնակչունդ, առկա շենքերի զգայի վերակառուցում, Ենթաօրենսդրական ակտեր շենքերի էներգախնայողության համար
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային

<p>Տեղեկատվություն կուսականացման վերաբերյալ</p>	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը</p> </td><td style="width: 70%; vertical-align: top;"> <p>Պիլոտային շենք Գորիսում՝ 2012թ.: Էներգախնայողություն - 109 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 25 տոննա/տարի; Պիլոտային շենք Ավանում՝ 2014թ. Էներգախնայողություն - 290 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 60 տոննա/տարի Կասկադ Հիգ բնակելի համալիր. Էներգախնայողություն - 496 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 122 տ/տարի: Էներգաարդյունավետության լուծումների կիրառման նպատակով իրականացված/ընթացիկ ծրագրերի համար օգտագործված մասնավոր ներդրումները կազմել են 500,000 ԱՄՆ դոլար - Շվեյցարական զարգացման գործակալություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում): 150,000 ԱՄՆ դոլար - Հայաստանի կառավարություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում), 2,400,000 ԱՄՆ դոլար - Մասնավոր հատված - «Ալ Համրա Անշարժ գույքի զարգացում Հայաստան» («Կասկադ Հիգ» բնակելի համալիրի նախագծում և կառուցում): Արևային ջրատարաքաղցիներ ~ արևային էներգիայի օգտագործման 19 պիլոտային ծրագիր և մոտ 600լթ արևային ջրատարաքաղցիների տեղադրում ամբողջ Հայաստանում: Իրականացված ծրագրերից CO₂ արտանետման նվազում (2014թ. դրույթամբ)՝ տարեկան մոտ 215 տոննա ածխածնի երկօրսիդ: Վերականգնվող էներգիայի լուծումների կիրառման ուղղությամբ ավարտված/ընթացիկ ծրագրերի համար հատկացված մասնավոր ներդրումները ընդհանուր կազմել են մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար:</p> </td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> Բյուջեն և ֆինանսավորման աղյուրը </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">\$1,200,000</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> Իրականացնող մարմինը </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">ԲՆ, ՄԱԶԾ-ԳԷՀ</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> Վերահսկող մարմինը </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">ՄԱԶԾ-ԳԷՀ</td></tr> </table>	<p>Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը</p>	<p>Պիլոտային շենք Գորիսում՝ 2012թ.: Էներգախնայողություն - 109 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 25 տոննա/տարի; Պիլոտային շենք Ավանում՝ 2014թ. Էներգախնայողություն - 290 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 60 տոննա/տարի Կասկադ Հիգ բնակելի համալիր. Էներգախնայողություն - 496 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 122 տ/տարի: Էներգաարդյունավետության լուծումների կիրառման նպատակով իրականացված/ընթացիկ ծրագրերի համար օգտագործված մասնավոր ներդրումները կազմել են 500,000 ԱՄՆ դոլար - Շվեյցարական զարգացման գործակալություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում): 150,000 ԱՄՆ դոլար - Հայաստանի կառավարություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում), 2,400,000 ԱՄՆ դոլար - Մասնավոր հատված - «Ալ Համրա Անշարժ գույքի զարգացում Հայաստան» («Կասկադ Հիգ» բնակելի համալիրի նախագծում և կառուցում): Արևային ջրատարաքաղցիներ ~ արևային էներգիայի օգտագործման 19 պիլոտային ծրագիր և մոտ 600լթ արևային ջրատարաքաղցիների տեղադրում ամբողջ Հայաստանում: Իրականացված ծրագրերից CO₂ արտանետման նվազում (2014թ. դրույթամբ)՝ տարեկան մոտ 215 տոննա ածխածնի երկօրսիդ: Վերականգնվող էներգիայի լուծումների կիրառման ուղղությամբ ավարտված/ընթացիկ ծրագրերի համար հատկացված մասնավոր ներդրումները ընդհանուր կազմել են մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար:</p>	Բյուջեն և ֆինանսավորման աղյուրը	\$1,200,000	Իրականացնող մարմինը	ԲՆ, ՄԱԶԾ-ԳԷՀ	Վերահսկող մարմինը	ՄԱԶԾ-ԳԷՀ						
<p>Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը</p>	<p>Պիլոտային շենք Գորիսում՝ 2012թ.: Էներգախնայողություն - 109 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 25 տոննա/տարի; Պիլոտային շենք Ավանում՝ 2014թ. Էներգախնայողություն - 290 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 60 տոննա/տարի Կասկադ Հիգ բնակելի համալիր. Էներգախնայողություն - 496 ՄԳԺ/տարի; CO₂ արտանետման նվազում - 122 տ/տարի: Էներգաարդյունավետության լուծումների կիրառման նպատակով իրականացված/ընթացիկ ծրագրերի համար օգտագործված մասնավոր ներդրումները կազմել են 500,000 ԱՄՆ դոլար - Շվեյցարական զարգացման գործակալություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում): 150,000 ԱՄՆ դոլար - Հայաստանի կառավարություն (սոցիալական բնակարանաշինություն - բնակելի շենքի կառուցում Գորիս քաղաքում), 2,400,000 ԱՄՆ դոլար - Մասնավոր հատված - «Ալ Համրա Անշարժ գույքի զարգացում Հայաստան» («Կասկադ Հիգ» բնակելի համալիրի նախագծում և կառուցում): Արևային ջրատարաքաղցիներ ~ արևային էներգիայի օգտագործման 19 պիլոտային ծրագիր և մոտ 600լթ արևային ջրատարաքաղցիների տեղադրում ամբողջ Հայաստանում: Իրականացված ծրագրերից CO₂ արտանետման նվազում (2014թ. դրույթամբ)՝ տարեկան մոտ 215 տոննա ածխածնի երկօրսիդ: Վերականգնվող էներգիայի լուծումների կիրառման ուղղությամբ ավարտված/ընթացիկ ծրագրերի համար հատկացված մասնավոր ներդրումները ընդհանուր կազմել են մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար:</p>														
Բյուջեն և ֆինանսավորման աղյուրը	\$1,200,000														
Իրականացնող մարմինը	ԲՆ, ՄԱԶԾ-ԳԷՀ														
Վերահսկող մարմինը	ՄԱԶԾ-ԳԷՀ														
<p>Դաշտավայրականացման դաշտավայրեականացման համար պահպանական գործությունների կազմակերպության կողմէ</p>	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը</p> </td><td style="width: 70%; vertical-align: top;"> <p>«Ներքմից-վերև» ազգային համակարգ</p> </td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ 1 ԷԳԾ-ի (ՄԳհ)</p> </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">1,200</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)</p> </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">1,200</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին</p> </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">1,200</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (Եթե հասանելի է)</p> </td><td style="width: 70%; vertical-align: top; text-align: right;">1,200</td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Ենթադրություններ</p> </td><td style="width: 70%; vertical-align: top;"></td></tr> <tr> <td style="width: 30%; vertical-align: top;"> <p>Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակում</p> </td><td style="width: 70%; vertical-align: top;"> <p>Հորիզոնական/համընդհանուր միջոցառումներ ԷԱ քաղաքականության բարեփոխման, ՇԷԱ կանոնակարգի մեջ</p> </td></tr> </table>	<p>Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը</p>	<p>«Ներքմից-վերև» ազգային համակարգ</p>	<p>2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ 1 ԷԳԾ-ի (ՄԳհ)</p>	1,200	<p>Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)</p>	1,200	<p>Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին</p>	1,200	<p>Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (Եթե հասանելի է)</p>	1,200	<p>Ենթադրություններ</p>		<p>Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակում</p>	<p>Հորիզոնական/համընդհանուր միջոցառումներ ԷԱ քաղաքականության բարեփոխման, ՇԷԱ կանոնակարգի մեջ</p>
<p>Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը</p>	<p>«Ներքմից-վերև» ազգային համակարգ</p>														
<p>2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ 1 ԷԳԾ-ի (ՄԳհ)</p>	1,200														
<p>Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)</p>	1,200														
<p>Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին</p>	1,200														
<p>Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (Եթե հասանելի է)</p>	1,200														
<p>Ենթադրություններ</p>															
<p>Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակում</p>	<p>Հորիզոնական/համընդհանուր միջոցառումներ ԷԱ քաղաքականության բարեփոխման, ՇԷԱ կանոնակարգի մեջ</p>														
<p>Էներգախնայող միջոցառման անվանումը</p>	<p>«Ձերմ օջախ» սոցիալական և էներգաարդյունավետ բնակարանային ֆինանսավորման ծրագիրը, ՖՀԳ/ԱՀԸ</p>														
<p>Միջոցառման ինդեքսը</p>	II.9.ա.														
<p>Կատեգորիան</p>	<p>ԷԱ ծրագրեր և միջոցառումներ</p>														

<p>Էներգախնայող միջոցառման անվանումը</p>	<p>«Ձերմ օջախ» սոցիալական և էներգաարդյունավետ բնակարանային ֆինանսավորման ծրագիրը, ՖՀԳ/ԱՀԸ</p>
<p>Միջոցառման ինդեքսը</p>	II.9.ա.
<p>Կատեգորիան</p>	<p>ԷԱ ծրագրեր և միջոցառումներ</p>

Նկարագրությունը	Ժամկետը	Ակիզբը՝ 2014թ.
		Ավարտը՝ 2020թ.
		ԷԱ վարկեր և ԷԱ հիփոթեքային վարկեր տնային տնտեսությունների համար ֆրանսիական զարգացման գործակալության և Ազգային հիփոթեքային ընկերության կողմից: Ծրագրի նպատակն է տնային տնտեսություններին տրամադրել ԷԱ վարկեր և ԷԱ հիփոթեքային վարկեր: Ծրագրի առաջին տարվա թիրախային թիվը պետք է հասնի 3000 տնային տնտեսությունների:
		ԷԱ վարկեր և ԷԱ հիփոթեքային վարկեր տնային տնտեսությունների համար, բնակելի շենքերի և առանձնատների տարածքի ջեռուցում, տար ջրի ստացում
		Թիրախային խումբը
		Բնակելի շենքեր
		Տարածաշրջանային կիրառումը
Տեղական վերաբերությունը ՀՀ առանձնանության համար կազմակերպությունների շանկն ու նկարագիրը	Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը	Ֆրանսիական զարգացման գործակալությունը (ֆ2Գ) հիմնել է «Զերմ օջախ» ՍԷՄԲՎԾ 10 մլն եվրո վարկի հնարավորությամբ, որի նպատակն է տրամադրել վարկեր Երևան քաղաքի կենտրոնից դուրս և Հայաստանի շրջաններում գտնվող մասնավոր տնային տնտեսություններին՝ մատչելի պայմաններով տեղական մասնակից ֆինանսավական հաստատությունների (ՄՖՀ) միջոցով սոցիալական բնակարանային ոլորտում ԷԱ ներդրումները ֆինանսավորելու համար: Միջոցառումները, որոնց համար կարող է տրամադրվել վարկ, ներառում են մեկուսացում, պատուհանների և դռների փոխարինում, արևային ջրատաքացուցիչներ, ջեռուցման համակարգի փոխարինում, ինչպես նաև այլ ընդհանուր վերանորոգում: Էներգետիկ կայուն ներդրումների տարբեր խոչընդոտները հայթահարելու համար Ծրագրին ունի նաև տեխնիկական օժանդակության ֆինանսավորում ԵՄ ՀՀ-ից ՄՖՀ-ին, ինչպես նաև վերաֆինանսավորման ոչ ենթակա դրամաշնորհային ֆինանսավորում ԵՄ ՀՀ-ից վարկառուներին: Ծրագրի նպատակն է հայթահարել ԷԱ ներդրումների հիմնական խոչընդոտը՝ մատչելի ֆինանսավորման հասանելիության բացակայությունը: Հաշվի առնելով վարկային գծի գումարը՝ ենթավարկերի թիրախ կհանդիսանա մոտ 3,000 տնային տնտեսություն, և դրանք կֆինանսավորեն Երևան քաղաքից դուրս գտնվող տնային տնտեսությունների վերանորոգման ներդրումները: Ենթավարկերը կառաջարկվեն ՀՀ դրամով և սիստեմատիկաբար կտրամադրվեն հեշտացված էներգետիկ առողջապահության հետո: Դրանք կունենան ավելի երկար մարման ժամկետ, քան չույնայում առևտորային բանկերի կողմից ներկայում առաջարկվողները, և արտոնյալ ժամկետ, ինչպես նաև 5-10 դրամաշնորհային բոնուսներ վարկերից օգտվելու իրավունք ստանալու համար:
		13,000,000 ԱՄ դոլար
		ֆ2Գ
		ԱՀԸ և 15 մասնակից ֆինանսավական հաստատություն (ՄՖՀ)
		Վերահսկող մարմինը
Էներգախնայողությունը	Վերահսկող մարմինը	ԱՀԸ, ԱՍԲԱ, ԿՀՆ
		Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ
		2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ 1 ԷԳԸ-ի (ՄԳհ)
		Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)
		Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին

Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին	211
Ենթադրություններ	Յուրաքանչյուր վարկ ներդրվում է տան որևէ տեսակի բարեկավման մեջ, որը հանգեցնում է միջինը 44% էներգախնայողության
Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	Մասնակի համընկնում է շենքերի ԷԱ ծրագրերի հետ, գործակցում բնակելի տարածքի ԷԱ համար ԳԶԲ վարկային գծի հետ

Էներգախնայող միջոցառման անվանումը		Բնակելի շենքերի էներգաարդյունավետության համար բանկային առևտրային վարկը
Միջոցառման ինդեքսը		II.9.բ.
Նկարագրությունը	Կատեգորիան	ԷԱ ծրագրեր և միջոցառումներ
	Ժամկետը	Սկիզբ՝ 2013թ.; Ավարտ՝ 2018թ.
	Նպատակը/հակիրճ նկարագիրը	Ծրագիրն աշխատելի է բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վրա՝ սպասարկելով ընդհանուր թվով 99 ընտանիք 3 շենքում՝ յուրաքանչյուր շենքի համար կոպիտ հաշվարկով 6,000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծախսով, և միակ հաստատությունն է Հայաստանում, որին հաջողվել է բնակելի առևտրային վարկ տրամադրել 6 համատիրության, որոնք ուսումնասիրվում են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների բնակելի շենքերի էներգաարդյունավետության (ՑԵՏՏԲՏՀԱ) ծրագրի շրջանակներում
	Թիրախային վերջնական սպառումը	Բնակելի շենքերում էներգիայի վերջնական սպառում՝ տարածքի ցեղուցման և տար ջրի ստացման համար
	Թիրախային խումբը	Բնակելի շենքերի տնային տնտեսություններ, համատիրություններ, քաղաքապետարաններ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
Տարեկան իրավաբանական վերաբերությունների մասին կազմակերպությունների համար պահանջման առաջնային կազմակերպությունների համար	Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը	<p>«Հարիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» (ՀՖՀԱ) ունի մի քանի ծրագրեր, որոնք վերաբերում են բնակարանային ֆինանսավորմանը, բնակելի շենքերի էներգաարդյունավետությանը և էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներին:</p> <ol style="list-style-type: none"> ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության դրամաշնորհով ֆինանսավորվող Յաձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների բնակելի շենքերի էներգաարդյունավետության (ՑԵՏՏԲՏՀԱ) ծրագրը, որի նպատակն է բնակելի շենքերի էներգաարդյունավետության համար ստեղծել առևտրայինին մոտ վարկավորման համակարգ Կոնդո. ՀՖՀԱ բնակարանային ֆինանսավորում՝ հատուկ ուղարկություն դարձնելով համատիրությունների ԷԱ վարկավորմանը՝ ընդհանուր օգտագործման տարածքների ԷԱ նպատակով ամրացումների և ընդհանուր վերանորոգման համար: <p>Նմանադիմա վարկերի տրամադրում տեղական 3 ունիվերսալ վարկային կազմակերպությունների (ՈՒՎԿ) միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> Նոր հորիզոն ՈՒՎԿ Կամուրջ ՈՒՎԿ Առաջին հիփոթեքային ընկերություն ՈՒՎԿ Եւ ԿՔՅԷԾ ծրագրի ֆինանսական միջոցներ ԷԱ և ՎՀ

		լուծումների նպատակով Սպիտակի և Վայրի քաղաքապետերի ստորագրած համաձայնագրի համար
		3,629,507 ԱՄՆ դոլար
	Բյուջեն և ֆինանսավորման աղբյուրը	Տրամադրված «Հարիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա»-ի (ՀՖՀԱ), Եվրոպական Հանձնաժողովի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ՅԵՍՏՏՏԷԱ ծրագրի կողմից
	Իրականացնող մարմինը	Ինեկորանկ, ՈՒՎԿ-եր
	Վերահսկող մարմինը	ԱՄՆ Մշագգային զարգացման գործակալություն, Եվրահանձնաժողով
Դաշտավայրական պահպանը	Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը	«Ներքևից-վերև» ազգային համակարգ
	2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ 1 ԷԳԾ-ի (ՄԳհ)	30
	Ավնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)	4,914
	Ավնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին	5,067
	Ավնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (Եթե հասանելի է)	5,067
	Ենթադրություններ	
	Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	

Էներգախնայող միջոցառման անվանումը	Էներգաարդյունավետության ֆինանսավորում. բնակելի տարածքի ԷԱ համար ԳՀԲ վարկային գիծ	
Միջոցառման ինդեքսը	II.9.q.	
Նկարագրությունը	Կատեգորիան	ԷԱ ծրագրեր և միջոցառումներ, ֆինանսավորման սխեմա
	Ժամկետը	Սկիզբը՝ 2016թ. Ավարտը՝ 2020թ.
Նպատակը/հակիրճ նկարագիրը	Նպատակը/հակիրճ նկարագիրը	ԳՀԲ մտադիր է ստեղծել ԷԱ ծրագիր Հայաստանում բնակարանային շինարարության ուղղությամբ մինչև 20 միլիոն Եվրո գումարով
	Թիրախային վերջնական սպառումը	Բնակելի շենքերում էներգիայի վերջնական սպառում, ջեռուցում, տաք ջրի ստացում, լուսավորություն

	Թիրախային խումբը	Բնակելի տարածքի տնային տնտեսություններ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
Լուսավորության դրույթութեակ ուսման հատումներ	Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը	Թիրախն բնակելի շենքերում էներգիայի սպառման նվազումն է և, հետևաբար, նաև ջերմոցային գազերի արտանետման նվազեցումը 20%-ով՝ համեմատած ելավետի հետ:
	Բյուջեն և ֆինանսավորման առբյուրը	20,000,000 եվրո ԳՀԲ, 80% երաշխիք վարկի համար Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից
	Իրականացնող մարմինը	Վարկառու՝ Հայաստանի կենտրոնական բանկ: Ծրագիրը համաձայնեցվել է ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև՝ 2014թ. սեպտեմբերին երկու կառավարությունների միջև կայացած բանակցությունների ժամանակ
	Վերահսկող մարմինը	Ծրագրի կառավարման գրասենյակ՝ Առաջին հիփոթեքային ընկերություն
Ուսման արդիութեակ ուսման հատումներ	Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը	Չկա
	2014թ. ձեռքբերված խնայողություն ըստ I ԷԳԾ-ի (ՄԳհ)	Նոր միջոցառում
	Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)	ԷԱ ճշգրիտ խնայողությունները կախված են կոնկրետ միջոցառումներից, որոնք կֆինանսավորվեն Ենթավարկերի միջոցով:
	Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին	Համապատասխան ցուցիչները և էներգախնայողության կանխատեսումը կտրամադրվեն ծրագրի հայեցակարգի՝ ամբողջությամբ պատրաստ լինելուն պես
	Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (եթե հասանելի է)	Պետք է որոշվի
	Ենթադրություններ	Ծրագրի փորձաքննություն՝ 2015թ. 1-ին եռամյակ, Համաձայնագրերի ստորագրում՝ 2015թ. 2-րդ եռամյակ, Իրականացման մեկնարկ՝ 2015թ. 3-րդ եռամյակ
	Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	Աշխատանքն իրականացվելու է ԱՀՀ միջոցով և պետք է լրացնի ԱՀՀ կողմից առաջարկվող «Ձերմ օջախ»-ին, այլ ոչ թե մասամբ համընկնի վերջինիս հետ

	Էներեգախնայող միջոցառման անվանումը	Սակագնի աճի մեղմացում ցածր եկամուտ ունեցողների համար էներգաարդյունավետության ծրագրով. LED լամպեր ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար
	Միջոցառման ինդեքսը	II.10
Ուսման արդիութեակ ուսման հատումներ	Կատեգորիան	ԷԱ ծրագրեր և միջոցառումներ
	Ժամկետը	Սկիզբ՝ 2015թ.; Ավարտ՝ 2016թ.
	Նպատակը/հակիրճ նկարագիրը	Ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման ազդեցության մեղմնում՝ առաջարկելով սուբսիդավորված էներգախնայողական (LED) լամպեր՝ 225,000 տնային տնտեսություններում շիկացած էլեկտրական լամպեր փոխարինելու համար (բնակչության 32%, որոնք գտնվում են աղբատության շեմից ցածր):
	Թիրախային վերջնական սպառումը	Բնակելի շենքերում էներգիայի վերջնական սպառում, լուսավորման արդյունավետություն

	Թիրախային խումբը	Բնակելի ոլորտ, ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
ԴՐՈՅՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ Առնվազագույն պահանջման դրագիրք	Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը	Ցածր եկամուտ ունեցողների համար էներգախնայող լուսավորման ծրագրի մշակում, ներառյալ՝ - LED լամպերի տրամադրում ցածր եկամուտ ունեցող բոլոր տնային տնտեսություններին շիկացած էլեկտրական լամպերը փոխարինելու համար, - գործընկերության գարգացում էլեկտրակայանի հետ համաձայնեցված սահմաններում այդ լամպերը պահպանելու և փոխարինելու համար:
	Բյուջե և ֆինանսավորման աղյուր	9,092,687 ԱՄՆ դոլար
	Իրականացնող մարմինը	Տրամադրվում է << կառավարության կողմից էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
	Վերահսկող մարմին	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ Առնվազագույն պահանջման դրագիրք	Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը	«Ներքևից-վերև» ազգային համակարգ
	2014թ. ձեռքբերված խնայողությունն ըստ I ԵԳԾ-ի (ՄԳհ)	
	Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)	116,159
	Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին	116,159
	Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին (եթե հասանելի է)	116,159
	Ենթադրություններ	Ենթադրենք, որ ֆինանսավորումը հասանելի կլինի: Հիմնված է ՄԱՀԾ-ԳԷՀ կողմից անցկացվող SS-ների փոքր նմուշի հատկությունների վրա, որը պետք է ընդլայնվի: Ենթադրենք ամբողջ էլեկտրաէներգիայի 35%-ը օգտագործվում է լուսավորության համար (ցածր եկամուտ ունեցող SS-ներ ավելի շատ կլինեն, օրինակ՝ 45-50%): 8-16 էլեկտրական լամպ յուրաքանչյուր տնային տնտեսության համար, միջինը՝ 10: Ենթադրենք լամպերից մեկը լոգարանին է և չի օգտագործվում օրական 5 ժամից ավելի, յուրաքանչյուր SS-ում առաջարկվում է 9 էլեկտրական լամպի փոխարինում: Ենթադրվում է, որ միջին էլեկտրական լամպը 60 վատտ է, փոխարինում 9.5 Վ/Ժ LED էլեկտրական լամպով: Ներկայիս 48.78 << դրամ սակագնի համար կատարած փոխառությունների պահանջմանը հավասարվում է 5 ամսվա:
	Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	

Էներգախնայող միջոցառման անվանումը	ԵԱ բարելավումներ գոյություն ունեցող բնակելի շենքերում. ԲԲԾ շինվերանորոգման և ԵԱ համար ազգային ծրագիր և գործողությունների պլան
Միջոցառման ինդեքսը	II.11
Նկարագրություն	

	ԷՐԱՄ-ի իրականացման արագությունը կախված կինի ոլորտի պատրաստվածությունից, շահառության կարողությունների ստեղծումից և շուկայական պայմաններից	
	Միջոցառումն առաջարկում է << կառավարությանը, դոնորների և ՄՖՀ հետ համատեղ, նախագծել գոյություն ունեցող բնակելի շենքերի շինվերանորոգման համապարփակ գործողությունների պլանը մինչև 2020թ. Վերջը և այդ պլանի իրականացումը: Պլանը, հիմնականում, կենտրոնանում է բազմաբնակարան բնակելի շենքերի և շենքի պատող կոնսուլտունցիաների՝ եղանակային պայմանների նկատմամբ կայուն դարձնելու վրա: Այս միջոցառումը տրամադրում է էներգետիկ հավաստագիր ԷԱ բարձրացման նպատակով կատարված արդիականցումից առաջ և հետո:	
	Թիրախային վերջնական սպառումը	Գոյություն ունեցող բնակելի շենքեր, տարածքի ջեռուցում
	Թիրախային խումբը	SUU-եր, բնակչությունի պահպանման մասնավոր ընկերություններ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
Տեղականացման վերաբերյալ	Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը	Բազմայա գործողությունների պլանի պատրաստում, մինչև 2020թ. բնակելի շենքերի արդիականացման պլան, գործնթացի ամփոփում առևտրային բանկերի միջոցով կրկնօրինակման համար
	Բյուջեն և ֆինանսավորման աղբյուրը	25,000,000 ԱՄՆ դոլար ՄՖՀ-եր
	Իրականացնող մարմինը	Դոնորներ, ՄՖՀ-եր/SՖՀ-եր, ՄՀ, SUU-եր, ESCO-եր, ՔՆ
	Վերահսկող մարմինը	ՔՆ
Էներգախնայության վերաբերյալ	Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը	«Ներքսից-վերև» ազգային համակարգ
	2014թ. ձեռքբերված խնայողությունն ըստ I ԷԳԾ-ի (ՄԳհ)	
	Ակնկալվող էներգախնայողություն 2017թ.-ին (ՄԳհ)	65,000.00
	Ակնկալվող էներգախնայողություն 2018թ.-ին	65,000.00
	Ակնկալվող ազդեցություն էներգախնայողության վրա 2020թ.-ին	65,000.00
	Ենթադրություններ	Միջոցառումն առաջարկում է, որպեսզի Քաղաքաշինության նախարարությունը Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնի բազմաբնակարան բնակելի շենքերում (ԲԲԸ) էներգաարդյունավետության ազգային ծրագիր: Ծրագիրը պետք է ներառի՝ - իրավական-կարգավորող բարեփոխում տուն-սեփականատերերի ասոցիացիաների (SUU) վարկավորման խոչընդուները վերացնելու համար - կարողությունների զարգացում և ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում նախապատրաստելու համար SUU-երին, SՖՀ-երին և մասնավոր հատվածին՝ ԲԲԸ-երում էներգախնայողության հնարավորությունները արդյունավետորեն կիրառելու ուղղությամբ
	Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	Բազմապատկման էֆեկտին հասնելու և սեփական շենքերն ու բնակարանները արադիականացնելու գործում սեփականատերերի հետաքրքրությունը մեծացնելու համար բոլորին շահերից է բխում արդյունավետորեն ցուց տալ ավարտված ծրագրերը և դրանց տվյալն օգտագործելու համար տնտեսություններին: Սույն միջոցառման ներքո այն գործողությունները, որոնք կապված են շենքի վերականգնման

		հետ, մասամբ համընկնում են էներգաարդյունավետության քաղաքականության իրավական կանոնակարգող ջանքերի և ՀՖՀ ջանքերի հետ: Մրանք ջերմային արդիականացման համայիր միջոցառումներ են, որոնք կազմում են համապարփակ ծրագրի մասը:
--	--	--


Էներգախնայող միջոցառման անվանումը	Էներգասպառող կենցաղային սարքերի էներգաարդյունավետության պիտակավորում
Միջոցառման ինդեքսը	II.12
Նկարություններում նկարագրված նկարագրություն	<p>Կատեգորիան Տեղեկատվություն և պարտադիր տեղեկատվության միջոցառում</p> <p>Ժամկետը Սկիզբ՝ 2008թ. Ավարտ՝ 2012թ.-ի վերջ</p> <p>Միջոցառումը շարունակվում է կանխատեսվող որոշակի փոփոխություններով, լրացումներով և բարելավումներով:</p> <p>Նպատակը/հակիրճ նկարագիրը</p> <p>Հիմք ընդունելով ԵՀ հրահանգների դրույթները պիտակավորման պահանջների սահմանման համար Հայաստանում էներգասպառող կենցաղային սարքերի էներգաարդյունավետության պիտակավորման համակարգի ներդրման լավագույն մոտեցումը գտնելու համար ՄԱՀԾ/ԳԷՀ ծրագիրը 2010թ. իրականացրել է ուսումնասիրություն: Այս ուսումնասիրության արդյունքում մշակվել է կառավարության որոշման նախագիծ և էներգետիկ պիտակավորման կանոնակարգ: Քանի որ Հայաստանում պիտակավորման կանոնակարգն առաջին անգամ էր կիրառվում, առաջարկվեց փոփոխային մոտեցում, որտեղ առաջին փուլում միայն սահմանափակ քանակի կենցաղային սարքեր էին ենթակա պիտակավորման: Պատրաստված նյութերը պետք է ներդաշնակեցվեն Եվրասիական տնտեսական միության պահանջներին, պետք է նախագծվեն և մեկնարկեն պիտակավորման տարածման քարոզարշավներ:</p> <p>Պիտակավորման ենթակա կենցաղային սարքերի ցանկը հետո աստիճանաբար կմեծանա: Այս նպատակով թարգմանվել և ընդունվել են ընտրված էներգասպառող կենցաղային սարքերի էներգախնայողության փորձարկման միջազգային և Եվրոպական համապատասխան ստանդարտները (ՄԵՄ):</p> <p>ՄԱՀԾ/ԳԷՀ պատրաստել է կառավարության որոշման նախագիծ և էներգետիկ պիտակավորման կանոնակարգ, որոնք ներկայացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն հաստատման համար: Հաստատումը սպասվում էր 2013թ.-ին, բայց մինչ այժմ չի հաստատվել:</p> <p>Թիրախային վերջնական սպառում</p> <p>Գոյություն ունեցող բնակելի շենքեր, կենցաղային սարքերի փոխարինում</p> <p>Թիրախային խումբը</p> <p>Սեփականատերեր, վարձակալներ</p> <p>Տարածաշրջանային կիրառումը</p> <p>Ազգային</p>
Տեղեկատվություններում նկարագրված նկարագրություն	<p>Միջոցառումը հիմնավորող էներգախնայող գործողությունների ցանկն ու նկարագիրը</p> <p>Բարձրացված իրագեկվածություն և, հետևաբար, վերջնական սպառողի փոփոխված վարվեցողություն:</p> <p>Բյուջեը</p> <p>5,000,000 ԱՄՆ դոլար</p> <p>Ֆինանսավորման աղբյուրը</p> <p>Պետք է որոշվի</p> <p>Իրականացնող մարմինը</p> <p>ԷԱԲԴՆ, էներգասպառող կենցաղային սարքերի արտադրողներ և ներմուծողներ (բաշխողներ) մատակարարներ և տնային տնտեսություններ</p>

	Վերահսկող մարմինը	ԷԱԲՊՆ
Էնթրայնմանպողություն	Ստացված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդը	Այս միջոցառման ազդեցությունը մոնիթորինգի ենթարկելու համար անհրաժեշտ է ապահովել Եվրահանձնաժողովի կողմից առաջարկվող ՎՆ մեթոդի կիրառումը:
	Ակնկալվող էներգախնայողությունը 2017թ.-ին (ՄԳհ)	176,704
	Ակնկալվող էներգախնայողությունը 2018թ.-ին (ՄԳհ)	209,369
	Ակնկալվող ազդեցությունը էներգախնայողության վրա 2020թ.-ին	409,635
	Ենթադրություններ	Այս միջոցառման իրականացմանը հետևելը և նույնիսկ ՎՆ մեթոդով գնահատումը դժվարացնել է շուկայում գտնվող էներգասպառող կենցաղային սարքերի թվի, այդ սարքավորումների գնման թվի և էներգաարդյունավետության տեսանկյունից դասային պատկանելության վերաբերյալ տեղեկատվության բացակայութան պատճառով:
	Մասնակի համընկնումներ, բազմապատկման էֆեկտ, գործակցում	Սա հորիզոնական միջոցառում է:

4.2 Հանրային շենքերն ու ծառայությունները

4.2.1 Հանրային շենքերը

Դպրոցները, համալսարանները, քոլեջները, մանկապարտեզները, բուժ. հաստատությունները և մարզական կառույցները կազմում են հանրային բոլոր կառույցների 92%: Հանրային շենքերի ավելի քան 40%-ը տեղակայված են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում:



Գծապատկեր 29. Հայաստանում հանրային շենքերի թիվն ու մակերեսը, 2013

Աղբյուրը՝ ԱՎԾ և հեղինակների հաշվարկները, որոնք հիմնված են միջին չափի շենքի վրա այն դեպքերի համար, երբ վիճակագրությունը բացակայում էր:

Հանրային շենքերի մեծ մասը գտնվում է պետության հովանու, վերահսկողության և անմիջական ֆինանսավորման ներքո: << քաղաքաշինության նախարարությունը բնակարանային շինարարության և քաղաքաշինության ոլորտում առաջատար պետական գործակալությունն է, մինչդեռ մյուս ճյուղային նախարարությունները սահմանված կարգով կառավարում կամ վերահսկում են դրանց պահպանման և վերանորոգման աշխատանքների: Հանրային շենքերի մեծ մասը շատ ցածր էներգարդյունավետություն ունի, որը հիմնականում կապված է շենքի տարիքի, արտաքին երեսպատման վատ վիճակի, ինչպես նաև էներգետիկ պատշաճ կառավարման պակասի հետ: Միջին հաշվով այսպիսի շենքերն ունեն էներգախնայողության 10-70% ներուժ: Հանրային կառույցների մեծամասնության էներգետիկ ծախսերը կազմում են ընթացիկ ծախսերի 5-20%-ը, մինչդեռ դրանք դեռևս մատակարարում են միջին հարմարավետության մակարդակի ընդամենը մոտ 40%-ը: Հանրային հաստատությունների ներկայիս մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սխեման (հիվանդանոցում՝ մեկ հիվանդի հաշվով, կրթական հաստատություններում՝ մեկ ուսանողի հաշվով) հնարավորություն ստեղծեց փոխառու միջոցներն օգտագործել էներգաարդյունավետ արդիականացման, իսկ ներդումային գումարները փակել ստացված խնայողություններից: Այդպիսի էներգախնայողության պայմանագրեր հաջողությամբ իրականացվել են Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության (<ՎԵԷ<) հիմնադրամի կողմից: 2012թ. << կառավարությունը ստորագրեց ԷԱ ծրագիր (10.7 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ), որը ֆինանսավորվում էր Համաշխարհային բանկի կողմից և իրականացվում՝ <ՎԵԷ< հիմնադրամի կողմից: Ծրագիրն ուղղված էր հանրային կառույցներում էներգախնայողության միջոցառումների իրականացմանը, որոնց նպատակն էր նվազեցնել սոցիալական և հանրային այլ կառույցների կողմից էներգասպառման մակարդակը:

Էներգաարդյունավետությունը թույլ կտա հանրային սահմանափակ բյուջեիցոայս ոլորտի համար ամարիափակկազատել: Առանց էներգաարդյունավետության, էներգիայի գների ակնկալվող աճը

կմեծացնի պահանջարկը հանրային բյուջեի հատկացումների նկատմամբ:

Ազգային էներգետիկ անվտանգության համընդհանուր շրջանակներում և էներգիայի աճող գների պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով հանրային շենքերում սակավ բյուջետային ռեսուրսները, էներգաարդյունավետությունը երկրի էներգիայի ներկրումից կախվածության նվազեցման, ինչպես նաև հանրային բյուջեում էներգիայի ծախսերի կրճատման համար ամենակարծ, ամենաէժան ճանապարհն է, արդ միաժամանակ մեղմում է կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը:

Վերջապես, արձագանքելով այս ոլորտի խնդիրներին՝ հնարավոր կլիներ ապահովել շուկայի անհրաժեշտ վերակազմակերպումը, որն անուղղակի ազդեցություն կունենա նաև մասնավոր շենքերի վրա (բնակելի և առևտրային շենքեր):

Ինչ վերաբերում է՝ շենքերի վերակառուցման ոլորտում էներգաարդյունավետությանը, ապա չնայած դրանց բարձր արժեքին (նոր շինարարության համեմատությամբ), այս ներդրումները էներգիայի աճող գները դարձրել են ծախսարդյունավետ: Հայաստանում ԳԷՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը, որն ուղղված է էներգաարդյունավետության ապահովմանը (ՎԵՀՀ-ի «Էներգաարդյունավետության ծրագիր» և «Շենքերում էներգաարդյունավետության բարելավումը» ՄԱԶԾ- ԳԷՀ ծրագիր) ցույց են տվել, որ էներգաարդյունավետության միջոցառումները ներդրումները կարող են ունենալ դրական գուտ ներկա արժեքով և 7 տարվա պարզ ետքնման ժամկետ, քանի որ թե՛ բնակելի, և թե՛ հանրային շենքերում, հնարավոր է խնայել էլակետային էներգասպառման ավելի քան 50%-ը: Հանրային շենքերի էներգաարդյունավետ արդիականացման գործընթացում ՎԵՀՀ փորձը նախ և առաջ ցույց տվեց, որ այս շենքերը գտնվում են պահպանման և վերանորոգման այնպիսի անմիջիքար վիճակում, որ դրանց վերականգնման համար անհրաժեշտ են զգալի ներդրումներ: ՎԵՀՀ գնահատականներով յուրաքանչյուր քառ.մ համար շուրջ \$17-20 ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ ներդրումներով (սա հավասարագոր է ամբողջ շենքի վերականգնման դեպքում քառ. մետրի հաշվով միջինը ծախսվող \$200 գումարի շուրջ 10%-ին) ջեռուցման համար ծախսվող բնական գազի սպառումը կարող է նվազեցվել կրկնակի անգամ, հետևաբար շուրջ 50%-ով կնվազեն նաև ջերմոցային գազերի արտանետումները: Ջեռուցման էներգիայի ելակետային պահանջարկը 120-125կՎտժ/մ²/տարի հաշվարկով ապահովում է միայն 40-50% հարմարավետության մակարդակը: ԷԱ միջոցներով հնարավոր դարձավ առկա բյուջետային սահմանափակումների պայմաններում բարելավել հարմարավետությունը մինչև ընդունելի մակարդակ: Էներգաարդյունավետ ջեռուցման համակարգի տեղադրումից հետո՝ լրացուցիչ ԷԱ բարձրացման հնարավոր է հասնել էներգաարդյունավետության բարելավման համապարփակ փաթեթի շնորհիվ, ներառյալ պատերի ջերմամեկուսացումը, դոների և պատուհանների փոխարինումը, պատուհանների փոխարինումը պատերով (լուսաթափանց մակերեսների փոքրացումը) և տանիքի ջերմամեկուսացումը: ՎԵՀՀ վարկային գիծն ունի ընտրության շատ խիստ չափանիշներ և կարող է ֆինանսավորել միայն էներգախնայողությանն ուղղված այն միջոցառումները, որոնք ունեն գրավիչ տնտեսական ցուցանիշներ (դրական գուտ առկա արժեքը), և ընդունում են դիմումներ միայն հանրային շենքերից, որտեղ հարմարավետության մակարդակը 50%-ից բարձր է: Արդյունքում, էներգաարդյունավետության միջոցառումները, որոնք կարող են հանգեցնել ջերմոցային գազերի արտանետումների էական մեղմման, որոնք, սակայն, ունեն ավելի ցածր

ծախսարդյունավետություն, կամ առաջարկվում է ճնշված պահանջարկի պայմաններում, չեն կարող դիտարկվել ֆինանսավորման համար:

Էներգաադյունավետ շինարարության և վերականգնման համար պահանջարկն ավելի մեծ է, քան Հայաստանում ներկայում առկա ֆոնդերը: Այս նպատակին հասնելու համար նոր շինարարության ֆինանսավորման չափն ավելացնելու համար այս բաղադրիչը պետք է գրավի (միջազգային) արտոնյալ ֆինանսներ (ներառյալ ՊՄԳ սխեման, որն, ըստ 2014թ. գործողությունների պլանի, ՔՆ ուշադրության կենտրոնում է) նաև հանրային շենքերի համար, որոնք պետք է վերականգնվեն, ներառելով էներգաարդյունավետության պահանջները:

Չնայած հանրային շենքերում էներգախնայողության 58% ցուցանիշին, ինչպես նաև համապատասխան կլիմայի փոփոխության մեղմման ներուժին, հանրային և սոցիալական բնակարանների շենքերի վերանորոգման համար տարեկան կատարվում է միջին հաշվով \$200 միլիոն ներդրում, որը չի ընդգրկում էներգաարդյունավետությունը: Սա պայմանավորված է իրավական բացերով և կիրարկման ցածր մակարդակով, էներգաարդյունավետության օգուտների վերաբերյալ իրազեկման պակասով, փոփոխություն իրականացնելու սահմանափակ տեխնիկական և ինստիտուցիոնալ ներուժով, խթանների պակասով և այլն: ՄԱԶԾ-ի կողմից վերջերս մշակված ազգային համատեքստին համահունչ մեղմման միջոցառումների (ԱՀՀՄՄ, կամ NAMA) ծրագիրը, որը նպատակ ունի կլիմայական մեխանիզմներից ֆինանսավորում գտնել, առաջարկում է հայթիայթել դրամաշնորհային ռեսուրսներ, որոնք հանրային շենքերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների կամ հանրային շենքերի և սոցիալական բնակարանների նոր շինարարական հսկայական աշխատանքների ժամանակ կիոգան էներգաարդյունավետության լրացուցիչ ծախսերը: NAMA ծրագիրը համահունչ է այս ոլորտում պետական քաղաքականությանը: Ինչպես գեկուցվում է կարգավորման վերաբերյալ բաժնում, ՀՀ կառավարության թիվ #1504 արձանագրային որոշումը «Պետֆինանսավորման ներքո կառուցապատման (վերակառուցման, վերանորոգման) տարածքներում էներգաարդյունավետության և էներգախնայողության բարելավման միջոցառումների ձեռնարկման վերաբերյալ» սահմանում է քաղաքաշինության ոլորտում խոշոր հանրային ներդրումներում էներգաարդյունավետության ներառման քաղաքական պահանջը:

Աղյուսակ 27. Էներգախնայողության ներուժը հանրային շենքերում

Հայաստանում հանրային շենքերի ընդհանուր մակերեսը (m^2)	13,787,397
Հանրային շենքերում ընդհանուր էներգասպառումը (ՄՎտժ /տարեկան)*	1,764,787
Տարեկան էներգախնայողության ներուժը (ՄՎտժ /տարեկան)*	896,181
* - ՀՎԵՀՀ փորձի հիման վրա 56 ծրագրերով հանդերձ	
Էներգիայի միջին սպառումը նախքան ԷԱ-ն հանրային շենքերում	128 կՎտժ.մ/տ
Էներգիայի միջին սպառումը ԷԱ-ից հետո	63 կՎտժ.մ/տ
Էներգախնայողության միջին ցուցանիշը	51%
Ներդրման պահանջարկը (<< դրամ) միջինը << դրամ 8400/ m^2 տիպային էԿՀ-ների համար	115,814,134,238
Ներդրման պահանջը (ԱՄՆ դոլար) -փոխարժեքը՝ 473 << դրամ	\$244,850,178
Ներկայումս առկա ընդհանուր ֆինանսավորումը (ԳԷՀ և ԳՀԲ)	\$ 27,270,296

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն

Չնայած վերոնշյալ էներգախնայողության մեծ ներուժին, որն առկա է հանրային շենքերում, ՀՎԵՀՀ-ի կողմից առաջարկվող էներգախնայողության պայմանագրերի գործառնական սխեման ունի ընտրության խիստ չափանիշներ և կարող է ապահովել էներգիայի ծախսերի կրճատմամբ հետաքրքրված բոլոր շահագոգի հանրային/մունիցիպալ հաստատությունների միայն մի մասին: Ներկայիս ընտրության չափանիշներով մերժվել է առնվազն 200 դիմում: Հաշվի առնելով ներկայիս վարկային սխեմայի սահմանափակումները, կարևոր է, որպեսզի այդ հանրային 200 հաստատություններում էներգաարդյունավետության ներդրման կարիքները հոգալու համար մշակվի այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմ: ԱՎԾ-ի տվյալների բազայի համաձայն, Հայաստանի հանրային շենքերի վերաբերյալ տեղեկատվությունից պարզ է դառնում, որ հանրային շենքերի միջին չափը $3292m^2$ է: Ընդհանուր առմամբ, էներգաարդյունավետ արդիականացման չքավարարված պահանջարկն այս հատկանշական $658,000m^2$ համար կազմում է \$11,851,806 ԱՄՆ դոլար և ունի տարեկան 41.5 ԳՎտժ էներգախնայողության ներուժ:

Սա հատկապես կարևոր է այն առումով, որ ՀՎԵՀՀ-ին դիմելու գործընթացը վկայում է քաղաքական կամքի և այս հաստատություններում էներգաարդյունավետության բարելավման, վարկի մարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու առումով և նմանատիպ հարցերում դեկավարության պատրաստակամության մասին: Այս դրական միտմանը նպաստելու համար՝ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանության համագործակցության (E5P) առաքելությունը դրամաշնորհային համաֆինանսավորմամբ հանրային շենքերի ԷԱ-ն վարկային գիծը լրացնելու համար առաջարկվել է ՀՎԵՀՀ-ի գործող վարկային խրագրին այլընտրանքային վարկավորման սխեմա: Առաջարկվող այլընտրանքային պայմանները հետևյալն են:

- Հարմարավետության մակարդակ $> 40\%$ (ներկայիս «> 50%»-ի փոխարեն, քանի որ ուսումնասիրությունները ցույց տվին, որ միջին հանրային շենքն ունի 35% հարմարավետության մակարդակ, ինչը մեծ թվով կատարելապես լավ ծրագրեր դարձնում է ոչ պիտանի)
- Գնահատված էներգախնայողությունները $> 20\%$
- ԶԱԱ > 0

- Պարզ ետգնում < 10 տարի
- Ներդրումներ > \$ 50 000

Հանրային և մունիցիպալ շենքերի էներգաարդյունավետ արդիականացման համար գործող ՀՎԷՀՀ վարկային գծի ընդլայնումը էներգետիկ ցուցանիշների պայմանագրային սխեմայով։ Առաջարկվում է ընդլայնել վարկային գիծը՝ շուրջ 200 ծրագիր ներառելու համար (յուրաքանչյուր ծրագիր, սովորաբար, հոգ է տանում մունիցիպալ/հանրային մեկ շենքի կամ փողոցային լուսավորության համակարգի ֆինանսավորման համար, որոնք դեռևս չեն համապատասխանել ԳՀՀ-ով ֆինանսավորվող վարկային գծի ընտրության չափանիշներին):

Ընդգրկված տիպային միջոցառումներից են՝

1. պատերի և տանիքների ջերմամեկուսացումը
2. պատուհանների և դռների փոխարինումը
3. փողոցային լուսավորության համակարգերի փոփոխությունը
4. Զեռուցման համակարգի փոխարինումը/թարմացումը
5. Պատուհանների փոխարինումը պատերով

4.2.2 Փողոցային լուսավորություն

Հայաստանի քաղաքապետարանների քաղաքային լուսավորության ծախսերը հասնում են **տարեկան ավելի քան 5 միլիոն դոլարի** (հոսանքի ծախսեր և սպասարկում): Լուսավորության ոլորտում Երևանն ունի էներգասպառման ամենաբարձր մակարդակն ու էներգախնայողության ներուժը: Այն կազմում է Երկրում քաղաքային լուսավորության էներգասպառման **շուրջ 80 %**:²⁹

²⁹ Աղյուրը: http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/green-urban-lighting.html

Առյուսակ 28. Մունիցիպալ փողոցային լուսավորության համակարգերը <<-ում

Ցուցանիշները	Երևան	Այլ քաղաքներ
Լուսավորված օբյեկտների թիվը	1235	981
Փողոցային լուսերի թիվը և տեսակը	54880	7450
Բարձր ճնշման նավորիումայու 150Վլ/250Վլ	50785	7450
Մերկուրիական (250Վլ)	2000	3734
Մերկուրիական (400Վլ)	700	2740
ԿՅՀ (կոմպակտ ցերեկային լամպեր)	0	110
ԼԴՀ (լուսարձակող դիոդային LED լամպեր) և հայրենին	229	0
Փողոցային լուսավորության համակարգի ընդհանուր տեղակայված հզորությունը, ՄՎ	15	4
2011թ. Էլեկտրա էներգասպառումը՝ մլն կՎտժ / տարի	31,3	8,7
2011թ. Էլեկտրաէներգիայի տարեկան ծախսերը, մլն ԱՄՆ դոլար/տարեկան	1,99	0,6
Փողոցային լուսավորության շահագործման միջին օրական տևողությունը՝ ժամ	8	6,44
Տարեկան ջերմոցային գազերի արտանետումները, փողոցային լուսավորության համակարգերը, տոննա CO₂ / տարեկան	12500	3500

Աղյուրը՝ ՄԱՀԾ-ԳԷՀ

Մի քանի ծրագրեր, որոնք ֆինանսավորել են նման ծրագրեր, անդրադարձել են մունիցիպալ փողոցային լուսավորության էներգախնայողության բարելավմանը.

- ՀՎՀԷՀ –ն ներդրումների և էներգախնայողության պայմանագրերի միջոցով (ԷԽՊ) ESCO-ների հետ պայմանագրային համագործակցությամբ, թաղապետարաններին տրամադրել է 10 վարկ՝ ավելի քան \$212,000 միլիոն դոլար: Սահմանված 34-58% էներգախնայողության ցուցանիշով Վայրի և Դիլիջանի փողոցային լուսավորությունն իրականացվեց 368 նոր լուսային աղյուրների միջոցով:
- ՄԱՀԾ-ԳԷՀ քաղաքային կանաչ լուսավորման ծրագրով տեղադրվեցին շուրջ 500 ԼԴՀ լուսատուներ Իսակովի պողոտայում, Թաիրովի փողոցում, ինչպես նաև Երևանի կենդանաբանական այգում, իսկ փողոցային լուսավորության փորձնական ծրագրի շրջանակներում՝ Ալավերդի քաղաքում: Այս նախաձեռնությունը, որն իրականացվեց Բնապահպանության նախարարության և Երևանի քաղաքապետարանի համագործակցությամբ, ապահովում է 63% էներգախնայողություն, ծախսերի կրճատում՝ 45,000 ԱՄՆ դոլարով, ինչպես նաև ածխածնի արտանետումների կրճատում՝ տարեկան 220 տոննա: Ծրագիրը մեկնարկել է 2013թ. և կշարունակվի մինչև 2017 թ.:³⁰
- 2015թ. ՎՃԵԲ-ը << կառավարության հետ ստորագրեց Երևանի մունիցիպալ փողոցային լուսավորության 6 միլիոն եվրո արժողությամբ վարկը 28 փորձնական փողոցների համար, որից 2 միլիոն եվրոն կֆինանսավորվի E5P դրամաշնորհային համակարգից:

³⁰ Աղյուրը՝ <http://www.am.undp.org/content/armenia/en/home/presscenter/pressreleases/2015/03/27/almost-500-new-energy-efficient-leds-installed-along-isakov-and-tairov-street/> and data provided by Project team.

Շենքերի ոլորտին վերաբերող բոլոր անհատական միջոցառումները ներկայացվել են կամ կանոնակարգող/խաչաձև բաժնում, կամ վերոհիշյալ ֆինանսավորման բաժնում: Հաշվի առնելով Էներգաարդյունավետության ներդրումների ընդհանուր առևտրային կենսունակությունը, ԷԳԾ-ի կողմից փողոցային լուսավորության ոլորտում ոչ մի նոր միջոցառում չի առաջարկվում: Հանրային շենքերի հետ համատեղ, փողոցային լուսավորության ծրագրեր ֆինանսավորում է նաև ՎԵԷՀ-ի Էներգաարդյունավետության վարկային գիծը և, տեղական իշխանությունների նախաձեռնության և պատրաստակամության դեպքում, առկա վարկային ֆինանսավորումը կարող է հոգալ նաև հանրային փողոցային լուսավորության համակարգերում Էներգաարդյունավետության բարձրացման կարիքները: Այդ միջոցառումները խաչաձև կամ կարգավորում են նաև Քաղաքապետերի դաշնագրի նախաձեռնությունների հետ:

Ստորև ներկայացված աղյուսակը տալիս է հանրային շենքերում և փողոցային լուսավորության համար նկարագրված բոլոր միջոցառումների ամփոփ ցուցանիշներն ու ակնկալվող խնայողությունները, որին հաջորդում են ԷԱ բարձրացման անհատական միջոցառումների աղյուսակները:


Աղյուսակ 29.Հանրային շենքերում և փողոցային լուսավորության ԵԱ բարելավման միջոցառումների ամփոփ նկարագիրը

No	Էներգախնայողության միջոցառման անվանումը	Թիրախային վերջնական օգտագործումը	Տևողությունը	Ձեռքբերված էներգախնայողությունը տարեկան (ՄՎտժ)				Կարգավիճակը կապված առաջին ԵԳԾ-ի հետ
				2014	2017	2018	2020	
III.1.	Հանրային շենքերի ԵԱ: Էներգախնայողության միջոցառումների իրականացում մունիցիալ և սոցիալական հանրային վայրերում (ՀՎԵՀ/ԳԷՀ/ՀԲ)	Սոցիալական և հանրային այլ տարածքների կողմից էներգասպառման մակարդակը նվազեցնելու համար հանրային օբյեկտներում իրականացնել էներգախնայողության միջոցառումներ ESCO-ի մասնակցությամբ:	Սկիզբ՝ 2012թ. Ավարտ՝ 2017թ.	569,183	983,548	1,180,257	1,699,570	Մասնակի ավարտված
III.2.a	Հանրային շենքերի ԵԱ, համաֆինանսավորված դրամաշնորհ: Էներգախնայողության միջոցառումների իրականացում մունիցիալ և սոցիալական հանրային վայրերում (ԵՏԲ/ՀՎԵՀ/ԳԷՀ/ՀԲ)	Սոցիալական և այլ հանրային օբյեկտներում, որոնք ունեն օպտիմալից ցածր էներգետիկ հարմարավետության մակարդակ, Էներգախնայողության միջոցառումներ իրականացնելու, հանրային տարածքներում էներգասպառման մակարդակը նվազեցնելու համար ընդլայնել ներկայիս ՀՎԵՀ վարկավորման կառույցը :	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ՝ 2020թ.	new measure	6,742	10,113	16,855	Նոր միջոցառում
III.2.	NAMA (ազգային համատեքստին համահունչ մեջմման միջոցառումներ) ծրագիր, ուղղված էներգապարունական հանրային վայրերում և սոցիալական բնակարաններում	Հանրային շենքերի և սոցիալական բնակարանների նոր շինարարություն և կասիտավ վերանորոգում, առկա շենքերի նշանակալից վերակառուցում, ենթաօրենսդրական ակտեր շենքերում ԵԱ-ի համար	Սկիզբ՝ 2016թ. Ավարտ՝ 2020 թ. (2արունակական)	new measure	133,073	170,415	244,660	Մասնակի ավարտված
III.3.	Ֆինանսավորում և հանրային գնումներ ԵԱ-ի համար: ՄԱԶԾ-ի քաղաքային կանաչ լուսավորության ծրագիր: Հայաստանի քաղաքներում ՁԳ արտանետումների կրճատում մունիցիալ լուսավորության էներգապարունական վետության աճի միջոցով:	Մոնիցիալ լուսավորության համար էլեկտրաէներգիայի օգտագործում Հայաստանի քաղաքներում	Սկիզբ՝ 2013 թ. Ավարտ՝ 2017 թ.	new measure	1,200	1,200	1,200	Մասնակի ավարտված
III.4.	Դպրոցների ամրապնդում Էներգապարունական վետության – ինտեգրմամբ ԳՀԲ-ի (KfW)՝ Գերմանա-Հայկական Հիմնադրամի միջոցով:	Հանրային և ծառայությունների շենքեր (դպրոցներ)	Սկիզբ՝ 2016 թ. Ավարտ 2020 թ.	none, new measure	464,000	464,000	464,000	Սպասվում է

III.5.	ՎՉԵԲ-ի վարկային ֆինանսավորմամբ Երևանի փողոցային լուսավորություն	Մունիցիպալ լուսավորության էլեկտրաէներգիայի օգտագործում Երևանի 49 փողոցում	Ակիզբը՝ 2015 թ. Ավարտը՝ 2017 թ.	new measure	2,554	2,554	2,554	Մեկնարկը սպասվում է
III.6.	ԱՍՆ Մ2Գ-ի մաքուր էներգիայի և ջրի ծրագիր ԷԱ-ն և ՎԵ-ի լուծումների համար համայնքային էներգիայի և ջրօգտագործման համար	Գյուղական համայնքներ, գյուղատնտեսական ջրօգտագործողներ, համայնքային կազմակերպություններ, թաղապետարաններ	Ակիզբը՝ 2012 թ.	221	221	221	221	ավարտված
III.7	Երևան - Զուր ընկերության վերականգնում և արդիականացում	Քաղաքային ջրամատակարարում և ջրահեռացում	Ակիզբը՝ 2015թ. Ավարտը՝ 2017թ.	71,160	75,400	75,400	75,400	Մասնակի ավարտված
Խնայողությունների հանրագումարը՝			ՄՎտժ	640,564	1,666,739	1,904,161	2,504,461	
Խնայողությունների հանրագումարը՝			ԿՏՆՀ	55	143	164	215	

4.3 Գյուղատնտեսության ոլորտ


Վերջին երկու տասնամյակների ընթացքում էներգիայի օգտագործումը գյուղատնտեսության ոլորտում աճել է: Չնայած 2011թ.-ից ի վեր այն ուղեկցվել է համախառն գյուղատնտեսական արտադրանքի (<ԳԱ) աճով, էներգիայի օգտագործումն աճել է զգալիորեն ավելի արագ ընթացքով, քան ՀԳԱ-ն: Արդյունքում, գյուղատնտեսական արտադրանքի էներգատարրությունն աճել է, արտադրանքի մեկ միավորի հաշվով հանգեցնելով էներգիայի գուտ օգտագործման առավել բարձր ցուցանիշների: Սա մեծապես պայմանավորված է անարդյունավետ մեքենաների (օրինակ, պոմպերի, գյուղատնտեսական տեխնիկայի) և ոռոգման ջրի ոչ ռացիոնալ օգտագործմամբ (օրինակ, գերոռողությում), ինչպես նաև, հիմնականում, ծեռքի աշխատանքով գործելակերպից դեպի առավել տեխնոլոգիական և մեքենայացված գյուղատնտեսական պրակտիկայի անցումով: << Գյուղատնտեսության նախարարության տվյալների համաձայն՝ գործող գյուղատնտեսական տեխնիկայի 93%-ը արտադրվել է Խորհրդային Միության ժամանակաշրջանում և տեխնոլոգիապես մաշված է: Ստորև Գծապատկեր 30-ը ցույց է տալիս գյուղատնտեսական էներգասպառման այս միտումները և ՀԳԱ-ն՝ 2010-2012թթ. ընթացքում:



Գծապատկեր 30. Գյուղատնտեսական համախառն արտադրանքի էներգատարրությունը, 2010-2012թթ.

2010թ.-ից ի վեր գյուղատնտեսության ոլորտում ընդհանուր էներգասպառումը տատանվել է 6.6%-ից մինչև 8.5% (տես՝ Գծապատկեր 31), սակայն 2011թ.-ից ի վեր այն կայուն կերպով աճել է: Այս ոլորտում սպառված էներգիան, հիմնականում, բնական գազի և շարժիչային վառելիքի տեսքով է, կամ ոռոգման համակարգերում գործարկված պոմպերի սպառած

Էլեկտրաէներգիայով: Գյուղատնտեսական ոլորտում էլեկտրաէներգիայի վերջնասպառումը կազմում է ընդհանուր վերջնական էլեկտրաէներգիայի միայն 2%-ը:



Գծապատկեր 31. Գյուղատնտեսության ոլորտում էներգասպառման դինամիկան (2010-2012թթ. էներգասպառումը՝ ՑԱԶՌԿՆ էներգետիկ հաշվեկշռող, 2014թ. համար՝ հեղինակների սեփական հաշվարկները՝ հիմնված ՀԾԿՀ-ի և ԱՎԾ-ի տվյալների վրա)

Հայաստանի գյուղատնտեսության քաղաքականությունը պայմանավորված է 2010-2020թթ. (2010թ. հրատարակված) Կայուն գյուղական և գյուղատնտեսական զարգացման պետական ռազմավարությամբ: Այդ ռազմավարության համաձայն նախանշվում է գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի հիմնական քաղաքականությունը, ճյուղային գերակայությունները և ոլորտի առավել բարձր կայունության համար բացահայտվում են մասնագիտացման նախընտրած ոլորտները, ինչպես նաև սոցիալական և տնտեսական չափորոշիչները: Ռազմավարությունը սահմանում է հետևյալ թիրախները, որոնք ազդում են գյուղատնտեսական էներգիայի օգտագործման վրա.

- 2020թ. գյուղատնտեսական արտադրանքի ծավալը 64%-ով կգերազանցի 2007-2009թթ. միջին մակարդակը
- Մշակաբույսերի ընդհանուր տարածքը կմեծանա 39%-ով
- Կերային մշակաբույսերի տարածքը կմեծանա 58%-ով, բազմամյա բույսերինը՝ 38%-ով
- Անասնաբուծության ծավալը կավելանա (խոշոր կենդանիները 10.4%-ով, ոչխարներն ու այծերը՝ 62%-ով, խոզերը 45%-ով և ընտանի թռչունները՝ 6%-ով)
- Անասնաբուծության արդյունավետությունը կավելանա տոհմային անասնապահության, կերակրման և հողագործության պրակտիկայի միջոցով:

Ռազմավարությունը նաև նախատեսում է տնտեսությունների համախմբում և ագրարային կոպերատիվների զարգացում, վարկային համակարգի կատարելագործում, ոիսկի մեղմման միջոցառումների մշակում, օրգանական գյուղատնտեսության մշակում, կլիմայի

փոփոխության առումով խոցելիության նվազեցման ջանքեր և գյուղական համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների զարգացում:

Ինչպես արդեն նշվեց, գյուղատնտեսության ոլորտում էներգասպառման աճը մեծապես պայմանավորված է երել գյուղտեխնիկայի ծրագող շարժակազմով, ինչպես նաև ձեռքի աշխատանքով գործելակերպից դեպի մեքենայացված գյուղատնտեսական գործընթացների անցումով (նոր մեքենաների ավելացումը սկսվել է նույնիսկ նախքան իին շարժակազմի արդիականության անկումը): Ավելին՝ նշանակալից աճ է գրանցվել ջերմոցային տնտեսության ոլորտում, ինչպես նաև ռոռզման և խորքային հորերի ջրի աճող պահանջարկում՝ գյուղատնտեսական բերքի և ձկնաբուծարանների աճող պահանջարկը բավարարելու համար: Այսպիսով, գյուղատնտեսության ոլորտի ենթամիջոցառումները գտնվում են երկրորդ ԷԳԾ-ի գյուղատնտեսական բաժնի կիզակետում:

Այլուսակ 30. Հայաստանում գյուղատնտեսական մեքենասարքավորումների ներկայիս վիճակը


	Առկա միավոր	Սարքին վիճակում	Աշխատանքային մակարդակը
Տրակտորներ	15,025	11,862	78.9%
Բեռնատարներ	15,063	11,383	75.6%
-Բերքահավաք կոմբայն	1,356	1,007	74.3%
Տրակտոր -կցասայլ	6,130	5,337	87.1%
Տրակտոր՝ հնձող մեքենա	2,031	1,714	84.4%
Անասնակեր հնձող մեքենա	405	295	72.8%
Հացահատիկ մաքրող մեքենա	425	362	85.2%
Շարքերով ցանքս մեքենա	1,863	1,597	85.7%
Տրակտորի գութան	3,903	3,447	88.3%
Հողագործ մեքենա	2,279	1,926	84.5%
Քառակուսի հակեր սեղմիչ մեքենա	1,664	1,397	84.0%

Աղյուրը՝ ԱՎԾ³¹

Ջերմոցների ենթաղործը զգալիորեն աճել է՝ 2011թ. ընդամենը 5 հա-ից մինչև 2015թ.' 114 հա և ակնկալվում է այս աճի շարունակություն: Մինչև 2020թ. Հայաստանի ջերմոցային տնտեսամությունների ոլորտը նախատեսում է ունենալ առևտրային ջերմոցների 634 հա. արագ աճող ոլորտ՝ էներգիայի աճող պահանջարկով: Նույնիսկ առավել փոքր ջերմոցները, որոնք կառուցվել են 2010-2012թթ., մեկ հա-ի հաշվով սպառում են տարեկան ավելի քան 3.5 միլիոն մ³ բնական գազ: Այս ոլորտում բնական գազի սպառումը համարյա կրկնապատկեց 2010-2012թթ. (տես՝Գծապատկեր 32): Հաշվի առնելով Հայաստանում այս ոլորտի ակնկալվող ընդլայնումը և դրա էներգատարությունը, էներգաարդյունավետության

³¹ Նշում՝ Պետտեսչության դեկավար Վարդան Ղուշյանի հետ հարցագրույցի համաձայն, գործող գյուղատնտեսական մեքենաների 93%-ը արտադրվել է Խորհրդային Միության ժամանակ (1976-1991 ընթացքում) և բավականին իին են: Մասնաւում 7% (տրակտորների 885 տարրեր մոդելներ) ներմուծվել են, մեծապես ֆինանսավորվել ՄՖՀ-ների, դոնորների և ՀՀ կառավարության դրամաշնորհներից:

բարձրացումը հոյժ կարևոր է թե՛ գործող ջերմոցների, և թե՛ պլանավորված ջերմոցների նախագծման համար: Մասնավոր հատվածի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ նույնքան էներգիասպառման մակարդակի դեպքում ներկայիս ջերմոցների համար ժամանակակից դիզայնն ու մասշտաբի ազդեցությունը կարող է տաս անգամ ավելի արդյունքի հանգեցնել: Այսպիսով, եթե ջերմոցային տնտեսություններին տրամադրվի համապատասխան տեխնիկական աջակցություն և բարենպաստ ֆինանսավորում, գոյություն ունեցող ջերմոցների տեխնոլոգիական արդիականացումը, ինչպես նաև նոր ջերմոցների խելամիտ դիզայնը կարող են նշանակալիորեն նվազեցնել այս ոլորտի էներգաօգտագործման աճի տեմպը, ջերմոցային տնտեսությունների ոլորտին թույլ տալով ապահովել առևտրային առումով կենսունակ և ծախսարդյունավետ, կայուն աճ:



Գծապատկեր 32. Էներգասպառումը ջերմոցներում և ջերմոցների հեկտարները 2010–2020 թթ., կանխատեսումները՝ էներգաարդյունավետության դեպքում, և առանց էներգաարդյունավետության

(Աղյուրը՝ Հայկական բերքադրվության խթանման կենսորոն, ՓԲԸ, ՀայՄուսԳազ)

Մեկ այլ զարգացող ոլորտ է ձկնաբուծությունը՝ արհեստական պայմաններում ջրային կենսատեսակների աճեցումը ձկնաբուծարաններում: ՄԱԿ-ի³² Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուսումնասիրության համաձայն (ՊԳԿ) 2011թ. Հայաստանում ընդհանուր ձկնաբուծությունը կազմում էր 5,000–5,500 տոննա 233 ձկնային տնտեսությունից, որոնք գրաղեցնում են 2,720 հա տարածք: Այս ոլորտը ևս շատ արագ է աճում: Քանի որ կանոնակարգերն այժմ պահանջում են, որ ձկնային տնտեսությունները, հիմնականում, շրջանառեն խորքային հորերի ստորգետնյա ջրերը, որը նրանք հանում են ձկնաբուծության համար, ակնկալվում է, որ այս ոլորտում էլեկտրաէներգիայի կիրառումը զգալիորեն կավելանա: Այս պրակտիկայի էներգետիկ ազդեցությունը մեղմելու համար աճեցրած ձկների արտադրության տեխնոլոգիայի համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել էներգաարդյունավետության լուծումներ: Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի ուսումնասիրությունը 31.5 հա չափերով

³² Աղյուրը՝ ՊԳԿ ուսումնասիրություն: Առկա է <http://www.fao.org/docrep/014/i2103e/i2103e00.pdf>

գործող ձկնաբուծարաններից մեկում բացահայտեց Էներգետիկ ռեսուրսների արդյունավետության նշանակալից ներուժ: Պարզապես օդի սեղման և օդորակման տեխնոլոգիայի արդիականացմամբ տարեկան կարելի է խնայել շուրջ 200 ՄՎտժ էլեկտրականություն, այսինքն՝ 1 հա-ի համար Էներգախնայողության ներուժը կազմում է մոտ 6.4 ՄՎտժ/ժ/տարի: Սա վկայում է այդ ֆերմայում ձկնաբուծության Էներգիայի ծախսերի 17%-ով նվազեցման մասին: Ուշագրավ է, որ Էներգաարդյունավետության այդ միջոցառումները նաև բարելավում են կերակրման արդյունավետությունը և, ընդհանուր առմամբ, ձկնաբուծության արտադրողականությունը: Հաշվի առնելով Հայաստանում այս ոլորտի աճող կարևորությունը, ձկնաբուծարաններին տեխնիկական աջակցության և ֆինանսավորման մատչելիության ապահովումը պետք է առաջնահերթություն լինի:

Հաշվի առնելով մեծ թվով ձկնաբուծական ձեռնարկությունների ծավալները, ինչպես նաև պատրաստի սննդամթերք ստանալու համար հում ծկան հետագա մշակումն ու փաթեթավորումը, կարևոր է նշել, որ ձկնաբուծության ենթաոլորտում Էներգիայի լրացումները մասնակիորեն համընկնում են արդյունաբերական ոլորտի լրացումների հետ: Արդյունաբերական ոլորտի համար առաջարկվող գործողությունները, կապված ISO 50001 միջազգային ստանդարտի հետ, ռեսուրսային արդյունավետության և լավագույն հասանելի տեխնոլոգիաների մաքուր արտադրությունը համապատասխան է ձկնաբուծության ոլորտի համար և պետք է ներառվի ձկնաբուծարանների համար առաջարկվող միջոցառումներում:

2010թ. ի վեր, երբ մշակվեց առաջին ԷԳԾ-ը, ՀՀ կառավարությունը և մի շարք դոնորներ ու ՄՖՀ-ներ իրականացրել են խոշոր ծավալով ծրագրեր, որոնք գյուղատնտեսության ոլորտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրել են Էներգաարդյունավետության բարելավմանը: Այս ծրագրերը ներառել են ոռոգման ցանցերի և ջրամատակարարման համակարգերի բարելավում, մեքենաների և սարքավորումների թարմացում, ջրային կենսատեսակների բուծարանների և ջերմոցների արդիականացում, որը կծառայի գյուղական համայնքներին աջակցելու առավել լայն նպատակներին և կբարելավի ոլորտի արդյունավետությունն ու մրցունակությունը: Այս միջոցառումների մի մասը նպատակ է հետապնդել ուղղակիորեն բարելավել Էներգաարդյունավետությունը գյուղատնտեսության ոլորտում, մյուսներն անուղղակիորեն են աջակցել ոլորտի արդյունավետության բարելավմանը: Այս ծրագրերի հիմնական ֆինանսավորող կողմը եղել են միջազգային կազմակերպությունները և ՀՀ կառավարությունը: Մասնավոր հատվածը ևս նպաստում է այս ոլորտում նշանակալից ներդրումների իրականացմանը, հիմնականում, ջրային կենսատեսակների բուծարաններում և ջերմոցներում:

Ստորև աղյուսակում ամփոփ ձևով ներկայացվում են այն միջոցառումները, որոնք իրականացվել են առաջին ԷԳԾ-ի շրջանակներում, ինչպես նաև երկրորդ ԷԳԾ-ի համար առաջարկվող միջոցառումները, նպատակ ունենալով արագացնել Էներգիայի և ջրօգտագործման արդյունավետության ներդրումը գյուղատնտեսության ոլորտում: Հարկ է նշել, որ երկրորդ ԷԳԾ-ի թիմը բացահայտել է գյուղատնտեսության ոլորտում ծրագրերի և նախագծերի զգալիորեն առավել մեծ փաթեթ: Այնուամենայնիվ, այս միջոցառումներից

բխող հիմնական արդյունքների մշտադիտարկման և հաշվետվողականության պակասի հետևանքով, ներկայումս հնարավոր չի եղել գնահատել դրանց մինչ օրս գրանցված կամ ակնկալվող ազդեցությունը, սակայն կարելի է ենթադրել, որ մինչև 2020թ. դրանց ազդեցությունը ոլորտի էներգասպառման և ջրօգտագործման վրա զգալի կիහնի: Այդ իսկ պատճառով այս նախաձեռնությունները փաստաթղթավորվել և ընդգրկվել են երկրորդ ԷԳԾ-ում՝ հաջորդ ԷԳԾ-ների ժամանակ դրանց անդրադառնալու միտումով:

Այլուակ 31. ԷԱ բարձրացման միջոցառումների ամփոփ նկարագիրը գյուղատնտեսության ոլորտում

№	Էներգախնայող որյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԸ)				Կարգավիճակը կապված առաջին ԷԳԸ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.1	Գյուղական զարգացման ծրագիր: Բարձր արդյունավետության գյուղատնտեսական մեքենաների ներմուծում	2013թ. ի վեր Բելառուսի Հանրապետության հետ բանակցություններից հետո, ՓՄՁ ԶԱԿ -ի միջոցով ներկրվեցին համեմատարար մատչելի անվավոր 288 տրակտոր MTZ -82.1,40 միավոր գութան L-108, 20 միավոր քառակուսի տրակտոր PT-165M, 2 միավոր ճշգրտության սերմնացան SPCH-6LT,4 միավոր կարտոֆիլի աճեցման մեքենա L-201,19 միավոր կարտոֆիլի փորելու մեքենա KTN-2V,8 միավոր թոխոր L-131-7, 15 միավոր մարդագետնի հնձվորներ -2.1 և 6 միավոր ունիվերսալ օդաճնշման սերմնացաններ SPU-4d:	ֆերմերներ	Սկիզբը՝ 2013թ. Ավարտը՝ շարունակական	9.4	9.4	9.4	9.4	
VI.2	Բարձր արդյունավետության տրակտորների ներմուծում, ճապոնական ՊՀԱ	2010թ. ի վեր Ճապոնիայի կառավարության աջակցությամբ Հայաստանի կառավարությանը ֆինանսավորած պաշտոնական զարգացման /ՊՀԱ/ աջակցության ծրագրի միջոցով ներմուծվեց 171 տրակտոր և պահեստամասեր:	ֆերմերներ	Սկիզբը՝ 2010թ. Ավարտը՝ 2012թ.	5	5	5	5	
VI.3	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր, ՀԲ	Ծրագրի մշակման նպատակներն էին՝ (i) բարելավել ջրի օգտագործման արդյունավետությունն և (ii)խթանել անմիջապես գյուղական գրաղվածությունը:	Գյուղական ոռոգման օգտվողներ	Սկիզբը՝ 2013 Ավարտը՝ 2017	1,267	1,267	1,267	1,267	ընթացքը լմ

№	Էներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախնը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԵԳԾ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.4	Ոռոգման վերականգնման ճգնաժամային ծրագիր, ՀԲ	Ծրագրի մշակման նպատակներն էին՝ (i) բարելավել ջրի օգտագործման արդյունավետությունն ընտրված երկու ոռոգման սխեմաներումև (ii) խթանել անմիջապես գյուղական գրաղվաճությունը:	Գյուղական ոռոգման օգտվողներ	Սկիզբը՝ 2009 Ավարտը՝ 2013	77.6	73.3	73.3	73.3	ավարտված
VI.6	Մունիցիպալ ջրային ծրագիր ՀԲ	Ծրագրի մշակման նպատակն է՝ Հայջրմուղկոյուղի ընկերության ընտրված սպասարկման տարածքներում աջակցել ջրամատակարարման որակի և մատչելիության բարելավմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 18մ: Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումները ուղղակի օգուտ կրերեն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ ծառայության շուրջ 133,000 սպառողներին ծրագրի միջամտյունների համար բացահայտված երեք ընտրված քաղաքներում՝ Աշտարակ, Մասիս և Էջմիածին և հարևան գյուղական վայրերում:	Գյուղական ոռոգման օգտվողներներ; ֆերմերներ	Սկիզբը՝ 2012թ. ավարտը՝ 2015թ.					

№	Էներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԵԳԾ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.7	ԱՍԽ Մ2Գ Մաքուր Էներգիայի և ջոհի ծրագիր	1) Բերքաբեր գյուղի ջրամատակարարման ծրագիրը ժամանակակից, առավել քիչ կորուստներով պոլիէթիլենային խողովակաշարերի, ջրաչափերի ենթակառուցվածքի և պրակտիկայի ներդրմամբ, ինչպես նաև ցանցի ընդունման/ջրահավաքի վերանորոգմամբ կրարելավի համայնքի ջրային ցանցը: 2) Լուկաշին գյուղի ջրամատարակարման ծրագիրը նոր ջրատարի, ժամանակակից, գրեթե քիչ կորուստներով, պոլիէթիլենային խողովակաշարի տեղադրմամբ, ջրաչափերի համակարգի և պրակտիկաների ներդրմամբ, նոր պոմպի ավելացմամբ կրարելավի համայնքի ջրային ցանցը և կիանգեցնի ջրի և էներգիայի օգայի խնայողության: 3) Արագապում, որն Արմավիրի մարզում փոքր գյուղական համայնք է, ողոգման ջուրը հասանելի է, սակայն խմելու ջուրը հասանելի էր միայն օրական 3 ժամ: Ծրագիրը բարելավեց ջրամատակարարման համակարգի արդյունավետությունը, նվազեցրեց ջրային կորուստները և թունավորման ռիսկերը և հանգեցրեց նշանակալից ջրի, էներգիայի և ֆինանսական խնայողությունների: Այժմ, պարզապես 3 ժամի փոխարեն, Արագապի բնակչիների համար մաքուր ջուրը հասանելի կլինի օրական 24 ժամ: 4) Բարելավել գյուղի խմելու ջրի մատակարարումը մի շարք միջոցների իրականացմամբ, ինչը թույլ կտա նշանակալից ջրի և էներգիայի բարելավումների և ջրամատակարարման ծառայությունների առավել արդյունավետ ծախսերի վերականգնմանը՝ բարելավված բիլինգի և կոլեկտորի շնորհիվ:	Գյուղական համայնքներ	սկիզբ 2013-2014թթ. Ավարտը՝ 2018 թ.	150	150	150	150	

№	Եներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախսը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԷԳԾ -ի հետ	
					2014	2017	2018	2020		
VI.10	Ոռոգման համակարգի արդիականացում և ինստիտուցիոնալ կարողության զարգացում, ՀԲ	<p>2013թ. հունիսի 23-ին, Եվրասիական տնտեսական համայնքի հակաճգնաժամային ֆոնդի խորհրդության հաստատեց նախնական դիմումն ու ներդրումային ծրագրի հայեցակարգային փաստաթուղթը <<ոռոգման համակարգի արդիականացման և ինստիտուցիոնալ կարողության զարգացման համար \$50 ԱՄՆ միլիոն արժողությամբ՝ հիմնադրամի կողմից, \$40 միլիոն ԱՄՆ դոլար ներդրման ակնկալիքով:>></p> <p>Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝</p> <ul style="list-style-type: none"> Մեխանիկական ոռոգման փոխարինումը հոսքային ոռոգմամբ Հիմնական և երկրորդային ջրանցքների վերականգնում ԶՕԸ-ի (Զրօգտագործողների ընկերությունների) ներտնտեսական բաշխիչ ցանցի վերականգնում ԶՕԸ-ի ինստիտուցիոնալ կարողության զարգացում և ԶՕԸ-ների փորձնական միության ստեղծում: 	Գյուղական ոռոգման օգտվողներ; ֆերմերներ	Ակիզբը՝ հետագա պլաններ		19000	19000	19000		

№	Էներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախսը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԵԳԾ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.12	Գիտություն, տեխնոլոգիա, նորարարություն և գործընկերություն (ԳՏՆԳ)	2014թ.ապրիլի 4-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՀԳ) ադմինիստրատոր Ռաջիվ Շահը հայտարարեց ԱՄՆ գլոբալ զարգացման լաբորատորայի ստեղծման մասին: ԱՄՆ գլոբալ զարգացման լաբորատորիան կազմակերպվել է 200 միլիոն բնակչությանը: Հայաստանն ընտրվել է ամբողջ աշխարհում ԱՄՆ ՄՀԳ-ի առաջնային տարրությունների քանակությամբ: Հայաստանը ընտրվել է ամբողջ աշխարհում ԱՄՆ ՄՀԳ-ի առաջնային տարրությունների քանակությամբ, տեխնոլոգիայի, նորարարության և գործընկերության (ԳՏՆԳ) նախաձեռնություններում: Վերջին տարիներին, ԱՄՆ ՄՀԳ-ն Հայաստանում ներդրել է շուրջ \$45 միլիոն դոլար ԳՏՆԳ-ին առնչվող ծրագրերում, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների, էներգիայի և ջրի, կառավարման և առողջապահության ոլորտներում:	Զենաբուծարաններ	Սկիզբ՝ 2014թ. Ավարտ՝ 2030թ.					
VI.13	Էներգաարդյունավետ ջերմոցներ	Հայկական բերքի խթանման կենտրոնը, համագործակցելով << կառավարության հետ, նախատեսում է ընդլայնել ջերմոցային մակերեսը, 2020թ. խոշոր արդյունաբերական ջերմոցների չափը հասցնելով առնվազն 500 հա-ի:	Մասնավոր ջերմոցային հատված	Սկիզբ՝ 2011թ. Ավարտ՝ 2020թ.		425	480	591	

№	Եներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախը	Ժամանակահատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԷԳԾ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.15	Գյուղատնտեսական արտադրանքի համար որակի հիման վրա գնահատման մեխանիզմների ստեղծումը վերամշակման արդյունաբերության համար : Սա հատկապես կարևոր է խաղողի վերամշակման ոլորտի համար: Այն ֆերմերների ուշադրությունը կկենտրոնացնի պատշաճ ագրո կառավարման վրա, ինչն իր հերթին նշանակում է բույսերին աղեկված քանակով ջրի տրամադրում:	Վերամշակողներ, ֆերմերներ	Սկիզբ՝ անմիջապես Ավարտը՝ 2020թ.		8620	25900	51700		
VI.16	Գյուղատնտեսական սարքավորումների մեծ մասը մասնավոր ձեռքբերում է: Այս սեփականատերները իրենց համայնքներում հաստատված ծառայություն մատուցողներ են: Այնուամենայնիվ, նրանք իրենց իին և հնացած սարքավորումները նորով փոխարինելու համար բավարար ֆոնդեր չեն ստեղծում: Նոր սարքավորումը պետք է տրվի գյուղատնտեսական կոպերատիվներին պետության կամ այլ դռնորների սուբսիդավորման մեխանիզմների միջոցով: Սովորաբար կոպերատիվի անդամները փոքր սեփականատերներ/աճեցնողներ են և չեն կարող պատշաճ կերպով գործի դնել և պահպանել սարքավորումները: Հմտությունների և գիտելիքի պակասը զգալիորեն կրճատում է սարքավորման օգտակար կյանքը:	ֆերմերներ	Սկիզբ՝ անմիջապես Ավարտը՝ 2020թ.		134	201	269		

№	Էներգախնայող ու ոթյան միջոցառման անվանումը	Նկարագրությունը	Թիրախն	Ժամանակաշրջանում հատվածը	Ձեռքբերված էներգախնայողությունները թիրախային տարում (ՄՎՏԾ)				Կարգավիճակը կապված առաջին ԵԳԾ -ի հետ
					2014	2017	2018	2020	
VI.18.	Ներդնել հնքնահոս ոռոգման համակարգ	Անցումը դեպի ինքնահոս ոռոգման համակարգի կնպաստի էներգախնայողությանը, քանի որ Խորհրդային Միության ժամանակաշրջանում ներդրված պոմպավորման համակարգը շահագործման համար շատ թանկ է: Այս գործողությունը կհանգեցնի էներգախնայողությանը, օրինակ 2013թ. ջրամատակարարման ընկերությունների էներգասպառումը զգալիորեն նվազեց՝ 129 վատ/ժամից՝ մինչև 25 վատ/ժամ:	ֆերմերներ	Ակիզբը՝ անմիջապես Ավարտը՝ 2020 թ.	172000	17200	34500	51700	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՎՏԾ				1,508	46,883	81,586	124,764	
	Ընդհանուր ԿՏՆՀ				0.13	4.03	7.02	10.73	

Վերոհիշյալ այսուսակը նաև ներկայացնում է նոր միջոցառումները և քաղաքականության/ծրագրային առաջարկությունները, որոնք կարող են օգնել գյուղատնտեսության էներգատարության ցուցանիշի աճի դանդաղեցմանը, միաժամանակ աջակցելով այս ոլորտի արդյունավետության բարձրացմանը: Այս ամենը ներառում է հետևյալ ծրագրերի հրականացումը:

- Գյուղական զարգացման ծրագիրը բանակցությունների արդյունքում, հանգեցրեց << կառավարության աջակցությանը և Հայաստանում բարձր արդյունավետության գյուղատնտեսական 288 միավոր մեքենաների ներմուծմանը
- Ճապոնական կառավարության կողմից գործառնական զարգացման աջակցությունը ֆինանսավորեց բարձր արդյունավետության 171 տրակտորների ներմուծումը:
- Համաշխարհային բանկն իրականացրեց մի քանի գյուղական և համայնքային զարգացման ծրագրեր, որոնք նպատակ ունեին ընդլայնել ոռոգման համակարգերը, վերականգնել իրատապ ոռոգման ենթակա համակարգերը, համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարումը և մրցակցությունը, ինչպես նաև մունիցիպալ ջրի մատակարարումը: <Բ-ն նախատեսում է նաև մեկնարկել ոռոգման բարելավման ծրագրերի համայիր փաթեթով նոր ծրագիր, որն ուղղված կլինի ոռոգման համակարգի արդիականացմանը և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը
- ԱՄՆ ՄՀԳ-ն իր մաքուր էներգիայի և ջրի ծրագրով Բերբաքեր, Լուկաշին, Արազապ գյուղերում աջակցեց ջրամատակարարմանը, Հարթավան գյուղում՝ խմելու ջրի մատակարարման ծրագրին
- ԳԷՀ-ի փոքր դրամաշնորհային ծրագիրն աջակցեց Փարաքարի համայնքի ապակենտրոնացված կոյուղաջրերի մաքրմանը
- Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագիր
- Գյուղատնտեսություն և գյուղական զարգացում, ԵՀԳԳ, ԱՀԳ
- Գիտություն, տեխնոլոգիա, նորարարություն, գործընկերություն (ԳՏՆԳ)
- Էներգաարդյունավետ ջերմոցային տնտեսություններ
- Ոռոգման կառավարման վերաբերյալ ֆերմեների կրթություն
- Գյուղատնտեսական արտադրանքի գնահատում՝ հիմնված որակի վրա
- Գյուղատնտեսական մեքենաների շարժակազմի նորացում
- Խմբերի/կոպերատիվների ստեղծում
- Ինքնահոս ոռոգման համակարգի տեղադրում

Հաշվի առնելով Հայաստանում գյուղատնտեսության բնագավառում միջազգային լավագույն փորձը, գյուղատնտեսության ոլորտի հետագա էներգաարդյունավետությունն ու մրցունակությունը բարելավելու համար պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցառումները.

- Արձագանքել րանոնավոր էլեկտրաէներգիայի մաքակարարման խնդրին՝ լեռնային և սահմանային գյուղերում համեմատաբար ցածր գնով արևային, երկրաջերմային, ստորգետնյա, ջրի էներգիայի այլընտրանքների արդյունավետ կիրառմամբ
- Ֆերմերների կրթությունը ոռոգման կառավարման բնագավառում. << տարածքում ֆերմերների մեծ մասը չափից ավելի է ոռոգում հողատարածքները՝ ջրի առատությունը համարելով դրական ազդեցությունը բույսերի և ծառերի համար: Այս պրակտիկան արդյունավետ չէ, շատ բույսերի համար՝ նույնիսկ վտանգավոր, ներառյալ ծիրանի ծառերի ու այգիների համար: Ֆերմերների կրթությունն անհրաժեշտ է կայուն ոռոգման պրակտիկայի համար, ինչը ոչ միայն կօպտիմալացնի ջրօգտագործումը և կբարելավի բերքի արտադրողականությունը, այլ նաև կիսնայի մեծ քանակով ջուր և էներգիա:
- Շարունակել գյուղական բնակչության մերենաների արդիականացումը և սարքավորումների համար կրվակների բազայի կառավարումը, քանի որ ներկայիս տրակտորների 92% և հացահատիկային բերքահավաք կոմբայնների 80% ավելի քան 25 տարեկան են: Գյուղատնտեսական մերենաների սարքավորումների մեծ մասը մասնավոր ձեռքբերում են: Այս սեփականատերերն իրենց համայնքներում համարվում են հաստատված ծառայություն մատուցողներ: Այնուամենայնիվ, իրենց հին և հնացած սարքավորումները նորերով փոխարինելու համար, նրանք բավարար ֆոնդեր չեն ստեղծում: Նոր սարքավորումը գյուղատնտեսական կոպերատիվներին պետք է տրվի պետության կամ այլ դոնորների սուբսիդավորման մեխանիզմների միջոցով: Սովորաբար, կոպերատիվի անդամները փոքր սեփականատերեր/ աճեցնողներ են և չեն կարող պատշաճ կերպով գործի դնել և պահպանել սարքավորումները: Հմտությունների և գիտելիքի պակասը զգայիրեն կրճատում է սարքավորման օգտակար կյանքը: Այսպիսով, անհրաժեշտ է ծրագիր, որն ուղղված կլինի այս անհատներին կամ կոպերատիվներին՝ գյուղատնտեսական սարքավորումների արդյունավետ օգտագործման, արդիականացման և կառավարման նպատակով: Այս գործողությունը պետք է լինի գյուղատնտեսական խմբերի և կոռպերատիվների շարունակական ստեղծմանը համընթաց, ինչը, հիմնականում, կնպաստի մանր արտադրողների խմբավորման ծավալային ազդեցությանը, իսկ ծախսատար տեխնիկական լուծումների ընդհանուր հասանելիության շնորհիվ՝ բերքահավաքի առավելությունների ապահովմանը: Մինչդեռ, գյուղատնտեսական մերենաների ներկայիս տվյալների բազայում պակասում է որակյալ տեղեկատվությունը և այն վատ է կառավարվում: Վառելիքի արդյունավետ օգտագործման տեխնոլոգիաների ադապտացման ազդեցությանն աջակցելու և դրա ազդեցությանը հետևելու համար, անհրաժեշտ է ունենալ երկրում ներկայում օգտագործվող ժամանակակից սարքավորման ցուցանիշների մասին տեղեկատվություն: Այս փուլում այս տվյալները բացակայում են: Գրանցման համակարգի բարելավման ուղիներից մեկը գյուղատնտեսության ադմինիստրատիվ ռեգիստրի ընդհանուր համակարգի իրականացումն է:

- Շարունակել կենսորուացումը ինքնահոս ռողման ծրագրերի վրա: Խորհրդային Միությունից ժառանգած պոմպավորման համակարգը գործառնության համար չափազանց թանկ է: Այս համակարգերում անարդյունավետ էլեկտրաէներգիայի օգտագործման հսկայական ծախսերից խուսափելու համար ինքնահոս ռողման համակարգը պետք է տեղադրվի այնտեղ, որտեղ հնարավոր է:
- Կոյուղաջրերի հավաքման և, ընդհանրապես, թափոնների կառավարումը. կեղտաջրերի մաքրման աշխատանքներում ներգրավված է 20 գործարան: Այնուամենայնիվ, այս գործարաններն անարդյունավետ են, ֆիզիկապես և բարոյապես հնացած: Կեղտաջրերի մաքրմանն ուղղված նոր տեխնոլոգիաների ներդրումը զգալիորեն կբարձրացնի այս ոլորտում էներգիայի սպառման արդյունավետությունը, ինչպես նաև խնայված ջրի ծավալները: Այս միջոցառումը խաչաձևվում է նաև հանրային ծառայությունների ոլորտի հետ՝ քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում:
- Հայաստանը նշանակալից ջրային ռեսուրսներ ունի, որոնք ապահովում են ջրային կոնյակների ջրագույնավագումը: Այս կոնյակներում կարևորագույն խնդիրներից է այս ոլորտի կողմից ավելցուկային ջրի և էլեկտրաէներգիայի օգտագործումը: Ջրում լուծված թթվածնի կոնցենտրացիայի չափիչ սարքերի տեղադրումը կարող է համարվել էներգախնայողության լավագույն մեթոդներից մեկը, ինչը թույլ է տալիս մշակել օդորակման սարքավորումներ: Ուսուրսարդյունավետություն և մաքուր արտադրություն /ՌԱՄԱ/ էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում նմանատիպ ծրագիր իրականացվեց Յունիֆիշ ՍՊԸ-ի կողմից 2014թ.: Ծրագրի իրականացումից ակնկալվող տարեկան էներգախնայողությունը, ընդամենը մեկ ծկնային տնտեսության համար, կազմում էր 194 ՄՎտ/տարի (կամ 7,153,920 << դրամ):
- Գյուղատնտեսական ռեսուրսի ներուժից օգտվելու գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար հատուկ ուշադրություն պետք է դարձվի ֆերմային տարածքներում արդյունավետ ջերմոցների ստեղծման խթանմանը: Պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները.
- Հարկային արտոնությունների տրամադրում հիմնական սարքավորումների և շինարարական նյութերի ներմուծման համար, որոնք անհրաժեշտ են էներգաարդյունավետ ջերմոցների ստեղծման համար, մասնավորապես «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» << օրենքի համաձայն ջերմոցների ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից:
- Մատչելի թիրախային վարկերի տրամադրում ֆերմերներին՝ ջերմոցների ստեղծման համար:

Առաջին ԷԳԾ-ի շրջանակներում իրականացված էներգաարդյունավետության ներքոնշյալ ծրագրերը նպատակ ունեն մեղմելու գյուղատնտեսության էներգատարության աճը:

Էներգախնայողության միջոցառման անվանումը	Գյուղական զարգացման ծրագիր: Բարձր արդյունավետության գյուղատնտեսական մեքենաների ներմուծում
Միջոցառման ինդեքսը	VI.1
Նկարագրությունը	Կատեգորիան
	Գյուղատնտեսական մեքենաներ
	Ժամանակահատվածը
	Սկիզբ՝ 2013թ. Ավարտ՝ շարունակական
	Նպատակը/համառոտ նկարագրությունը
	2013թ. ի վեր Բելառուսի Հանրապետության հետ բանակցություններից հետո ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ներկրվեցին համեմատաբար մատչելի, 288 անվավոր տրակտորներ MTZ -82.1,40 միավոր գութան L-108, 20 միավոր քառակուսի տրակտոր PT-165M, 2 միավոր ճշգրտության սերմնացան SPCH-6LT,4 միավոր կարտոֆիլի աճեցման մեքենա L-201,19 միավոր կարտոֆիլի փորելու մեքենա KTN-2V,8 միավոր թռիչ L-131-7, 15 միավոր մարգագետնի հնձիչ մեքենաներ -2.1 և 6 միավոր ունիվերսալ օդաճնշման սերմնացաններ SPU-4d :
	Թիրախային վերջնական օգտվող
	ֆերմերներ
	Թիրախային խումբը
	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	Տարածաշրջանային կիրառումը
	ազգային
Տեղականվայրերի անունը հրականացման վերաբերյալ	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության գործողությունների ցանկը և նկարագրությունը
	հրականացվող աշխատանքներն են՝ 1. Ֆերմերներին ցածր դրույքաչափերով և էժան գներով նոր մեքենաների տրամադրումը նպատակ ունի օգնել ֆերմերներին հրականացնել էներգախնայողություն արդյունավետ աշխատանքի միջոցով:
	Բյուջե և ֆինանսական աղբյուր
	Հնարավոր չէ որոշել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	Իրականացնող մարմին
	Պետական ոլորտ, ՓՄՁ ԶԱԿ, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	Վերահսկող մարմին
Էներգախնայողություններ	Առաջացած խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ
	Մեքենաների էներգաարդյունավետություն
	2014թ. ձեռքբերված խնայողությունները
	9.4
	2017թ. ակնկալվող էներգախնայողությունը
	9.4
	2018թ. ակնկալվող էներգախնայողությունը
	9.4
	2020թ. էներգարդյունավետության վրա ակնկալվող ազդեցությունը
	9.4
	Ենթադրություններ*
	Մասնակի

	համընկնումներ, բազմապատկման ազդեցություն, սիներգիա	
--	---	--

	Էներգախնայողության միջոցառման վերնագիրը	Բարձր արդյունավետության տրակտորների ներմուծում, ճապոնական ՊԶԱ
	Միջոցառման ինդեքսը	VI.2
Նկարագրություն	Կատեգորիան	Գյուղատնտեսական մեքենաների արդիականացում, տեղեկատվության և պարտադիր տեղեկատվության միջոցառումներ, տրանսպորտին բնորոշ միջոցառումներ
	Նպատակը/համառոտ նկարագրությունը	Ակիզբը՝ 2010թ. Ավարտը՝ 2012թ.
	Ժիրախային վերջնական օգտվող	2010թ. ի վեր, Ճապոնիայի կառավարության աջակցությամբ Հայաստանի կառավարությանը ֆինանսավորած պաշտոնական զարգացման աջակցության ծրագրի միջոցով, ներմուծվեց 171 տրակտոր և պահեստամասեր:
	Ժիրախային խումբը	Ֆերմերներ
	Տարածաշրջանային կիրառումը	Ազգային
Տեղեկատվություն իրականացման վերաբերյալ	Միջոցը հիմնավորող էներգախնայողության միջոցառումների ցանկն ու նկարագրությունը	Գյուղատնտեսական մեքենաների փոխարինում
	Բյուջե և ֆինանսական աղբյուր	Տվյալներ չկան
	Իրականացնող մարմին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Ճապոնիայի կառավարություն
	Վերահսկող մարմին	ԳՆ
Էներգախնայություններ	Արդյունքում ձեռքբերված խնայողությունների մոնիթորինգի/չափմա ն մեթոդ	Մեքենաների էներգաարդյունավետություն
	2014թ. ձեռքբերված խնայողություններոր	4.7
	2017թ. ակնկալվող էներգախնայողություն ը	4.7
	2018թ.ակնկալվող էներգախնայողություն ը	4.7
	2020թ. էներգարդյունավետու	4.7

թյան վրա ակնկալվող ազդեցությունը	
Ենթադրություններ*	
Մասնակի համընկնում, բազմապատկման ազդեցություն, սիներգիա	

Ենթադրախնայողության միջոցառման անվանումը		Ոռոգման համակարգի ընդլայնման ծրագիր, ՀԲ
Միջոցառման ինդեքսը		VI.3
Աղյուսակային նկատմամբ	Կատեգորիան	Ոռոգում
	Ժամանակահատվածը	Սկիզբ՝ 2013թ. Ավարտ՝ 2017թ.
	Նպատակը / համառոտ նկարագրությունը	Ծրագրի մշակման նպատակներն են (i) նվազեցնել օգտագործված էներգիայի քանակը և բարելավել ոռոգման տեղափոխման արդյունավետությունը թիրախային ոռոգման սինեմաներում, և (ii) որոշում կայացնողների և շահագրգիռ այլ մարմինների համար բարելավել ոլորտային կարևոր տվյալների, ինչպես նաև տեղեկատվության մատչելիությունն ու հուսալիությունը:
	Թիրախային վերջնական օգտվողներ	Գյուղական ոռոգումից օգտվողներ
	Թիրախային խումբը	Տերմերներ
Խումբականական կիրառումը	Տարածաշրջանային կիրառումը	Մարզային (Մեղրի, Գեղարդավիճ, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն)
	Միջոցառումը հիմնավորող էնթրադինայողության գործողությունների ցանկն ու նկարագրությունը	Հիմնական ցուցանիշների թվում են。 Զրային խնայողությունների ծավալը, որը 97 մլն խոր.մ-ից հասավ մինչև 131 մլն խոր.մ : Առաջնային ջրանցքների բացահայտված հատվածների վերականգնում (ԱՄՆ\$15.90 միլիոն) ընտրված ոռոգման սինեմաներում : Ընտրված ոռոգման համակարգերում բացահայտվել է 6 սինեմա : 6 սինեման ընտրվել է աջակցության համար և վերականգնվել է հիմնական ու երկրորդային ջրանցքների շուրջ 50կմ երկարությամբ հատված: Առաջնային ջրանցքների վերականգնումը թայինում և Արմավիրի ոռոգման սինեմաներում (ԱՄՆ\$33.08 միլիոն): Այս բաղադրիչով ֆինանսավորվեց առաջնային ջրանցքների 83.81կմ վերականգնումը (իհմնական և ճյուղային ջրանցքներ) թային և Արմավիրի սինեմաներում: Թայինի ոռոգման սինեմայի 59.01 կմ, որը տեղակայված է Արագածոտնի և Արմավիրի մարզերում, ինչպես նաև Արմավիրի մարզում տեղակայված Արմավիրի ոռոգման սինեմայի 24.80կմ: Լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ծրագրի աշխարհագրական շրջանակի աճի հետ մեկտեղ ծրագրում ներգրավվեցին Կոտայքի, Շիրակի, Լոռիվա, Արարատի և Գեղարքունիքի մարզերի ջուր օգտագործողները և օգտվեցին ծրագրի միջամտություններից: Գնահատվել է, որ ծրագրից օգուտ ունեցան շուրջ 118,000 ջրօգտագործողներ: Զրի խնայողությունների ծավալը 97 մլն խոր.մ (ՄԻՄ) հասավ 131ՄԻՄ

	(35% աճ): Հետևաբար թիրախը դրվել է ներծծվող կորուստները 15-16 %-ով նվազեցնելու համար, որպեսզի ծրագրի վերջում կորուստները կազմեն 7 %: Վերականգնողական միջոցառումների արդյունքում հիմնական/ երկրորդային ջրանցքներում ոռոգման ընդհանուր տարածքի պոտենցիալ ավելացում՝ 28,275 հա-ից՝ 83,210 հա: Ֆերմաներում ոռոգման ցանցերի վերականգնում (ԱՄՆ\$4.02 դոլար): Կվերականգնվեն ընտրված երրորդային ջրանցքները: Համայնքներում երրորդային ցանցով վերականգնված ոռոգման տարածքը կազմում է 704 հա: Լոռվա, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի 19 համայնք ջրի բարելավված տեղափոխումից կօգտվի ավելի քան 2,500 հա-ով:
Բյուջեն և ֆինանսական աղյուրը	\$ 33,100,000.00
Իրականացնող մարմինը	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, պետական սեկտոր
Վերահսկող մարմինը	Համաշխարհային բանկ
Արդյունքում ձեռքբերված խնայողությունների մոնիթորինգի/չափման մեթոդ	Էներգարյունավետության ծրագիր Փոփոխված ոռոգման խողովակաշարեր
2014թ. ակնկալվող խնայողությունները՝ համաձայն առաջին ԷԳԾ-ի	
2014թ. ձեռքբերված խնայողությունները	
2017թ. ակնկալվող էներգախնայողությունը	
2018թ. ակնկալվող էներգախնայողությունը	
2020թ. էներգախնայողության վրա ակնկալվող ազդեցությունը	
Ենթադրություններ*	
Մասնակի համընկնումներ, բազմապատկման ազդեցություն, սիներգիա	

Էներգախնայողության

Ոռոգման համակարգի վերականգնման իրատապ ծրագիր, ՀԲ

միջոցառման անվանումը	
Միջոցառման ինդեքսը	VI.4
Նկարագրություն	Կատեգորիան
	Ոռոգում
	Ժամանակահատվածը
	Ակիզբը՝ 2009թ. Ավարտը՝ 2013թ.
Նկարագրություն	Նպատակը/ համառոտ նկարագրությունը
	Ծրագրի մշակման նպատակներն էին՝ (i) բարելավել ջրի օգտագործման արդյունավետությունը ոռոգման երկու ընտրված սխեմայում (ii) խթանել անմիջական գյուղական գրաղվածությունը:
	Թիրախային վերջնական օգտվողներ
	Գյուղական ոռոգումից օգտվողներ
Նկարագրություն	Թիրախային խումբը
	Ֆերմերներ
	Տարածաշրջանային կիրառումը
	Ազգային
Տեղական վերջություն դրամականացման համար կատարելու համար առաջարկություն	Միջոցառումը հիմնավորող էներգախնայողության գործողությունների ցանկն ու նկարագրությունը
